


ԷԼԻ Յ. ՆԱԶԱՐԵԱՆ

ԱՅ ԳԻՐԻ
ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՊԵՅՐՈՒԹ
1999



ՀԱՅ ԳԻՐԻ ՃԱՆԱԴԱՐԷՆ
(Գրականության և Գրադրամատիկայի Էջեր)

01
Ն-15

ՄԵԿԵՆԱՄ—ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ԽՄԲԱԳԻՐ

ՅԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՈՒՆԵՍՏ
ԹՈՐՈՍ ԹՈՐԱԵՆԵԱՆ

ԷԼԻ Յ. ՆԱԶԱՐԵԱՆ

3059

ՀԱՅ ԳԻՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

(ԳՐԱԽՕԱՆԱԿԱՆ ԵՒ ՀՐԱՄԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԷՋԵՐ)

Ներկայ հայտորը ՅԻՇԱՏԱԿԻ ԳԻՐԻ մրն է, կազմուած՝ հայեպստայ հանգուցեայ մրատրական ԷԼԻ Յ. ՆԱԶԱՐԵԱՆԻ անդիպ եւ մամուլի մէջ ցրուած գրութիւններէն: Խորագի՛րը յեւր մահու կադարուած այս ժողովածուին՝ կը պարկանի իմրագրութեան, մեկնելով հանգուցեային անմնացորդ նուիրումէն, հանդէպ հայ գիրին ու մամուլին: Սոյն երկը չի յաւակնիր ամբողջական դիմագիծը փայտու հեղինակին սրորագրած քազմահարիր էջերուն, սակայն, կ'հնրադրենք թէ, գէր դոյզն չափով կու փայապացոյցը իր ներդրումին եւ յանջնաոու գրողի նախանչախնդրութեան: Ընդրութիւնը յօդուածներուն կադարուած է իրենց մադչելիութեան սահմանին մէջ: Իսկ քացակայութիւնը նոյնքան համարժէք իր սրորագրած այլ յօդուածներուն՝ անփոխում մը չէ բնաւ իմրագրութեան կողմէ, այլ հերեւանը՝ նիրական կարելիութեանց:

Խ.



ՊԵՅՐՈՒԹ
1999

ԷԼԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԶԱՐԵԱՆ (1916–1998)

*Ճ.Խ. Հայ միտքի ու մանուկ աշխարհատր մը եղած էր նորոգ հանգուցիակ
Էլի Յ. Նազարեան, որուն կեանքին ու գործունէութեան մասին եղած մինչև
1988 թ. ամենէն ճշգրիտ և ամբողջական վկայութիւնը կը հիւրընկալենք սրորեւ,
իր իսկ պատրաստած «Պատմագիրք Նազարեան Գերդասարանի», 1988ին Պէյ-
րութ լոյս տեսած քովանդակալից հատորէն (էջ 219–224):*



Լուսանկար Յ. Չամսարեանի

Ոսկերչապետ Յարութիւն Կ. Նազարեանի կրտսեր որդին. որ կը ժառանգէ անունը տոհմին կարկառուն դէմքերէն Էլիազ Պէկին (Նօջայ) Նազարի երկրորդ որդին) և Այնթապի Նազարեան գերդաստանի նահապետ Եղիա Շահնազարին:

Ծնած է Այնթապ, 15 Օգոստոս 1916ին: Ծնողքին հետ Հալէպ կը տեղափոխուի 1923ին: Երջանատարտ է Հալէպի Կրթասիրաց Կարծարանէն, 1930ին: Բարձրագոյն ուսումը ստացած է (1931–1935) տեղոյն Ֆրանսական Լիսէէն, ուրկէ վկայուած է 1935ին: Հետագային հետեւած է հեռակայ դասերու և վկայուած՝ Փարիզի Ա. Պէ. Սէ. դպրոցի ֆրանսերէն լեզուի մասնագիտացման և գրականութեան զոյգ դասընթացքներէն: Ապա՝ հետեւած է նաեւ Ֆրանսայի Մշակութային Հաստատութեան ընդհանուր զարգացման և Փրոֆ. Եարլ Փակոյի լեզուագիտական, ինչպէս նաեւ Նիսի Մարմնամշակման և Հալէպի մէջ Միշէլ Պորիզենքոյի ջութակի

դասընթացներում:

Փոքր տարիքին ջերմ սեր ցոյց տուած է դէպի գիրն ու գրականութիւնը. մանաւանդ տաղանդ դէպի հրապարակագրական ասպարէզը: Նախակրթարանի չորրորդ դասարանէն սկսեալ իր յօդուածները սկսած են երեւի տեղական հայասերներու մէջ: Մասնակցելով միջ-դպրոցական շարադրութեան մրցումներուն եւ Պրն. Լեւոն Զէնեանի բարոյագիտական մրցանքներուն, գրաւած է առաջին տեղը:

Լիսէի ուսանողութեան շրջանին, 1933ին, հրատարակած է «Կուլ-Տուր» երգիծական-երիտասարդական հանդէսը: Նաեւ հիմնած ու խմբագրած է ուսանողական «Նու Վուսաի» պարբերաբերը: Հրատարակած է «Գրասերը» տեղեկատուն նոր լոյս տեսած հայերէն եւ ֆրանսերէն հայագիտական գիրքերուն:

Այս շրջանին մեծ աշխատանք տարած է հետեւեալ կենսական հարցերու իրականացման համար.

Ա.- Հայերէն լեզուին որպէս Բ. լեզու ընդունման ֆրանսական պարալորէայի քննութեանց. կապ հաստատելով փարիզաբնակ մշամաւոր քարտիսպէտ Ջատիկ Խանգատեանի եւ Հայ Մշակոյթի Դեսպան Արշակ Զօպանեանի հետ եւ դիմելով Հալէպի Ֆրանսական Լիսէի Տնօրէն Եմիլ Մաքիտյին: Այս ջանքերը արդիւնատուեցան 1935ին:

Բ.- Հայաբերքերու մէջ երեւցած ուսումնական վիճակագրական յօդուածներով հայ ուսանողներու հոծ թիւին շուրջ օտար երկրորդական դպրոցներէ ներս, առաջինը ըլլալով փրոփակամտած է Հալէպը օտտել երկրորդական հայ վարժարաններով, մասնաւորաբար դիմելով Բարեգործականի տնօրէն Վահան Մալեգեանին եւ Վենետիկի Միսիարեան Հայրերուն, նաեւ այս ուղղութեամբ գործի մղելով հանրածանօթ ազգասէր հայեր Տոքթ. Յովհ. Հրեշտակեանը, Տոքթ. Յարութիւն Տէր Դազարեանը եւ Տոքթ. Ահարոն Խաչատուրեանը: Ինչ որ իրականութիւն դարձաւ, Հալէպի Միսիարեան Վարժարանը բացուեցաւ 1936ին (նախ Կար Տր Պաղատաւ քաղամասին մէջ), Քարէն Եփփէ Ենեմարանը՝ 1947ին (Նոր Գիւղ) եւ ՀԲԸ Միութեան Լ. Նաճարեան-Գ. Կիլպէնկեան Կեդրոնական վարժարանը՝ 1945ին (Եւլպէ Լոյսի):

Գրական յօդուածներով, նորավայերով, երգիծականներով եւ թղթակցութիւններով իր աշխատակցութիւնը բերած է տեղական եւ արտասահմանեան թերթերու եւ պարբերականներու հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով: Աշխատակցած է գլխաւորաբար հետեւեալ թերթերուն.- «Եփրատ» (Հալէպ), «Ազդակ» (Պէլրոս), «Արամազդ» (Արժնք), «Հայ Սիրտ» (Մարտէլ), «Ապագայ» (Փարիզ), «Մշակոյթ» (Փարիզ), «Կալոժ» (Փարիզ), «Կալոժիկ» (Փարիզ), «Արագած» (Փարիզ), «Պայքար» (Պոսթոն), «Արեւ» (Գահիրէ), «Սփիւռք» (Պէլրոս), «Մարտկոց» (Փարիզ), «Չարթօնք» (Պէլրոս), «Ամրոց» (Փարիզ), «Արեւմուտք» (Փարիզ), «Լ'Էրլէր Տիւ Նոր» (Հալէպ), «Լը Քուրիէ Տը Սիլի» (Հալէպ), «Արեւել Մարգական» (Հալէպ), «Գե-

ղարդ» (Տարեգիրք Բ. Գիրք) (1976-1978): Նաեւ «Շիրակ» եւ «Խօսնակ» ամսագիրներուն եւ «Նոր Այնթապ» պարբերաբերին:

Շրջան մը՝ 1935ին, եղած է օգնական խմբագիր Հալէպի ֆրանսերէն «Լ'Էրլէր Տիւ Նոր» եւ «Լը Քուրիէ Տը Սիլի» թերթերուն, իսկ 1936-1939՝ հրատարակիչ եւ խմբագիր «Եփրատ» թերթին, Հալէպ: Այս շրջանին, 1936ին, լոյս ընծայած է «Եփրատ» Ամանորի բացառիկը, 1936ին:

Գրած է «Նազարեան Գիրքը» (Պատմութիւն Նազարեան Տոնին եւ Այնթապի Նազարեան Գերդասարանին)՝ պատմական ակնարկը: Նաեւ ուսումնասիրութիւն մը Այնթապահայ գաւառաբարբառին մասին, բառգրոյկով եւ առածներով:

Իրմէ են դարձեալ «Գաղթահայ Ծաղիկներ»ը եւ «Ազգային Սափրիչներ»ը (երգիծանք), ինչպէս նաեւ «Անաւարտ Մեղեդիներ»ը (պատմուածքներ): Գրած է նաեւ ֆրանսերէն երեք նորավէպեր «Քոնչըրթօ Ան Ռոզ» խորագրով:

Գործածած ծածկանուններն են.- Է. Շահնագար, Էլի, Էլի Նազար, Ե. Լէօ, Ընկեր Խորվիրապ Անդրշիրիմեան, Ալպարթոս, Էտրլվայս Շահնագար, Հայկազ Արմէն: Ֆրանսերէն գրչանուններն են Լէօ, Լէօ Քարթիէ, Ժան Ժագ:

Գերդաստանի առաջաւոր դէմքերէն Նիկողոս Աղային պէս եղած է մոլի գրասէր մը, իր հասոյթին շօշափելի մասը տրամադրելով հազուագիտ գրքերու:

Մեծապէս սատարած է հայ գրողներու գործունէութեան եւ գործերու ծանօթացման, ինչպէս նաեւ գրական ձեռնարկներու եւ հրատարակութեան ու տարածման խիստ կարեւոր գործին, մշտական կապ պահելով հայ եւ միջազգային յայտնի գրական դէմքերու հետ:

Եղած է Հիմնադիրներէն հալէպահայ գեղարուեստական ու մշակութային «Արեգ» Միութեան (1933ին), «Եփրատ» Երիտասարդացին (1930ին), ՀՕԿի «Չուարթ» Խումբին (1934ին), Փրոֆ. Գարբիէլ Միքայէլեանի նախագահութեան տակ կազմուած պատմագիտական եւ լեզուագիտական Երիտասարդաց Յանձնախումբին (1938ին):

Նախածեռնարկ եղած է հայ գրազէտներու օգնութեան շարժումներուն, նաեւ գլխաւոր կազմակերպիչը՝ Ը. Շահնորի Օգնութեան Մարմնին, 1945ին:

Այսպէս, վաստակաւոր հրապարակագիր Ա. Ն. Նազարէն յետոյ, եղած է Նազարեան գերդաստանի երկրորդ հրապարակագիր դէմքը (Է. Նազար): Ունեցած է սրամիտ, անձնական իրայայտուկ «խմուր»ով համեմուած փնտռուած եւ սիրուած գրիչ մը: Ունեցած է նաեւ ազգային ու գեղարուեստական բեղուն գործունէութիւն մը:

Անուսնացած է Սաքենիկ Տէր Պետրոսեանին հետ, 27 Հոկտ. 1968ին: Բախտաւորուած են մանչ զաւակով մը՝ Յարութիւն, ծնած 21 Ապրիլ 1972ին:

Յարութիւն իր ուսումը կը ստանայ ՀԲԸ Միութեան Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլլենկեան Կեդրոնական Վարժարանին մէջ: Միաժամանակ կը հետեւի Հալէպի պետական երաժշտանոցի դասընթացքներուն (սոլֆեժ եւ ջութակ), ուրկէ շրջանաարտ կ'ըլլայ 1986-1987 տարեշրջանին, առաջնութեամբ: 1988ին մասնակցելով պետական Պրէվէի քննութեանց, ծեռք բերած է մին իր դասարանին լաւագոյն արդիւնքներէն, հաւաքելով 261 միջ:

Իր մասին յիշատակութիւններ կան.-

- 1.- «Պատմութիւն Անթէպի Հայոց» Բ. հատոր, Գեորգ Սարաֆեան, Լոս Անճելըս, 1953, էջ 772:
- 2.- «Այնթապականք» Ա. հատոր, Գրիգոր Պողարեան, Պէյրոս, 1974, էջ 46:
- 3.- «Պատմութիւն Սուրիոյ Հայ Տպարաններու» Հայկ Պարիկեան, Հալէպ, 1973, էջ 142:
- 4.- «Եփրատ» բացառիկ, 11 Նոյեմբեր 1936. Բ. էջ, քիւ 2784:
- 5.- «Հանրագիտարան» Երեւան, 1977, Գ. հատոր «Եփրատ»ին մուիրում տողերուն մէջ: Էջ 645:
- 6.- «Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրք, Բ. Գիրք 1976-1978, Հալէպ, ուր խմբագրած կամ ստորագրած է հետեւեալ գրութիւնները.-
Տրամադրած է Ու. Սարոյեանին մուիրում բոլոր էջերը եւ լուսանկարները, էջ 126-142, 165-171:
Վ. Թէքէեանին ձեռագիր մամակը, էջ 187-189:
Շահան Շահնուրին մուիրում էջերը եւ լուսանկարը, էջ 190-199:

ԷԼԻ ՆԱԶԱՐԵԱՆԻ ԱՅՍ ԳԻՐՔԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԻՄՈՆԵԱՆ

Յարութիւն Սիմոնեանը կրտսեր եղբայրն է հանրայայտ գրագետ ու հրատարակիչ՝ Սիմոն Սիմոնեանին:

Ան, փոքր տարիքէն ստիպուած ըլլալով նետուիլ կենցիկի ասպարիզ, թեւ չէ կրցած ունենալ բարձրագոյն ուսում, բայց հետեւելով իր երեց եղբոր գրապաշտութեան, եղած է գրասէր մարդ:

Տիրապետել է ետք կենցիկի պայքարին մէջ գործարարութեան գաղտնիքներուն, Յրթ. Սիմոնեան հասած է նիւթական բարձր բարեկեցութեան, հեռաւոր Զուիցերիոյ մէջ հիմնելով ժամացոյցի գործարան:

Վերջին երկու տասնամեակներուն, երբ Յրթ. Սիմոնեանը արդէն տէր է հատուն տարիքի հասած երեք զաւակներու (երկու աղջիկ, մէկ մանչ) կիրքով մուիրուած է հայ գիրքի տպագրութեան գործին:

Հայաստանի մէջ բարձր զնահատուած են Յրթ. Սիմոնեանի մեկեցատութեամբ լոյս տեսած գիրքերը: Պէտք է արձանագրել այստեղ, որ անոր նիւթական օժանդակութեամբ լոյս տեսնող գիրքերու ցանկը արդէն հասած է երեսունի (տեսնել ցանկը այս գիրքին վերջաւորութեան):

Ինչպէս Յրթ. Սիմոնեանը, նոյնպէս անոր եղբայրները՝ Սիմոն եւ Գրիգոր Սիմոնեաններ, ծնած են Այնթապ սասունցի հօրծէ (Սասնայ Կերմաւ գիւղէն Օվէ):

Յրթ. Սիմոնեանը ինքզինք նկատելով թէ՛ սասունցի, թէ՛ այնթապցի (մայրը այնթապցի էր), վերջին տարիներուն լայն հետաքրքրութիւն ցոյց կու տայ այն բոլոր հարցերուն որոնք կապուած են այնթապցիութեան հետ: Իր վառ հետաքրքրութիւնը կեդրոնացած է յատկապէս Երուանդ Պապայեանի գլխաւոր խմբագրութեամբ լոյս տեսած «Պատմութիւն Այնթապի Հայոց» գիրքին Գ. հատորին վրայ, ուր Յրթ. Սիմոնեանը նկատած է բացթողումներ:

Այս կապակցութեամբ, ան նպատակի վերածած է տեսնել 4րդ հատոր մը «Այնթապի Հայոց Պատմութեան», որ ըլլայ լիակատար ու

անթերի, զերծ բացթողումներն ու մոռացումներ:

Այս ուղղութեամբ ան լծուած է աշխոյժ աշխատանքի, թղթակցութիւններ պահելով մօտիկ ու հեռաւոր պարող այնթապցիներու հետ Ամերիկայէն մինչեւ Սուրիա-Լիբանան, Ֆրանսա եւ այլուր:

Չեն բաւեր թղթակցութիւնները նամակատան միջոցաւ: Կ'օգտագործէ հեռատիպն ու հեռախօսը:

Արդէն գտած է հարիւրտ անելի անուններ որոնք ծնած ըլլալով այնթապցի ծնողներ, սփիւռքի մէջ հասած են բարձր պաշտօններու:

Յրթ. Սիմոնեանը այդ բոլոր անունները կ'ուզէ տեսնել հրատարակելի (եմթադրաբար) Այնթապի Դայոց Պատմութեան 4րդ հատորին մէջ:

Այս բոլորին կողքին ինքզինք խորապէս սասունցի զգալով, Յրթ. Սիմոնեանը յանձն առած է վերանորոգել դպրոց մը Դայաստանի սասունցիաբնակ Աշնակ գիւղին մէջ:

Այնթապ ծնած, Դալէպի Այնթապու Կրթասիրաց վարժարանի շրջանաւարտ Յրթ. Սիմոնեանը հաստարիմ այնթապցիական ամեն շարժում քաջալերելու իր սկզբունքին, ահա կը դառնայ մեկեանսը այնթապցի էլի Նազարեան հրապարակագիրի այս գործին:

Էլի Նազարեանը հայ գիրի համեստ սպասարկու մըն էր: Ան շրջան մը եղած էր խմբագիրը 1927-1946 Դալէպի մէջ հրատարակուած «Եփրատ» օրաթերթին եւ տիրապետած ըլլալով ֆրանսերէն լեզուին, եղած էր նաեւ օգնական խմբագիրը Դալէպ լոյս տեսած ֆրանսերէն «Էքլէր Տիւ Նոր» օրաթերթին:

Էլի Նազարեանը կապուած ըլլալով Շահան Շահնուրի գրականութեան, թղթակցութիւն պահած է հայ անուանի այս արձակագիրին հետ եւ իր գործօն մասնակցութիւնը բերած Շահան Շահնուրի օգնութեան այն նախաձեռնութեան որուն մասնակիցները եղած են Պարզեւ Նազարեանն ու գրող-ուսուցիչ Սարգիս Եափուճեանը Դալէպի մէջ, այն օրերուն երբ մեծ գրագետը անբուժելի հիւանդութեմէ մը կը տառապէր:

Եւ ահա երբ 1998ի ամրան էլի Նազարեանը անակնկալօրէն կը մահանար, Յրթ. Սիմոնեանը բազմաթիւ անգամներ Լոս Անճելըսէն Դալէպ հեռախօսելով կը յայտնէր մեզի թէ ինք պատրաստ էր էլի Նազարեանի յօդուածներու մէկ ժողովածուի հրատարակութեան մեկեանսը դառնալ:

Մենք մեր կարգին կը թելադրենք, որ այդ աշխատանքը կատարել արձակագիր Արամ Սեփեթեանը որուն հայթայթել կը խոստանայինք այս կապակցութեամբ էլի Նազարեանի տանը մէջ գտնուող նիւթերը:

Այստեղ պարտք կը զգանք մեր շնորհակալութիւնը յայտնելու «Շիրակ» ամսագրի խմբագրութեան, որուն թղթածրարներուն մէջ կը գտնուէր էլի Նազարեանի անտիպ մնացած մէկ ուսումնասիրութիւնը Շ. Շահնուրի մասին: Այս եւս կարելի եղաւ հիւրընկալել սոյն հատորին

մէջ իրբեւ վերջին մէկ անտիպ մասունքը հանգուցեալ հրապարակագիրին:

Ու հիմա, գործը որ տպագրուած է:

Յարութիւն Սիմոնեանը իր այս նախաձեռնութեամբ մամուլի էջերէն գիրքի մը ապահովութեան յանձնած կ'ըլլայ հայ գիրի համեստ րայց նուիրեալ աշխատաւորի մը գործը: Մարդ մը՝ էլի Նազարեանը, որ իր տղայ տարիքէն մինչեւ կեանքին վերջին շունչը (83 տարեկան էր) գրիչը վար չդրաւ, մնալով մնայուն աշխատակիցը «Զարթօնք» օրաթերթին:

Յ. Սիմոնեանը մեծ յոյսեր կապած էր երկու անուններու որոնք պիտի իրականացնէին իր մէկ երազը՝ պատրաստել Այնթապի Դայոց Պատմութեան 4րդ հատորը: Այդ անուններն էին Լեւոն Վարդանն ու էլի Նազարեանը, որոնք յաջորդաբար մահացան բայց որ չկրցան իրենց հետ տանիլ Յրթ. Սիմոնեանի երազանքը:

Այդ է պատճառը որ Յրթ. Սիմոնեանը կը շարունակէ հետապնդել իրագործումը իր երազին:

Գնահատելի երազ: Կա՛յ երազներ չունեցողին:

Բայց առ այժմ իրականացած այս երազը էլի Նազարեանին այս գիրքը:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Դալէպ, 24 Նոյեմբեր 1999

ՄԵԿԵՆԱՍԻՆ ԽՕՍԸ

Ինչո՞ւ ուզեցի հրատարակել Էլի Նազարեանի այս ժողովածուն:

Նախ ըսեմ թէ պատահելությունն էր ճանչնալի զինք: Ան, աագ եղ-
բորս՝ Սիմոն Սիմոնեանի դասընկերն էր. նոյն տարին շրջանաւարտ Հա-
լէպի Կրթասիրաց վարժարանն: Էլին սրտակիցն էր եղբորս: Ան դասա-
րանին մէջ կը մրցէր եղբորս հետ առաջնութեան համար:

Աւելի ուշ, ինք երիտասարդ, կը տեսնէի զինք Թիլէլ փողոցի ճամբուն
վրայ, երբ կ'երթար Eclair Du Nord թերթի խմբագրատունը ուր կ'աշխա-
տէր որպէս խմբագիրի օգնական:

Մտաւորական մարդ էր: Յաճախ կը հանդիպէի իր յօդուածներուն
մեր պարբերական մամուլին մէջ: Հետաքրքրութեամբ կը կարդայի իր
գրած յօդուածները որոնք մեծ մասամբ ունէին ազգային բնոյթ:

Գիտէի թէ Էլի Նազարեանը կը բոքակցէր Շահան Շահնուրին հետ.
որուն գործին հիացողներն էր:

Օր մըն ալ իր ստորագրութեամբ յօդուածի մը հանդիպեցայ ուր դրա-
պէս կը գնահատէր Այնթապի Պատմութեան Գ. հատորին իմ հրատարա-
կած Յաւելուածին մասին:

Այդ յօդուածը առիթ ստեղծեց, որ գտնեն իր Հալէպի տան հեռախո-
սին բիւր եւ այդ օրէն սկսեալ շաբաթը անգամ մը կապուիլ իրեն. խօսիլ
հայ մշակոյթի մասին:

Յիսուն տարիներ տեսած չէի զինք: Բայց սիւս իր ձայնը հեռախօսէն
կը հնչէր երիտասարդի կորովով:

Ինչե՞ր չէինք խօսեր իրարու հետ: Ինք եւս ինծի պէս Այնթապի
պատմութեան Յրդ հատորին մէջ կը գտնէր մտազոմներ, անտեսումներ եւ
կ'ուզէր որ 4րդ հատորը մը եւս հրատարակուի ուր մեծարուին բոլոր մտ-
ցուած այնթապցիները որոնք իրենց ասպարէզներուն մէջ մեծ ծառայու-
թիւններ մատուցած էին ազգին:

Լայնօրէն արծազանգ գտնէր Պողարեան Նորայր Սրբազանին մահը
քանի որ ան հեղինակն էր կոթողային գործերու:

Էլի Նազարեանը
արդէն իսկ կազմած էր
մոռուած այնթապցիներու
200ի մօտեցող ցանկ
մը:

Մեր երկուքին կար-
ծիքները համահունչ էին
4րդ հատորի մը պատ-
րաստութեան կապակցու-
թեամբ:

Էլի Նազարեանը
տեղեակ էր Պրն. Գրիգոր
Պողարեանի այն կար-
ծիքին, որ Սիմոն Սիմոն-
եան եղբայրս եթէ արիւնի ճամբով սասունցի էր, մօրը կողմէ այնթապցի
ըլլալով, ծնած ըլլալով Այնթապ, աւարտած ըլլալով Հալէպի Այնթապու
Կրթասիրաց վարժարանը, կը սեպուէր նաեւ այնթապցի, քանի որ մեծցած
ու սնած էր շունչովը այնթապցիներ՝ Բարզէն Աբոռակից Կաթողիկոսի եւ
Շահի Սրբազանի, Անթիլիասի մայրավանքին մէջ:

Էլին համաձայն էր որ մենք Սիմոնեան եղբայրներս, ինչպէս Շարլ
Ազնաւուրը կ'ըսէ. «Հարիւր տոկոսով ֆրանսացի են եւ հարիւր տոկոսով
հայ» մենք եւս հարիւր տոկոսով Սասունցի ենք եւ հարիւր տոկոսով Այն-
թապցի:

Էլի Նազարեան ճանչցած ըլլալով մօրաբոյրս եւ վերահասու ըլլալով
անոր՝ Զոյր Ֆիլոմէնի ազգային ծառայութեանց, մեծապէս կը գնահատէր
գայն եւ կ'ուզէր տալուած տեսնել անոր կենսագրութիւնը:

Բայց ափսո՛ս, անակնկալօրէն մահացաւ Էլի Նազարեանը որ քաջ
այնթապազէտ մըն էր: Ես կորսնցուցի սիրելի բարեկամ մը: Միաժամանակ
այլ ցաւալի կորուստ մը ունեցանք ու վաղահասօրէն մահացաւ նաեւ բա-
նաստեղծ ու պատմաբան Լեւոն Վարդանը: Երկու այնթապցիներ որոնք
ունէին լայն ձեռնհասութիւնը պատրաստելու Այնթապահայոց Պատմու-
թեան 4րդ հատորը, ուր խորհրդակցեցաբար կը ստաւէինք հարիւր էջ մըն ալ
անգլերէնի քաժին մը ունենալ անգլիախօս նորահաս սերունդին համար:


Ափսո՛ս այս կորուստներուն:

Ահա այս բոլորը պատճառ եղան որ ստաւէն կորուստ փրկել Էլի
Նազարեանին վաստակը, նկատելով որ անոր յօդուածները կը մնային
ցրուած հայ մամուլին մէջ:

Առ այդ դիմեցի գրող ու հրատարակիչ Արամ Սեփերճեանին ու Թո-
րոս Թորանեանին որպէսզի մնան գործ մը կենսի գալ:

Ահա ամբողջ պատմութիւնը:

Առ այժմ երազ կը մնայ Այնթապահայոց նուիրուելիք 4րդ հատորին



պատրաստութիւնը որուն համար առատ միջ ձգած է մեզի բոլորէն սիրուած Կրթասիրաց վարժարանի երկարամեայ տնօրէն՝ հանգուցեալ այնքապագետ Գրիգոր Պօղարեանը: Բայց այդ գիրքը պէտք է պատրաստուի որպէսզի լայն տեղ յատկացուի ոչ միայն Նորայր Սրբազան Պօղարեանի կեանքին ու գործին, որ այնքապահայոց պարծանքն է, ոչ միայն Երեսնի ժեներալ Գարամանուկեանի անուան դպրոցին մասին, եւ կամ Սիմոն Սիմոնեանի, որու մասին Գրիգոր Պօղարեանը գրած էր «Այնքապականք»-ի Ա. հատորին մէջ. «Սիմոն Սիմոնեան, որ 1948ին, որպէս դպրեվանքի դասախօս, «Հասկ»-ի խմբագիր եւ Գարեգին Կաթողիկոսի գիտաշխատակից Հալէպէն Ամբիլիաս հրատիրուած էր, 1955ին, Պէյրութի մէջ կը հիմնէ սեպհական մեծ տպարան մը, Դալդուլ փողոց, արդիական մեքենաներով եւ այլազան ճոխ տառամբերքով: («Սեւան» կոչուող) այս տպարանին հիմնական առաջադրանքն էր հայկական դպրոցներու տալ դասագիրքերու լրիւ շարքեր, վեցական հատորով»:

Եւ ոչ միայն այսքան: Նոր պատրաստուելիք այս հատորը պիտի ունենայ հարիւրաւոր այլ անուններ՝ որոնց կարգին Վահէ Կիլէսէրեանին ու Բարգէն Աթոռակից Կաթողիկոսին, որոնք տարագրութեան մքին օրերուն կորուստէ փրկեցին կոթողային գործերու ձեռագրեր: Եթէ Գ. հատորին համար Ե. Պապայեանը օգտագործէր Գր. Պօղարեանի «Այնքապականք» գիրքին Ա. հատորը, բազում մոռացումներ կը խնայուէին:

Այդ հատորին պատրաստութիւնը երազանքն էր Էլի Նազարեանին, երազանքն է նաեւ ին՝

Առ այժմ, ահաասիկ լոյս կը տեսնէ Էլի Նազարեանին գործը:

Պատրաստողներուն կ'երթայ իմ շնորհակալութեան խօսքը:

Այսպէս, թող երկրորդ կեանքով մը ապրի ինձի համակարծիք Էլի Նազարեանը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԻՄՈՆԵԱՆ

Էնսիմօ, ԱՄՆ
1 Օգոստոս 1999

ՆԱՀԱՆՋԻ ՀԵՓՈՐԱՀԱՐԸ՝
ՀԱՀԱՆ ՀԱՀՆՈՒՐ



Շահան Շահնուր Լիսսեմպուրի պարտզին մեջ (1925?)

ՆԱՀԱՆՁԻ ՇԵՓՈՐԱՀԱՐԸ՝ ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ (1903–1974)

Կենսագրական Ակնարկ՝ Մահուան Զանգամեակին Առիթով

Քսան տարի կ'ընէ, որ կեանքէն հեռացաւ «Նահանջը Առանց Երգի» վէպին անմահ հեղինակ Շահան Շահնուր (Շահնուր Քէրէսթէճեան), ֆրանսերէն գրչանունով՝ Արմէն Լիւպէն:

Անոր կեանքին դիտաւոր հանգրուանները եղած են:—

1903, 3 Օգոստոս – 1923 Օգոստոս:—

Մնած Սկիւտար (Պոլիս), պատանեկութիւն, երիտասարդութիւն, դաստիարակութիւն, ծագրանկարիչ:

1923, Սեպտեմբերի առաջին օրերուն, խոյ տալով թրքական Հալածանքներէն, կը հասնի Փարիզ, ուր կ'աշխատի իբր լուսանկարչի վերհպիչ (Retoucheur):

1929 Մայիս–Սեպտեմբեր. «Նահանջը Առանց Երգի»-ն կը հրատարակուի որպէս թերթի «Յառաջ» թերթի մէջ:

1933, լոյս կը տեսնէ «Յարալէզներու Դաւաճանութիւնը»:

1936, կը մտնէ Սալփեթրիէր հիւանդանոցը. կը փճացնէ իր ձեռագիրներէն մաս մը:

1936, 23 Նոյեմբերին, Սէն Մօրիսի ապաքինարանը:

1939 Մարտ 6, Պրուսէյի հիւանդանոցը:

նոյն թուականին, հիւանդ փուլի ցաւով, կը փոխադրուի Փոլի, Պասֆիրենէ) հիւանդանոցը:

1940–1943, Պիտարի (Պասֆիրենէ) Սանաթորիոմը:

Այս առթիւ, 1941ին, կը փճացնէ իր ձեռագիրներուն մնացեալ մասը:

1943–1945, կրկին Փոլի (Պասֆիրենէ) հիւանդանոցը:

1945–1947, Լապէնի (Լանտ) Հէլիօ Մարէն ապաքինարանը:

1947–1959, Փեսաքի (Փիրօնտ) Սանաթորիոմը:



1959–20 Օգոստոս 1974, Սէն Ռաֆայէլի (Հայկական) օճախը կը մահանայ վերջին թուականին ու կը թաղուի Փէր Լա Շէզի փարիզեան գերեզմանատունը:

* * *

Շահան Շահնուրի, 15 Յունիս 1945 թուակիր, մեզի դրկած իր ձեռագիր կենսագրութիւնէն կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները:

Շահան Շահնուր Քէրէսթէճեան ծնած է Սկիւտար (Պոլիս), 3 Օգոստոս 1903ին, Եէնի Մահալլէ թաղին Բապրիսթան փողոցի թիւ 23 բնակարանին մէջ. Շահնուրին ծննդավայր տունը գոյութիւն չունի ներկայիս, 1978ին ճամբու դացած ըլլալով:

Շահնուրին հօրեական մեծ հայրը՝ յունական ծագում ունէր եւ օսմանեան արբունիքի մէջ դերձակ էր: Հայրը՝ Զաքար Քէրէսթէճեան սկիւտարցի, նոյնպէս արհեստով դերձակ: «Հեղահամրոյր, սակաւախօս եւ ցւալագիտօրէն դիւրագոյց» անձ մը. մայրը՝ Թագուհի Պօզանեան—Լապճիճեան, նմանապէս սկիւտարցի: «չատ սրամիտ, զուարթ, աւելի դիւրագոյրու եւ շուսլ»: քոյրը Հերմինէ, Շահնուրէն մէկ տարեկան մեծ:

Զաքարի մեծ եղբայրը՝ դեղագործ Օննիկ Քէրէսթէճեան, մեծ ընթերցող մըն էր «Արուելեան Մամուրի, որ լոյս կը տեսնէր Զմիւռնիա (Բզմիր), Մատթէոս Մամուրեանի կողմէ, որուն ծածկանունն էր Շահնուր: Ի յարգանս անոր, Զաքար այդ գրչանունը տուած է իր եղբոր որդւոյն, երբ զինքը կոչած են կնքահայրութեան: Կնունքը տեղի ունեցած է Սկիւտարի Սուրբ Կարապետ եկեղեցւոյ մէջ եւ այսպէս առաջին անգամ ըլլալով, վերոյիշեալ ծածկանունը վերածուած է մականունի: Յետագային, ի յարգանս եւ ի հիացումս Պէրպլէրեան Գոլէճի տնօրէն Շահան Պէրպլէրեանի, պիտի կազմուէ իր գրչանունը՝ Շահան Պէրպլէրեանի եւ իր անուններուն կցումով՝ Շահան Շահնուր:

Տիկին Թագուհիի հայրը՝ Երզնկացի Մահտեսի Գրիգոր Պօզանեան, ընտանեկան անհամաձայնութեան մը պատճառաւ, լքած էր Պօզանեան անունը եւ ինքզինք կոչած Լապճիճեան, իր արհեստին անուանակոչումը վերածելով ընտանեկան անուան, բայց իր մանչ գաւակները՝ Տօքթ. Մամուլէյան եւ Թէոդիկ, չեն գործածած Լապճիճեան մականունը պաշտօնական դիւաներէ անդին: Այսպէս է որ արեւակցական եւ խնամարկան կապ կայ մօրեական կողմէ, զբաղէտներու եւ լրագրողներու ձեռ, ինչպէս Բիւզանդ Պօզանեան, Տիրան Ջրաքեան, Վրթանէս Փափագեան:

Շահնուր յաճախած է Սէմէրճեան ճեմարան թաղային երկսեռ վարժարանը, որ կիսաւարտ թողած է, երբ նորակառոյց այս ճեմարանը վերածուած է թրքական հիւանդանոցի, Տարտանէլի «ճակատամարտի» օրերուն: Տասներեք տարեկանին մտած է յայտնի մանկավարժ Ռեթէոս Պէրպլէրեանին հիմնած Պէրպլէրեան գոլէճը, որուն տնօրէնն էր իր որդին՝ հոգե-

րան—արուեստարան եւ փիլիսոփայ Շահան Պէրպլէրեան: Տասնութ տարեկանին, 1921ին, Շահնուրը բնակաւարտ կ'ըլլայ գոլէճէն, ստանալով «պսակաւոր ի դպրութիւն» վկայականը: Եղած է առաջնակարգ աշակերտ Քրանսերէն լեզուի, զբաղանքային եւ զժազրութեան մէջ, ստանալով «պսակաւոր մրցանակը բանաստեղծութեան մէջ, արձակ քերթուածով մը, որուն խորագիրն էր «Լացի Գիշեր»: Ամովերջի գրական նաւասարդեան իմացական մրցանքներու դատական կազմի անդամներն էին՝ Միքայէլ Շամտանճեան, Շահան Պէրպլէրեան եւ Վահան Թէքէեան, որ կ'ըսէ տնօրէնին: «Այս տղան պիտի ըլլայ մէկը»:



Շահան Շահնուր իր ծնողքին հետ, 3 Մարտ 1919, Խսթանգուլ

Վերոյիշեալ կենսագրականին մէջ Շահնուր կ'աւելցնէ.—

1918ին, զինադադարի առաջին օրերուն իսկ, երբ պոլսահայ թերթերը կը սկսին վերստին լոյս տեսնել, առաջին անգամ Շահնուրի ստորագրութիւնը կ'երեւի, ո՛չ թէ՛ զբաղան նիւթերով, այլ գաւեշտաթերթերու մէջ, որպէս ծաղրանկարիչ: 15 տարեկանին լոյս տեսած է իր առաջին ծաղրանկարը՝ «Ռեթօք Դաւիթ» գաւեշտաթերթին մէջ, Պոլիս Շահնուրին գծագրութեան ոճը, իրեն «նոր ոճ» ուշադրութիւնը գրաւած է Երուսաղ Օտեանին եւ Յովհաննէս Ասպետին, որոնք զինք հիւրընկալած են «Վերջին Լուր»ին մէջ, ուր երեւցած է զրազէտներու եւ ազգային գործիչներու դիմանկարներով: Ինչպէս Եղիշէ Արքեպսկ. Դուրեան, Հրաչեայ Տէր Ներսէսեան, Յովհաննէս Ասպետ, Յարութիւն Մրմրեան, Յ.Ծ. Սիրունի եւայլն: Այն թուականին, յայտնի ծաղրանկարիչ Ա. Մարութեան, նշմարած է անոր տաղանդը եւ քաջալիրած է զինքը. այսպէս, առջի մէկ օրէն, երեւան կու-

1892 թ. հունիս 13-ից հետո Գրեյնի Գրադարանը
 մաս 1-3 ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը
 հանգրվան 1-ը ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը
 [1892 թ. հունիս 13-ից հետո Գրեյնի Գրադարանը
 մաս 1-3 ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը
 հանգրվան 1-ը ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը]

1929 թ. հունիս 13-ից հետո Գրեյնի Գրադարանը
 մաս 1-3 ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը
 հանգրվան 1-ը ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը
 հանգրվան 1-ը ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը

1921 թ. հունիս 13-ից հետո Գրեյնի Գրադարանը
 մաս 1-3 ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը
 հանգրվան 1-ը ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը

1923 թ. հունիս 13-ից հետո Գրեյնի Գրադարանը
 մաս 1-3 ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը
 հանգրվան 1-ը ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը

1925 թ. հունիս 13-ից հետո Գրեյնի Գրադարանը
 մաս 1-3 ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը
 հանգրվան 1-ը ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը

1926 թ. հունիս 13-ից հետո Գրեյնի Գրադարանը
 մաս 1-3 ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը
 հանգրվան 1-ը ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը

1927 թ. հունիս 13-ից հետո Գրեյնի Գրադարանը
 մաս 1-3 ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը
 հանգրվան 1-ը ընդհանուր 1343 հանգրվաններով և մաս 4-ը

Ըստ Գրեյնի Գրադարանի հիմնական գրադարանային քարտերի:

Կայ Շահնուրին խորագրին միտքը, սրատես աչքը և հիւմորի հանդէպ իր
 տառաւորութիւնը:

Շահնուր «սեւ աշխատանք» կատարած է Միքայէլ Շամտանճեանի
 «Պատանին մէջ», կատարելով թարգմանութիւններ, բայց մասուն կերպով
 աշխատակցելով իր ժողովրդի «Ամէնուն Տարեցոյց»ներուն, Պոլիս,
 լիտաւային շարունակելով իր աշխատակցութիւնը Փարիզի մէջ:

1921-1923 թուականներուն, հաւանարար հետեւած է լուսանկարու-
 թեան և որբուշի, օգտագործելով գծագրութեան հանդէպ իր ունեցած բնա-
 ստոր ձիրքերը Կերակուրի այս արեստը, խոր արմատներ ձգած է իր մէջ,
 քանի որ կ'ըսէ տեղ մը. «ես որբուշտը եմ և որբուշտը պիտի մնամ»:
 Այսինքն միշտ պատրաստ որբուշի ենթարկելու իր ստեղծագործութիւնները,
 ինչ որ մասամբ իրագործեց լիտաւային: Նոյնիսկ կը փափաքէր վերհարմրի
 ենթարկելու իր «Նահանջը», որ ըստ իրեն ունէր երիտասարդական առաւե-
 լութիւններ և թերութիւններ: Կ'աւելցնէ տեղ մը. «Պիտի մնամ միշտ դժգոհ
 ես ինձմէ և յաւիտենապէս չքաւարարուած»:

1923 Սեպտեմբերին, խոյս տալով թրքական շարդերէն, բեռնատար
 նստու մը վրայ, կը մեկնի Ֆրանսա ու կը հաստատուի Փարիզ: Կենսաշա-
 հուսեան համար, կը գրադուրի լուսանկարութեամբ և որբուշտով, այս ձևով
 իրագոյն դառնալով սթիւտիոններու ներքին ու մութ ծալքերուն, որոնց
 արձագանքը պիտի գտնենք «Նահանջ»ին մէջ: Առողջական պատճառներով,
 կը նախընտրէ որբուշի գործը կատարել իր սենեակին մէջ: Իր մասնագի-
 տութիւնն էր Անկախիվներու և ԸԻՆՆերու վրայ վերականգնել նուագա-
 սրահներու մերկ պարուհիներուն կթած կուրծքերը ու նաև գետնի վրայ
 ուրրներու դիմանշանները:

Երջան մը, 1925ին, ծառայութիւն մատուցած է Կիւմուշեան անուն
 գրականատի մը, որ իրեն նուիրած է Կէօթիի և Շիլլէրի թղթակցութեան
 գեղատիպ հատորը: 1941ին, Տիկիլ Մատրլէն Ծօլլէն, նոյն գիրքը կը նուիրէ
 իրեն: Շահնուր դառնութեամբ կ'ըսէ թէ իր բառասանմեայ կենսաբան ըն-
 թացքին, միայն երկու անգամ ստացած է կաղանդի նուէր, զարմանալի գու-
 ղադիցութեամբ մը՝ միեւնոյն գիրքը:

1926ին, իր ուսումը կատարելագործելու նպատակով, դիմած է Լեւոն
 Բաշախանին, Նուպարեան Փոստէն կրթաթոշակ ստանալու համար, սակայն
 սպարդիւն: Շահնուր կը սկսի հետեւիլ Ֆրանսական դրական նոր շարժում-
 ներուն, յատկապէս գերիբազատ շարժումին, որ նորութիւն էր, սակայն
 ան չի տարուիր վերջնականապէս: «Ընտրեցի ինչ որ ընտրելի էր հոն», կ'ըսէ
 Շահնուր:

1927ին, կը մասնակցի «Յարգող» գրական խմբակցութեան, որուն
 անդամներն էին Շ. Նարդուհի, Ն. Սարաֆեան, Լաս, Օսան Կարո, Հր. Չար-
 դարեան, Եր. Սարգիսեան, Հ. Կարաբեան, Յար. Ֆրէնկեան, Եղ. Տարոնեան,
 Յրթ-Կոստանդեան, Բ. Թօփալեան, Կ. Սասունի, Գ. Ճիլմէճեան, սակայն
 այս յարումը ոչ ամբողջական: «Ես իմ սերունդիս գրողներէն կը մնայի

հետու, անոնք զիս չէին հետաքրքրեր: Բան մը չէին, անոնք զրազած էին թերթի պայքարներով, կոխերնով,— պիտի ըսէր Եահուր: Թէոդիկ, իր մօրեղբայրը, հաստատուած ըլլալով Փարիզ, Եահուրը մեծապէս կ'օգնէ անոր: 1929ի հատորին մէջ լոյս կը տեսնէ իր մէկ ուսումնասիրութիւնը՝ «Նկարչութիւն եւ նկարիչներ»:

Կարճ ժամանակ մը բնակած է Լատինական թաղ (Քարթիէ Լաթէն) եւ 1927 Փետրուարէն սկսած Մոնփարնասի Ամերիքըն Զօթիկն մէջ, 15 թիւ, Պրէս փողոց: Այս պանդոկի վերնաշարկի իր սենեակին մէջ, վերջին յարկ, գրած է իր «Նահանջը Առանց Երպիշն», 1927 Նոյեմբերէն մինչեւ 1929 Յունուար շրջանին: Այս պանդոկին մէջ է որ հիւանդացած է: Այս շրջանին, յաճախած է Մոն Սէն Միշէլի սրճարանը եւ Անի ճաշարանը:

5 Յունիս 1928ին, պաշարէրէյի համազօրագիր մը ստացած է Փարիզի Համալսարանի գրական Փաթիլթէն եւ 1928—1932, պաշտօնապէս արձանագրուած է Համալսարան, որ ըստ Ա. Գարտաշեանի, Սորպրնի Համալսարանն է: անոր շնորհիւ, բնակած է ուսանողական ոստանի Մարի—Նուպար հիւանարկութեան շէնքը՝ Մէզօն Արմէնիէն, 41 պուրլար ժուրտան:

Ապրիլ 1931էն սկսած, 9 ամիս անցուցած է Տրանսալի հարաւը, առողջական պատճառներով, Բամպո—Է—պէին Պելլլիլի պանդոկը: Այս շրջանէն, Եահուրը սան է Եղիպեան Յանձնախումբի (Եգիպտոս), ամիսը 8-5 եգիպտական ոսկի, շնորհիւ Վահան Թէքէնի: Ըստ Եահուրի ինքնակենսագրութեան, Ֆրանսերէն սկսած է գրել 1921ին, այսինքն երբ Պէրպլէրեանի վերջին դասարանի աշակերտ էր, գրական խորունկ նախընտրութիւն մը ցոյց տուած է դէպի այն «դպրոցը, որ ծանօթ է ֆրանսական գրականութեան մէջ "L'Ecole de la Rue Ravignot" անունով, որուն գլխաւոր ներկայացուցիչներն են Կիլեօս Ափօլլիներ, Անտրէ Սալմոն եւ Մաքս Ժազոպ, որոնց հետ Եահուրը անձնապէս ծանօթացած է Փարիզ, 1930ին եւ հիւրընկալուած անոնց շրջանակին մէջ:

Տրանսալի հասնելէն յետոյ, գրած է Ֆրանսերէն «Վէն Տէօ» վերնագրուած գրութիւնը: ան չի գոհանար հանդիպել զերկրապաշտներուն, նաեւ կը մասնակցի հանդիպումներուն «Լա ուրվի Սաթեան» եւ Ժազ Մարէի «Օ Ֆէօ Ինիւթիշին, ուր պիտի երեւի առաջին անգամ ըլլալով իր Ֆրանսերէն գրչանունը՝ Արմէն Լիւպէն ստորագրութեամբ, «Սենեակի դրացիներ» քերթուածով: Այս առթիւ, կը բարեկամանայ Ֆրանսացի յառաջապահ գրողներուն՝ Ժան Յօլլէն, Ֆերնան Մարք, Մաքս Ժազոպ, Բէտտեան, Ժազ Մարէ եւ Անտրէ Սալմոն, որուն կու տայ Մարա 1931ին, իր Ֆրանսերէն բանաստեղծութիւններուն տետրակը, կարգալու համար: Մեծապէս խանդավառ, Սալմոն կը ներկայացնէ Եահուրը Ժան Փոլհանին՝ Ֆրանսական գրականութեան սպարապետը եւ Ծորձ Տիւհամելին: Այսուհետեւ, Ֆրանսացի երիտասարդ բանաստեղծներու կարգին, կը յիշատակուի իր անունը: Մաքս Ժազոպ մամուլի մէջ գովասանքով կ'արտայայտուէր իր մասին եւ զայն կը հիւրընկալէ իր պատկերագրող հանդէսին մէջ: 1934ին, Եահուրը հատուած

մը կը տպէ անոր «Լէ գ'Ալիէ Սոն Ան Արմենի» երկէն՝ «Յառաջ»ի 24 Ապրիլի թիւին մէջ:

1935ին, գրական երեկոյթի մը ընթացքին, Եահուրը բախտաւորութիւնը կ'ուսննայ ծանօթանալու բանաստեղծ Ժան Յօլլէնի կնոջ՝ նկարչուհի Մատրէն Յօլլէնին հետ, որ կը դառնայ անոր հաւատարիմ եւ անձնուրաց բարեկամուհին, ամբողջ թառասուն տարի, մանաւանդ պատերազմի ընթացքին օգնելով անոր փոխանակուած են երկուստեք հարիւրաւոր նամակներ: Տիկին Յօլլէն, Եահուրէն ստացած է աւելի քան 400 նամակներ, որոնցմէ 13ը լոյս կը տեսնեն Ֆրանսական «էթիլտ» ամսագրի Մայիսի 1975ի թիւին մէջ, կարելոյր ներածականով մը, իսկ յետագային, յաւելեալ նամակներով թիւով 55, «Քայիէ Պլէօ» պարբերաթերթի (Թրոյ, Տրանսա) Զմեռ 84—85 Արմէն Լիւպէնին նուիրուած բացառիկ թիւին մէջ:

«էթիլտ»ի նամակներուն հրատարակութեան առթիւ, Անդրանիկ Ծառուկեան կը գրէ «Նալիլի» 20 Յունիս 1975ի թիւին մէջ. «Գրական յարսնութիւն մը... անկախ այն իրողութենէն որ այս նամակները իրենց իրենց մէջ իրական էջեր են եւ հարգաստ կը մասն Եահուրի ընդհանուր նկարագրին, իրականուածքին եւ գուարթ ու խալթող ոճին կը մասնաւորուին այլապէս բացառիկ յատկութեամբ մը... Այստեղ, ամբողջովին մերկ հողիով՝ եւ անկեղծութեամբ մը որ զինք անշահախնդրօրէն եւ իրապէս սիրող ուրիշ հողի մը միայն կրնայ ներշնչել իրեն՝ կը խօսի իր ցաւերէն, լման կենսագրութիւն մը, յարաբարակութեամբ վրայ երկարաձգուող զողոթնայէն, լման կենսագրութիւն մը, չարաբարակ կեանք մը նկարագրող խոստովանութիւններով: Ափսո՛ս, որ ցարդ չնախաձեռնուեցաւ հրատարակելու Եահուրէն երկեզու հազարաւոր նամակներուն նամակներն, որ իսկապէս արժէքաւոր ներգրուած մը պիտի ըլլար Եահուրագրատութեան համար: Աւելցնենք որ նկարչուհի Մատրէն Յօլլէնի հարիւրաւոր նամակները ուղղուած Եահան Եահուրին, գրադէպին մահուան գիշերը անյայտացած են: Արդեօք Եահուրը նախապէս փնտցուցած էր զանոնք: կը մնայ գաղտնիք:

«Նահանջի սկզբնական փորձը, կարգուած է Թէոդիկի: Ան առաջարկած է Եահուրին, պատմուածք մը գրել իր տարեցոյցին համար, սակայն գրութիւնը դեռ կիսաւարտ, յանկարծամահ եղած է Թէոդիկի: Եահուրը ինքզինքը ապատ զգալով, պատմուածքը վերածած է վէպի, որ «Յառաջ»ի մէջ լոյս տեսնելէ ետք որպէս թերթօն, կը հրատարակուի առանձին հատորով, 1929ին, Փարիզի Մասիս տպարանէն: «Նահանջը Առանց Երպի» տիպոգրօսի տակ, որպէս «պատկերագրող պատմութիւն հայոց»: Նախապէս, Եահուրը իր ձեռագիրը յանձնած է Թէոդիկին, որ զայն փոխանցած էր տպագրիչ Յակոբ Տէր Յակոբեանին, եւ որ զայն տուած է «Յառաջ»ի խմբագրապետ Ետարշ Միսաքեանին, ջերմ յանձնարարականով մը: Ե. Միսաքեան գնահատելով վէպը, որպէս թերթօն լոյս ընծայած է «Յառաջ»ին մէջ, 1929ի Մայիսի վերջերէն մինչեւ Սեպտեմբերի սկիզբը: Հակառակ յարուցուած «փոթորիկին» պահպանողական շրջանակներու կողմէն, Եահուրը Միսաքեան

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ



1920ից



1924ից



1921ից



1925ից

յատակ Շահնուրին տաղանդին եւ նորարար ոճին, կը մնայ անդրդուելի, թիրթիրին տպագրութիւնը հասցնելով իր աւարտին:

«Նահանջ»էն ետք, Շահնուր կը մասնակցի «Մենք»ի գրական շարժումին, 30ական թուականներուն: Մասնակիցներն էին՝ Ն. Պէշիկթաշեան, Յասան Շահնուր, Ղ. Մելոյան, Հ. Սարգիսեան, Հ. Զարգարեան, Յ. Ֆրէնկէան, Ոստանիկ, Գ. Գեղարքունի, Ն. Սարաֆեան, Բ. Թօփալեան, Փ. Միլաթեան, Ա. Տատուրեան, Զ. Որբունի, Վ. Շուշանեան, Ե. Նարդունի: Սակայն խմբակը կը պառակտուի, պատճառներէն մէկը եղած է Շահնուրի «Պոլսոյ զլրներ» գրութիւնը, հայ լեզուականներուն կեանքէն: յոյ տեսած «Մենք»ի Մայիս 1932ի թիւով:

Չորս տարի ետք, 1933ին, յոյս կը տեսնէ Շահնուրին «Յարպէզներուն Գաւառնութիւնը», պարունակելով վեց պատմուածքներ եւ շարունակելով անանդու թիւերը «պատկերազարդ պատմութիւն հայոց»ի: Անոր կարգ մը միտքերը, նոյնպէս դարձած են քննադատութեան առարկայ, թեր ու դէմ հատուածներով:

Տանք երկու օրինակներ—

Պատմուածքներէն մէկուն «Զաթոսթէ»ի գլխաւոր հերոսը՝ սափրիչ Միլիշ, կ'ընէ. «արունքներս կը պրկեմ անկողնին մէջ եւ յետոյ վերմակին վարի ծալքէն դուրս ելած մատներուս հետ կը խօսիմ ուռասայրէնով: մի՛ շարժիք՝ կ'ըսեմ անոնց եւ մատներս կը շարժին, շարժեցէ՛ք կը հրամայեմ եւ անսր կ'անշարժանան, քիթիս խնդարով»:

Միևնուր Միշէլը, երեսին կը պոռայ Տիկին Պէսթրիսին. «Եթէ դուն առողջ բլլալիք, դո՛ւն, գաղթահալու թիւն, մենք քեզ տուն կը կանչէինք, Հայաստանի դուները կը բանալինք քու առջեւ, բայց դուն հրանդ ես, դաշնակցութեան թոյնով վարակուած ես, դո՛ւն, գաղթահալու թիւն, եւ մենք կը թողուրք որ մնաս օտարութեան մէջ, մինչեւ այն օրը...»:

Շահնուրին գաղափարախօսութիւնը կը պատշաճի հետեւեալ ընթացքին.— «Ո՛չ աջակողմեան, ո՛չ ձախակողմեան, բայց չափաւոր կերպով անիշխանական ոգի, ոչ—համակերպող եւ խորապէս մարդկային»:

Սակայն Շահնուրի հրապարակագրական յօդուածներն են մանուսանդ, որ առիթ տեղեւած են սուր բանավէճի եւ իր անձին ու մտածողութեան հանդէպ թեր ու դէմ դիրքորոշումի: Ան աշխատակցած է «Եստակ», «Զուրթնոց», «Մենք», «Անահիտ» թերթերուն, բոլորն ալ Փարիզ յոյս տեսնող, բայց մանուսանդ «Ապագայ»ին, ուր յոյս տեսած են.— Յրանց Վերջիլ քոստանդ (1936), Վէպիմ Շուրջ (1936), Բանաստեղծ Սուլթաններ (1937), Վերջին խօսքս չափազանցութիւն (1937), Զապէլ Եսայեան կը գրէ (1937), Ղլախտ կորուսեալը (1938), Ընդմիջումներ (1938), Անտրը Թերիվ քորբերը կը կարդայ (1938), Վաւերաբոլոր (1938), Եղբուն մը (1939), նաեւ «Ինչը ոչինչէն լաւ է. Գամբոլը. Վալիբիէն թարգմանութեան մը առթիւ Աւոր հայի կարօտ. Ոսկիէ Կշիռը. Արդար գնդակահարութիւն մը Երեսանի մէջ»:

Պատահած է նոյնիսկ, որ բանակաւոր վերածուած է իսկական կռիւի: Զարգարեան եղբայրները՝ Հրաչ եւ Ռաֆայէլ, չկարենալով «մարտը» Շահ-

նուրին «Պարմա»-ը, անվանել կերպով յարձակած են արդէն հիւանդ Շահնուրին վրայ եւ խոշտանգած զայն Փափագեաններու Ֆլորա ճաշարանը ճաշած պահուն՝ 1938ին:

Այս առթիւ, մեր ցաւակցական նամակին պատասխանելով, Շահնուր կը գրէ—

Փարիզ, 10 Յունիս 1936

Պարոն Ե. Նազարեան
Հալւլ

Ազնի բարեկամ,

Ստացայ ձեր մէկ Մայիս քուակիրը եւ որկած երկու քերթերը. բայց դժբախտաբար չկրցի շուտով պատասխանել ձեր նամակին. հակառակ փափաքին: Նախ որ «Ապագան» գոցուած ըլլալով (առժամաբար) բաւական ուշ ձեռքս հասաւ ձեր նամակը. եւ յետոյ, վեց ամիսէ ի վեր կը տառապիմ ահաւոր հիւանդութեամբ որ կը կոչուի sciaticque, եւ որ ռոմաթիզմի տեսակ մըն է: Յատեն պատճառ կ'ըլլան որ ձգձգումներ ընեն ակամայ: Պէտք կա՞ ըսել որ խորապէս զգածուեցայ ձեր բարեկամական ջերմ սողոթեմ. համակրանքի ինքնաբոլոյս արտայայտութիւններն: Այս յարձակումը որոն ենթարկուեցայ Ջորդաբեանի երկու վատ եւ անբան զաւակներուն կողմանէ, իր օգուտն ալ ունեցաւ: Կը խոստովանիմ: Այսպէս է որ աշխարհի չորս ծագերէն անժամօք համակիրներ ձայն բարձրացուցին եւ իրենց յուզիչ նամակներով խրախուսեցին զիս: Նեցուկ եղան ինձ: Որովհետեւ ես եւ իմ նմաններս մեր շուրջը քանկազին նեցուկներ կը զգանք այն ատեն միայն, երբ կ'ունենանք շոշափելի արպացոյց թէ հեռաւոր անկիւններու մէջ կան հայեր՝ որոնք լրջօրէն կը գրադին գրակնութեամբ: Որոնք կը պահանջեն որ վերագնահատութեան ենթարկենք ոչ միայն անք բարաբազտները, այլ նաեւ գրագետները: Եւ իմ գոհունակութիւնս Այսպէս մեծ պիտի ըլլայ. երբ իմ ըրածս ծառայէ իրեն խթան. եւ ուրիշներ լծուին այդ աշխատութեան, այսօրուան ակնոցով բնմեն այն գիրքերը որոնք կոչուած էին մեզ պատրաստել ու կազմել՝ հոգեպէս եւ մշտապէս: Այդ աշխատութիւնը ոչ միայն կարելոր է, այլ նաեւ նուիրական:

Ձերդ
Շահան Շահնուր

Ֆլորա ճաշարանին խոշտանգումին առթիւ, դատապարտութեան գիր մը հրատարակեցին՝ Պայքար թերթի (Պոսթոն) 2—6—36 թիւով, Անդրանիկ Անդրէասեան, Ալեքսանդր Գրիքճեան, Սուրէն Մանուէլեան, Բենիամին Նուրիկեան, բոլորն ալ «Նոր Գիր» ամսագրի հիմնադիր անդամներ:

Այս առթիւ, Մկրտիչ Երիցանց, Նոր Երկիրի 2, 5, 7 Մարտ 1939ի թիւ-

րուն մէջ գրեց յօդուած մը. «Գրական Սոփանկութիւն» վերնագրով:

Անդրանիկ Մառուկեան, դաշնակ երիտասարդ մտաւորականներուն շարքի հրետանին, որ այն ժամանակ իր վարդապետ օրերը կ'ապրէր կուսակցական շարքերու մէջ, «Իմացական վիժանք» վերնագրով վերաւորական յօդուածաշարք մը ստորագրեց «Ազգակ»ի 30 Նոյեմբեր—8 Դեկտեմբեր 1938 թիւերուն մէջ:

Շահնուրին ազգային, քաղաքական իր կեցուածքը եւ գրական բնութեամբ, հակառակ արտայայտածելու եւ շեշտի տարբերութեան, ժամանակի ընթացքին փոփոխութիւն չեն կրած մինչեւ իր կեանքին վերջը: Փաստ՝ իր նամակը ուղղուած Գուրգէն Մահարին, որ իր «Արուստ Այգեան»-ները իր նուիրած էր Շահնուրին, եւ ան ալ, իր կարգին «Լիբանանուրիկ պահպանը» գրութիւնը ձօնած էր իր բարեկամին, հետեւեալ մակագրութեամբ. «Իմ բարեկամ Գուրգէն Մահարիի յիշատակին»:

Շահնուրին դիբորոշուած հետեւեալն էր. «Վարելի յառաջապահութիւն գրակնութեան մէջ եւ կատարել պահպանողականութիւն մեր ամբարն արքրուած եւ ցնցուած ազգային կեանքի, այսինքն քաղաքական—կուսակցական դիբորոշումին մէջ»:

Ան կը գրէր Գուրգէն Մահարին. «Երջանկութիւնս մեծ եղաւ, երբ հաստատեցի, թէ դուն կը մտածես ճիշդ այն, ինչ որ ես կը մտածեմ մեր «Կրթափոխականներու» գործին մասին: Ե՛նկիւր արարք մը նկատուի ամէն մեթոդայում ճշմարտութեան, որ հիմէն կը խախտէ մեր կոյր շօխիմքը, որ սուկուն է սաճմանին այս կողմ թէ՛ այն»:

1939 Մեպտեմբերին, այսինքն պատերազմի յայտարարութեան, իր բարեկամը Վահան Թէքէեան, որ վերստին ձեռք առած էր Եղիպտոսի «Արեւ»-ը, Շահնուրի առաջարկած էր զրկել թղթակցութիւններ Փարիզէն: Մէկ շատ մը միայն «Փարիզ պատերազմի նախօրեակին», կրցած է զրկել, կրկին հիւանդանոց երթալէ առաջ: Լրագրական այս կարճ յօդուածը եղած է անոր «վերջին գրութիւն»ը: Յետագային, նոր խորագիր մը կու տայ անոր. «Առաջին քայլեր փապուրդին մէջ»:

Սակայն սոցի թուականէն առաջ, 1938ին, Շահնուրի առողջութիւնը սկսած էր վատթարանալ. կը ստիպուի մտնել Սալիեթիէր հիւանդանոցը, ուր կը մնայ 133 օր: Ախտաճանաչումը ցոյց կու տայ հիւծախտաւոր բնութիւն վերք մը, որուն կ'ընկերանայ ջիղերու եւ մկաններու ընդհանուր տկարութիւն մը: 23 Նոյեմբեր 1938ին, Շահնուր կը զրկուի Սէն Մօրիսի ապաթիւնարանը, ուր կը մնայ մինչեւ տարույն վերջը:

Այս առթիւ, սրտաճմլիկ նամակ մը կը գրէ ժան Ֆօլլէնին. «Յաւուսիմ, սիրելի Ֆօլլէն, փափագ ունիմ լաւու... այս պահուս անտք չէ գալ զիս տեսներու... Հոս գիտ կ'արճամարճեն՝ քանի որ վախկոտ եմ»:

Ժան Փուլանին միջոցաւ, Արմէն Լիւպէնին բանաստեղծութիւնները կը հրատարակուին «Մըլիւր» ճանդէպին մէջ: Մեպտ. 1939ին, «Լա Նուվել Ռըվիլ» Ժրանսէզ» լուս կ'ընծայէ «Թու լը Թրաֆալկար» հիւանդի արձակ դրութիւնը, ներշնչուած առաջին օրերու իր հիւանդանոց կեցութեանէն: Վ.

Թէքէեան մասամբ Թարգմանած է գալն «Արեւ»ի մէջ, իսկ Մկրտիչ Երիցանց երկու բերթուած «Նոր Երկիր»ի մէջ:

Հիւանդանոցէն ելլելէ ետք, Եաշնուր կը վերադառնայ Մոնփարնասի Ամբրիբըն Զօթէյն իր սենեակը, շարունակելով գեղարուեստական ու հրապարակագրական իր աշխատանքները: Թադին Ռօն Փուան սրճարանին մէջ կը հանդիպի նշանաւոր բանաստեղծ Փոլ Վալերիին:

Պատերազմը նախորդող այս շրջանին, Եաշնուր կատարած է զրադարանապահ—բանասէրի աշխատանք, Մարկոսեանի ձեռագիրներուն ցուցակի պատրաստութեան համար:

1939 Մարտ 8ին, Եաշնուր կը հարկադրուի մտնելու Պրուսէ հիւանդանոցը, ուր կը մնայ 5 ամիս. ինձամոզ բժիշկը՝ Անտրի Սայմօնի բարեկամ Տօքթ. Մորէն, կը ձեռնարկէ ոսկորային պատուաստի մը՝ ողնայարը փրկելու համար ընդհանուր ոսկորատէ: «1939ի Ապրիլին Պրուսէ հիւանդանոցին մէջ, ոճրագործ վիրարոյժ մը, Տօքթ. Պասէ գինքը ջարդած է բառին իսկական առումով», կը գրէ Եաշնուր իր ինքնակենսագրականին մէջ: Յետագային, «մահացու սխալ» կ'որակէ գալն: Այս ձախորդ գործողութիւնը զուռ պիտի բանար առողջական բարդութիւններուն:

Պատերազմի յալարարութեան, հիւանդանոցները կը պարպեն տեղ տալու համար գիտուորականներու: Եաշնուր «ինքզինքը կը գտնէ փողոցին մէջ, առանց դրամի, տակաւին չգոցուած վէրքով եւ կերմութեամբ, անօգնական»: Կը վերադառնայ իր պանդոկը, կը գրկէ յուզումնալից նամակ մը Ֆոյլէններուն: «Իոյրը գիտ լքեցին, բաց օդ պէտք էր ինծի, սակայն ժամեր կ'անցընեմ նկուղին մէջ... ես որ պէտք է անշարժ մնայի, քիլոմէթրներով ճամբայ կը կարեմ... Մահէն աւելի, ես կը վախճամ պարպումէ, տեղափոխութենէ եւ աքսորէ»:

Այս օրերուն արձագանգն է, որ կը գտնենք իր «Առաջին քայլեր փապուղիին մէջ» գրութեան մէջ: Դժբախտաբար այս շրջանին կը պատահի իր ձեռագիրներուն փճացումը: Եաշնուր կը խոստովանի, «Առաջին ահագանգին Մալիքեթիէրի մէջ, ձեռագիրներու թէ՛ղը թեթեւացած էի, երկրորդ ահագանգին՝ Պրուսէ, ոչնչացումը աւելի տարածուն եղաւ»:

Ըստ Գրիգոր Եաշինեանի, ոչնչացումի արարքը, կապ ունի «Մահը եւ իր Արուարձանները», «Որդիք Որոտումն»ի շարունակութիւնը եւ այլ գրութիւններու հետ:

1939ի Սեպտեմբերի վերջերուն, անձուէր հայ բարեկամներ՝ Կարապետ եւ Հիւլեթ իսկէնտէրեան ամուրը, Մօնթ—Պեթարամի (Փրիենեաններ) մէջ սամբրիլութեամբ գրադող, կ'արգան Տաշնուրէն գալ բնակիլ իրենց օտա: Կը յաջողի, սպասուի ճամբորդութենէ մը ետք, սակայն ցաւը կ'աւելնայ: «Նոյնի մէջ գրել մը բռնելու ոյժ չունիմ: Հայրենակիցներս զիս կը խնամեն եւ կը կերակրեն իրենց գաւկիս պէս: Անոնք կերակուր չեն ուտեր, երբ իրենց նշանաւոր հիւանդը անօթի է», կը գրէ Ֆոյլէններուն: սակայն, Նոյեմբեր 1939ին, հիւանդութիւնը կը զգտնէ Եաշնուրը: 1940 Մայիսին, մաս մը դրամ՝ 10,000 Փրանք, կը ստանայ Եպիպտոսէն, իր բարեկամ Վ. Թէքէեանէն, որուն

չնորհի գինքը կը փոխադրեն Փոյի հիւանդանոցը, ուր կը մնայ ամիս մը, քսնի որ անհրաժեշտ կը գտնեն գինք տեղափոխել ապաքինարան մը: Անկէն յոռի պայմաններու տակ, գինք կը փոխադրեն Պիտար, ուր պիտի մնայ իրեր տարի: «Անիծեան Պիտար», ինչպէս պիտի ըսէր Եաշնուր Տիկին Ֆոյլէնի ուղղուած նամակի մը մէջ, ուր կը գրէ: «Կը տառապիմ, կը տառապիմ, կը տառապիմ, ինք վէրքերէս շարաւ կը հոսի, կը հոսի: Բուժուելու ոչ յոյս ունիմ, ոչ ալ փափաք, կը ցանկամ մեռնիլ»: Հոկտեմբերին, կ'ենթարկուի նոր գործողութեան մը: 1941 Նոյեմբերին, կը կրէ գործողութիւն մը եւս, հանելու համար ոսկորի կտորը: սակայն բժիշկները չեն գտնիր պատուաստը: Ֆիզիքական այս ահաւելի կացութեան մէջ, գրականութիւնը կը դառնայ փրկութեան յատար: Ան պիտի գրէր: «խոր սուգի այս օրերուն, ունինք միայն այդ բարեկամութիւնը, գրականութենէն ետք»: Կը խորէ կարգ մը բանաստեղծութիւններու «փաթէթ» մը եւ կ'որդեգրէ «Պոլիէ Աւեք Ռիէն» (ոչինչով խուզարկել) վերնագիրը: որ կը հրատարակուի, 18 էջերով, Ռեւէ Տրպրեն հրատարակիչին կողմէ, 1942ին, բայց հեղինակին ծախքով: Անմիջապէս կը լծուի երկրորդ քերթողական տեսութիւն մը պատրաստութեան՝ «Լը փաստմէջ քանտեսիմէն» (Գաղտագողի ճամբորդ) վերնագրով, որ քանի մը տարի ետք, լոյս պիտի տեսնէր «Վայլմար» հրատարակչականի կողմէ:

7 Հոկտեմբերին, 1942, նոր գործողութիւն մը, որ յաջող կ'անցնի, սակայն Եաշնուր լուսաբուած է: «Առանց յոգնելու, առանց զոյգն ամօթի զգացումի, մեռնիլ, մեռնիլ, մեռնիլ կ'ուզեմ», կը գրէ Տիկին Ֆոյլէնին, նոյնիսկ կը փորձէ անձնասպանութեան դիմել, սակայն «պէտք եղած քալութիւնը չ'ունենար»:

Պիտարէն կը փոխադրուի Լէ գ'Անպրէօն բուժարանը, զոր 1943 Ապրիլին կը ծրագրուի փակել: 27 Ապրիլ 1943ին, Եաշնուր կը փոխադրուի Փոյի հիւանդանոցը, ուր կը մնայ մինչեւ Ապրիլ 1945: Ցամաքահանումի օրը, 8 Յունիս 1944ին, Եաշնուր կը սկսի քայի անկողինները բռնելով: Հոս իրեն համար կը սկսի «Մուրը Համբերութեան» (Անիթ Փասիան) շրջանը: տառապանքի ու մահուան դէմ պայքարի տաժանալի տարիներէ ետք, կը սկսի միջոցը երկար սպասումին ու համբերութեան: Ոսկրախոր նահանջի մէջ է եւ վէրքերը աւելի տանելի: Եաշնուր կը գալ թէ յաջթահարած է անկողնին մէջ երկնցած պատկողի, յաւերթական «այլուստէի» ճակատագիրը: Մինակը կը լուսացուի, վերջապէս ոտքի ելած, լուսացարանին առջեւ:

Փոյի հիւանդանոցային կեանքէն, կան երկու զգացական դրուալներ: Եաշնուր կը կապուի Ժընըվիէյ անուն գթութեան քրոջ մը, որ նուիրումով կը խնամէ գինք եւ աւելին՝ բարեկամական զգացումներ կը տածէ իրեն հանդէպ: Երկար ժամանակ, ան չի մոռնար գինք եւ այցի կ'երթայ իրեն, Փետսաքի բուժարանը: Եաշնուրի մէկ ուրիշ կապն է երիտասարդ Փրանսուէրի մը հետ Մայէթ Տը Նափաբար, 19 տարեկան, որ կու գայ հիւանդապահուստի սրամի (դասընթաց) հետեւելու: 33 տարի ետք, Մայէթ հետեւեալ ձեւով կը սահմանէ իր կապը: «Փոխադարձ սրանչացում մըն էր երկու

հոգիներուն, որոնք խորունկ գուրգուռանքով մը կը միանան իրարուն»:

3 Ապրիլ 1945ին, Շահնուր կը փոխադրուի Լապէն Օսէան բուժարանը, Լանտերու շրջան: Հոն կը մնայ աւելի քան երկու տարի, մինչեւ 17 Յուլիս 1947: Նոր տազնապներ իրարու եւ կաջորդեն, սակայն կը ծնի նոր յոյս մը, Շահնուրի հոգիին մէջ, գտնուած է փեմիսելիմի գիւտը- երկար սպասուած հոգ քանի Ֆրանսական հպատակ չէր, 14 Յունուար 1947ին, կը սկսի վերջապէս փեմիսելիմի դարձանումը: սրկուածի առաջին շաբթ մը, 3 միլիոն միւսուր 75 առ հարիւր կը նուագեցնէ վէրքերու հոսումը: երկրորդ շաբթը կը վերջանայ Մարտի սկիզբը, իսկ երրորդը՝ Մարտին վերջը: Հրաշքը տեղի ունեցած է, բայց ոչ ամբողջովին:

Լապէն-Օսէանէն, Շահնուրէն ստացած ենք կարգ մը կարեւոր նամակներ, որոնք կը պարունակեն անձնական թանկագին վկայութիւններ իր հիւանդի հոգեկիճակին եւ կեցութեան մասին: Ստորեւ, կը ներկայացնենք յատկանշական հատուածներ, որոնք կը լուսարանեն հիւանդանոցային իր գողգոթան: Աւելցնենք, որ նամակները գրուած են փեմիսելիմի սրկումներէն առաջ:

Լապէն-Օսէան, 30 Մայիս 1945

Սիրելի Պրն. Նազարեան,

... Դժբխտաբար որեւէ խրախուսիչ լուր չունիմ տալիք իմ առողջութեան մասին: Վեց տարի անդամալոյծի նման անկողին մնալէ վերջ, ամեն յոյս կորսնցուցած եմ առողջութիւն վերագտնելու: Տարւոյս սկիզբը վիճակս այնքան ծանրացած էր որ զիս վանեցին Pau-ի հիւանդանոցէն, ուր կը գտնուէի երկու տարիէ ի վեր. եւ դրկեցին հոս, Լապէնի սամաթօրիոնը: Չափազանց դժբխտ եմ այս սամաթօրիոնին մէջ, որ գէշ հաստատութիւն մըն է, Լէ Լանտ ցահանգի ամայի անտառներուն մէջ հիմնուած, բայց պէտք է գոհանալ այս քիչով, քանի որ այժմ ֆրանսացի հիւանդներուն քիչը անհամեմատօրէն աւելի մեծ է, բաղդատմամբ տրամադրելի անկողիններուն: Աւելի լաւը գտնել հնարաւոր չէ, իրաց այս վիճակին մէջ... գիտցէր որ սամաթօրիոն մը կը նմանի ստորնագոյն բանտի, քովս չունիմ ոչ մէկ գիրք, եւ ոչ մէկ բուրջ:

Ես կենդանի մտեալ մըն եմ, իմ քիչ խօսքս դուր շատ հասկցեր: Պարզ նամակ մը գրելիմ իսկ ինձի համար ծանր գործ մը եղած է. գրական որեւէ գործունէութիւն չունիմ այլեւս, եւ յոյս ալ չկայ որ ունենամ:

Դժբխտաբար կարելի չէ, որ հատորով մը հրատարակութեան տրուին թերթերու մէջ ցրուած իմ յօդուածներս եւ ուսումնասիրութիւններս, վասնզի անոնք պէտք ունին կարգաւորումի, սրբագրութեան եւ յաւելումներու, աշխատութիւն գոր կատարելու համար անհրաժեշտ է որ սպասեմ լրագոյն օրերու:

Շահնուր Բէրէսէան

15 Յունիս 1945

Սիրելի Նազարեան,

Ընորիւ թու լուսանկարիդ եւ շնորիւ տուած տեղեկութիւններով, կրթի քեզ ճանաչալ իսկոյն: Արդարեւ շատ լաւ կը յիշեմ «Եփրատ»ը, որ այնքան համակրական «շափօ» մը գետեղած էր իմ մէկ ուսումնասիրութեանս վերեւ, զայն արտատպելով «Ապագայ»էն, իրաւ որ յուզիչ բան է տեսնել թէ իմացական բարեկամութիւնները, որոնք ծնունդ կ'առնեն արուեստի հմայքներու մէջէն, հետո՛ւ կրելու ժամանակին ւաւերները, երբեմն կ'աճին այնքա՛ն, որ տեսակ մը շփոթութիւն կը պատճառեն ինձ, քանի որ ինքզինքս անկարող կը զգամ պէտք եղածին պէս պատասխանելու թու այժմու նուիրումին եւ աջակցութեանը, ուրիշ բան չեմ գտներ ըսել, բայց եթէ ոչ անկեղծ «շնորհակալութիւն» մը, որ կու գայ սրտս, հաստատ՝ ինձ:

Ինչպէս տեղեակ ես նախորդ նամակէս, ուր բառական մանրամասնութեամբ պատկերացուցած էի հիւանդութեանս անցեալն ու ներկան, այլեւս գրելի անբուժելի վիճակի մը մէջ կը գտնուիմ, նոյնիսկ եթէ առաւելագոյն լրատեսութեամբ մը մտեմանք առողջական վիճակիս, պարտաւոր եմ խոստովանիլ թէ տակաւին առնուազն 3 տարի պտուղած պէտք է մնամ, ձեռք թերելու համար յարաբերական առողջութիւն մը:

Այս մտածումը առանձին բառական է ջլատելու համար իմ բարոյական կորովս, որ արդէ տկարացած կորով մըն է, այսքան որբերութիւններ վերջ: Այլեւս անկարող եմ գրելու եւ կարդալու: Չեմ թրջակցիք նախկին բարեկամներուս հետ, որոնց արդէն մեծագոյնը Վ. Թէրէան, կորսնցուցի: Լուր բնաւ չունիմ Ամերիկայէն Ա. Անդրեասեանէն, Հրանդ եւ Արշաւ Տատրեան ինձի գրեցին ըսելու համար թէ շուտով պիտի դրկեն Թէրէանի ձգած գումարը (1940ին ինձի համար կատարուած դրամահաւարութեան վերջին կատարակն է այս գումարը, որ անկարելի եղած էր ինձի դրկել այն տունէն, պատերազմի պատճառաւ): Այս նամակին կը միացնեմ իմ կենսագրութիւնս, բայց ո՛չ նոր լուսանկար, քեզ հաճոյք պատճառելու համար, լուսանկարուեցայ անկողնիս մէջ, մեր Սամայիս Կալըրիին վրայ, բայց արդիւնքը այնքան ստկալի եղաւ որ կը նախընտրեմ չի դրկել գէշ պատկերները: Բոյր, լրագոյն զգացումներով

Շահնուր Բէրէսէան

18 Օգոստոս 1945

Շահան Շահնուրի Օգոստեան Մարմնի
Վարչութիւն ի Հալէպ

... Վասնզի եթէ կայ աւելի ստկալի բան մը քան մահը, ան ալ երկա-

բատե հոգեվարքն է, գիտակից հոգեվարք, անվերջ եւ անկորոշ ցատերու վրայէն, ցատեր՝ որոնք ճշմարիտ ճանապարհի խաչի սը կը կազմեն:

... Ունեցած հիւանդութիւնս, որ սկիզբ առած է 1937ին, կը կոչուի *մալ փոք*, այսինքն ողնասինի ոսկրախտ: Այս հիւանդութիւնը բէւ շատ ծանր է, բայց դարմանելի է ու անլի դիրին է քան բորախտը: Դժբախտաբար ես գործ ունեցայ անփոք եւ տգէտ բժիշկներու հետ, որոնք զիս օտար ու փշուր հանեցին, Փարիզ, Պրոնսք հիւանդանոցին մէջ, կատարելով շատ ճախտող գործողութիւն մը (*օփիքսիոն փր լա կրեֆ փ Ալպի*) որ վիճակ անհուճօրէն վատթարացուց: Վիրաբուժական այս գործողութենէն ի վեր, որ տեղի ունեցաւ 1939 Ապրիլին, կը մնամ պառկած, անդամալոյծի մը նման, միշտ կորսնցնելով ոյծերս բարախի առատ հոսումով մը, որ համատեղ է արիւնահոսութեան: Այնպէս որ, վեցուկէս տարիէ ի վեր կը մնամ կմախսատիպ եւ վերջին ծայր անոյժ վիճակի մէջ: Չունենալով որեւէ եկամուտ եւ ոչ ալ ընտանիք, *Ասիւրսան փիւլպիւքն* է որ զիս կը խնամէ, ինչպէս կ'ընէ բոլոր ընկեցեցիկներուն: Երեք տարի զիս թողուցին Պիտար գիւղին անիծեալ մէկ սանաթօրիոնը, եւ վերջն ալ երկու տարի Փոյի հիւանդանոցը, ուր նուազ դժբախտ էի, քանի որ զիս խնամողները մայրապետներն էին: Փոյէն զիս դարձեալ ղրկեցին ովկէանցի եզրը, այսինքն հոս, Լապէն-Օսէան, որ աղտոտ եւ խճողեալ *սանս* մըն է, բայց ուրկէ պէտք է բաւականանալ, տրուած ըլլալով ներկայի դժուար պայմանները:

Տեղոյս մասնագէտ բժիշկը կը կարծէ թէ վիճակս բուժելի է, երկու երեք տարուան դարմանումէ վերջ: Իմ կարծիքս այդ չէ, ես այն տպաւորութիւնն ունիմ որ այլեւս անբուժելի եղած եմ, քանի որ այստը տարածուած է բազմաթիւ *վերքեպրն*ներու եւ նաեւ զարկած սրունքին:

Ազատուիլ ընկեկիցներու հիւանդանոցներէն եւ երբալ հանգչիլ մարդավայել դարմանատուն մը (քլինիք) անկարելի քան է, քանի որ ոչ որ կրնայ երկար ժամանակ վճարել շատ մեծ գումար մը: Քլինիքները եղած են անոնց համար որ կը մնան քանի մը ամիս (եւ կամ թէ ունին իրենց կառավարական *փանսիօն փր կէրը*):

Տրուած ըլլալով այս բոլորը, այլեւս որեւէ ճառագայթ չեմ տեսներ փրկարար արշալոյսի մը: Երկար ատենէ ի վեր կորուսած եմ ամեն բարոյական կորով:

... Գրականութիւն ընել հնար չէ այս պայմաններուն մէջ, ուր կը գտնուիմ: Քովս ոչինչ չունիմ, ոչ ձեռագիր, ոչ գիրք, ոչ լուսանկար: Ատենէ մը ի վեր, դադարեցնել ստիպուած եմ թղթակցութիւններս անգամ, ներողամիտ եղէք ընթրնելով որ ես կենդանի մեռեալ մըն եմ:

Չեր նուիրած գումարը մտադիր եմ ղրկել Փարիզ բարեկամի մը, խնդրելով որ մօտս ղրկեն հայ բժիշկ մը, եթէ կարելի է, որպէսզի ան տեղ կանգնի ինձի եւ զիս պաշտպանէ տեղոյս վարիչներուն մօտ: Անէն քանէ առաջ կը փափարիմ ազատիլ շուրջս գտնուող վարսուն հիւանդի մշտատես ներկայութենէն եւ անվերջ վայնասուտէն: Ախր կը քաշեմ քիչ մը լոտիւսան

եւ ստանձնութեան:

Շահնուր Զէրէպէնեան

Յ. Գ. եթէ կրցայ վերապրիլ (ափսոս), ասիկա կը պարտիմ նախ կրասնական *Ասիւրսան փիւլպէքն*: Չօպանեան եւ Չարբեան ոչ մէկ գեոլոգիոն չեն ըներ ինձի համար, եթէ փորձեն ընել՝ կը մերժեն իսկոյն: Անոնք իմ բարեկամներս չեն, եւ ոչինչ չեմ ուզեր ընդունիլ այդ պարոններէն: Գալով Կահան Թէքէեանցի, որ իմ իսկական բարեկամս էր, ան արժանի է (լիովին) իմ երախտապարտութեան: Միշտ յուզումով է որ կը վերակոչեմ իր սիրելի յիշատակը:

Շ. Բ.

Շ.Շ.ի Օգնութեան Մարմին

9-10-1945

Իմ Սուրիա փոխադրութեան հարցը, ինձ կը թուի բոլորովին անիրաւորելի:

Երբ ըսեմ թէ ինձի պէս հիւանդ մը դատապարտուած է միշտ պառկած մնալ կոնակի վրայ, բոլորովին հորիզոնական վիճակի մէջ (առանց նոյնիսկ բարձի), որպէսզի ողնասինը մնայ ուղիղ դիրքի մէջ, կրնաք երեւակայել թէ որքան կ'ընտոտ եւ փափուկ հարց է այս տեսակ հիւանդի մը տեղափոխութիւնը, նոյնիսկ կարճ հեռաւորութեան մը մէջ: Եւ չի մոռնաք զիս փոխադրական միջոցներու ներկայ ողբալի վիճակը:

Միայն թոյլատրեցէք, որ հոս ընեմ խստաովանութիւն մը՝ առանց որուն ես հանգիստ պիտի չըլլամ խղճի ձայնիս հետ: Չիս դեռ ի վիճակի մի կարծէք գրական գործունէութիւն ունենալ, դժբախտաբար ի վիճակի չեմ ընալ ու ըսեմ որ այն հրաշալի աշխատութիւնը զոր կը կատարէք այնքան սրտարոյն կերպով, կը կատարէք ի նպատակ անցեալ գրագէտի մը, որուն գործունէութիւնը այլեւս վերջ գտած է: Եօթը տարուան իմ ողբերգական վիճակս զիս լռեցուցած էր: Ողբերգական ըսի, եւ դեռ բառը ինձ մեղմ կը թուի, բայց լաւ է չստորագծել: Ապագային եթէ քիչ մը լաւանամ, միթէ պիտի չփոխուի՞ ամէն բան, բայց ո՞վ կրնայ ասպագան կանխագուշակել վստահութեամբ:

Շահնուր Զէրէպէնեան

Նոր փոխադրում, Յուլիս 1947ին, Փետսաք, 20-15վէքի բուժարանը, ուր պիտի մնայ 12 տարի եւ պիտի ստանայ սրկումներու նոր շարք մը:
Ֆրանսական շրջանակներու մէջ կ'անի Հետաքրքրութիւնը Արմէն կիւպէնի գրականութեան նկատմամբ, նոյնպէս հայ գրական շրջանակներու

մտ: Ֆրանսացի զրադէսները կ'այցելեն իրեն Հանրիթմա, ժազ Պրեններ, Անտրէ Տօթէլ, «Իբլիւ 84»-ի եւ «Քալիէ Տէ Աէզօն»-ի աշխատակիցներ:

1943ին, Անտրէ Սալմոն, բանաստեղծութեան նուիրում գրոյցի մը ընթացքին, կը խօսի իր մասին: Մարտէլ Աւլան կը դիմէ իր աշխատակցութեան, «Քօմէտիա Շարփանթիէ» քերթողական ժողովածուին համար, որ լոյս կը տեսնէ 1944ին:

Մերձուոր Արեւելքի մէջ ալ, հետաքրքրութիւնը կ'աւելնայ իրեն հանդէպ, 1943ին, Հայէպէն Մարզիս Եափուճեան, գրական երեկոյթի մը նիւթ կը դարձնէ Ծաննուրին կեանքն ու ստեղծագործութիւնը, ինչ որ համադրական աշխատանքի առաջին փորձն է: Պէյրուսի շէճէ-Շէճի Ծիլաման հանդէսը կը սպէ սոյն ուսումնասիրութիւնը, Յուլիս 1943էն մինչեւ Յունիս 1946: Փարիզի մէջ, հայկական ծագումով ֆրանսացի զրոյ Արթիւր Ատամով, յօդուածի մը նիւթ կը դարձնէ զինքը, «Լ'Ալլընի» թերթին մէջ, «Բանաստեղծ մը՝ Արմէն Լիւպէն» խորագրով: Վահան Թէքեան, «Արեւ»-ի մէջ գրած եւ հրատարակած է Ծաննուրին մէկ գրութիւնը եւ ձեռնարկած անոր նիւթական օգնութիւն հասցնելու գործին:

1945ին, Հայէպի մէջ կը կազմուի Ծահան Ծահնուրի օգնութեան մարմին մը, նախագահութեամբ Բերիոյ Թեմի Առաջնորդ հոգեւոր Զարեհ Եպս. Փայասիանի: Կարելի կ'ըլլայ զրկել կարեւոր գումար մը: Ըստ Գր. Շահինեանի, առաջին առթիւ 10,934 ֆրանք, իսկ յետագային 24 հազար ֆրանք:

Ձեռնարկներ տեղի կ'ունենան նաեւ Պէյրուսի եւ Նիկիոյի մէջ: Գերսամ Ահարոնեան, Գրիգոր Քէօսեան, մանաւանդ «Սփիւռք»-ի խմբագիր Սիմոն Սիմոնեան, լայն օգնութիւն կը հասցնեն Ծահնուրին: ԱՄՆէն կ'օգնեն Անդրանիկ Անդրէասեան, Բենիամին Նուրիկեան, իսկ Անդրանիկ Փօլատեանի շնորհիւ, 15 տարի, շէճէ-Շէճի Ծահնուրին կը յատկացնէ ամսական 50 տոյր: Մահէն շուրջ երկու տարի առաջ, կը դադրեցուի սոյն յատկացումը, Ծահնուրին խնդրանքով:

1946ին, առաջին անգամ ըլլալով անոր անունը կը յիշուի Հայաստանի մէջ, զրոյներու Բ. համադրութեան, Եղ. Թոփճեանի կողմէ: Հայաստանում կը հիւրընկալէ զինք՝ «Արտասահմանի Հայ Գրողներ» հատորին մէջ:

Նոյնպէս 1946ին, լոյս կը տեսնէ Արմէն Լիւպէնին առաջին կարեւոր քերթողագիրքը՝ «Լը փասսամէ քլամտաբէն» (Գաղտագողի Անցորդ)։ Կալիֆորնի հրատարակչատունէն:

1947ին, Նոյեմբեր, Պէյրուսէն վահէ-վահեան իր «Անի» հանդէսին մէջ կ'արտասպէ Եղ. Թոփճեանին զեկուցումը, իր կողմէն աւելցնելով յօդուած մը եւ կենսագրական տուեալներով:

18 Յուլիս 1947էն մինչեւ 1959, Ծահնուր կը մնայ Փետաքի Զօ-Լեիքի բուժարանը, ճոն անցնելով տասներկու տարիներ: Այս շրջանը կը բնորոշուի, — կը զրէ Գրիգոր Ծահինեան, — կայունացում՝ առողջական վիճակի եւ վերադարձ՝ հայ գրականութեան եւ հին կապերու:

Հակառակ իր կրած մտահոգիչ տաղանայնորուն, 1948ին, հիմնական բարեփոխութիւն մը տեղի կ'ունենայ: Արմէն կը բարեկամանայ Տոքթ. Տէֆէրին հետ, ապա 1949ին Տոքթ. Լիւպիէզի եւ իր կնոջ հետ, որոնք զինք պտոյտի կը տանին ինքնաշարժով:

Բուժարանին մէջ, 1951 Յունիսէն սկսած, ամէն օր կ'իջնէ զրադարան եւ մինչեւ կէսօր կ'օգնէ զրադարանայաւուհիին:

Ֆրանսական հաստակութեան փորձը յաջողած ըլլալով, Բժշկական Խր. Օժանդակութեան Վարչութիւնը չ'ուզեր այլեւս Ծահնուրը պահել իր ցանկին վրայ: ազգեցիկ բարեկամներու շնորհիւ, ան ժամանակաւորապէս կը մնայ Փետաք:

Տօքթ. Լիւպիէզ, 25 Յունուար 1953ին, Ծահնուրը կը զրկէ Կարչի Փուանքարէ Հիւանդանոցը, Լըթիւլ տաղաւար, ուր կը մնայ մինչեւ 18 Մարտ: Ծահնուր կը վերադառնայ Փետաք, տիրացած ըլլալով բոլորովին նոր թղթածրարի մը, իրեն նոր հիւանդ: Իր բարեկամները զինք անցուցած են պետական առողջապահական մարմնի ցանկին վրայ: Հիւանդապահուհի Մարի-Լու, նուիրումով կը խնամէ զինքը, իսկ Տօքթ. Լիւպիէզ կ'ընէ իր կարիքին՝ տանելի դարձնելու Ծահնուրին կեանքը:

Արմէն, 1950ին, կը պատրաստէ նոր քերթողագիրք մը՝ «Մէնթ Փափան» (Մուր Համբերութիւն) խորագրով, որ լոյս կը տեսնէ 1951ի կէսերուն, Կալիֆորնի հրատարակչատունէն:

Ծահնուր կ'արժանանայ երկու զնահատանքներու՝ «Նույօ Փոէթ», բանաստեղծներու կողմէ զրամական պարգեւ մը, 1000 ֆրանք եւ Մաքս Ժապոպ մրցանակին: Տեղի կ'ունենայ նաեւ ձայնասփիւռի յատուկ հաղորդում մը: նոր այս ժողովածուով, Արմէնին անունը լայն ծանօթութիւն կը գտնէ: Ան կ'աշխատակցի Ռենէ Ծարի գլխաւորած հիւանդանոցին՝ «Պոթիէզ Օսքուրէ», որուն 1952 Հոկտեմբերի թիւին մէջ լոյս կը տեսնէ Արմէն Լիւպիէզի «Թրամաֆէր Սօքքիւրն»ը, Գիշերայիսի Փոխալրուքիս:

Իսկ Պէյրուսի, Հայէպի եւ Նիկիոյի մէջ, հետաքրքրութիւնը աւելցած է: կը խօսին ու կը զրեն իր մասին՝ վահէ-վահեան, Զարեհ Մեկրոնեան, Լեւոն Գարմէն: Հայէպի շէճէ-Շէճի Միութեան կազմակերպած դասախօսութեան՝ կը հանգանակուի 800 Մ. ոսկի: Մեկրոնեան Հաստատութեան ուսանողները՝ գլխաւորութեամբ Օննիկ Մարգիսեանի, կը պատրաստեն մեքենագիր փողովածու մը, երեսունական թուականներուն մամուլի մէջ լոյս տեսած Ծահնուրի գրութիւններու: 3 Մայիս 1955ին, Պէյրուսի մէջ, կը կազմակերպուի Հէճի կողմէ «Յարգանք Ծահան Ծահնուրի» վերնագրուած յայտագիր մը, որուն շնորհիւ կը հաւաքուի 49 հազար ֆրանքի գումար մը, որ կը ցրուի Ծահնուրին: Երեկոյթի կազմակերպիչներէն՝ Գրիգոր Քէօսեան սերտ յարաբերութիւն կը մշակէ անոր հետ, եւ Ծահնուրէն ստացած է ակնի քան 60 նամակ:

1955ին, Կալիֆորնի հրատարակչէ նոր հատոր մը Արմէնէն՝ «Թրամաֆէր Սօքքիւրն» (Գիշերայիսի Փոխալրութիւն), որուն մէջ «Թու լը Թրամաֆէր»

կար» (Ամբողջ Թրաքիայի) և ուրիշ գրութիւններ, կ'արժանանան Ռի-վարոյ մրցանակին:

1956ին, «Յառաջ»ի խմբագրապետ Եւաւարչ Միսաքեանին զուտորը՝ Արփիկ Միսաքեան, Փետաաքի բուժանանին մէջ կը հանդիպէ Եւաւարչին, որ գտնուած էր անոր հօրը հետ: Արփիկ ծանօթ էր անոր Գրականութեան, բայց ո՛չ անձին: 20 տարուան խզումէ մը ետք, յարարեցութիւնները կը վերահաստատուին: Եւաւարչը կ'ոգեկողջէ այս նոր ողջագրումը իր «Սիրտ կայ որ կը ճաճանչէ» յօդուածով: Այնուհետեւ, մինչեւ իր մահը, Եւաւարչը կ'ապուած կը մնայ «Յառաջ»ին, զոր կը նկատէ իր թերթը:

Այս թուականէն սկսեալ, Արփիկ Միսաքեան կը դառնայ մենաշնորհեալ միջնորդ մը հայկական շրջանակներու համար, ինչպէս տիկին Մատրէշն Ֆօլէէն եղած էր Ֆրանսական միջավայրի մէջ: Եւաւարչը՝ Արփիկը իր կտակարարը կը նշանակէ իր ինչքերուն և անձնական դիւանին համար:

1957ին, լոյս կը տեսնէ Արմէնին նոր թերթողագիրքը՝ «L't hop p'erp-rass» (Բարձր Տանիքները), միշտ կայմարէն և կ'արժանանայ Ֆրիյա Ժա-գոթէին բարձր գնահատանքին:

Եւաւարչը յօդուածներ կը գրէ «Յառաջ»ին, 1957ի Յուլիոսին, Փաթա-Ֆիլիպիէններու խմբակցութիւնը, իր սրամտութեան համար, Արմէնը ար-ժանի կը գտնէ անդամակցութեան և անոր կը շնորհէ «Գօսմամտօր էքօրի, վաքի Գիւս, Տ'իւպիլ» աստիճանը:

Եւաւարչը հիմա լծուած է վերաքննութեան և բարեփոխութեան են-թարկելու իր հին յօդուածները: Ան կը գանգատէր թէ «իր մահուան կը սպասեն զանոնք հրատարակելու համար: Զիս կը հրձտկեն, որ հատորով վերահրատարակեն զանոնք, և ես կ'ընդդիմանայի ասորը, որովհետեւ այդ հապճեալ յօդուածները արժանի չէին այնքան պատիւին», պիտի գրէր Մատր-էշն Ֆօլէէնին: Գրիգոր Քէօսէեանի շնորհիւ, Պէլլուօթի մէջ կը հրատարակուի Եւաւարչին «Թերթիւ կիրակնօրեայ թիւը» (եթրը գրութիւններ) գիրքը, 1958ի վերջերը:

1958ին, Եւաւարչը կը մտածէ վերամշակել «Նահանջը», որուն մասին կը գրէ.— «Հետաքրքրութեան խոր շարժում մը ըմբռնելի է: «Նահանջ»ի պա-րագային, որ իր խօլ երիտասարդութեամբ, սիրոյ մը պատմութեամբ և փարիզեան «ազատ» բարբերով կը գրաւէ ընթերցողներուն ստուար զան-դուած մը, այլ մանաւանդ երիտասարդութիւնը, միաժամանակ զոհացում տալով քաղաքական կուսակցական բոլոր հոսանքներուն: Սակայն ինքզինք տկար զգալով կը հրաժարի ի վերջոյ, ու գիրքը լոյս կը տեսնէ Սիմոն Սի-մոնեանի «Սետան» հրատարակչատունէն: Եւաւարչը Սիմոնեանէն կը ստանայ 31.250 Ֆրանք, իսկ Գրիգոր Քէօսէեանէ 35.000 Ֆրանք: 17 Սեպտ. 1958ին, Օրդ. Լուիզ Սերվիլէնին գրած նամակով, Եւաւարչը կ'ըսէ.— «Այո, ես տե-ղեկացայ Հայկ Պէլլուէրեանին յօդուածին Փլէյստի համայնագիրտարանին մէջ, ուր կ'ըսէ թէ իմ վէպս գլուխ—գործոց մըն է, կարելի է, եթէ զայն բողոքատենք հայկական վէպերուն հետ. բայց ան խզճախի երեսույթ կը

պարզ վաւերական գլուխ—գործոցներուն մօտ, որոնք դուք գիտէք»:

Արփիկ Միսաքեանի և Եւաւարչի համակիրներուն շնորհիւ, Ֆրանսացի լիբրերոյր ասիթ կ'ունենայ վաճառելու Եւաւարչին «Պճեղ մը անոյ՛՛՛ սիրտը», «Էրիթեմպուրկի պահապանը», «Գերձակ մը, իր երկու հիւրերը և զանազան դէպքեր» և այլ գրութիւններ:

1959ի Ապրիլին, Եւաւարչը կը ստիպուի հեռանալու Փետաաքէն ու կը մեկնի Պերքի հնագետարանը, ուր կը մնայ երեք ամիս, բայց չի կրնար ստիկ չրքանի խիստ կլիման:

1960 Օգոստոսին, շնորհիւ Արփիկին միջնորդութեան Սէն Ռաֆայէլի Հայկական Հօմի (օճախ) ղեկավար Արթիսեանի մօտ, Եւաւարչը կ'ընդունուի (օտ): Այս տասնամեակը, որ պիտի անցընէ հայկական օճախին մէջ, Եւա-ւարչի կեանքին ամէնէն խաղաղ շրջանն է:

Իւպի Արքայի Ասպետներ՝ ՓաթաՖիլիպիէնները, 1959ի Հոկտեմբերին, Եւաւարչը կը պատուեն նոր տիտղոսով մը՝ «Ռեմունտ տը Լ'օրտը տը լա կրամտ Կիրուէյ»:

19 տարի հիւանդանոցներու հասարակաց սրահներու մէջ անցընելէ յետոյ, Եւաւարչը երջանկութիւնը կ'ունենայ առանձին սենեակ մը տեսնելու: Տիկին Փափագեան, որ երեսունական թուականներուն իր ամուսնոյն հետ կը բանեցնէին Փարիզի մէջ Ֆորսո ճաշարանը և հին բարեկամներ էին Եւաւարչին, իր կարելին կ'ընէ հաճելի դարձնու անոր կեանքը և իր նամորդութեանց ընթացքին միասին կը տանի զինքը: Եւաւարչը կը հասնի միջեւ Փարիզը կը տեսակցի իր հին ու նոր բարեկամներուն հետ: Հօմի մէջ, անօղջական տաղտուկներ անպակաս կ'ըլլան, նոյնիսկ կ'ենթարկուի փոքր վիրահատումի մը:

Արտասահմանի թէ Հայաստանի մէջ, նոր գրիչներ կը գրադին իր վա-սակով: 1962ին, Հայպետհրատ լոյս կ'ընծայէ հատոր մը իր երկերէն, որ քրտցի տպագրական կոպիտ սխալներէ, բնագիրը ենթարկուած է յապա-ւուսմանու ըստ քաղաքական, ազգային աշխարհայեացքի», կը գանգատի Եւաւարչը: 1963ին, Եւաւարչը 60 տարեկան կ'ըլլայ, այս տարեդարձը աննկատ լ'անցնիր Հայաստանի թէ սփիւռքի մէջ:

1964ին, լոյս կը տեսնէ Արմէնին նոր մէկ թերթողագիրքը «Ֆեօ Բօմբը Ֆեօ» (Կրակ կրակի դէմ), կրտսէ հրատարակիչն է: Այս գործը կ'արժանա-նայ Ֆրանսական Ակադեմիայի Բարսեմ ժուլիոտա—Որնօ թերթողական մրցանակին:

1966ի վերջերը, Ներսէս սրբազան Բախտիկեան, կը հրատարակէ Թէօ-գիկի անտիպ մնացած գործերէն՝ քանակակ թուականներէն ի վեր: Այս ասիթ Եւաւարչը կը վերականգնէ անցեալը, իր «Զույգ մը կարմիր տետրակներ» գործով, հրատարակուած «Յառաջ»ին կողմէ:

1968ին, լոյս կը տեսնէ Արմէնին թերթուածներու հատրնտիր հատորը, դարձեալ նոյն խորագրով՝ «Ֆեօ Բօմբը Ֆեօ», նոյնպէս կրտսէ հրատարա-կիչն է: Այս ասիթ, Ֆրանսական «Էթիւտ» հանդէսին մէջ Մայիս 1975, տեղի

կ'ունենայ բազմաձայն ուշադրաւ գրող մը, «Արմէն Լիւպէն՝ Օտարականը» թեմայով:

1969ին, անգլիական մամուլն ալ կը հետաքրքրուի Եասնուրով, «Քայմզի» գրական յանձնարարին համար:

Սակայն, 1970ին, կը պայթի նոր գայթակղութիւն մը եւ կը սկսի նոր գրու մը Եասնուրին դէմ. պատճառը, Սիմոն Սիմոնեանի «Սփիւռք»ի մէջ վերահրատարակուած «Ազատն Կոմիտաս» արձակ էջն է: Հին գրութիւնն էր, հրատարակուած երեսունական թուականներուն, Փարիզի «Ապագայրին» մէջ: Հայաստանէն, «Հնօրեայ Դպիր» Վահագն Դաւթեան, հին գրութեան իրրեւ «անտեղեակ» եւ Եասնուր Եասնուրին տուած «այցելութեան արդիւնք», անվայել կերպով կը գրուէ Եասնուրին դէմ, յօդուածին երեւումէն քառասուն տարի վերջ, ինչեցնելով «Կաթիլ մը մեղր»ը, ալիւնքն գաւաթ մը շուրի մէջ փոթորիկ: Իրականութեան մէջ, Եասնուր բազմաթիւ անդամներ յայտարարած էր թէ լրագրական իր հին յօդուածները անկատար եւ հապճեպ գրուած էին եւ պէտք ունէին սրբազրութեան: Մինչ այդ, Փարիզի «Յառաջ»ին շնորհիւ, լոյս տեսաւ «Ազատն Կոմիտաս»ի վերափոխուած օրինակը եւ պէտք եղաւ երկրորդ հրատարակութիւն մը, գոհացում տալու փափաքողներուն՝ ձրիաբար:

Եասնուր պարբերաբար կ'աշխատակցի «Յառաջ»ին, կը հետեւի իր հին գործերու վերահրատարակութեան եւ կամ ալ հատորի վերածուելու «Յառաջ»ի մատենաշարին մէջ:

1972ի երկրորդ կէսին, իրարու ետեւէ լոյս կը տեսնեն «Յարայէզներ»ու նոր հրատարակութիւնը եւ «Բաց Տոմարը», որ կը խմբէ հատորի մէջ շատած գրութիւններ, ինչպէս «Ազատն Կոմիտաս»ը եւ «Վաղը» ընդամենը եօթը կտոր: «Բաց Տոմարը» կ'արժանանայ Թէքէեան Մշակութային Միութեան Հայկաւէն Ուզունեան գրական մրցանակին: 1973ի կէսերուն ալ լոյս կը տեսնէ վերջին հատորը՝ «Կրակը Կողքին»: «Պայքար»ի յաջորդական թիւերուն մէջ լոյս կը տեսնէ համադրական աշխատանք մը՝ Նուպար Ակիլեանի կողմէ, որ հատորի մը վերածուի «Մենագրութիւն Եասնուր Եասնուրի» խորագրով, 1982ին, իսկ Հայէպի մէջ, արդէն լոյս տեսած է Թորոս Թորանեանի «Վերստին կարգալով Եասնուրը», 1971ին:

1972 Յունիս 24ին, Եասնուր կ'ենթարկուի վիրաբուժական գործողութեան մը: 1973ի Օգոստոսին, բոլորովին ծանրացած է անոր առողջական վիճակը: Արիփիկ Միսաքեան, հիւանդանոցի կառքով Եասնուր կը փոխադրէ Փարիզ, Հանրի Մոնտոր հիւանդանոցը, ուր չին թելադրեր գործողութիւն մը: 13 Սեպտեմբերին, կը վերադառնայ Սէն Ռաֆայէլ: 1974ի Յունիսին, Եասնուր վերջին անգամ կը մեկնի Փարիզ, երեք շաբաթ կը մնայ Արիփիկինց տունը, ուր կը վերջիչէ հին օրերը:

Վերադարձին, գրած է յօդուած մը «Յառաջ»ին համար Ալ. Սոթէնիցիի մասին եւ կատարած անկէ թարգմանութիւն մը, Քաղհան ծածկանունով, ապա՝ երկու տոմս հայկական եկեղեցիի եւ արեւմտահայերէնի վերա-

րերիակ՝ «Լեզու սրբազնագոյն» եւ Յարութիւն Կոստանդեանի բանաստեղծութիւնները վերլուծող գրութիւն մը: Վերջին յօդուածը եղած է՝ «Բայց կրպոկ կը դերհոր»ը, «Յառաջ»ի 27—1974ին մէջ:

Եասնուր անգամ մը եւս, վերջին անգամ կը տարուի Յրեթիւս հիւանդանոցը, 8 Օգոստոս 1974ին, կաթուածահար է, բայց պահած է գիտակցութիւնը եւ խօսելու կարողութիւնը: Եասնուր ըսած էր թէ պատրաստելու վրայ էր քառաբաժին գրութիւն մը՝ «Բացիկներ»: Մահուան թուականին, կար սակայն կէս—անտիպ մը, յետագային տպուած Ֆրանսական պարբերական մամուլին մէջ, որուն հայերէն տարբերակը կը գտնուէր Գեղամ Ֆիկրեանին մօտ: Յօդուածին հայերէն տարբերակը լոյս տեսած է Փարիզի «Աշխարհ»ի մէջ:

Կաթուածին վերջին հարուածը կը խորտակէ Եասնուրը: կը մահանայ 00 Օգոստոս 1974ին, 71 տարեկանին, կէսօրէ ետք ժամը 3—ին: Արիփիկ կը հասի մահէն քառորդ ժամ ետք, դազալը նայ կը տանի «Յառաջ»ի խմբագրատունը, 22 Օգոստոսին, ապա ժան Կուսօնի հայկական եկեղեցին: Թաղումը կը կատարուի Ուրբաթ, 23 Օգոստոսին Փեր Լա Շէյի գերեզմանատունը եւ մարմինը կ'ամփոփուի Եաւալը Միսաքեանի դամբարանին մէջ: Վերջին օրերու եւ Փարիզ փոխադրութեան արձագանքները կը գտնենք մեծիւղի առիթով գրուած Արիփիկի «Միւրելի Եասնուր» յօդուածին մէջ, «Յառաջ»:

Եասնուր իր անձնական իրերը կտակած էր Տիկ. Փափագեանին, իսկ գիւտերը եւ գիրքերը (750 հատ) Արիփիկ Միսաքեանին, որ գանձեք ուղարկած է Պէյրութ, Թէքէեան Մշակութային Միութեան, որ յատուկ սենեակ մը յստակացուցած է, Թէքէեան Կեդրոնին մէջ:

Հանրի Թոմա, լաւագոյն կերպով պատկերացուցած է Եասնուր—Արմէն Լիւպէնին արժէքը, երբ կ'ըսէ.— «որոն դերը մեր դարու կէսի ֆրանսական լիանաստեղծութեան մէջ ոչ մէկ արդար պատմաբան կրնայ ուրանալ»:

* * *

Շահան Եահնուրիկն հայերէն գործերը

Նահանցը Առանց Երգի, տպ. Մասիս, Փարիզ, 1929

Նահանցը Առանց Երգի, տպ. Սեւան, Պէյրութ, 1959

Յարալիզներու Դաւաճանութիւնը, տպ. Յակոբ Տէր Յակոբեան, Փարիզ, 1933

Նոյնը, Փարիզ, 1970, Մատենաշար «Յառաջ»

Թերթիս Կիրակնօրեայ Թիւր, Տպ. Սեւան, Պէյրութ, 1958

Երկեր. Հայպետհրատ, Երեւան, 1962

Չոյզ Մը Կարմիր Տետրակներ, տպ. Երրակ, Պէյրութ, 1967

Ազատն Կոմիտաս, հրատ. «Յառաջ», Փարիզ, 1970

Բաց Տոմար, հրատ. «Յառաջ», Փարիզ, 1971

C.C.ի ֆրանսերեն երկերը՝ Արևելն Լիւպէն գրչաւունով

- Fouiller Avec Rien (FAR), René Debrelle Edit. Paris, 1942
- Le Passager Clandestin, Gallimard, Paris, 1946
- Sainte Patience, Gallimard, Paris, 1951
- Transfert Nocturne " " 1955
- Les Hautes Terrasses " " 1957
- Feux Contre Feux, Ed. Cahiers des Saisons, Paris 1964
- Feux Contre Feux, Grasset, Paris, 1968
- Correspondance Avec Madeleine Follain, Etudes, Mai 1975, Paris
- Cahiers des Saisons N° 30, Eté 1962, Paris
- Cahiers Bleus. Eté-Automne 84.
- " " Hiver 84-85. Dominique Daguet, Troyes
- Les Logis Provisoires, Daniel Leuvres, 1983, Rougerie
- Passages d'Exil, trois nouvelles traduites en français, par Krikor Chahinian,
- Ed. "Le Temps qu'il Fait", Cognac

Արմէն Լիւպէն աշխատակցած է, բաղձաթիւ գրական կարեւոր ճանդէսներու եւ հաւաքածոներու: Ստորեւ ցանկը:—

- Nouvelle Revue Française
- Mesures
- Feuilles Juntiles
- Le Beau Nevire
- L'Heure Nouvelle
- Poésie 45
- Marcel Arland, Anthologie de la Jeune Poésie (vol. II, Collection Comedia, Charpentier)
- Botteghe obscure
- Cahiers de la Pléiade
- Cahiers des Saisons
- Cahiers du Collège Pataphysique
- Le Revue 84
- Sagesse
- Anthologie Poétique de Comedie, Charpentier, Paris, 1944
- Panorama critique des Nouveaux Poètes français. Seghers, Paris, 1952
- Anthologie de la Poésie Française depuis le surréalisme, Beane, 1952
- Poésie vivante, Silvacre, 1953
- Anthologie des Frenzosishen Dichtungm Limes verlag Wiesbaden, 1953
- Les Poèmes de l'Année, (Années 1956, 1957, 1958, Seghers)

Փոխան վերջաբանի

Արմակի (Հայերէն եւ Ֆրանսերէն) եւ բանաստեղծութեան կողքին (մի-միայն ֆրանսերէնով), Շահնուր մշակած է ճոխ նամակադրութիւն (երկ-լիցու), որ կը յատկանշուի իր գրական ճաշակով, իւրայատուկ ոճով, սրա-մտութեամբ եւ հիւմէօրով: Գրած է հազարաւոր նամակներ, որոնց մէկ-տեղումը նամականիի մը մէջ, կարեւոր յաւելում մը պիտի ըլլար Շահնու-րագիտութեան համար:

Քրիստոսեան հարուստ կապ պահած է նկարչուհի Մատրլէն Ծօլլէնին հետ, աւելի քան 400 նամակներ:

Այս առթիւ, Տիկ. Ծօլլէն կը գրէ. «Իր կարեւոր թղթակցութիւնը, զոր կը պարտինք հիւանդութեան պարտադրանքով Փարիզէն իր հեռացումին, միգրի կը փոխանցէ ցոլքը իր ցաւերուն, իմացականութեան, ստեղծագործ իր աշխիւն, զգացականութեան եւ գուարթախոհութեամբ թաթաւուն իր սրամտութեան»:

Աւելցնենք Շահնուրին խոստովանութիւնը, հայ գրականութենէն «հեռանալու» մասին «Ազգարար» գրչովրէպ մը գործած է գրելով «Շ-Շ-լքից պատնէշը», խօսք որ հոմանիշ է կամաւոր դասալքումի մը. պէտք է ըսել, «ստիպուեցաւ լքել պատնէշը»: Արդարեւ իմ վերջին յօդուածը դեռ չէր սպուած, երբ հիւանդութիւնը կը գգետնէր զիս ու կը հեռացնէր Փարիզի հայկական միջավայրէն»: «Այլ տեղ» ոչինչ ունի իր մօտ շարունակելու համար իր հայցի գրականութիւնը՝ ո՛չ գիրք, ո՛չ լուսանկար, ո՛չ բառարան, ո՛չ գրողարան: 40 երկար տարիներ իրեն պակասած է հայկական շրջանակը՝ իր վէճերով ու բանակուհիներով: Հայկական մամուլը՝ օրը օրին հետեւելու անցուցարձներուն, մէկ բառով հաղորդուելու համար անձնապէս հայոց պատկերազարդ պատմութեան» հետ... «Ինչու մը որ չի գործածուի լման քստի տարի. կը նմանի գործիքի մը, որ քիչ մը ժանգոտած է: Դիւրին բան չէ գիրք գրել անկողնի մէջ, շրջապատուած անվերջ աղմուկով. Գրակա-նութիւնը հարկատու է նաեւ գրողի առողջական վիճակին, կեդրոնացում կը պահանջէ եւ ֆիզիքական տոկոսնութիւն: Յըթ. Պէրպէրեան կ'եզրակացնէ. «Նման վիճակի մը մէջ գտնուելով՝ մարդ պիտի հրաժարէր ապրելէ, ուր միայն՝ գրականութեան ծառայելէ: Եարունակ հիւանդանոցային շրջապատի մը մէջ, ան գրկուած է նոյնիսկ առանձնանալու եւ կեդրոնանալու կարե-լիութենէն, ինչ որ կենսական է գրողի մը համար եւ մտածել, որ Սէն-Ռա-ֆայէլի մէջ միայն, Շահնուր առանձին սենեակ կ'ունենայ... քառասուն տարի ետք»:

Շահնուրագիտութեան համար, շատ կարեւոր հրատարակութիւններ են, "Cahiers Bleus" պարբերական թերթին բացառիկ զոյգ թիւերը՝ Eté

Automne 84 եւ Hiver 84-85, նուիրուած Արմէն Լիւպէնին, "Armen Lubin, l'Étranger" խորագիրով: Խմբագիր Տովինթ Տակէ, ստորագրած է արժէքաւոր խմբագրական մը, ուր կը գրէ: «Մարդ կը կուսէ թէ չկայ աւելի խորունկ ուրախութիւն քան Հանդիպեցնել ընթերցող մը եւ գործ մը, որուն մասին կրնանք ըսել, Հակառակ լուծեամբ որով ան շրջապատուած է, որ մաս կը կազմէ այս տարուան ամէնէն աւելի ազնուագոյններուն: Արդարեւ, Քրանսացիները շատոնցունէ կանգնելու էին հոյակապ արձան մը, նշանաւորելու համար այս օտարականը, որ այնքան գեղեցիկ գաւակներ պարգեւած է իր լեզուին: Սպասելով՝ ահաւասիկ Cahier Bleusին կանդաձօք»:

«Սոյն թղթածրարին երկու մասերու ընթերցումէն ետք, ինծի կը թուի թէ դժուար պիտի ըլլայ չզգալ թէ որքան Արմէն Լիւպէնին կողմէ գործածուած բառերը կրնան ապրիլ, կրնան ապրեցնել, անով իսկ ցաւ պատճառել, անով իսկ նաեւ ծնցնել սէրը»:

«Անանկ պատահած է, որ այս դարու մեր լուսագոյն բանաստեղծներէն մէկը, ըլլայ նմանապէս ամէնէն մեծ հայ գրողը»:

«Եթէ իր մայրենի լեզուով գրուած գործը երեւան կու գայ ընկանսորէն բնաջնումը մէկ տւամիւն, փախուստին, քարտին, Քրանսերէն գործը կը խորանայ հասնելու համար տիեզերականին: Լիւպէն հայը՝ կրնար իր նայուածքը վերցնել իր ժողովուրդին ստացած վերքերէն: Լիւպէն Քրանսացիին՝ կը բարձրացնէ այս միեւնոյն նայուածքը եւ Աստուած գիտէ որ ան գիտցաւ կրնէ նայուածքի այս վարժութիւնը, որով ան դատապարտուած էր իր հիւանդութեան պատճառաւ իսկական տիտիփիլին մը բարձրութեան, ճգնաւորականութեան եւ այն առեւն, ան կ'ընդգրկէ իր մտահայեց յախադասութեան մէջ, տեղահանուածներու, հիւանդներու, հաշմանդամներու, թշկական քարտի դատապարտուածներու անասնաման ժողովուրդը, այս շարչարարից ցաւէն, ան կը ստեղծէ աշխարհ մը, ուր կը փայլի նորօրինակ ուրախութիւնը: Այն որ կրնայ ծաղկիլ նոյնիսկ յուսահատութեան մէջ»:

Շահուորի ծննդեան 80ամեակին առթիւ, Պէյրութի մ. Թէքէեան Մշակութային Միութիւնը, կազմակերպեց գրական-գեղարուեստական Եարաթ մը, 30 Յունուարէն-5 Փետրուար 1983: Խօսք առին՝ Գրիգոր Եահինեան՝ Օտարումը C. C. ի գրականութեան մէջ: Արմէն Դարեան՝ Եահնուր ըմբոսը: Լեւոն Վարդան՝ Եահնուր իմացապաշտը: Ժիրայր Դանիէլեան՝ Նահանջը Առանց երգի՝ որպէս վկայութիւն:

Այս առթիւ հրատարակուեցան քանի մը գրքոյկներ՝ Եահնուրեան ընթերցումներ եւ կատարուեցաւ բացումը Եահնուրեան դահլիճին:

Այս շարժումէն անմասն չմնաց Հայկ, ուր ՀԵԼԻ վարչութիւնը կազմակերպեց Եահնուրեան երեկոյ մը, ուր խօսք առին՝ Պէյրութէն հրաւիրուած Վահէ-Վահան, Մեթր Նազարէթ Պ. Նազարեան (արարերէնով) եւ Տիկին Ենովա Պետեան:

Նկարչուհի Մատրլէն Ֆօլէն, զծած էր Եահնուրին դիմանկարը՝ 1936ին, որ առաջին անգամ ըլլալով լոյս տեսաւ «Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք»,

1976-1978 միացեալ թիւին մէջ: Նկարչուհին խոստացած էր էլի Նազարեանին, զայն նուիրել Պէյրութի Եահնուրեան սրահին, սակայն իր բացակայութեան պատճառ, իր մէկ ցուցահանդէսին, Կարլրի Եէհատէ, թիւրիմացութեամբ մը ծախուած է, 1983ին:

Երուանդ Ազատեան, 1988ին (Լոս Անճելըս) հրատարակած է՝ «Գրական-գեղարուեստական սեւեռումներ» խորագրով գիրքը, ուր կ'արտայայտուի Եահնուրի մասին: «Թէեւ հասկցուելու մեթոտը փոփոցուած ատեն մը: Մայն գիրքը դրախօսող Յակոբ Մարգիսեան կ'աւելցնէ. «Ատե՛ն մը արդեօք թէ միշտ, վերջինին մահուան առիթով, կատարած իր խորհրդածութեանց մէջ, Ազատեանին ախտասնքը կը կոտտայ ցաւէն, որովհետեւ յաւէտ մեկնած էր այս աշխարհէն մեր «իմացական լացի երգիչը», մեկնած էր անձայն, արեւելին եւ մանաւանդ գրկուած ազգային գուրգուրանքէ, քանի որ «յալը այնքան վրովիչ չէ՝ որքան լայնք իրականութեան դիմաց լացողի պակասը», ինչպէս կ'աւէ Ազատեան»:

Մատրլէն Ֆօլէնէն ուղղուած նամակներէն, քանի մը հատուածներ.

13-5-1940: Ճիշդ ամիս մը կեցայ ֆո: Հիւսէթ Իսկէնտէրեան ընտանիքին անձնուիրութիւնը՝ անհաստատի եղաւ, ֆո բնակող բոլոր Հայերը սոքի հանցին: Այսպէս է որ սրճարաններու մէջ զապաւոթ եւ շիփա ծախող մարդու մը կինը՝ ինծի շատ օղտակար եղաւ: Անիկա, երիտասարդ, ընտիր կին մըն էր, որուն 12 տարեկան աղջնակը ինծի ամէն օր կերակուր կը բերէր եւ կու լար երբ չէի ուտեր:

Ի վերջոյ, զիս հոս Պիտառ փոխադրեցին: Ծամբորդութիւնը սաստիկ անեթելին տակ կատարեցինք: Զեմ գիտեր ինչպէս մտայ Սանա, որովհետեւ եւսապա էի:

9 Յունուար 1953.— Եատ նեղութիւն մի կրեր Քրանսական հպատակութեան խնդրով: Կը կարծեմ որ անհայրենիք հայ գաղթականի անպատեանք անպատշաճ չէ թշուառի մը համար, որ կը քաշկուտեն դէպի տեսրոյ պատապարաններ, այն յոյսով որ, անխուսափելի վատթարացումէն ետք կը դրկեն բուժարան, ուր պիտի կարենայ դեռ երկար սնուցանել թոքախտաւորներու շահագործումով ապրող պարարտ փաթրոնները:

Հանրի Թումայի յուզիչ գալուցիքը. «Երբ կը մտածեմ քեզի հպատակութիւն մերժելու անարգանքին, ես ինծի կ'ըսեմ թէ ֆրանսական գրականութիւնն է որ պէտք է դարձաներ ֆրանսական տիմարութիւնը: Կրողներու համբաւատը «դիրքորոշում»ը բանի մը չի ծառայեր եթէ նախ յանձն չառնէր պայքարի մնաց սխալներու դէմ»:

20 Ապրիլ 1962.— Սովետական Միութեան գրողները որ զիս կը սեպէին, 30ական տարիներուն, դրամատիրութեան սպասարկող մը եւ պոռն-

կազիր մը կամ գրեթէ, սկսան առաջին անգամ ըլլալով ինծի գրել հաւատեալով իրենց խորին հիացումէ ինծի հանդէպ: Զիս Երեւան հրատարակչին՝ Հայերէն գիրքերու պետական հրատարակչականին կողմէ կատարուելիք վերահրատարակութեան մը առթիւ:

Մանթուլանի.— Ժամանակին «նխած ճահնի ծաղիկ» կոչած էր Շահնուրը, իսկ ուրիշ մէկը «զրչի լակոտ»:

7 Մայիս 1962.— Մտացանցը կը շարունակուի Սովետական Միութեան մէջ: Այլեւ Երեւանէն չէ, այլ Մոսկուայէն իսկ կը գրեն ինծի տեղեկացնելու համար, որ նախաձեռնարկ եղած են ուսերէնի թարգմանութեան իմ հայերէն առաջին վէպին (1929 թուականին): Իսկապէս խենդանալիք բան է, այս բոլորը: Անոնց պէտք եղաւ աւելի քան երեսուն տարի, հետաքրքրուելու համար այս գիրքով, որ ունի երիտասարդական բոլոր պակասութիւնները եւ աւաւելութիւնները»:

Իր գիրքին հայաստանեան հրատարակութեան առթիւ, կը գրէ, 1963ին, «Այս միւլթիլինգները զիս պիտի նեղէին, եթէ «Նահանջ»ը ըլլար կատարեալ եւ անթերի» իսկ իր նախապատերազմեան լրագրական յօդուածներուն մասին՝ «Կը խորհիմ որ հինը կարելի չէ կատարելապէս նորոգել: Այսուհանդերձ, վերամշակութիւնը կրնայ շատ բան ուղղել եւ ամբողջացնել լրագրական հին յօդուածներս, անպատեհութիւն ունին զրուած ըլլալու արագ, եւ այնպիսի շրջանի մը՝ երբ հիւանդութիւնս խոր աւերներ գործած էր: Այս էջերը կը կարօտին վերաքննութիւն եւ լրագրական հին էջերու, որոնք զրուած ըլլալով անպարանօք, միշտ ալ կը կարօտին սրբազրութեան... Այս հապճեպ յօդուածներէն (1930ի եւ 39ի միջեւ) արժանի չէին այնքան պատիւ: Արդ, նշմարեցի որ մահուան կը սպասէին զանոնք բոլորը մէկէն, առանց ընտրութեան հրատարակելու համար, եւ ես ինծի խնայելու համար նման ամօթ մը, ինծի չէր մնար այլեւս եթէ ոչ անոնց մէջէն նուազ գէշերը փոփոխել միեւնոյն ատեն մնացեալն ալ ուրանալու հրապարակաւ: Հատորը վաղը կ'ըլլէ Պէլլութի մէջ՝ «Թերթիս կիրակնօրեայ թիւը» (Նամակ Ֆոյլէիին):

«Էթիլու» ամսագրի Մայիսի թիւէն (1975), Մարտի Ֆոյլէի ներածականէն.— «Իր կարեւոր քրթակցութիւնը, զոր կը պարտիմք հիւանդութեան պարտադրանքով Փարիզէն իր հետացումին — մեզի կը փոխանցէ ցոյք իր ցաւերուն, իմացականութեան, ստեղծագործ իր աւիւնին, զգացականութեամբ եւ զուարթախոտութեամբ քթատուն իր սրամտութեան:

Խորհրդապահ, քարուն, մեմակեաց՝ զգայուն ողբան հաստատամիտ, ոչ մէկ պատեհապաշտութիւն պիտի կրնար ետ կեցնել զինք իր համոզումներէն, բայց միշտ կը վախճայ տաղտուկ պատճառելի եւ տեսարար չի կապուի, այնպէս որ իչ բարեկամներ ունի ու երախտագէտ յուզումով մըն է որ կ'ազդուի անկեղծ զգացում մը:

Երբ հանդէսի մը համար ձեռագիր պահանջուի իրմէ, այնքան քծախճոյր է որ կը խնդրէ ինձմէ որպէսզի կարդամ: Ասիկա սկիզբն է բազ-

մարի գրոյցներու, անկի շատ արդիւնաւէտ ինծի քան թէ իրեն համար, որոնց ընթացքին յայտնուեցաւ ինծի բանաստեղծական իր տիրակալ կառուցութիւնը:

«Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրք, 1976—1978 Միացեալ թիւ, Բ. գիրքէն, 81-րդ Ֆոյլէին յօդուածէն.

Ֆիլիպական եւ բարոյական տառապանքը՝ Արմէնին գրական գործին կուսիւր կը կազմէ. ան կը յայտնուի նուրբ կամ կողմնակի կերպով մէջը այն գրութեանց, որ գուարթ ըլլալ կ'ուզեն. ասիկա մարդկային ցաւին իտորակի տաղն է:

Յամառ ընթերցող, նշանաւոր խելացիութեամբ, Լիւպին ունէր որքան քաղաքականութեան նոյնքան եւ գրականութեան մէջ, մշակոյթ մը, որ չէր գտար զարմանք պատճառելէ: Ան կրնար ցոյց տալ որ սքանչելի ըննադատ մըն է, իրմէ կ'արտագրեմ այն նախադասութիւնը՝ որ կը լուսաւորէ Լիւպինին մտածումը իր գործին առնչութեամբ.— «Լա»՝ լական անհաշտութիւն մը որ բանաստեղծութեան որ խօսքի, այսինքն զգայուն սիրտի եւ այն ծիրած ու պաղ ճառագայթին միջեւ, զոր փրոնքքական մարդը կ'արծակէ»:

* * *

ՀԲԸ Միութեան կողմէ Շահան Շահնուրին ընծայուած նիւթական աջակցութեան համար, յայտնուած են զանազան վարկածներ: Ստորեւ իրականութիւնը, ներկայացուած աջակցութեան դերակատարին կողմէ, Պրն. Անդրանիկ Փոյլտեանին մեզի դրկած 18 Սեպտ. 1994 թուականի նամակով:

«Իմ կարգին, Շահնուրի իրական բարեկամներէն մէկը եղած եմ անցնող յիսուն տարիներուն: Իսկ ՀԲԸ Միութեան ծառայութեան կողմէն յայտնուած անհաշտութեան կողմէն, 1956 Դեկտեմբերին, կարգադրած եմ որ անիկա ՀԲԸ Միութեան կանոնադր օգնութիւն ստանայ, տարեկան 600 տոլար. ինչ որ հայ մտատրակամի ընծայուած մեծագոյն աջակցութիւնն էր այդ օրերուն: 1957-ին մինչեւ իր մահուան ամիսը ի զօրու մնաց այս կարգադրութիւնը: Շահնուր տեսական հարցոց իր մասնակցութեամբ թէ ո՞վ է այն անձը որ այս բարեխօսութիւնը ըրած է... տարիներ ետք միայն հասկցաւ ենթակային անունը, իսկ լուրը հրապարակուեցաւ մահուրէն ետք. Միւնթ Միւնթեանի անգաղտնապահութեան պատճառաւ, հակառակ ինծի տուած խոստումին»:

Այս ձեւով, 1957-էն 1974, 18 տարի Շահնուր ստացած կ'ըլլայ 10,400 տոլարի նիւթական յատկացում մը:

Կեցցէ՛, հայ մտաւորականի վաստակին նիւթապէս գնահատող ՀԲԸ Միութիւնը, նաեւ մեծ պրաւօ մը Պրն. Անդրանիկ Փոյլտեանին:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Գրիգոր Շահինեան.- Կենսագրութիւն եւ մատենագիտութիւն:

Շահան Շահնուրի, 1961, Անթիլիաս:

Տիկին Մատղէն Ֆօլլէն:

Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, 1976-1978 Միացեալ թիւ, Բ. գիրք.

Հալէպ:

Cahiers Bleus, Dominique Daguet, Troyes: Երկու բացառիկ թիւ նուիրուած «Արմէն Լիպէն օտարականը» թեմայով, Ամառ-Աշուն 84 եւ Չմեռ 84-85:

Անդրանիկ Ծառուկեան.- «Նայիրի», Պէյրութ, 20 Յուլիս եւ 27 Յուլիս 1975 (թիւ 3 եւ 4):

Հալէպ

Յունիս-Յուլիս 1994

ԳԻՐՔԵՐՈՒ ԷՏՏ

ԾՆԹ. ԽՍՐ.

Շ. Շահնուրի լուսանկարները արտադրուած են Cahiers Bleus գրական հանդէսի Ամառ-Աշուն 84 Շահնուրին նուիրուած միացեալ համարէն:

ԴԱԻԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ «ՉԱՐԵՆՑԵԱՆ ԱՍՈՅԹՆԵՐ»

Չարենցի ծննդեան 100ամեակին առթիւ, շնորհակալ գործ կատարած է յայտնի շարենցազէտ եւ դրականազէտ Դաւիթ Գասպարեան, վերջերս հրատարակուած (Պէչրուժ, 1997) իր Չարենցեան Ասոյթներ խոհագրութեամբ, որ գիպուկ ձեւով կը ներկայացնէ Չարենցեան դրականութեան զլխաւոր կենսահիւքերը, հանրութեան զիւրամատչելի իր բնոյթով:

Փոխան յառաջարանի, իր հակիրճ բայց իմաստալից խօսքերով, Հայաստանի Հանրապետութեան վաստակաւոր նկարչուհի Ռեգինա Ղազարեան, կը յայտնէ. «Դաւիթ Գասպարեանը գրականագէտի այն տեսակն է, որին Չարենցը որոնել է իր ապրած տարիներին, որին սպասել է: Եւ ահա բանաստեղծի ու գրականագէտի հանդիպումը կայացել է այս գրքերով՝ («Չարենցեան Ասոյթներ», «Ողբերգական Չարենցը», «Փակ Դռների Գաղտնիքը», «Եղիշէ Չարենց Հայոց բանաստեղծութեան մայրաքաղաքը», «Չարենցի Նորայտ էջերը» է. Ն.), եւ Դաւիթ Գասպարեան վերադարձրեց ժողովրդին Չարենցի ամբողջական կերպարը»:

Յիշեցնենք, որ հերոսուհի նկարչուհին, իր կեանքը ստոյգ վտանգելով, ժամանակին կորուստէ փրկած է Չարենցի ձեռագիրները:

Գիրքին հեղինակը իր մուտքի խօսքերով՝ նուիրուած «Հայոց ոգու Արարատին», կ'ունենայ հետեւեալ մտորումները. «Շնորհիւ իր յոբելեանին, Չարենցն այսպէս մտնում է իւրաքանչիւր տուն, իւրաքանչիւր մարդու հոգու մէջ. դառնում նրա հարազատը, մտերիմը, սրտակիցը: Զանի՝—քանիսն են սրտի անհուն դողով բացել այդ հանդէսները եւ ոգել օրհներգի վեհոթիւն ունեցող առաջին տողը. «Ես իմ անուշ Հայաստանի, արեւահամ բառն եմ սիրում», եւ ուրախալի է, որ այս օրերին մեր ժողովուրդը չարենցականացաւ: Չարենցը շարունակաբար ընթերցուեց ու տարածուեց: Ան նշանակում է, որ դէպի Չարենց տանող ճանապարհը շարունակում է, եւ ճանապարհի ուղեւորն է ամբողջ ժողովուրդը թէ մայր հայրենիքում, թէ սփիւտի հայաշատ համայնքներում»:

Չարենցեան Ասոյթներու մասին, հեղինակը կ'ըսէ. «Եղիշէ Չարենցի

պոեզիան հարուստ է բնատր խօսքերով, որոնք շատ դեպքերում ձեռք են բերում ասոյթի արժեք. դրանք որոշակի իմաստ արտայայտող պատկերաւոր սեղմ մտքեր են՝ տեղեղծած ասելիքի բովանդակային եւ զգացմունքային լիցքերի խտացումից»։ Առ այս, չարենցագէտը կը յիշատակէ ու առանձին-առանձին կը բնութագրէ այդ ասոյթները եւ դրանով իսկ աւելի ցայտուն կ'ընդգրկէ Չարենցի գեղարուեստական մտածողութեան անկրկնելի դրոշմը, հայոց լեզուի վրա։

Ստորեւ, կը ներկայացնենք ծաղկաբաղ մը Չարենցեան 46 ասոյթներէն. Չարենց 24 տարեկան էր, երբ գրեց իր «Ես Իմ Անուշ Հայաստանի» բալլատը (Ներբողը)։ Ուրիշը՝ Սարոյեան զայն կը բնորոշէ իբրեւ մեր ազգային Տէրունական Աղօթքը՝ «Հայր Մեր»ը։ Արշակ Չօպանեան զայն կը համարէ հրաշք բանաստեղծութիւն, միակը համաշխարհային գրականութեան մէջ, Մարտիրոս Սարեան՝ «բոլոր մասշտաբներից դուրս պլաննօ (քանդակ), հասցուած ժողովրդական էպոսի (դիւցազնավէպ) աստիճանի», իսկ ճարտարապետ Միքայէլ Մագմանեան կ'ըսէ. «Ես Իմ Անուշ Հայաստանի բանաստեղծութիւնը իրականը հայ ժողովրդի հիմնը կարող է նկատուել»։

Արարատը այսօր էլ անհաս փառքի ճամբայ է, մշտապէս աչքի առաջ՝ հզօր ու ամուր, գեղեցիկ ու նրբագիծ, հայկական պարի մէջ, բայց եւ միայնակ, անթերի որպէս երազի մարմնացում եւ այդ ամէնով հեռու է եւ անհասանելի։

Կարսի մէջ, բերդաքաղաքին պաշտպան հայ զինուորներն հրաժարեցան կուռիլ թուրքին դէմ, քանի որ պոլշեւիկեան ապագային քարոզչութեամբ թուրք «եօյցուդ էսկերի»ներուն կը համարէին համաշխարհային լեղափոխութեան «եղբայրներ»։ Դասալքութեան ահաւոր ցաւէն հրամանատար Մագմանեան ինքնասպանութիւն փորձեց։

«Շամիրամ» բալլատին մէջ, Չարենց Շամիրամը կը կոչէ շամբշտաշուրթ, այսինքն փողոցային պլուրալի։ Հակառակ բոլորին, Արան վերստին կը մայր անուուած, անհասանելի, անմերձեանի, անտեղիտալի բանաստեղծը կ'եզրակացնէ. «Նա կը մեռնի որպէս զոհ – բայց չես յաղթի դու նրան»։

«Շան Կարօտներ» բալլատի մէջ, բերթողը գրած է.

Չի ուղարկի ոչ մի փայլ մեզ լուսինը հիմա էլ,

Շուն, կարօտի իմ եղբայր, դառնաթախիծ իմ ընկեր։

Սոյն ասոյթով, իր անձնական կեանքի տրամալով, մեզի կը ներկայացուի մարդ ու բանաստեղծ Եղիշէ Չարենցը։

«Մօրս Համար Գազել»ը բանաստեղծական ձև ստացած աղօթք է ու խոստովանութիւն, լուս լաց է ու յիշողութեան կսկիծ։

Քերթնող անհուն սիրով իր յուզաթաթախ տողերը կը նուիրէ իր «անուշ ու անգին» մօրը։

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՎԱՆԵՐԱԾՈՒՄԸ

1933 թուականի Դեկտեմբեր 9ին, Չարենց յուզումնալից նամակ մը կը

գրէ Մոսկուա, հանրաճանաչ լրագրողուհի Մարինեթա Շահինեանին, անոր գրկելով օգնութեան ազգանշան (Հողինիերու Ազատութիւն SOS) մը, «հետեւալ բովանդակութեամբ. «Օգնեցէ ինձ, կարող եմ ինձ սպաննել։ Այս փորրիկ Նայիրեան աշխարհում ես շատ քշմամներ ունեմ, նրանք ինձ կ'ուտեն, ինձ կարող են կործանել, օգնեցէ ինձ, վերջին անգամ սրագլում եմ, օգնեցէ ինձ»

Սակայն խորտակուող նաւուն, ոչ ոք օգնութեան հասաւ...

Պոէտը դառնացած գրեց.

Ո՛չ բարեկամ ունեցայ, ոչ քշմամի մեծ.
Բարեկամը – հեռացաւ, քշմամին, տեսեց,
Պետտիքին ամբողջ իր ապարատով
Ելել է ահա, մի պոետի դէմ –
Էլ ինչպէս ես ինձ ահով չդիտեմ,
Ու չիիանամ իմ «քիրտ» սֆաթով –
Եւ զարեւոյթի իմ ուժով հպարտ՝
Չքացագանչեմ «հերոս եմ ու մարդ»։

Ու այսպէս, 1937ին, ճակատագրական օր մը, բանտին մէջ «հայոց ոգու Արարատը» վերջ տուաւ իր կեանքին, գլուխը ջարդելով պատին։

Ի դէպ, ինչեցնեք Չարենցի «Գիրք Ճանապարհին», ուր կը գտնուի բանաստեղծին քօղարկուած նշանաւոր պատգամը՝ «Հայ ժողովուրդը, քօ միակ փրկութիւնը, քօ հաւաքական ուժի մէջ է»։

Չարենցեան Ասոյթներուն առթիւ, մեծապէս շահեկան է տալ պատկեր հայ իշխանաւորներուն կողմէ Չարենցին հանդէպ ցոյց տրուած անմարդկային վերաբերմունքին։ Տանք քանի մը նմոշներ, որոնք ցոյց կու տան հայ պատասխանատուներու գետնաբար ընթացքը՝ որպէս «պապէն ասելի պապական»։ Նաեւ երկու յատկանշական գնահատանքներ։

«Մուրհրդ. Հայաստան», 1934 Յուլիս 17

«Մեր գրականութեան մէջ մացիոնալիստական տենդենցների արտալայտիչն էր Չարենցեան խմբակը նաեւ իր մի շարք գրական-քաղաքական հայեացքներով»։

1934 Օգոստոս, Ա. Պանջեան.

«Այստեղ («Գիրք Ճանապարհի») արդէն այնքան լուրջ է Չարենցի կատարած սխալը. ըստ էութեան մացիոնալիստական լեզուն,– որ ան պետք է շատ լուրջ մտածի եւ անյապաղ ուղղի այն»։

«Գրական Թերթ», 1935 Ապրիլ 17

«Ե. Չ. ի «Գիրք Ճանապարհի» մի շարք պոեմներ հենց հայկական մացիոնալիզմի կոնկրետ արտայայտութիւններ են»։

«Ու. Հայաստան», 1935 Մայիս 11

«Ե. Չ. անկեղծօրէն ընդունեց, չգիտակցեց եւ յաղթահարեց իր

սխալները, այլ խորացրեց այդ սխալները, հասնելով տխուր հետեւանք-ներին»:

Մոսկուա, 1936 Յուշուար. Միսյին.

«Նրան կարծեմ, ներացնում եմ»:

Թիֆլիս, դահճապետ Պերիայի գրասենեակը, 1936 Յուլիս 9, Գնդա-կահար եղաւ Աղասի իմանջեանը՝ Ե.Ջ.ին մեծ պաշտպանը:

1934, Յուլիս 23, Նայիրի Զարեան.

«Այս կամ այն գրողին ի սկզբանէ ամտի յատուկ է նացիոնալիզմը, որ նա դրանից ազատագրուել չի կարող»: Ան կ'ակնարկէ Չարեանցին եւ Ալսեւ Բակունցին:

Սրբեան, 1946, Սեպտեմբեր 25 — Հոկտեմբեր 7ին, Հայաստանի խոր-հրդային Գրողներու երկրորդ համագումար, Հր. Գրիգորեան.

«Մասնատրապէս այդ բուրժուանացիոնալիստական կոնցեպցիաների տուրք տուեց Եղիշէ Չարեանց. ֆաշիզմի նողկալի գործակալ»:

Պոլիս, 1923, Պօղոս Մակինցեան.

«Անձայրածիր ստեպներն ու միլիոնաւոր մարդկային զանգուածներն համապատասխան թոխը ու թափ է հարկատու — մարմնացել են Չարեանցի դիցակերպութիւններում ու ներթողներում ոչ միայն մեր, այլ եւ Ռուսաստանի գրական մասշտաբով անմախքնաբայ յաջողութեամբ»:

Պէյրուս, 1945. «Ակօս» ամսագիր, Նիկոլ Աղբալեան.

«Բովանդակ ռուս գրականութիւնը չկարողացաւ ւսելի բարձրաթոխ էրգիչ ունենալ, որ արձագանգէր յեղափոխական փոթորիկներում այնպիսի մեծ թափով ու տաղանդով, որքան Եղիշէ Չարեանցը»:

* * *

Գիրքին վերջաւորութեան, կան չորս յօդուածներ Դաւիթ Գասպարեանին կողմէ: Ան մասնաւորաբար կ'անդրադառնայ Զարեանցին գրական ժառանգութեան, որմէ կը գտնուին նմոշներ գանազան անհատներուն մօտ: Մեր ջերմագին շնորհաւորութիւնները յայտնի մեկնեաւ Յարութիւն Միմոնեանին, որ չովանաւորած է «Զարեանցեան Առոյթներ» գիրքին տպագրութիւնը, զայն ընծայարեղելով անմահանուն բանաստեղծ Եղիշէ Զարեանցի ծննդեան 100 եւ մահուան 60ամեակներուն (1897—1937)՝ ի նշան խորունկ սիրոյ եւ յարգանքի:

Կը շնորհաւորենք նաեւ «Միփան» հրատարակչատունը (Արամ Սեփեթեան), իր բարձրորակ տպագրութեան համար:

«Չարթօնք», 26 Մայիս 1998

ՇՆՉԵԼ, ԱՊՐԻԼ ԿՈՍԻՏԱՍՈՎ

Աշխատասիրեց՝ ՀՐԱՆԳ ԳԵՈՐԳԵԱՆ

Խմբագրեց՝ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Որաժշտագէտ, երգահան եւ խմբավար Հրանդ Գէորգեան անժամանակ մեկնեցաւ այս անցաւոր աշխարհէն եւ 55 տարիներու երաժշտամանկավարժական ասպարէզին վերջաւորութեան, մեր նոր սերունդին կտակեց՝ խորապէս ճանչնալ Մեծն Կոմիտասը, սիրել ու պաշտել զայն, այս ձեւով աստարելով հայապահպանութեան սրբազան գործին:

Որաժշտագէտին վերջին փափաքին իրագործումը եղաւ իր կարապի երգը՝ «Շնչել, Ապրիլ Կոմիտասով» աշխատասիրութիւնը, գործակցութեամբ Թորոս Թորանեանի, որուն ըովանդակութիւնը համապարփակ զաղափար մը կու տայ «Ամենամեծ Նահատակ, Ամենահայր, Ամենահայ» հայ երաժշտութիւնը վերածնող—գիւտարար հանճարեղ Կոմիտաս վարդապետին ստեղծագործութեան եւ խմբավարական գործունէութեան կարեւոր հանգրուաններուն, յագեցած բազմաթիւ վկայութիւններով: Իր կողմէն, Կոմիտաս հետեւեալ ձեւով կը պատկերացնէ իր ուղեգիծը. «Ես պիտի հասնիմ իմ բուն փափաքս — մեր հայ ժողովրդական երաժշտութեան զանձեղը զուրս պիտի ըրեմ ճարեհի աւերակներէն: Ես տարիներու աշխատանքով շինեմ եմ ուղեգիծը ուրկէ ընթացեմ եւ մինչեւ ցարդ եւ պիտի ընթանամ ասկէ ետքն այլ որքան որ ուժ զգամ երակներուս մէջ: Ոչ մէկ խոչընդոտ չի կրնար կոտորել զիս իմ առաքելութեանս մէջ, որուն նուիրականութեանը համոզուած եմ ես ամբողջ սրտով: Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, հայ ժողովրդական եւ հոգեւոր երգերը թոյլ—եղբայրներն են: Հայը ունի ինքնուրոյն երաժշտութիւն»:

Փամանակին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Դ. արտասուալից յուզումով ունկնդրելով փոքրիկն թրքախօս Սողոմոնին «Լոյս Զուարթ» գմայլելի շարականը, մարգարէացած էր ըսելով.— «Տարէք այս տղան, որ մեծ ապագայ մը կը խոստանայ»:

Գիրքին խմբագիրը՝ Թորոս Թորանեան, կը թեւադրէ «Թող Կոմիտասը մտնէ ամէն հայ տունէ ներս որպէսզի տարագրի մեր տունները Կոմիտաս»:

հան երգերու տակ վերածուին Հայաստանի»:

Առիթով մը, «Անլուելի Զանգակատուն» պոէզի մեմօրանունն հեղինակը՝ Պարոյր Սեւակ պատգամած է— «Հայ երգը պիտի Կոմիտասի օրինակով երգել: Մենք Կոմիտասի ժողովուրդ ենք, ուրեմն, մեր երգարուեստի բոլոր ուխտախնները պարտաւոր են դիմել Կոմիտասին: Հայ ժողովուրդի պատմութեան մէջ Կոմիտասը կատարած է այնպիսի մեծ դեր ինչպէս Հայ զինքի եւ զբազանութեան ստեղծիչ՝ Մեսրոպ Մաշտոցը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Վեհափառ, ըսած է— «Սողոմոն, նախախնամութեան ընծան եղաւ՝ Ս. Էջմիածնին: Կոմիտաս Վարդապետ Ս. Էջմիածնի ընծան հանդիսացաւ՝ հայ ժողովուրդին»:

Հրանդ Գէորգեան, հմտալից ուսումնասիրութեամբ մը, կը ներկայացնէ Կոմիտաս Վարդապետի բազմակողմանի շնորհները, որպէս երաժիշտ, դասախօս, յօրինող, ժողովրդական երգեր հաւաքող, մշակող, գիտնական, ազգագրագէտ, խմբավար, երգիչ եւ մանկավարժ, եզրակացնելով: «Կոմիտաս իր մեծ նմանութեամբ բարձր արուեստով եւ գեղարուեստական բազմակողմանի գործունէութեամբ հիմը դրաւ մեր ազգային երաժշտութեան, որով, անհաման ծառայութիւններ մատուցեց զինք ծնող պատուական եւ տաղանդաւոր ժողովուրդին: Ան, դժուար եւ յուսահատական պայմաններու եւ պարագայներու տակ աշխատեցաւ, տքնեցաւ փառքի գազաթնիք հասնելով եւ սակայն, ասուպի մը նման եկաւ՝ ու ողբերգական մահով մը վաղահասօղէն բաժնուեցաւ իր այնքան սիրած ժողովուրդէն: Ինձ համար չկայ ուրիշ երկինք բացի իմ ժողովուրդի հարազատ հոգիէն», յայտարարած էր «Ամենահայ» երաժշտագէտը:

Երաժշտագէտին այս աշխատութեան կը հետեւին բազմաթիւ կարեւոր հատուածներ աւելուած հանրայայտ հեղինակութիւններէ՝ հայ թէ օտար, նաեւ բանաստեղծութիւններ որոնք լուսապէս կը պարզարանեն Մեծն Կոմիտասի կենանքի ուղին եւ ստեղծագործական գործունէութիւնը:

Յիշենք անոնց անունները: Արսէն ԲՅՆյ. Միմէնեանց, Արփիկ Աւետիսեան, Մանուէլ Քէօսէեան, Շահան Ռ. Պէրպէրեան, Յակոբ Զեյլաբեան, Շահան Շահնուր, Տիգրան Կամարական, Յակոբ Զ. Սիրունի, Բիւզանդ Օհանեան, Որոնէ Պալեան, Պերճ Շիկահեր, Թորոս Աթաբեան, Եղիշ Զարեց, Կոստան Զարեան, Պարոյր Սեւակ, Գուրգէն Մահարի, Գեղամ Սարեան, Յովհաննէս Շիրազ, Երուանդ Պարոտեան, Վահրամ Սոֆեան, Թորոս Թորանեան, Հայկ Պարիկեան, Լիլիա Շուրջայտէ, Կոմիտաս Վարդապետ, Վահան Թէքէեան, «Էջմիածին» ամսագիր, Կոմիտաս Վարդապետի ինքնակենսագրութիւնը, Խոհեր Կոմիտաս Վարդապետէն, մեծ երաժշտագէտներու զննատանքները, Հրաչեայ Աճառեան, Աւետիք Իսահակեան, Ա. Մանանդեան, Արշիլ Զօպանեան, Գարեգին Լեւոնեան, Դերենիկ Դեմիրճեան, Սպիրտոն Մելիքեան, Մարտիրոս Սարեան, Սիլվա Կապուտիկեան, Գրիգոր Կիւրեան, Միհրան Թումանյան, Նիկողոս Թահմիզեան, Վարդան Վարդանեան, Համօ Սահեան, Թորգոմ Արք. Մանուկեան, Յ. Թասլաբեան, Մովսէս Ս. Հերկեբեան, Հ. Բարսեղեան եւ Ա. Մեհրապեան, տակաւին. Կոմիտաս Վար-

դապետի աշխատանքներէն նմոշներ:

Ընթերցողը իրագրել ըլլալով հմտալից լուսարանութիւններուն, պիտի համոզուի հետեւեալ տողերու ճշմարտացիութեան.

«Թէ լինէր հայ ժողովուրդն աշխարհում,
Կոմիտասն այսքան քաղցր չէր լինի.
Թէ չձմուէր Մեծ Կոմիտասն Իմաստուն,
Հայ ժողովուրդն այսքան բարձր չէր լինի»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

Կոմիտաս Վարդապետին կենանքի ուղին եւ ստեղծագործական կենանքին աւելի լաւ ծանօթանալու համար կը քաղենք հետեւեալ շահեկան տեղեկութիւնները, կարգ մը հանրածանօթ դէմքերէ.

Արսէն Աւագ ԲՅՆյ. Միմէնեանց— Կոմիտաս Վարդապետը Վենետիկի Միսիթարեան Հայրերէն, Հայր Ղեւոնդ Վրդ. Տայանին, երաժշտագէտ, կը գրէ 1909 թ. Դեկտեմբեր 30 Ս. Էջմիածնին, «Հայկական պատարագ ունի՞մ յագմամայն եօթ տեսակ է»: Մինչեւ այսօր եօթէն տպագրուած ունինք միայն մէկը որ վերջացուցած է եղի վարդապետը, այլ անոր հինգ աշակերտներէն Վարդան Սարգիսեան լրացուցած է ու Փարիզի մէջ լոյս ընծայած յիշողութեամբ վերականգնած տարրերակներով 1933ին, սակայն ան կարողաւ չէ ու 71 էջերէ բաղկացած Ս. Պատարագի միայն 17 էջը հարազատ Կոմիտաս Հայր Սուրբի տաղանդի ստեղծագործութիւններէն է, Ռոսպիալը թոյլ ներդաշնակուած, չմտակուած գործ է ու արուեստէ գուրկ: Փրոնֆ. Վ. Կարգանով կը վկայէ. «Մտտ 3000 (պէտք է ըլլայ 4000 է.Ն.) հայկական, քրտական, պարսկական ու սաճական եղանակ է զրի առել Կոմիտասը. թէ եկեղեցական եւ թէ աշխարհիկ, մի քանի տասնեակ տետրակ պարունակուած են հայկական խազեր վերածելու լատերի (տետրախորտներ) անուսից, ժողովրդական երգերու ուսումնասիրելու վերաբերել աշխատութիւններ. երգերի թեմաներ (ուրուսագիծեր) ու որիմական ֆորմուլներ, նոյնիսկ բազմաթիւ պար—եղանակների մանրամասն նկարագրութիւնները. Կոմիտասի այս մեծագրական նիւթերի մի փոքր մասն է մեզ յայտնի, սակայն այդ փոքր մասն էլ հանդիսացաւ հայ երաժշտական ֆոլքլորիկայի ու հայ ժողովրդական երգի զիտութեան ամուր հիմքը: Կոմիտասի ազգագրական գրառումների մնացած շատ աւելի մեծ մասը: որտեղէն այդ հազարաւոր գրառումները: նրանց հետ նաեւ ժողովրդական երգերի, հայկական խազերի չհրատարակուած տեսական հետազոտութիւններն ու ուրիշ շատ բաներ:

«Էջմիածին» ամսագիր 1969. «1915 թ. եկաւ մեծ ու մահարեք մերիկը, լոյսը նրա սրբազան քնարը, խոստումնալից հասունութեան վառ զարնան օրերին: Փշրուեց նրա արուեստագէտ ու զգայուն հոգին, նա դարձաւ կենդանի նահատակ 20 տարի ընկաւ. մեծ արուեստագէտը ու կիսաւարտ մահ-

ցին հայ երաժշտական արուեստի մեծ գործերը, մտադաշու մեները, ինչպէս «Մասունցի Դաւիթը», «Մասնայ Քաջը», «Վարդան Սպարապետ Մամիկոնեանը», «Անուշը», «Քաղաքավարութեան Վնասները», խազերի ուսումնասիրութեան եւ վերականգնման գործը, հայկական երաժշտանոց հիմնելու եւ երաժշտական գիտութիւնը զարգացնելու ծրագիրը»:

Կոմիտաս Վարդապետ, հայկական երաժշտութեան կողքին խորապէս ուսումնասիրած էր հարեւան ազգերու երաժշտութիւնը, նոյնիսկ հնդկականը: Մասնաւոր հետաքրքրութիւն ունեցած է քրտական երաժշտութեան նկատմամբ: Պերլինի երաժշտանոցի որպէս աւարտաճառ ներկայացուցած էր ուսումնասիրութիւն մը սոյն երաժշտութեան մասին:

1905ին, Մոսկուայի մէջ հրատարակուած էր «13 քրտական մեղեդիներ», մշակած էր նաեւ տաճկական երգեր:

Ռուպերթ Աթաբեկյան Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակութեան խմբագիր 40 տարիներէ ի վեր. «Կոմիտասի հոգեկան հաւատարակչութեան խախտման շրջանին (Պոլիս, 1915—1919) նրա անտիպ գրաւոր ժառանգութիւնը, իրենց մեծ մասով ցրու եկան»:

Ներկայումս գրականութեան եւ արուեստի թանգարանում հաւաքուած Կոմիտասեան վաւերագրերը հեռու են եղած ամբողջութիւնը ներկայացնելու. բայց այնքան են որ տպագրուած վիճակում կը կազմեն 12 պատկառելի հատոր:

Մեծ երաժշտագէտի ժողովածուից արդէն յոյս են տեսել առաջին եւ երկրորդ հատորները, անոր ծննդեան 100ամեակին առիթով (1969) հրատարակութեան յանձնուած է 31րդ հատորը»:

Կոմիտասի արխիւներուն մասին աւելցնենք հետեւեալ մանրամասնութիւնները. Կոմիտասի կարգ մը ձեռագրերը գտնուած են պոլսահայ դաշնակահարուհի Գոհարիկ Ղազարեանի ու բանասէր Թորոս Ազատեանի մօտ: Պէյրուսահայ ընթացիկ հայրերու կ'աւելցնենք ձեռունագրող (մահացաւ 1988ին) Օրդ-Մարդարիտ Բարախանին — Փարիզի երաժշտանոցի ձայնամարզութեան դասախօս եւ Կոմիտաս Վարդապետին կարեւոր ծառայութիւններ մատուցած երգչուհի թանկապէսն ալ պոմ մը կազմած էր մեծ մասով Կոմիտասի ձեռագրով, Վարդապետին երգերէն. ընթացիկ հայրերու կ'աւելցնենք ձեռունագրող Պէյրուսի, ուսկից կը դրկուի Երեւան — Կոմիտասեան ֆոնդին:

Պոլսէն ծանօթ դարապետ մը Երուսաղէմ գալով կը պաշտօնավարէ Ս. Եակոբեանց վանքին դպրանոցին մէջ: Ատեն մը վերջ նոյն պաշտօնով կը փոխադրուի Անթիլիասի դպրեմանոցը: Ան ձեռք ձգած էր Վարդապետին ձեռագիրներէն մաս մը: Գրասենեակի մը մաքրութեան առթիւ այս Կոմիտասեան վաւերագրերը զուրս կը թափուին յայտնապէս կորսուելու դատապարտուած:

«Հասկ» ամսագրի խմբագիր եւ ուսուցիչ Սիմոն Սիմոնեան, գրասեն-

եակ մտնելու ժամանակ կը հանդիպի գրան առջեւ թափուած «այդ աւելորդ» թուղթերուն ու գանձեր յուզումով հաւաքելով կը դրկէ Երեւան:

Նշանաւոր թափուածակահար եւ հեղինակ Տիրան Ալեքսանեանը որ Փարիզի երաժշտանոցի փրոֆեսէօր էր, լսելէ ետք Կոմիտասը, բացագանչած էր — «Աշխարհի առաջին երգիչն է այս մարդը, նման երգիչ եւ կեանքիս մէջ չիմ յաճ»:

Պերլինի օգիւրալի տնօրէնը, Կոմիտասը կը հրակրէ որպէս առաջին մեհակատար երգչու համար. Վարդապետը կը պատասխանէ. — «Ես իմ տալանդս տրամադրած եմ ազգիս ծառայութեան գործին»:

Կոմիտասեան յիշողութեան առթիւ, պէտք է վերլուծել Կոմիտասի հոգեւոր երգերուն անզուգական մեկնաբան եւ Հրանդ Գէորգեանի յայտնութիւնը եղող՝ Լուսինէ Չաքարեանը:

Մանուէլ Քօսէեան կ'առաջարկէ մեր սուրբերուն դասակարգին անցրելի Կոմիտաս Հայր Սուրբին անունը, որպէս «Մեր Վերջին Սուրբը»: Արցաթիւ, շատ գնահատելի եւ գործադրելի առաջարկ մը:

Թորոքը, որ պաշտօնապէս արհեստ ըրած է իր մերկութիւնը եւ տղիտութիւնը ծածկել պնտելով հայկական ու յունական արուեստի փետուրներով, չէ մոռցած թուրք հուշակներու Կոմիտասը: Մուսթաֆա Քեմալի հոմաճիւհիւնը (Մեթրէս) տիրահուշակ թուրք գրապատուհի թալիսէ Կոմիտասի մէջ յայտարարած է թէ Կոմիտաս ցեղով թուրք մըն է, որ քրիստոնէական դարձած կղերական եղած է, բայց թէ իր երգած ներգերուն երաժշտութիւնն ու արուեստը թրքական են...: Հաւանաբար ան վերցուցած է ակօնմէ կրիթթուրքերէն: Նման փնջներու համար թալիսէ հանրմին ազգակիցները ծանօթ ասութիւններ ունին: Այսպէս — Կիւզլի ու յուրտուն հանրմէ Քիւնտի, ամամ գուլրուկու տըրատա գալտը (լաւ յարմարցուցիր ազնիւ տիկին, սակայն պոչը դուրս մնաց):

Վարդապետը, 1914ին, Փարիզի մէջ գրագէտ Յակոբ Ժ. Սիրունիին պատմած է. — «Պոլիս թուրք մտաւորականներ եղան, որոնք ուզեցին որ ետի աշխատանքը կատարեմ թուրք ժողովրդական երգերուն համար, բայց ես պիտի չընեմ»: Խորապէս իրատունք ունէր ազգասէր եւ հայրենասէր Վարդապետը:

Գիրքին վերջաւորութեան, Թորոս Թորանեան կը պահանջէ, որ հրատարակուին Փարիզի Վիլթուրիֆեան հիւանդանոցին բժշկական տեղեկագիրներ Կոմիտաս Վարդապետին հոն անցուցած 18 տարիներուն մասին — տեղեկագիրներ, որոնք կը պտուտին հայ բժշկուհի մը մօտ, որ 1988էն ի վեր իտտացած է հրատարակել գանձը:

Մտալուտ տօներուն առիթով, ծանօթանալով եւ ունենալով Հրանդ Գէորգեանի «Շնչել, Ապրիլ Կոմիտասով» գիրքը մեր տունները վերածենք Կոմիտասեան համերգի:

«Ասրոօր», 29 Յունուար 1994

ԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԾԱՂԿԵՓՈՒՆՁ ՄԸ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆԷՆ

Փրանսացիները ունին հուշակալոր զէմք մը՝ աշխարհազէտ ժաք Քուսթօն։ Նշանաւոր ովկիանոսագէտ, սիրահար՝ անկախ ուղիներու եւ նորարարութիւններու, հեղինակ բազմաթիւ գիրքերու եւ յայտնագործութիւններու, նաեւ, բնագաւազանութեան բնագաւառ անվիճելի արտօնան։

Հայ գրականութիւնը եւս ունի իր ժաք Քուսթօն, յանձին Թորոս Թորանեանին, անոր նման աշխարհադնաց, աշխարհով մէջ ման եկող՝ Կլոպ Թորոթը։ Եթէ Քուսթօն կը պղծէ ովկիանոսներ, Թորոսը կը հետագօտէ Հայաստան աշխարհն ու սփիւռքի տարածքը, որպէս անխոնջ հետախոյճ՝ յայտնաբերելով տաղանդներ եւ դարակներու մէջ մոռցուած, փոշեպատ ձեռագիրներ, յոյս աշխարհ բերելով տասնեակներով գիրքեր, որպէս քաջ հրատարակիչ Թորոսհրատ մատենաշարին։ պէտք չկայ յիշելու անոր մականունը, քանի որ «նա միակ Թորոսն է ամէնուրեք, առանց իր ազգանունան էլ բոլորին յայտնի Թորոսը», ինչպէս իրաւամբ կ'ըսէ Կարպիս Սուրէնեանը։

Արդարօրէն, Թորոսը ինքզինք կը բնորոշէ հետեւեալ ձեւով։ «Բայց եթէ ես շարաթ մը Հալէպ եմ, ապա ամիս մը Պէյրութ կ'ըլլամ, յետոյ երեք շաբթի Փարիզ, երկու շաբթի Լոս Անճելըս եւ այսպէս այլ քաղաքներ ալ, եւ ամէն տեղ, հաւատացէք, կը գտնեմ լաւ հայեր»։ Այլ խօսքով՝ վահրամ Մավեանի հետքերով, հետամուտ հայ բեկորներու փնտնտուքին։

Իրեն պէս Մելգոնեանցի՝ Կարպիս Սուրէնեան, լաւապէս կը պատկերացնէ Թորոսը։ «Արձակուրդներին տուն էր գնում երկար ճանապարհներով, կանգ առնելով հայաբառ կենտրոններում, իր Տարցազորացիներով ու քղթակցութիւններով կենդանի կապ դառնում ոչ միայն հայրենիքի եւ սփիւռքի, այլեւ սփիւռքահայ գաղթածախների միջև։ Չայնը գալիս էր աշխարհի տարբեր կողմերից, ուր հայ կայ։ Հայ մշակույթի, աշխարհասփիւռ հայ կեանքի սուրհանդակ, արագաթուիչ հերմէս՝ ոտքերին թեւաւոր մուճակներով, ինչպէս հնում պատկերուել է օլիմպոսեան քանդակը, եւ հայ կեանքի ուրախութիւնների ու տխրութիւնների տարադիր՝ նոնքան արագաթուիչ, աշխոյժ, վաւերական իր ոճով, որ հենց գուտ թորոսեան իր ձայնն է՝ պէս-

պիտուն, հետաքրքրաշարժ իր հարցազրոյցներում, դիմանկարներում, փաստագրութիւններում, իրապատում նովէյներում, ու հենց դրանով էլ գրաւել նա արժէքաւոր։ Քնարական ու խոհական ապրումները վստահել է բանաստեղծութիւններին, որպէս բժշկ վաստակածը գիտէ՞ք ինչպէս է ծախսել լուրջ հարիւր գիրք է հրատարակել (պէտք է ըլլայ 1300... է.Ն.), ոչ միայն իր ոչ աւելի շատ ուրիշների գործերը։ Գուցէ մտածեցիք՝ ոչ երանի կ'նորը՝ է՛հ, բանաւոր բժշկուհի Արմինէն համերեամիտ ժպտում է պարագպէս՝ իր անոյժ ժպտով, որ գուցէ նաեւ քաջախերական է խորքում»։

Կարպիս Սուրէնեանը իրաւունք ունի բնելու։ «Բայց նա միակ Թորոսն է ամէնուրեք»։ Հեռաւոր Ամերիկայի մէջ մահամերձ է յայտնի մանկավարժ Քուսթօնի Եղիայեանը։ Թորոսը հոն է, մահիճին մօտ, լսելու համար անոր վերջին խօսքը, որ կ'ըլլայ միայն բառ մը — «Շնորհակալութիւն»։ Հալէպի վերջին կիւլպէնկեան հիւանդանոցին մէջ մահամերձ է երաժշտագէտ Արանդ Գէորգեանը, ուր պահն տարած է Թորոսը. մահամերձը ունի իր կտակը — իր վերջին աշխատութիւնը — «Շնչել, Ապրիլ Կոմիտասով» վաճառել եւ հասոյթը յատկացնել Հայաստան Հիմնադրամին։ Երաժշտագէտը կը մեանի, Թորոսը իր մելգոնեանցի բարեկամին գիրքը տունէ—տուն, խառնութիւն—խառնութիւն շրջելով, կը վաճառէ, կը գոյացնէ հազար տուրք եւ այդ գումարը կը հասցնէ Հայաստան եւ Հիմնադրամին զրկուած ստացադիրն ալ սպել կու տայ «Զարթօնք» օրաթերթին մէջ ի գիտութիւն հանրութեան կատար կը կատարուի։

Վաստակաւոր ուսուցիչ Ասատուր Պետեան, անրութիւն հիւանդ է, Թորոսը յորուածով մը կ'արժեւորէ անոր ազգանուէր գործունէութիւնը եւ կը լսանի մինչեւ Ֆիլաթելֆիլա, հոն, դամբանական մը խօսելու համար իր ուսուցիչին զազաղին առջեւ։

Պէյրութ, ականատես կ'ըլլայ վերջին օրերուն մեծ երգիծանկարիչ Քիրան Աճէմեանին, գրագէտ Մուշեղ Իշխանին, Հայաստանի մէջ անմահ գերասանապետ Վահրամ Փափագեանին, բանաստեղծ ու դերասան Պահարկին եւ յազմաթիւ ուրիշներու։

Իր «Գիրք Որդիական»ով (1981), Թորոսը ներկայացուցած է քառասուն եւ մէկ հայրենի գրող ու արուեստագէտ, որոնք այրելով իրենց հոգիները յուսաորեցին մեր ժողովուրդին այսօրուան ու վաղուան ճանապարհները։ Իր «Ապրող Մարդեր»ով (1991) Թորոս կ'արժեւորէ Տիրան Աճէմեանը, Յովհաննէս Աղայանեանը, Մանուկ Ասլանեանը, Գերսամ Ահարոնեանը, Ժիրալը Գանիկեանը, Դոկտ. Յակոբ Թովթեանը, Մուշեղ Իշխանը, Գրիգոր Ծահինեանը, Պէպօ Սիմոնեանը, Վահէ—Վահանը, Լեւոն Վարդանը, Հայր Անդրանիկ Էրզր. Կոնանեանը։

Ան, չէ մոռցած նախ խոնարհ մարդերը, իր «Բոլորն ալ մարդեր են» գիրքով։

Փարջան մեղուի պէս բեղմնաւոր է Թորոսին գրական, հրապարակապարական եւ հասարակական գործունէութիւնը, որ յորդահոս աղբիւր մըն է,

բանի եւ գործով: Ապացոյց՝ իր հանրագիտական վաստակը, որ ահաւասիկ, 12 հատոր բանաստեղծութիւն, յիսուն հատոր արձակ, վեց թարգմանութիւն, 13 արարբերէի թարգմանեց տալով հրատարակած գիրքեր, բազմաթիւ գիրքերու խմբագրում եւ յառաջաբաններ եւ մասամբ նորին: Տակաւին, մասու-լը լեցուն է իր ստեղծագործութիւններով: Ասոնց կողքին նաեւ հրապարակագրական ընդուն գործունէութիւն, ընդհանրապէս «Զարթօնք» օրաթերթի, «Շիրակ», «Խօսնակ», «Քուլիտ» ամսագիրներուն եւ «Գեղարդ» սուրիա-հայ տարեգիրքին մէջ, առանց մոռնալու բեմադրագութիւնը, հասարակա-կան եւ միութենական ասպարէզը:

Թորոսին Համար անցնող տարին Հարուստ եղած է արձակով ու բանաստեղծութիւններով, որուն ընթացքին մուսանները յաճախ այցելած են գինք:

Այս հանդիպումներուն արդիւնքը եղած է մուսայական եռագրութիւն մը. երեք բանաստեղծութիւններու գիրք:

- Ա. Երիզ Մը Կապոյտ
- Բ. Երազ Իմ Կապոյտ
- Գ. Երկիր Իմ Կարմիր ու Կարմրագոյն

Բոլորն այ տպուած Երեւան (1995) «Ապոլլոն» հրատարակչութեան կող-մէ, որ ներկայացուցած է քերթողական այս հատորները հետեւեալ կերպով: Ա. գիրք — «Այն ժողովածուն ուր նոր ժամանակի մէջ ու նոր մտածողու-թեամբ է գրեւորուում աշխարհասփիւռ հայութեան սէրն ու կարօտը առ հայրենիք»: Իսկ Բ. հատորին մէջ գրուած է. «Ինքնատիպօրէն է բացոււմ հանրապետութեան շրջի եւս մի գոյնը եւ հայրենիքի խորհրդանիշը Հիւսող պատկերի երակը. սէր, հայրենիք, ազգ, երկիր, պատմութիւն հասկացողու-թիւններ նորովի են մեկնարանուում, քննուում այլ ժամանակի ու իրակա-նութեան լոյսի ներքոյ, խորացում ու ընդհանրացում են. հայրենիքն այլեւս կարօտի հեռուէրը հանգրուան չի, ան նաեւ սփիւռքահայի սրտում է եւ հողում»:

Թորոսը մենագրութիւն մը նուիրած է պարսկահայ յայտնի բանաս-տեղծ, թարգմանիչ, մշակութային գործիչ եւ հրապարակագիր Գալուստ Խանեցին, անոր ծննդեան 85ամեակին առթիւ, որ համապարփակ գեղում մըն է անոր բեղուն գործունէութեան ամբողջական եւ զանազան երեսակ-ներուն մասին, որ ընթերցողին պիտի թելադրէ «բանալ անոր պարտէզին լայն դուները ու ներս մտնելը»: Այս առթիւ, Թորոսը նաեւ որոշ տեղեկու-թիւններ կու տայ ընդհանրապէս իրանահայ գրականութեան, անոնց սպա-գիր օրկաններուն, այդ հնագոյն գաղութի անցեալին մասին: Թորանեանին այս գիրքը տպուած է Թեհրանի մէջ ու կը բաղկանայ 152 էջերէ: Հեղինակը այս մենագրութիւնը անուանած է «Մարդեղակ Բանաստեղծը՝ Գալուստ Խանեցի»:

Այս առիթով, Թորանեանը կը յիշատակէ Սայեաթ Նովայազէտ Փրոֆ. Մօրուս Հասարթեանը, որ առաջինը ընդգծած է հայ-պարսիկ սերտակցու-

թեան կարեւորութիւնը որպէս արտաքին աշխարհի հետ յարաբերութեան մասնկու ելակէտ: Թորոսը կը խորհրդածէ իրաւամբ. «Անցան տարիներ, եւ ահա առիթը ներկայացաւ, որ մենք բացառապէս բարեկամական կապեր հաս-տատենք Իրանի հետ, գործ մը, որուն մասին խորհած էր արդէն 70ական թուականին Մօրուս Հասարթեանը, այսինքն քառորդ դար առաջ»:

Թորոսը բարի գործի մասին գրելը պարտականութիւն սեպելով, պատ-բաստած է Պէյրութի Ս. Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց Համախմբումին եւսիրուած Բ. հատորը — 1984—1994:

Պատկերազարդ, գեղատիպ հատոր մը, էջմիածնասէր արժանաւոր տի-կններուն նուիրուած արժանի ալպոմ մը, յիշեցնելով փակկատուն կանաչն հայոց աշխարհի:

Աշխարհը կը բացուի երջանկալիշատակ Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոցի սրբատառ կոնդակով, որուն կը յաջորդեն Նորին Ս. Օծու-թիւն Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոցի «Գիր Օրհնութեանը», Կորին Ս. Օծութիւն Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ «Հայ-րապետական Օրհնութեան Գիրքը»:

Ս. Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց Համախմբումը առաջնորդուած է հետեւեալ սկզբունքով. «Մէկ ազգ, մէկ հայրենիք եւ մէկ եկեղեցի», կարդա-լիս, որ հայ ժողովուրդի միասնականութեան եւ յանրապետութեան միակ բա-նասէն է գոր կողոշուները ամենայն սրտով:

- Անոնց սրտարուեստ մաղթանքն ու աղօթքն է.
- Աճն հայի սրտից բխած,
- Լսիր այս ձայնն ո՞վ Աստուած,
- Երկար կեանք տուր հայրապետին,
- Երկար օրեր հայոց հօր.
- Տէր անասան պահիր դու միշտ
- Քն իսկ հիմնած Մայր Աթոն:

Այս հինգ գիրքերը հրատարակուած են 1995ին Երեւան, Թեհրան, Պէյրութ:

Ձեռք խօսիր անտիպներու մասին, որոնք մամուլի տակ են եւ լոյս կը տեսնեն 1996ի ընթացքին:

Ահա ուշադրաւ գիրք մը եւս Թորոսէն, տպուած դարձեալ Երեւանի մէջ 1903ին: Արձակ գործ մը, զոր կուցած է նովէյներ: Այս հատորը լի է ան-մոտանայի հանդիպումներով, սրամտութիւններով եւ հաճելի մանրապա-տմաներով: Գիրքը նուիրուած է. «Նովէյներուս այս ժողովածուն կը նուի-րեմ գիս գրականութեան կապող կեանքի ընկերուհիս՝ Արմինէին», որուն անկիւ բարեկամեցողութեան եւ քաջալերանքին կը պարտի հեղինակը իր յազմարեղուն գործունէութիւնը, որպէսզի Արմինէն չըլլայ «Անձանօթ գիտ-ուոր»:

«Ապոլլոն» հրատարակչութիւնը այսպէս բնութագրած է այս գիրքը. «Սփիւռքահայ գրող, լրագրող եւ բժիշկ Թորոս Թորանեանի այս գիրքը իրա-

պատում նովհաների ժողովածու է: Հեղինակն իր աշխոյժ, սեղմ ոճով պատմում է Հայ կեանքի ալլազան երեւոյթներին, գաղթօճախներում եւ Հայաստանում իր ճամբորդութիւններին ընթացքում հետաքրքրաշարժ հանդիպումներին մասին, ընթերցողին անկաշկանդօրէն ներառնելով իր համով-հոտով պատմելաձեւի, իրեն յուզող հարցերի ոլորտը»:

Գիրքը խմբագրած եւ յառաջարանը գրած է Կարպիս Սուրճեանանը, որ իր կարգին կը պատմէ մանրապատում մը Թորոսին կեանքին: Իր վան ուխտագնացութենէն, Թորոս վանայ ծովու ջուր բերած էր սրտակներով եւ կը բաժնէր վանեցի ծանօթներու: ան կ'երթայ նաեւ բանասիրական համարարան ուր կային վանեցի երկու փրոֆեսորներ:

Առաջին փրոֆեսէօրը յուզուած կը բանայ իր ափերը, ստանալու համար վանայ Մովսէմի «միւռուտին կաթիլները», երկրորդ բանասէրը կ'առարկէ լռելով, թէ եղածը առողջապահութեան դէմ է, պէտք է երթայ ձեռքերը լուսու: Այս փրոֆեսէօրը վախցած է, որ ըրածը կրնայ քաղաքական սխալ նկատուիլ»:

Նովհաներու այս գիրքը կը բացուի, յետ մահու գեղծով մը նուիրուած հեղինակին հօրը, որ կը կոչուի իջակեր: Ան, Թորոսն ու քոյրը Մաքրուհին թողելով որք անոնց երկու տարեկան եւ երեք ամսու հասակին, անցած էր «էնդիլի դէմը» ծնողական ծանր բեռը ձգելով իր կնոջ վարդուհիին վրայ: Հեղինակը կ'երթայ իր հօր գերեզմանը, հոն մենախօսելու եւ երկխօսութեան նստելու հօրը հետ ի յայտ բերելով հոգեբանական խորունկ ապրումներ:

Հօրը դամբանէն բաժնուելէ առաջ Թորոսը կ'ըսէ. «Ու հիմա, երբ ամէն ինչ լսի արդէն քեզի, սիրելի, սիրելի՛ հայր իմ, ցտեսութիւն: Դարձեալ կու գամ, որ լռեմ — բարեւ, հարկի»:

Շարունակենք մտնել այս գիրքը-պարտէզին ծառուղիներէն ներս, կազմելու համար ծաղկեպուծը մը քաղուած երեսուն նովհաներէ:

Անբերեակայինի հանդիպում Ուելլիւմ Սարոյեանի հետ Փարիզի Լաֆայեթ փողոցի «անպաշտօն դեպատմատուն» Գրիգոր Աղամանի գերեզմատան մէջ: Մեծ հիւմանիտար ծանօթանալէ յետոյ Թորոսին՝ Սիմոն Սիմոնեանի մասին գրած յօդուածին «Սփիւռք» շաբաթաթերթի մէջ, կը թխարդէ իրեն: «Ա՛յ չգրես այսպէս գրութիւն, դուն քու ուժ սպառես ուրիշներու վրայ, քու մէջ խորհուրդ կայ, դուն գրող, դուն գրէ, խաղ գրէ, շոք սքոյնի գրէ, գրէ՛, ուրիշներ գրեն քու մասին, հասկցա՞ր, բայց ամէնէն շատ խաղ գրէ Հայալի մասին: Ահա գրեցիր խաղ, քու այդ գրած խաղ կը տեսնէ չինացիս եւ կ'ըսէ — ահա հայ այսպէս կ'ըլլայ, եւ կը սիրէ հայ: Հիմա դուն կ'երթաս Հայալ, գրէ խաղ Հայալի մասին, խաղը մեծ խորհուրդ է, թող ամէն մարդ գիտնայ Հայալ ինչպէս է, արար ինչպէս է, հայ ինչպէս է, հասկցա՞ր, խաղը մեծ խորհուրդ է»:

Թորոսը կ'եզրակացնէ Սարոյեանը ինձի խաղ գրել սորվեցուց եւ երազս անկատար թողուց:

Փարիզ, Ռիչէ փողոց: «Արաքս» տպարանի տէր ու տնօրէն՝ բանաստեղծ

տեղծ, խմբագիր եւ երփնագրող Բիւզանդ Թօփախան: Տարին 1967: Բիւզանդը կը տպագրէ Թորոսին բանաստեղծութիւններուն երրորդ գիրքը — «Արեւ եւ խմած դարերով»: Կը մերժէ փոխարէքը ստանալ ըսելով — «Ուսանող էմ ինչպէ՛ս կրնամ դրամ առնել»:

Փարիզի Հայ Գրողներու Միութիւնը երեկոյթ մը կը կազմակերպէ կրօնականարիջ Սարուխանի մասին: Առիթնէն օգտուելով, «Ջուարթնոց» ամսաթերթին խմբագիր՝ Հրանդ Բալուեան կը ներկայացնէ Թորոս Թորոսեանը եւ կը վճառէ անոր նոր լոյս տեսած գիրքէն օրինակներ: Հասագրուած դրամը կը հանգրիճեն թաշկինակի մը մէջ եւ յաջորդ օր, այդ գուժարը կը յանձնեն Բիւզանդ Թօփախանին, որ չի հասատար եղածին — Փարիզի մէջ Հայ գիրք ծախուի՞... բայց մեզք համարելով թաշկինակը անվճար վերցնել, կը վճարէ գինը թաշկինակին...:

Երեսանի մէջ գրողներ ճաշի կը հրաւիրեն Անդրանիկ Մատուկեանը, հոն է Թորոսը: 1964 Փետրուարին Թորոսը Թիֆլիս է, հիւրը վրաց մեծ գրող՝ Կոստանդինէ Կասախուրտիային, հոն է երիտասարդ Զվիտթը, հետարբերական, պատմական տուեալներ: Թորոսը Հոռովի մէջ է, հանդիպում կարսիայի Աղաճառեանին: Մերթ Մարտիրոս Գաւուգեանին հետ է Երեսանի մէջ ու Գանատայի, մերթ էտիպ Սէյէտին հետ է Հալէպի մէջ որուն գրած «Հայերը արարական պատմութեան մէջ» գիրքին համար, ձեռագիր կեցած միջոցին 700 բաժանորդ կը գտնէ եւ կ'ապահովէ այս արարեղէն գիրքին հրատարակութիւնը: Մեծապէս կ'օգնէ դամասկարնակ Մրուան Մատուարին այն գիրքին պատրաստութեան համար, որ պիտի ընդգրկէր 700 էջ եւ կոչուէր՝ «Հայերը պատմութեան ընդմէջէն», արարեղէն լեզուով մեր ժողովուրդին պատմութիւնը:

Հալէպի ՀԲԸ Միութիւնը այս գիրքին լոյս ընծայման առիթով կը կազմակերպէ երեկոյ եւ արար հեղինակին կը նուիրէ ոսկէ մետալ Մեծն Տիգրանի քանդակով:

Գիրքին յառաջարանը գրած կ'ըլլայ Թորոսը:

Պուշկար գրող Վերպան Սթամբոյով, ամուսինը հայ գրագիտուհի Սելուս Սեւանին, կը գրէ գիրք մը «Մակոյլով դէպի Արարատ» խորագրով: Հայ պուշկար հեղինակը խօսքը ուղղելով իր հայրենակիցներուն ըսած է. «Սիրելի պուշկար բարեկամներ, եթէ օր մը պատահութեամբ ունենաք այցելելու Հայաստան, կը խնդրեմ ձեզմէ, որ այդ երկիրն թաշկաթի աչքով նայէք, այդ հողին իւրաքանչիւր թիզը ներկուած է արիւնովը հայ հերոսի մը»:

Թորոսը, կարգայէ ետք պուշկարերէն այս գիրքը, այնքան կը հաւնի, որ անմիջապէս գիրքը թեւին տակ կը մեկնի Դամասկոս, հոն արարեղէնի թարգմանի կու տայ գործը եւ յառաջարանն ալ ինք գրելով հրատարակել կու տայ:

Փարիզեան շքեղ սրահի մը մէջ Տիկին Միթերան «Յիշողութեան Մրցանակ» կը յատկացնէ երեք հօդիկ — Փրանսայի գրողի մը, Թիպէթի Տյայ Լամային եւ յանձին Սէն Արեւշատեանի Հայաստանի Մատենադարանին:

Թորոսը հոն է եւ կը յուշագրէ:

Թորոսը յանկարծ Շիրակօ է, ուր կը հանդիպի մելգոնեանցի գրող իր ընկերոջ՝ Հայկ Ալյազփերտեանին եւ հուշակաւոր բժիշկ Համբարձում Քեբրժեանին եւ կը գրէ գրականութեան նուիրուած այս հայորդիներու մասին:

Յաջգերացի յաջորդ օրը, օր մեռելացի, Թորոսը այցելութիւն մը կու տայ Հայկէպի հայոց գերեզմանատունը, եւ հոն փոստեակ մը գիրքեր կը գետեղէ գերեզմանաքարերու վրայ, ու երբ ծանօթ ներկաները հարց կու տան թէ ի՞նչ կ'ընէ, ա՛ն կը պատասխանէ. — քանի որ ողջերը չեն կարողար հայ գիրքը, մեռեալներու կը բաժնեմ, քանի անոնք կարողացող սերունդ էին... Ապա կանգնելով Յակոբ Օշականի դամբանին առջեւ երկխօսութիւն մը կ'ունենայ մեծ գրողին հետ:

Այսպէս է Թորոսը, որուն քաջալերանքով գիրքի հեղինակ կը դառնայ Հոմաէն Լաթաքիա տեղափոխուած Յակոբ Աղամեանը, գիրք կը հրատարակէ Ժընեւ քնակող Յակոբ Սարգիսեանը, հեղինակ կը դառնայ Հրանդ Գէորգեանը եւ այսպէս ուրիշներ, բոլորն ալ արժանանալով այս տղուն քաջալերանքին:

Այս օրերուն, գրական Ծննդն է Թորոս Թորանեանին գրական հրատարակագրական գործունէութեան 50ամեակն է: Անոր առաջին յօդուածը լոյս տեսած է 1946ին եւ առաջին գիրքը (քանաստեղծութիւններ) 1960ին:

Կ'արժէ որ երեկոներ նուիրուին անոր ի Հայկ, Պէյրութ, Կիպրոս, Լոս Անճելլոս եւ Հայաստան Աշխարհ, արժեւորելու եւ քաջալերելու հայ գրականութեան այս խիզախ ձիւղորդ, որ իր հարիւրէ աւելի հրատարակութիւններով կազմած է գրադարան մը, պիտանի գիտելիաց շտեմարան մը:

Միրելի Թորոսին կը մաղթենք նորանոր նուաճումներ, որ իր գրիչը մշտապէս դալար մնայ, ի փառս հայ գրականութեան:

«Ջարթոն», 23 Ապրիլ 1996

ՊԱԼԱՊԱՆ ԽՈՂԱՅԻ ԿԵԱՆՔԻՆ ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐԸ

ՅՅական թուականներէն առաջ եւ ետք, Հայկէպի հայահոծ կեդրոններէն վիքիլիէ եւ Սոքաք էլ Արպրին թաղամասերը իրենց շրջակայքով կը ներկայացնէին մանրանկար մտաւորական ոտան մը, ուր կը ընակէին բազմաթիւ մասուորականներ, կրօնական ղէմքեր, բժիշկներ, կրթական մշակներ, արուեստագէտներ եւ ազգային ծանօթ ղէմքեր: Հոն հաստատուած էին կրթական օժանդներ Այնթապու Կրթասիրաց Միութեան զոյգ վարժարաններ (աղջկանց եւ տղայոց), Ուսումնասիրաց Միութեան դպրոցը եւ արհեստանոցը: յետագային՝ նաեւ Հոգեւոր Եղբայրութեան կեդրոնը, Կենաց վարժարանը, «Մարանթա» ամսագրին տպարանը եւ սասունցիներու երկուսարդաց «Տարօն» ակումբը:

Իրենց պաշտօնին բերմամբ, սոյն թաղերը մշտական ներկայութիւնը կը վայելէին երրորդութեան մը բաղկացած. Թ. Լեւոն (Ուսումնասիրացի) Կիւրապի եւ տնօրէն Լեւոն Լեւոնեան), Պալապան Ռոճան (Ուսումնասիրացի) հիմնադիր եւ ուսուցչապետ Սարգիս Պալապանեան) եւ Գրիգոր Պօղարեան (Կրթասիրացի տնօրէն):

Լեւոն Լեւոնեան՝ իր վայելուչ կերպարանքով եւ յազմ հասակով, կը լիջնէ ազնուականի հին տիպար մը: Գրիգոր Պօղարեան իր բարձր հասակով, կանխահաս ճերմակ մազերով, խոհուն քալուածքով, զլուխը թէքուած վկայի աջ ուսը, կ'երթեկեկէր մէկ զարոցէն միւսը «ղէպի աղբիւրը լոյսին»: Սոր Պալապան Ռոճան կ'անցնէր փողոցէն, իր «մէկ հատիկ»ով եւ կարճատև ժամ թեւը կորսուած վերարկուին թեւին մէջ, կը գգայիր թէ Տէր-Ջօրի գեհնէն հրաշքով վերապարծ կենդանի վկայութիւն մըն է որ կը յայտնուի, զոր ամենհի փոթորիկը քանիցս փորձած է տապալել, բայց չէ յաջողած:

Այս համաստեղութեան ամէնէն ժողովրդական ղէմքը անկասկած Պալապան Ռոճան էր, որ Այնթապէն սկսած իր կրթական գործունէութիւնը տարածած էր Այնթապ — Քեապ — Հայկէպ եռանկյունին մէջ, աւելի քան յիսուն երկարածիգ տարիներ, որոնց կողքին երեսուն տարի յարանային

դասախօսութիւններ աշխատուող դասակարգին համար:

Անոր կենսը տառապալից բայց հերոսական իրավէպ մըն է, որուն դժբախտ դերակատարներէն մէկն ալ ինք է, որ կ'անցնի տարաբնութեան բնաբնման ուղիներէն, Մեսքենէի ու Տէր-Զօրի անօթութեան ու մահուան ճամբարներէն, եօթն անգամ կ'ազատի ստոյգ մահէ, որուն երեք անգամը՝ չնորհիւ թրքական բանակի մէջ ծառայող ազնիւ արարներու հայասիրութեան:

1960ին գրուած Պայապան խոճափն յուշերը՝ «ԿԵԱՆՔԻՍ ՏԱՔ ՌԻ ՊԱՂ ՕՐԵՐԸ» խորագրով, վերջերս լոյս տեսած է Հայէպի էյ-Շարք տպարանէն, չնորհիւ գրական անխոնջ խուզարկու Բժիշկ Թորոս Թորանեանի հոգածու խմբագրութեան: Այս վաւերագրային մատենանին հրատարակութիւնը կը զուգարդիպի Ապրիլեան օրերուն եւ որպէս «անլուելի գանգակատուն» կարեւոր փաստագրութիւն մը կ'ընծայէ հայկական եղեռնագրոտութեան պատմութեան:

Գիրքը կը բացուի հեղինակին սրտայոյզ տողերով, որոնք աւանդ մըն են ներկայ ու ապագայ սերունդներուն: «Յաւով շաղախուած յետապա էջերը եթէ կը կազմեն արիւնոտ վկայարանը իմ ու իմ սերունդին, սակայն միաժամանակ կը հանդիսանան անլուելի վաւերագրութիւն մը, որդարութեան հաստուցումին սպասող: Թող անյայտ գերեզմաններուն վրայ արցունքէ կազմուած խաչափայտ մը ըլլայ»:

Թորոս Թորանեան, իր յառաջարկ տողերով սպառիչ կերպով կը վերլուծէ Պայապան խոճա մարդն ու ուսուցիչը, աննկուն հայը եւ քանչեփի հայրենասէրը: Ահաւասիկ անոր բնորոշումը: «Մեր ժողովուրդին վերջին հարիւրամեակի պատմութեան մէջ Սարգիս Պայապանեան կը ներկայանայ որպէս առանձին երեւոյթ: Կայքքարի պէս մարդ մը, յամառ, սովուն հայրենասէր, ամբողջական նուիրումով յատկանշուող առանձնական մէկը: Անաշառ մարդ մը, հաշիւներու մէջ ճշգրիտ, մարդերը պահատելու մէջ՝ արդար: Անք քիչ ուղիղ մարդերէն, որոնք յոյս կը ներշնչեն բոլոր սերունդներուն: Սարգիս Պայապանեան հայ ուսուցիչ մըն էր, բառին ամէնէն խորունկ, ամէնէն ազնիւ իմաստովը: Մէկն էր, որ կը հաւատար հայ ժողովուրդի այսօրեան ու վաղուան: Մէկ աչք ունէր, բայց զոյգ աչք ունեցողներէն աւելի յաւ կը տեսնէր մեր ապագան: Մէկ բազուկ ունէր, բայց զոյգ բազուկ ունեցող շատ շատերէն աւելի ծանր բեռներ տարաւ իր կեանքի ընթացքի»:

Պայապան խոճան ծնած է Այնթապի մէջ, 1882ին, Գուգանլը թաղին մէջ: Տակաւին մանուկ, բազմաթիւ դժբախտութիւններ զիմաւորած են գինը: Չորս տարեկանին կը կորսնցնէ իր աջ աչքը, իսկ ինը տարեկանին՝ իր հայրը, որմէ կը ժառանգէ ուշիմութիւն եւ տարապայման աղքատութիւն: Կը գրկուի դպրոցէ ու կը դառնայ թուրքական աշակերտ: Այդ տարիքէն իսկ կը փարփ ինքնապաշտանութեան գէնքին, կը հասկնայ թէ Վախի կատու լինել, ու ցոյց տալ ճանկերը», կը համոզուի թէ «թշնամիին քարք բու

զուխող պատռելէ առաջ, պէտք է դուն թշնամիիդ գլուխը պատռես քարով»:

Շնորհիւ ուսուցիչ Պարոն Կարապետին (յետագային՝ Վերապատուելի Կարապետ Քեթնեճեան), կը վերադառնայ դպրոց, սակայն պարապոյ ժամերուն կը վաճառէ մաքսանեղզեալ ծխախոտ եւ կարկանդակ:

1895ի Մեծ Աղէտէն, իրեն «յիշատակ» կը մնայ չորս ամիս զարմանուած Ամերիկեան հիւանդանոցին մէջ եւ ալլակերպուած ձախ թել մը:

Անուհետեւ, երկարամիջ տարիներու երկայնքին, անողոր պայքար յաւուն կենսաշահութեան եւ ուսումի, կեանքի ու մահուան: Նուիրեալ ուսուցչութեան ու ազգանուէր գործունէութեան, փրկարար աշխատանքի, որբահաւաքի եւ Ուսումնասիրաց Ընկերակցութեան բարգաւաճման, հայ գործաւոր դասակարգի դաստիարակութեան, հայ գանգուածներուն Ֆիզիքական գոյութեան:

Իր տառապալից կեանքը կը ներկայացնէ այնթապահայութեան տարագրութեան համայնապատկերը, անօթութեան ու մահուան ճամբաները դէպի Մեսքենէ, Եփրատ ու Տէր-Զօր, Այնթապի հերոսամարտի դրուաղներ, կիլիկիոյ վաճառումը եւ որպէսզան «քրիստոնեայն եւ ապետական» դրամատիրական պետութիւններու կողմէ, ազգային գետնի վրայ Զանդը — Ուսումնասիրաց պայքարը, Այնթապի քոլէճին օտարներուն յանձնուելու ներքին ծալքերը, Նահատակաց եկեղեցիին հիմնարկութիւնը:

Ուշագրաւ էջեր շատ կան խոճափն յուշերուն մէջ: Հոն կը ծանօթանանք «Պեհալիններու եղբայրակցութեան», որուն կ'անդամակցի ան: Պատմական էջ մըն է «Մեծաէտտին Չիլիպիի խոստովանութիւնները», աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ ամբաստանութիւնները: Սակայն գիրքին մէջ չեն նշուած անոնց հակափաստերը: Եւ պիտի ըլլար որ փաստուէր անոնց անվաւերականութիւնը, տարիներու ընդմէջէն եկող կրօնական, քաղաքական եւ ցեղապաշտական զրդապատճառները, որպէսզի անցողեայ ընթերցողը շփոթութեան չմատուի: Յուզիչ դրուաղ մըն է մահամերձ հայ ծերունիի մը տուած պատասխանը գերմանացի մէճըրի մը, որ կը փափաքի Մեսքենէ հայ տարագիրներուն դրամ բաժնել, մինչ «անոնց կեանք պէտք է, կեանք»: Մերուկը հասկնալով որ եկող գինուորականը գերմանացի մըն է, կը բացազանչէ անոր երեսին: «Անաստուած ազգի մը տուած դրամովը երկու օր աւելի ապրելու փոխարէն, մահս կը նախըտեմ, դժուար կորսուեցէք որ խաղող մեռնիմ»: Հերոսական դրուաղ մըն է Այնթապի հերոսամարտէն «Շէլի ծամբար»ին գրաւումը հայ մատրիկներուն կողմէ:

Վերջապէս Պայապան խոճան կը հասնի փրկութեան ափը՝ Հայէպ, որուն կը նուիրէ երախտալից տողեր զորս կը բաժնէ ամէն հայ: «Հայէպը մէկը Արբաճամի քաղաքն էր: Աստուծոյ կողմէ օրհնուած քաղաք մը: Այս քաղաքը ապստամ էր հարիւր հազար հայ տարագրութեան օրերուն: Ապա 1920—1922 երկրորդ տարագրութեան օրերուն ալ այս քաղաքը ապստամ տուած էր ութսուն հազար հայերու: Հայէպ, փրկարար քաղաք, որուն սա-

լայտատկներն ու խորունկ անպատասխան գիշերները եղան իմ ու իմ տա-
նապած ժողովուրդիս վիրտի ու վէրքի ընկերներու սիրոփիչները: Թէեւ այս
երկրին ժողովուրդին ու անոր լեզուն նոր էին ինծի համար ու բոլորես, բայց
արար ասպնձական ողին ողորդիչ էր անսահման: Արարին մէջ գտայ նոյն
երազն ու ձգտումը, վեհութիւնն ու մարտիրոսացումը, ինչ որ դարերով հա-
յունն էր եղած: Մերեցի ու սիրտիս մօտ գտայ այս պատմական քաղաքը ու
ցվերջ կարգուած մնացի քաղաքին ու իր ազնիս ժողովուրդին:

«Մերեցի այս երկրին հարուստ լեզուն, սերայի պատմութիւնը, կենսա-
յորդ արեւը, մեղրահամ կեանքը: Զանոնք ըրի իմս՝ որպէս նշան հաւա-
տարմութեան եւ երախտագիտութեան:

«Թող այս մի քանի տողերը, սիրելի քաղաք, իմ կողմէս քեզի տրուած
դափնեպսակ մը ըլլայ, դուն, որ մայրական սիրով ընդունեցիր մեզ ու քու
ազնիս գաւակներուդ եղբայրական գուրգուրանքն ու սէրը նուիրեցիր մեզի՝
մեր աչքերուն մէջ գտնելով վստահութիւնն ու մեր սիրտերուն մէջ անկեղ-
ծութիւն:

«Ու դուն չէիր սխալած:

«Մենք, մեր կարգին ապացոյցը տուած էինք մեր եղբայրութեան ու
պիտի տանք շարունակ, մեր արիւնով իսկ, մեր աչքերուն բիրին պէս
պաշտպանելու համար քեզ չար ոտններու դէմ: Մենք, հայերս, սուրիական
հայրենիքի գեղեցկացումին ու պայծառացումին համար, ի խնդիր անոր
բարգաւաճումին ու վերելքին պատրաստ ենք ամէն ըրպէ տալու մեր գերա-
գոյնը:

«Մենք չենք մոռնար, որ մահէն անցանք ու կեանքին եկանք: Կեանքի
եկանք Հայէպի մէջ»:

Պայպան խոնարհին առաջին եւ վերջին սէրը եղած է Ուսումնասիրաց
Միութիւնը, որուն հաւատարմութեանը ծառայած է իր ողջ կեանքին ըն-
թացքին (1905—1956), իրեն անբաժան ու սրտակից ընկեր ունենալով անձ-
նուէր տնօրէն Լեւոն Լեւոնիանը, որ Հայէպի մէջ անոր բարգաւաճման հա-
մար տրամադրած է իր հօրմէն իրեն ժառանգ մնացած 2,500 օսմանեան դե-
ղին ոսկին: Գրիգոր Պօղոբան կը նկարագրէ անոր ծնունդը. «Լեւոն Լեւոն-
եան եւ Սարգիս Պայպանեան ցվերջ մնացին սրտակից ու գործակից:
Անոնց միացեալ ջանքով է որ ծնունդ առած է Այնթապի Ուսումնասիրաց
Ընկերակցութիւնը (1905), հայադրո՞ւժ քրիստոնեանք երիտասարդներու
ընկերակցութիւն, բողոքական եւ ոչ-բողոքական անդամներով, որոնց վրայ 1908ի Սահ-
կան, կրթական, մշակութային բաժանումներով, որոնց վրայ 1908ի Սահ-
կանագրութեան հոգ աւելցաւ նաեւ գինավարժութիւնը: Ընկերակցութիւնը
կը պահէր գիշերային վարժարան եւ կիրակնօրեայ լսարան: Ըրս կ'ընծաւէր
խմորատիպ թերթ մը՝ «Ուսում»: Ունէր ճոխ գրադարպա»:

Պայպան խոնարհին կ'ամրոցեցէ. «1922ին, Հայէպի Մուպալլաթ թաղին
մէջ վերակազմելի Այնթապի Ուսումնասիրաց Ընկերութիւնը»: 1924 թուին,
Ուսումնասիրաց Ընկերութիւնը Հայէպ գտնուող ու գործող հայ քաղաքա-

կան, ընկերային եւ կրօնական կազմակերպութիւններուն մէջ ամէնէն զօ-
րաւորը եւ գործօնը եղած էր: Ունէինք դաշտ եւ ֆուլթալի խումբ մը, որ
լրիտին զօրաւորագոյնն էր: Ունէինք լաւ գրադարան մը: Նաեւ թէ՛ քա-
ղաքին, թէ՛ հիւղաւանին մէջ գիշերային դպրոց: Թերեկուան դպրոց մըն ալ՝
քեմիկ կոչուող հիւղաւանին մէջ: Կազմակերպեցինք նաեւ թատերական
խումբ եւ հրատարակեցինք խմորատիպ թերթ մը: Հիմնեցինք լսարան մը,
նաեւ՝ պատանեաց, օրիորդաց եւ կանանց մասնախումբեր: Բողոքականները
ձանկի ընկերութիւն մը կազմելու հոփն էին: Այն գաղափարը կը տիրէր
մարդոց միտքերուն մէջ, որ բողոքականութիւնը օտար աղանդ մըն է հայոց
մօտ: Բայց մենք մեր գործունէութեամբ չէ գոքացուցինք այս տեսակէտը եւ
Ռոդրականութիւնը, շնորհիւ Ուսումնասիրացի, վերածեցինք հայութեամբ
բարախող կեդրոնի մը»: Խոճան կը յայտնէ թէ Առաջնորդ Արտաւազդ
Մրտապար (Միւրմէեան) եւ իր յաջորդները միշտ զօրավիզ կանգնած են
պրոպետին:

1873ին, Կեդրոնական Թուրքիոյ գոյէճի Այնթապ հաստատումին հա-
մար բացուած հանգանակութեան, այնթապահայութիւնը՝ Նազար Աղա Նա-
պարէթեանի (պարսկական աւագ հիւպատոս եւ ամբերիկեան փոխ-հիւպա-
տոս) գլխաւորութեամբ, մասնակցած է 1800 օսմանեան ոսկիի պատկառելի
գումարով մը, հաւատարմով այն զբաւոր յանձնառութեան, որուն համաձայն
գոյէճի շարժուն եւ անշարժ գոյքերը, սպարանը, հայերէն գրադարանը,
նախիճ լեզուի ստիպողական դասաւանդութեան համար, ըստ Կ.Թ. գոյէճի
կանոնադրութեան, հաստատումի թուականէն յիսուն տարի հոտք, այս բոլո-
րը պիտի մնային հայոց, բայց մնացին... թուղթի վրայ:

Գոյէճի տպարանին նախկին վարիչ Սարգիս Լայէեան, այս առթիւ կը
գտնանայ ամբաստանելով «Նոր տիպի միսոնարները», բայց կամովին
մոռացութեան կու տայ անոնց հայ բողոքական դաշնակիցները: Տարիներ
վերջ, ահաւասիկ իրականութիւնը երեւան կ'ելլէ Պայպան խոնարհի բերնով:
«1925ին Այնթապի գոյէճին տնօրէնը՝ Տըթթ. Մերիլ, Հայէպ եկաւ եւ
ստանձնեց մեր «Հայ Արուշի» տնօրէնութիւնը: Այսպէս հիմը դրուեցաւ Հա-
յէպի գոյէճին, որ մեր միտքերուն մէջ Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ
գոյէճ յորժորէտուած կրթական հաստատութեան շարունակութիւնն էր:
1930ին, մեր բողոքական տղեթորները ելան, արար քրիստոնեաներու հետ
միասնուել խնդիր մը մէջտեղ բերին: Կարգ մը մարդիկ ելան միացան Պորտ
թիկանու խնդիր մը մէջտեղ բերին: Կարգ մը մարդիկ ելան միացան ամա-
նի: Հայ աւետարանականներու ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Հայէպի
խմորաւալ եկեղեցու մէջ: Ժողովը հրապարակային էր ու դժբաք: Եր
կարգը հասաւ գոյէճի օրակարգին, լուծումը տրուեցաւ դոնփակ նիստով:
Ու ինք ծնաւ գմուկն չնին: Բոլոր անոնք, որ խոստացած էին ի նպաստ
գոյէճի հայկականութեան քուէարկել, ելան խոստումնադրութ: Բոլորն ալ
վարցած էին: «Պորտ» ընկերութեան սպառնալիքէն, այսինքն վարցած էին
որ իրենց հացէն կը գրկուէին...»:

Այս անփառունակ վախճանն ունեցող ժողովին ընթացքին միակ արի կեցուածք ցուցարեորդները եղան Վեր. Սիսակ Մանուկեանը եւ Տոբթ. Մերիլը, որ տնտեսելով մեր մէջ մեր ամէնէն աղիտալի երեւոյթը, ցաւով թողուց մեզ ու հեռացաւ: Գնաց մեծ հայասէրը: Կորսնցուցինք մեծ բարեկամ մը:

Հայէպի մէջ կային բողոքական երկու եկեղեցիներ — Բեթէլը, որ կը պատկանէր մարաշցիներուն, եւ Էմմանուէլը, որ հայէպցի հին հայերը եւ գաղթական եկած հարուստները իւրացուցած էին:

Վտարուածներն եւ անտեսուածներն 1930 թուականին ժողով մը գումարեցինք եւ որոշեցինք երորդ եկեղեցի մը հիմնել: Հարթ Մուհրաբ թաղին մէջ նոր դնուած Նիգեպեան շէնքէն երկու սենեակ վարձեցինք որպէս աղօթատեղի, զոր կոչեցինք «Նահատակաց»: Ուսումնասիրաց Ընկերութեան դպրոցները, ուսուցչական կազմը, բոլոր բողոքական անդամները եւ ընտանիքները այս եկեղեցւոյ ժողովուրդը եղան»:

Աժմ, «Նահատակաց եկեղեցին» ունի իր սեփական աղօթատեղին, Միւլէյմանիէ թաղամասին մէջ, եւ բարգաւաճ գործունէութիւն ու կիրակնօրեայ դպրոց:

Պալպան Խոնան պատգամ մը ունի ուղղուած նոր սերունդին. «Թող մեր յետնորդները լաւ իմանան, որ իրենք կը պատկանին ժողովուրդի մը, որ անցեալ ունի, մշակոյթ ունի, հաւատք ունի»:

Մեսրոպ Մաշտոցի նուիրեալ զինուոր եւ մատենախնամ թորոս թորանեան այսպէս կ'եզրակացնէ իր խօսքը. «Անմոռանալի Պալպան Խոնա, քու արցունքով կազմուած այս մատենան պիտի լուսաւորէ գալոց սերունդներու ճանապարհը: Հայը ապրած է, կ'ապրի ու կը շարունակէ իր դարաւոր երթը գալոց օրերուն տանելով երգ ու զիւր, ժպիտ ու բարեք, արուեստ ու գիտութիւն»: Հայը, դարձած պետական ժողովուրդ, Արաղածի լանջերէն կը խուզարկէ աստղեր ու միգամածութիւն: Սփիւռքը լարած է իր ուժերը յանուն ազգապահպանումի, ու դուռ ուղեկիցն եւ յաւերժազնայ մեր կարեւանին. սիրելի հարկւրամեայ ուսուցիչ՝ Սարգիս Պալպանեան»:

Հալէպ

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆԻ «ՆԱՍԱԿԱՆԻ»Ն

Պատկանելի (714 էջնոց), հաստափոր եւ պատկերազարդ՝ հարիւրամեակի յորեմիական հրատարակութիւն մըն է Ամերիկայի Թէքէեան Մշակութային Միութեան կողմէ 1983-ին լոյս ընծայուած Վահան Թէքէեանի Նամականին, որ մեծարժէք ներդրում մը կ'ընծայէ թէքէեանագիտութեան սուպրէզին, նոր լոյս կը սփռէ անոր խոսովայոյց կեանքին, ստեղծագործութեան եւ ազգային գործունէութեան վրայ, բանալով նոր ուղիներ անոր ուսումնասիրութեան համար: Անտարակոյս, ասիկա նոր գրգիռ մը պիտի լլայ, ձեռնարկելու մեծ քնարեղակին, հնչեակի անգուգական վարպետին, իրզախ հրապարակագրին եւ անբասիր հասարակական գործիչին ամբողջական գործերուն հրատարակութեան:

Նամականիին ճմտալից ներածականը, որ ինքնին արժէքաւոր մեծագործութիւն մըն է, ներկայացնելով Թէքէեանին նոր կենսագրութիւնը, անոր կապերը հայ գրագէտներու հետ, օտար հեղինակներու հանդէպ անոր փերարեումը եւ Թէքէեան մարդն ու անոր խոհերը, կը պատկանի վաստակաւոր հայագէտ Փրոնֆ. Աւետիս Գ. Մանճեանին, որ անհուն սիրով ու անհատում եռանդով կազմած, խմբաբաժնի, ծանօթագրած է հաստորը, գայն ձեռնելով՝ Վահան Թէքէեանի նահատակ գրչեղբայրներուն:

Այս առթիւ, նախ ծանօթանանք Նամականիին խմբագրին, ըստ արժանւոյն գնահատելու համար անոր գործը:

Փրոնֆ. Աւետիս Գ. Մանճեան հայ ժողովուրդի այն արժանաւոր ու պիտանական գաւազներէն է, որոնք օտար հորիզոններու տակ բարձր կը բռնեն հայութեան պատիւը եւ հայ մշակոյթին անմահ ջահը:

Փրոնֆ-ը վարիչ-տնօրէնն է Գալիֆորնիոյ համալսարանի Լոս Անճելըսի Ա.Շ.Լ.Ա.Ի Գրիգոր Նարեկացիի անուան հայագիտական ամպիոնին: Հեղինակած է հետեւեալ գիրքերը, անգլերէնով, — «Այնքսանտրէթի սանճարք» (Հաթայ) ուսումնասիրութիւն մը Փրանքո—թուրք—սուրիական յարաբերութեանց շուրջ, «Դասական հայերէնի քերականութիւն»ը, «Հայկական հասարակները Սուրիոյ մէջ, օսմանեան տիրապետութեան ներքեւ», «Յիշատակարանները հայկական գրչագիրներուն 1301—1480 որոնք աղբիւր մը կը կազ-

մեն Միջին Արևելքի պատմութեան», «Գրացուցակ հայկական միջնադարեան ձեռագիրներու», որոնք կը գտնուին Մ. Նահանգներուն մէջ, «Երեմիա Չելչելի Բէօմիւրճեանի հայ-թուրքերէն բանաստեղծութիւնը»:

Մամլոյ տակ է իր խմբագրութեամբ պատրաստուած՝ Դուլիթ Անյաղթ փիլիսոփային նուիրուած համադումարին զեկուցումներու ժողովածուն:

«Հայրենիքի Ձայն» շարաթարթիթիւն մէջ (Երևան), 1978ին Տրատարա-կած է «Թէքէեանի քնարական ժառանգութիւնը» յօդուածը:

Նոյնպէս պատրաստած է ուսումնասիրութիւն մը միջնադարեան մեծ փիլիսոփայ գիտնական Գրիգոր Մագիստրոսի մասին:

Երկու անգամ մասնակցած է Ամմանի (Յորդանան) համալսարանի կողմէ կազմակերպուած «Պատմական Պաղեստինը» համադումարին, ուր ելոյթ ունեցած է «Հայկական գաղթածախները պատմական Մուրիոյ մէջ» նիւթին շուրջ:

Ունի տակաւին բազմաթիւ արժէքաւոր ուսումնասիրութիւններ գա-նազան գիտական—բանասիրական հանդէսներու մէջ:

Այս հակիրճ ծանօթութիւնը՝ ցոյց տալու համար թէ ինչպիսի ձեռնհաս ձեռքերու յանձնուած էր Նամակներին խմբագրութիւնը:

Նամակագրութիւնը վաճան Թէքէեանին համար հոգեկան պահանջը մը եղած է եւ կազմած անոր առօրեայ ստեղծագործական կեանքին մէջ ան-բաժան մասը: Աստանդական, սակաւախօս եւ «կղպուած» բանաստեղծին համար, ասիկա անհրաժեշտութիւն մըն էր, երկխօսութեան ձեւով ձերբա-զատուելու իր մտորումներէն ու տուայտանքներէն, այլ խօսքով՝ «պար-պուելու» եւ մեղմացնելու իր նրբազգած սիրտը:

Նամակներին մէջ ժամանակագրական կարգով համադրուած են վա-հան Թէքէեանին 315 նամակները, գրուած 1900էն—1945 տարիներու ըն-թացքին:

Ինչպէս կը հաստատէ խմբագիրը: «Անոնց մէջ մասը գրուած է հապ-ճեպ, առանց վերանայման եւ գրչի վրիպումներու սրբագրութեան, մինչ ուրիշներ կը գեղուն նրբահիւս գրական գունաքերով եւ իմաստական խո-րութեամբ: Անոր համար նամակագրութիւնը եղած է այնքան լուրջ միջոց մը Հաղորդակցութեան, որքան իր ստեղծագործական բնութիւն հնութիւն-ները»: Ան խոստովանած է թէ «նամակ մը գրելը՝ գիրք մը կամ կտակ մը գրելու չափ կարեւոր, ծանր գործ մը կը դառնայ երբեմն»: Անոր նամակ-ները իրենց մտորական անկեղծութեան մէջ, կը բացայայտեն Թէքէեանի անձնական նկարագրին ցանկալիքները, անոր սեսուցութիւններն ու խոհերը արուեստի, գրականութեան, գրական ստեղծագործութեան եւ քնա-գանցական հարցերուն մասին:

Այս նամակներին մեծարժէք նպաստ մը կը բերէ հայ նոր գրականու-թեան պատմութեան, եւ վերջապէս՝ անոր բովանդակած նիւթերը ո՛չ միայն հարազատօրէն կը պարզեն Թէքէեանի տառապալից կեանքը, այլ նաեւ հա-րուտ տուեալներ կը հայթայթին 1900—1945 թուականներու հայ ժողովուր-դի փոթորկալից պատմութեան երեւչներուն ուսումնասիրութեան համար:

Խմբագիր Ա. Սանճեան, հետեւեալ բաւերով կը բնութագրէ Թէքէեան մարդը: «Ան ճանչցուած էր որպէս բարձր բարոյականութեան մարմնացում, մարտը ու ջինջ հոգի, վերին աստիճանի լուրջ ու ծանրակշիւ, սակաւախօս, յարակրատանքէ խորշոյ, սեփեւեթութիւն չսիրող, իր անձով մարդոց ամե-նեկին գրադեցնել շքանկացող համեստ մարդ մը: Թէքե արտաքինապէս միշտ հանդարտ, ինչպէս իր անձնական՝ նոյնպէս հայ ժողովուրդին վերտն ու թա-խիծր իր մէջ խտացուցած Թէքէեանին մտաբանութիւնները նիւթին, ան-տեսանելի էին իր ստեղծագործած գրականութեան նման՝ բնաւորութիւնն այլ քնուրջ ու մեղմ էր, մեկամաղձոտ ու թախձոտ, առանց բարձրացող ու քննող արկեղծումներու: Ան ունէր ազնուական վեհութիւն եւ կիրթ վարուե-լակերպ եւ բոլորին հետ՝ անխոր քաղաքավար»:

Վերոյիշեալ խօսքերուն ճշմարտացիութեան լաւագոյն ապացոյցն է որ կու տայ հայ գրականութեան «Ոսկիէ կշիռը», երբ չի վարանիր պատասխա-նելու տասնիննամեայ է.Ն. (նամակ 173) գրասէր պատանիի սրտի ձայնին, երբ ամենայն սիրով անոր կու տայ իր սեսուցիւնը ստեղծագործ անհատին եւ արուեստին յարաբերակցութեան հարցին հետ՝ խորհրդակցութիւններ, որոնք կը պատշաճին բոլոր սկսնակ գրողներուն: Նոյն նամակով, Վ. Թէքե-եան կը պարզէ իր ներաշխարհի եւ ապացոյցը կու տայ իր գերագոյն հա-մեստութեան, երբ կը գրէ— «Մեր պիտիկ ժողովուրդը կեանքի խորու-թիւններ ունի՝ որոնք արժանի են Ձեր սիրոյն ու ետանդին: Անոնք շատ քիչ փորուած են դեռ ու ես՝ հազիւ ասեղով մը միայն» (ընդգծումը ինձմէ — է. Ն.): Հարկ է նշել Վ. Թէքէեանի իր խօսքը պատանիին կ'ուղղէ միշտ յարգա-լից, յոգնակի երկրորդ դէմքով, առանց մոռնալու գլխագրելու «Ձեր»ը, «Ձեզ»ը, «Ձերին»ը, «Ձեզին»ը:

Սոյն կոթողական իրագործումին համար ջերմօրէն կը շնորհաւորենք Փրոֆ. Աւետիս Գ. Սանճեանը, մաղթելով նորանոր նուաճումներ հայագի-տութեան բնագաւառին մէջ: Նոյնպէս արտաքին շնորհակալութիւններ Ամե-նիկայի Թէքէեան Մշակութային Միութեան՝ իր գեղեցիկ նախաձեռնութեան համար, եւ այն ազնիւ ազգայիններուն (Յովսէփ Եւսէֆեան, Եղուարդ Մարտիկեան եւ Նազար Լ. Նազարեան) որոնք միեկնաս եղած են այս հոյա-կապ Վրձեանի Տրատարակութեանը:

Իրենապէս ոգեւորուած, կը գոչենք: «Տարուր Ծահան Ծահնուրի Նա-մակներին»:

Արցաբեւ, Ծահան Ծահնուրի գեղարուեստական ստեղծագործութեան անդամները մասը կը կազմեն անոր հազարաւոր նամակները, հայերէն եւ փրանսերէն, որոնք «հերթի» կը սպասեն մէկտեղուելու եւ լոյս աշխարհ գալու, այլապէս տարիներու հոլովոյթով դատապարտուած են կորստեան:

Լիալոյս ենք որ ԹՄ Միութիւնը, որ Պէյրութի մէջ Հիմնեց Ծահան Ծահնուրի կեղծողը, պիտի սիրով նախաձեռնարկ ըլլայ Ծահան Ծահնուրի նամակներին Տրատարակութեան:

Հայկ

«ՀԱՅ ԳԻՐՔ»Ը ԳԱՆՁԱՐԱՆ՝ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Հայէպի Վիդուս Ժպեճեան Գրադարանի բարեացակամութեան կը պատրիք մեր ծանօթութիւնը աննախընթաց հրատարակութեան մը, որ կը կոչուի՝ «Հայ Գիրքը 1512—1800 թուականներուն», Ա. հատոր: Գիրքը լոյս ընծայուած է 1988ին, Երեւանի Ալեքսանդր Միանիկեանի անուան Հանրապետական Գրադարանի կողմէ: 865 մեծադիր էջ, պատկերազարդ, նուիրուած Հայ տպագրութեան 475ամեակին:

Հեղինակները կ'ին մատենագէտներ են՝ Նինել Ոսկանեան (Հայ Գիրքի Մատենագիտութեան վարիչ), Քնարիկ Կորկոտեան եւ Անթառամ Սամալեան, որոնք որպէս անձնագործ կամաւորուհիներ, իրենց երիտասարդական ողջ կեանքն ու աւիւնը նուիրաբերած են, երեք տասնամեակներ, իրադրո՞ծելու համար Հայ հնատիպ գիրքի մատենագիտութեան սոյն սխրագործութիւնը: Եւ «Գիրք—Յուշարձան է, որն իր արժէքով ու նշանակութեամբ յիրաւի կարելի է դնել մեր մատենագիտական ոսկի Ֆոնտում, որուն կազմը արժանի է պետական մրցանակի: Նման մատենագիտութեան կազմումը պահանջի է մեղուաջան աշխատանք Հայ գիրքի բազմաթիւ զբաղակոչներին Ֆոնտերում պահուող հնատիպ մատենագիտական որոնում, նկարագրութիւն—վերլուծութիւն, հաւաքած տեղեկութիւններէ համագրութիւն անցնելու հրապարակուած մատենագիտական աղբիւրներէն» (Երեսնէ Հայ րապետեան): Այլ խօսքով՝ «տառապալի եւ աշխատարար գործ մը», ինչպէս կ'ընէ Հայր Արսէն Ղազիկեան:

Կազմել ազգի մը հնատիպ գիրքի մատենագրութիւնը, կը նշանակէ ցոյց տալ դարաւոր համայնապատկեր անոր հոգեւոր ու մշակութային ժառանգութեան մէջ երեսը, այս պարագային տպագրութեան արուեստը ու այս ձեւով՝ որոշել անոր դերն ու արժէքը համամարդկային քաղաքակրթութեան զարգացման բնագաւառին մէջ:

Հայոց մէջ նախապէս փորձեր եղած են կազմելու Հայ հնատիպ գիրքի մատենագիտութիւն, ինչպէս Վենետիկի Միխիթարեան Ուխտէն Հայր Գարեգին Զարրճանապետ (1893) եւ Հայր Արսէն Ղազիկեան (1909—1913), սակայն

սիտեր մնացած են անկատար եւ կիսաւարտ: Հայի Դաւիթեան, 1967ին, հրատարակած է «Հայ Գիրքը 1801—1850 թուականներին», որ չէ օգտագործած սակայն, արտասահմանեան աղբիւրները:

Գովելի նախանձախնդրութեամբ մը, Ս. Հայաստանի նախարարներու Քորհուրդը եւ մշակոյթի վարչութիւնը, 1958ին որոշեցին Ալ. Միանիկեանի անուան պետական գրադարանին մէջ ստեղծել Հայ մատենագիտութեան բաժին: անոր յանձնարարելով կազմել Հայ հնատիպ գիրքի ամբողջական մատենագրութիւնը: Ասոր «նպատակն է ի մի բերել աշխարհով մէջ ցրուած հայատառ նիւթերը, ցոյց տալ թէ որքան հին է ու հարուստ Հայ տպագրութիւնը, երբ եւ որտեղ են գործել հայկական տպարանները, որքան եւ ինչպիսի հայերէն գիրքեր են տպագրուել անցեալում, ինչի մասին են եւ որտեղ են գտնուում նրանք այժմ: այսպէսով իսկ մոռացութեան վտանգից փրկել ասոր արժեքները հանգրուանած հայատառ տպագիր գանձերը եւ մատչելի պարձնել Հայագիտական աշխարհին եւ զբաղող հասարակութեանը...»:

Հայերը, որոնք պաշտած են լոյսը, այսինքն՝ յառաջդիմութիւնը, առաջիններն եղան, որոնք օգտագործեցին կրթնագիտական տպագրական զուտը եւ 1812ին սկսեալ, աշխարհի գանազան մասերուն մէջ հաստատուած հայկական գրայթօճախներուն մէջ, սարքաւորուեցան տպարաններ եւ լոյս աշխարհ կ'ան հայերէն գիրքեր, «ոչ վասն մարմնաւոր գործի եւ շահախնդրութեան համար, այլ վասն հոգեկան միտխնդրութեան ազգին հայոց հայկազանց» (Խոճա նահապետ Կիւնյազար): նաեւ «սակա ձրի բաշխեցեալ Սուրբ Մատենիս», վասն լուսաւորութեան Ազգիս Հայոց եւ ամուր կուռան հայապահպանութեան ու հայրենասիրութեան:

Հայ ժողովուրդին դժխեմ ճակատագրին բերումով, ներկայ մատենագիտութեան մէջ զբանցուած 1095 անուն հրատարակութիւններէն միայն 14ը բախտ ունեցած է լոյս տեսնելու Մայր Հայրենիքի Սուրբ Էջմիածինի մէջ, իսկ միւսները, թուականի կարգով՝ Վենետիկ (1512), Կ. Պոլիս (1567), Հոռոմ (1670), Լիպով (1616), Միլան (1621), Փարիզ (1833), Նոր Զուգա (1638), Լիվոնո (1644), Ամսթերտամ (1660), Մարսէլ (1672), Չիլիւնիս (1676), Լոնտոն (1736), իթիւսիս (1771), Մատրաս (1772), Թրիեստ (1776), Ս. Փեթերսպուրկ (1781), Նոր Նախիջեւան (1790), Աստրախան (1796), Կալիպոն (1796), Փարիզ (1538), Սոփիա (1539), Յիւրիխ (1555), Պերլիս (1583), Քէօն (1587), Ֆրանքֆորտ (1803), Լայպցիկ (1680), Բատովա (1690), Եսալին, Իսկ Մայնիս մէջ, 1486ին գերմաներէն հրատարակութեան մը մէջ լոյս տեսած է առաջին տպագիր հայերէն աշուրբները, որ այժմ 504 տարուան հետեւին ունի:

Մատենագիտութեան այս գիրքի սկիզբի ծանօթագրութեան մէջ կ'ամփոփուի անոր ըզմանակութիւնը: Հայ գիրքի ընդհանուր մատենագիտութեան այս առաջին հատորում, Հայ հնատիպ գիրքի ծանօթագիտութեան մէջ ներկայացուած են 1512—1800 թթ. աշխարհի տարբեր երկիրներում տպագրուած հայերէն գիրքերը: Ընդգրկուած են նաեւ հայատառ այլալեզու, ինչպէս՝ տարբեր լեզուներով հրատարակուած հայերէն հատուածներ պարու-

նակող Հնատիպ գիրքերը: Այս մատենագիտութիւնը միաժամանակ Համա-
հաւաք գրացուցակ է, որով ի մի են բերուած տարբեր երկիրներէ գրադա-
րաններում եւ անհատական հաւաքածոներում պահուող Հայերէն Հնատիպ
գիրքերը»:

Գիրքին յառաջարանին մէջ (Հայերէն, ռուսերէն եւ անգլերէն լեզու-
ներով), աւաք մատենագէտ, Նինեյ Ոսկանեան կը ներկայացնէ Հանգա-
մանօրէն Հայ Հնատիպ գիրքի եւ անոր մատենագիտական անցած դարաւոր
ուղին, անոր ստեղծման պատմութիւնը, ընդգրկումն ու նպատակը, նկարա-
զրուեցեան կանոններն ու սկզբունքները, նաեւ կառուցուածքը:

Հատորին յապաւումներուն եւ Համառօտագրութիւններուն բաժնին
շնորհիւ, կարելի է գիտնալ զբանցուող գիրքի գտնուած վայրն ու զբաղա-
րաններուն անունները եւ անձնական հաւաքածոներուն սեփականատէրերը:

Նկատի ունենալով որ Հայ գիրքի մատենագիտութեան Ա. եւ Բ. հա-
տորները պիտի ունենան իրենց վերահրատարակութիւնը եւ մինչ այդ երե-
ւան եկած բացթողումները կամ նորալայտ գիտները, սփիւռքի մեր գրա-
դարանները եւ անձնական հաւաքածոյ ունեցող Հայ Հայրենակիցները,
որոնք ի դէպ այնքան օգտակար եղան ներկայ մատենագիտութեան ամբող-
ջացումին, պարտին վերջին անգամ ըլլալով իրենց անվերապահ աջակցու-
թիւնը բերել այս կոթողային ու հայրենանուէր գործին, քանի որ «Հայ
տպագիր գանձերի Հաշուառումը, կորստեան վտանգից փրկելը ու զբանով
իսկ Հայ Ազգային Մատենագիտութեան լիարժէքութիւնը Հաստատելը, ոչ
միայն մեր, այլ ամէն մի Հայի նուիրական պարտքն է. ուստի, երախտա-
միայն կը լինենք, եթէ ձեր շնորհիւ Հայ մատենագիտութիւնը թէկուզ մէկ
միակերով Հարստանայ», ինչպէս որ կ'ըսուի Միասնիկեան Գրադարանի կող-
մէ այս առթիւ Հրատարակուած կոչին մէջ:

Հալեպ, Մայիս 1990

ՅՈՒՇԱՍԱՏԵԱՆ
ՀԱԼԷՊԻ ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԵՒ
ԿՐԹԱՍԻՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ
(1924—1989, 65ամեակ)

Հայ վարժարաններու Յուշամտեաններու Հրատարակութիւնը, շատ
չնորհակալ եւ ազգօգուտ նախաձեռնութիւն մըն է, որպէս անկորնչելի յի-
շատակարան դադթահայ պատմութեան մշակութային կեանքին, ներկա-
յացնելով կրթասէր հաւաքականութեան մը երկար տարիներու ազգանուէր
Յիպին հանրագումարը: Վարժարանի մը յուշամտեանը հարուստ է շտեմա-
րան մըն է պիտանի գիտելիքը», ոսկեայ կամուրջ մը յաջողական սերունդ-
ներու միջեւ, վերակոչումի գողտրիկ մատեան մը դպրոցական անմոռա-
նայի, քաղցրիկ յուշերուն, շօշափելի արձագանգը կատարուած ազգասի-
րական անխոնջ աշխատանքին ի նպաստ հայապահպանման սրբազան գոր-
ծին, նաեւ համապատկերը անոր հասցուցած ատոք հասկերուն, վասն
«արտացոսման մեր «փոքր ածու»ին:

Այնթապահայութիւնը ի հնուց անդի, եղած է ջերմ եկեղեցասէր եւ
եռանդուն դպրոցասէր մը, Հայ Այնթապը իրաւամբ կոչուած էր Հայակի-
յիկոյ Աթէնքը. ապացոյց՝ ընդհանուր տարագրութենէ առաջ, Հայ Այնթապ
ունէր մեծակառոց Ս. Աստուածածին տաճարը, 30—է աւելի դպրոցներ (այն-
թապակեան բարբառով կրթարաններ), կիրակնօրեայ լսարաններ, գի-
լիբրային վարժարաններ, բացի Ամերիկեան Կեդրոնական Թուրքիոյ Գոյնձէն
եւ ամերիկեան Ալլկանց Բարձրագոյն վարժարանէն (սեմինար):

Վերահաստատուելով Հայէպի օրհնեալ ափը, Այնթապահայութիւնը որ
կը կապմէր 50 հազար Հայ գաղթականութեան մէկ շորորդէն աւելի՝ 15 հա-
զար հոգի, շարունակեց իր աւանդական կրօնասիրութիւնը եւ կրթասիրու-
թիւնը: Ս. Աստուածածին եկեղեցին յանձնուեցաւ իրենց գործածութեան եւ
1034ին հիմնուեցաւ Կրթասիրաց Միութիւնը եւ համանուն վարժարանը (որ-
պէս ողբերգում իրենց ծննդավայրին «Կրթասիրաց»ին), որ այսօր, յամի

տեան 1996ին, 72 տարեկան պատկառելի հայրենակցական կրթարան մըն է, միշտ երիտասարդ, միշտ կենսալից եւ առաջատար Միեւնոյն չըմանին, բացուեցաւ նաեւ անթիւապցիական թեթու մով կիրիկեան գաղթականաց վարժարանը, Լեւոն Լեւոնեանի ուսումնասիրացը, Յակոբ Պուրուհուրեանի Արմէնեան վարժարանը եւ Հայ Աւետարանական վարժարանները:

Տեսող պատկառելի, բովանդակութեամբ հմտալից, գեղատիպ, պատկերազարդ հրատարակութիւն մըն է, Կրթասիրացի Այլոմ-Յուշամատենը, որ կը ներկայացնէ միացման դիմ մը անցելի եւ ներկայի միջին:

Երեւոյզարդ Մատենը կը բացուի արարերէն գողտրիկ ձօնով մը, նուիրուած առաջին ուսուցիչ, բարենորոգչական օրհնաբեր շարժումի ռահ-վիրայ, արարական աշխարհի մեծագոյն դեկավար Ն.Վ. Հաֆէզ Ասատին:

Կը յաջորդեն սրբատառ կոնդակները մեր գոյզ հայրապետներուն, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի եւ Կիրիկեան թեմի կաթողիկոս Քորէն Ա.ի:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. կաթողիկոս յորեկեանական հանդիսաւոր առիթով բարձրորէն կը գնահատէ Կրթասիրացին կէս դարեայ վաստակը եւ Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն եւ իր սրտէն հայրապետական օրհնութիւններ կը յղէ բոլորին, մաղթելով ուժ եւ եռանդ մշտնորոգ, բարի ներշնչումներ բոլորին եւ ազնիւ աշխատակիցներուն կը մաղթէ աստուածահաճոյ պտղաւատ արդիւնքներ:

Կրթասիրաց Մշակութային Միութեան խնամակալութեան երկարամեայ ատենապետն ու բարերարը, Կրթասիրաց վարժարանի ճեմականի յորելեանին, իր սրտի խօսքով կ'ըսէ. «Հազար գովերգութիւն եւ օրհնութիւն անցն, որոնք իրենց բարոյական, նիւթական եւ մտային ուժերով մեր այս օրերը փառքով կերտեցին եւ հասցուցին բարձունքի մը՝ օրինակ դառնալով նորերուն:

Հատորը, որ դափնեպսակն է տարիներու շահուած կեանքին եւ գործին, կը դառնայ ման արդար խօսքը կատարուած գործերուն եւ որ իրմով պայծառ ճանապարհ մը կը բամայ ապագայի գեղեցիկ ծրագիրներուն, անվերջանալի ցանկութիւններուն եւ բոլոր երազներուն:

Բի՛ր շնորհաբեր մաղրամբներ քու պայծառ ապագայիդ: Քու շահած ոսկեայ տարիները թող քեզի քերեն Ադամանդեայ Գործեանի արդար հպարտութիւն անվերջանալի յոյսերով»:

Սմբազիր Թորոս Թորանեան, դարոցին առաջին տնօրէն Աբրահամ Մէրայտարեան եւ վարժարանի երկարամեայ տնօրէն, ուսուցչապետ եւ յայտնի մանկավարժ Գրիգոր Պողարեան կը ներկայացնեն պատմութիւնը Կրթասիրաց Միութեան եւ համանուն վարժարանին:

Հայկայի մէջ, 1924ին, 15 այնթապահայ աշխատու, գիտակից եւ կրթասէր անդամներ, հիմը կը դնեն հայրենակցական Կրթասիրաց Միութեան եւ վարժարանին: Անոնք կը գտնէին անժամանակ խառն դատարարակութիւնը, գերիհողուն կարգերը հակամանկավարժական եւ կուսակցական կողմնա-

կալ հայացքներ՝ ազգավնաս: Կրթասիրաց Միութեան ղեկավարները, երկար տարիներու ընթացքին, հաւատարիմ մնացին հիմնադրներուն դարոցալարական այս ըմբռնողութեան եւ հետեւեցան անոնց նշանաբանին՝ Մամուկ մը կրթել Ազգ մը կրթել է: Յետագային, այս սկզբունքէն մեկնելով, 1936ին, կարելի եղաւ առաջը առնել, կարգ մը կուսակցական թեթու մով խնամակալներու յառաջնորդութեամբ փեռնակուածին: Դժգոհներու զանգուածը, Նոր Գիւղի Ներսէսեան դպրոցին շուրջ բողոքուն, նորահաստա Մէլայան (Նոր Գիւղ) թաղամասին մէջ հիմնեց նոր միութիւն մը եւ հաստատեց նոր դպրոց մը՝ Զաւարեան վարժարան:

Կրթասիրացի բացման տարին (1924—25) դպրոցը ունեցած է վարձու երկու շէնք մին՝ Սալիպէ, որ արտաքին երկրորդ տուն մըն այ ունէր Գամի Գափուլի վրայ, աղջկանց բաժին, մանկապարտէզ ու ծաղիկոցի համար, իսկ միւսը՝ Ախո՛ւ Փողոց, մարտիրներու եկեղեցիին կոնակը, Մթրան Ծարհաթի արձանին կամ «երեք Այնթէպ» չհասած:

Առաջին շէնքը լքուեցաւ 1925—26ին եւ վարձուեցաւ Հայ կաթողիկոս պատրիարքարանի մեծ շէնքը Զօքաք—Արպային Կրթասիրացի 20ամեակի առիթով, Կրթասիրաց Միութիւնը իր միջոցներով գնեց վերոյիշեալ շէնքը, 770 սոմանեան ոսկիի փոխարէքով:

Ուսումնական չորրորդ տարեշրջանին Ախո՛ւի շէնքը լքուեցաւ եւ վարձուեցաւ նոր շէնք մը Վէրիլիկ, յոյն օրթոտոքներու առաջնորդարանին պատկան, որպէս մանչերու բաժին: Ու այդ երկու շէնքերուն մէջ, Զօքաք—Արպային եւ Վեքիլիկ, Կրթասիրացը բոլորեց իր յիսնամեայ գոյութեան 47 տարիները, վերջին տասնամեակին՝ 1957ին կատարելով փոփոխութիւնը, Վեքիլիկի շէնքը ընելով մանկապարտէզ, իսկ Զօքաք—Արպայինը՝ երկսեռ նախակրթարան:

Դպրոցին տնօրէնները եղան.— Աբրահամ Մէրայտարեան, 1924—1927, երեք տարի, Գրիգոր Էմէճեան՝ 1927—1929 երեք տարի, Գրիգոր Պողարեան՝ 1929—1957, 28 տարի, Արմէն Տէր Պետրոսեան՝ 1957—1974, 17 տարի, Մկրտիչ Թութիւնեան՝ 1974—1995, 21 տարի:

Կրթասիրացէն շրջանաւարտ յայտնի գրագէտ, պատմաբան եւ «Սփիւռք» շաբաթաթերթի կորովի հրատարակիչ եւ խմբագիր Միմոն Միմոնեան, յաւազդն ձեւով կը խոսքնէ Կրթասիրացի կատարած փրկարար դերը, հետեւեալ պիւրեախօս բառերով. «Ես, յաջորդական երեք տարիներ (1924—1926) ի վեր լատինաց դպրոցը կը յաճայի: Թրքերու կը խօսելիք դպրոցը, լատին դասընկերներու հետ հաղորդութիւն կ'առնէի, տունը լատին եւ թրքերէն երգեր կ'երգէի... ես հօրս (շաղապսպան Օվէն, Սասնոյ Կերնա գիւղէն) աչքին արդէն կորսուած էի: Լատինացած, օտարացած, գրեթէ քրիստոնէս... թուրք մը դարձած: Լատինաց վարժարանէն փոխադրուեցայ Կրթասիրաց վարժարան, 1926 թուի աշնան. թրքացումէն դէպի հայութիւն ամօր կամուրջ մըն էր վարժարանը, Կրթասիրացը: Ան հայացուց հսկայ սերունդ մը: Հայակերտման հինգ դարձաւ: Կիրիկիան հոգեպէս կամուրջ

Հայաստանին»:

Կրթասիրաց Միության պատմության մեծագույն սխրագործությունն է նոր դպրոցաշինությունը:

10 Յունիս 1967ին, Կրթասիրացին եւ Ս. Աստուածածինն նոր եկեղեցիին համար, գնուեցաւ Սէյրաֆի թաղամասի մէջ (Վիլլաներու պողոտայ) 4000 ք.մ. հողամաս, 63.000 ս.ո. փոխարժէքով, ք.մ.ը ս.ո. 18.60 (երանելի՛ օրեր, է.ն.), որուն երեք չորրորդը (2869 ք.մ.) դպրոցին եւ մէկ չորրորդը (1131 ք.մ.) եկեղեցիին համար:

1 Նոյեմբեր 1971ին, տեղի ունեցաւ հիմնարկէքը: Երկուութիւնը տեւեց երեք տարի: Կրթասիրացի 50ամեակին, 1974 Սեպտեմբերին, դպրոցական տարեշրջանը դիմաւորուեցաւ նոր, փառաւոր շէնքին մէջ, որ իրականացաւ իրենց արեան մէջ վրայերէն ժառանգած կրթասիրութեան եւ դործնապաշտ տեսիլք ունեցող «Այնթապցի խնթեր»-ու կողմէ, Տաթև սրբազանի բնորոշումով:

Պարտք է յիշատակել կատարուած նուիրատուութիւնները:

Դպրոցաշինութեան ընթացքին զանազան նուիրատուութիւններ

550.000 Ս.Ոսկի	
Կարապետ Յարութիւնեան եւ որդիք Յարութիւն, Աւետիս, Արմէն, Կարօ (արդարօրէն Կրթասիրացի մանկապարտէզը կողուեցաւ «Յարութիւնեան Մանկապարտէզ») 100.000	„
Սողազ Արպայինի շէնքին փոխարժէքը 90.000	„
Տնօրէն Գրիգոր Պողարեան (Հայ տիպար ուսուցչի մը տարիներու խնայողութիւնը) 30.000	„
Ներսէս Գասարեան 11.000	„
Գէորգ Պազըրճեան (Փարիզէն) 8.000	„
Առաքել Պօյնարեան 7.000	„
Կարպիս Վարդանեան 5.000	„
Կիւլպէնկեան Հիմնարկութեանն (Շնորհիւ Վահրամ Մովսէսի) 15.000 տոլար	
Մոնթէվիտէոյէն 210 տոլար	
Քուէլէն 1500 տինար	

Կրթասիրացի դպրոցական նոր համալիր, օժտուած է արդիական բոլոր յարմարութիւններով: Ունի հանդիսասրահ մը 750 հոգիի համար, խաղափայլ եւ ընտանեկան պարտէզ. Յարութիւնեան Մանկապարտէզը փոքրիկներուն սիրունատես եւ հաճելի դարձնելու համար, մասնաւորապէս սարքաւորուած է Օր. Սիրան Յարութիւնեանի կողմէ:

Սղիբ պարտք է հոս յիշատակել հաւատաւոր կրթասիրացեանի (1935ի շրջանաւարտ) մը թանկագին գործակցութիւնը, անոր անունը փրկելու հա-

մար անծանօթ զինուորի ճակատագիրէն: Կրթասիրացի դպրոցաշինութեան առջեւ, կային չորս խոչընդոտներ. ա) Քաղաքապետութեանն ստանալ շինութեան արտօնագիրը, բ) Հողամասին հիւսիսային մասին մէջ գտնուող հրէական տական եռանկիւն մը գ) Կրթասիրացի Միութեան պաշտօնական ճանաչում յաչս պետութեան դ) Հայերէն լիզուի դասաւանդութեան հարց:

Ահարժեք տեղի գտնել՝ անկարելին կարելի ընող, պետական շրջանակներու հետ բարեկամները շահած մէկը, այլ խօսքով՝ «Ճիշդ մարդը՝ ճիշդ տեղը»: Բարեխաբար գտնուեցաւ նման աւաւելութիւններ եւ կարելիութիւններ ունեցող անձնաւորութիւն մը՝ յանձին խաչիկ Քէօշկէրեանի, երէց որդին՝ մահակալագործութեան հանրածանօթ Ռահմիթայ այնթապցի Արիւնկեր Ծուսուֆին (Ծուսուֆ, Յովսէփ Քէօշկէրեան), որ սիրով յանձն առաւ կատարել առաջարկութիւնները: Ուսուցչապետ տնօրէն Գրիգոր Պողարեան հետեւեալ բառերով կը բնորոշէ զայն. «Երեց որդի խաչիկ, կալա հարազատ պատկերը հօր, անոր պէս շարժում, խօսքի մէջ եփում, պետական-գիմուրական շրջանակներու մէջ բարեկամներ շահած»:

խաչիկ եռանդով գործի ընուեցաւ, մտնելով հանգիստ եւ անձնական գործ: Քաղաքապետութեան երկրաչափներուն պետը, իր վերօմ (ո՛րը) դրած էր շինութեան արտօնագրին դէմ, քանի որ՝ ա) այդ հողամասը կը գտնուէր ջրառատ դաշտի մը մէջ (Քուէք գետը մօտէն կ'անցնէր) եւ նկատուած էր վտանգաւոր գօտի, տեղատարափ անձրեւներուն, ջուրը բարձրանալով ջրամոյն պիտի ըլլար շինութիւնը եւ փչէր բ) հողամասին մէջ գտնուող հրէապատկան եռանկիւնը, ըստ օրէնքի, ոչ կարելի էր գնել, եւ ո՛չ ալ վրան լինութիւն ընել:

Այդ օրուան Աւագֆի (խալամ կալուածոց վարչութիւն) տնօրէնը, աստուածավախ, արդարամիտ եւ հայասէր Ելէյի մըն էր (կրօնապետ), որուն ամէն պայրամին խաչիկ կ'այցելէր շնորհաւորական ծաղիկփունջով մը: Անոր արժանաւոր տղան, այսօր յաջորդած է իրեն: խաչիկ իր անոյշ լիզուով, համոզել կերպով բացատրեց Ելէյին թէ՛ դպրոցը աղքատ մանուկները պիտի փրկէր փոզոցներէ եւ թէ՛ եկեղեցին ամենակարող Ալլահին փառասրանութեան տունը (պէ՛տուլլահ) պիտի ըլլար: Ելէյի, նկատելով որ այս ծրագիրը Աստուածահաճոյ գործ մը պիտի ըլլար, անմիջապէս լսելի ըրաւ իր հեղինակաւոր ձայնը եւ քաղաքապետութեան երկրաչափին թելադրեց անմիջապէս շինութեան արտօնագիր տալ: Ամէն ինչ բարեխաչող անցաւ ու դպրոցին հիմնարկէքը տեղի ունեցաւ 1 Նոյեմբեր 1971ին:

Կր մեր Կրթասիրաց Միութեան պետական ճանաչումը ձեռք բերել եւ հայերէն լեզուի դասաւանդութեան խնդիրը կարգադրել (անշուշտ այս փերջինը հաւաքական աշխատանքով): խաչիկ ջուրի ճամբայ ըրաւ Հայկա-Գամասկոս երթուղին: Զինուորական եւ քաղաքական իր բարեկամներուն թուրք միջմտութեան շնորհիւ, ձեռք բերուեցաւ Կրթասիրաց Միութեան եւ դպրոցին ճանաչումը յաչս պետութեան՝ որպէս Տար թէ՛ւրպիէ

Սազգաֆիէ: Յիշեցնենք որ Ազգ. Առաջնորդարանը մերժած էր տալ իր հո-
վանաւորութիւնը Կրթասիրացին:

Գալով Հայերէնի դասաւանդութեան հայ դպրոցներէ ներս, իր բարեւոյր
լուծումը գտաւ միացեալ աշխատանքով եւ գնահատելի հեռատեսութեամբ:
Կրթասիրաց Վարժարանի Յիսնամեայ յորեքեանին առթիւ, Ս. Էջմիածի-
նէն ստացուած էր Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատա
կոնդակը: Փափաքելի էր նաեւ ստանալ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ
Քորէն Ա.ի կոնդակը, որ կ'ուշանար: Քաջիկ թուա Պէյրութ, ու իր քաղա-
քավար եւ ճարտար լեզուին շնորհիւ յաջողեցաւ ստանալ կոնդակը: Այդ օրե-
րուն ուսուցչապետ Գրիգոր Պողարեան երեք տարիէ ի վեր անկողնոյ կը ծա-
ռայէր: Քաջիկին խնդրանքին վրայ, Վեհափառ Տէրը, իր շքախումբով այցե-
լեց սերունդներ կրթած մեծ դաստիարակին, անհուն գոհունակութիւն
պատճառելով երկուստեք:

Նոր դպրոցին բացման հանդիսութեան առթիւ, Քաջիկ դարձեալ վազկե
Պէյրութ եւ միասին Հայէպ բերաւ տնօրէն Պրն. Պողարեանը, որ ապրեցաւ
իր կեանքին լաւագոյն օրերէն մէկը:

Երախտագիտական այս քանի մը խօսքերը բեզիւ, վերոյիշեալ եւ այլ
բարի գործերուդ համար, սիրելի Քաջիկ ու վարձքը կատար:

Արժան է նաեւ արձանագրել այն ծառայութիւնները զորս կրթասի-
րացը մատոյց Ազգին ու մեր հայրենակիցներուն՝ անուղղակի կամ ուղղակի
կրթասիրացը հովանաւորեց Նիւ Եորքքարնակ Յակոբ Փոլատեանի
անուան գիշերալին վարժարանը, ուր հիմնական գիտելիքները ստացան 500
այնթիապի եւ ոչ—այնթիապի «չափահասներ», տարագրութեան պատճառաւ
անուս մնացած: Տնօրէնն էր Արրահամ Մէրայտարեան:

1930ին, 30 երիտասարդներ կազմեցին միութիւն մը՝ Կրթասիրաց
Երիտասարդաց Միութիւն անուով, որ ձուլուեցաւ ՀԵԸի մէջ, 1931ին:

Կրթասիրաց Միութեան անդամ—անդամուհիներ մասնակցեցան Հա-
յաստանեաց եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցի 1929ի աշան սկսած կրօնա-
եկեղեցա—մանկավարժական դասընթացքին: Դասախօս վարիչ—տնօրէն
Լեւոն Զէնեան:

Հայկական ուսուցչական միութիւնը, հիմնուած 1938ին, իր թմամեայ
փայլուն գործունէութեան մէջ շատ րան կը պարտի Կրթասիրաց Վարժարա-
նին, որ 20 անդամ ունեցած է միութեան անդամութեան մէջ:

1930ին, Կրթասիրացը իր լաւագոյն աշակերտներէն տրամադրած է Ան-
թիլիասի դպրեմանքին, որոնք են. Արմէն Տէր Պետրոսեան, Սիմոն Սիմոն-
եան, Անդրանիկ Եայրաբեան, Յակոբ Պարտազճեան, յետագային նաեւ Լեւոն
Պերդուսեան, Սարգիս Եափունճեան, Կարապետ Սապուհճեան: Յակոբը դար-
ձաւ Տ. Պարզեւ ԳՆԵյ. 1939ին՝ Գէորգ Գանտահարեան մեկնեցաւ Անթիլիաս,
եղաւ ուսուցիչ եւ դպրապետ: Նոյնպէս Վարդան Մէրայտարեան՝ դպրապետ
(Պէյրութ):

Հայէպի Ս. Աստուածածին եկեղեցին, 1924—25ին դարձաւ այնթիապի

եկրու եկեղեցի, որուն դպրապետն էր Պետրոս Տէր Պետրոսեան Կրթասիրա-
ցը հայրավթեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ ղեկահասակ եւ ձայնաւոր
դպրոցներ:

Հայրենակցական Հայ Անթիպ (նոր անուանակոչութեամբ Նոր Այն-
թիպ) հրատարակութեան ու տարածման ի սպաս Կրթասիրացի շրջանակը
բերաւ իր կարեւոր ավակցութիւնը:

Մայր հայրենիքի մէջ, Նոր Այնթիպ ականի գոյառութեան իր բաժինը
բերաւ Հայ Անթիպ պարբերաթերթը: Հայրենարնակ կրթասիրացեանները՝
ենտիք Կրպոյեան, Աւետիս Սանոսեան, Արթուր Հատիտեան, հայրենակից-
ները Նոյիս Տոլպազեան, Փարիզէն բարերար Գէորգ Պագրճեան, փարեցան
այս սրբազան գաղափարականին: Պէյրութի կեդրոնական հանգանակիչ
մարմինը նիւթական փայլուն յաջողութիւն ձեռք բերաւ:

Կրթասիրացի խոստմնալից սաներէն Արթուր Հատիտեան 1929ին մեկ-
նեցաւ Եւրուսաղէմ, հետեւելու ժառանգաւորաց վարժարանի հնգամեայ
լրբանին: Յետագային ներգաղթեց Հայաստան եւ «Էջմիածին» ամսագրի
խմբագրապետը եղաւ:

Կրթասիրացը գովելի գաղափարը ունեցաւ Ներսէս Պարսումեանը զրկել
Արարական Վարժարան, տիրանալու արարելէն լիզուին եւ ծառայելու դպրո-
ցին, նաեւ Պնտն Գրլըճեանը, ֆրէնդերու գոլէճը ֆրանսերէն լեզուի համար:
1924—1974, յիսնամեակ. Կրթասիրացի սեմերէն անցած են մօտ 5250
այակերտներ, որոնցմէ 1850ը նախակրթարանէ շրջանաւարտ եւ այդ թիւին
կրկնով այ թերաւարտ 3500:

Անշուշտ այս թիւին վրայ պէտք է աւելցնել, 1975—1995ի շրջանաւարտ-
ները՝ մօտ 1088 շրջանաւարտ եւ կրկինը թերաւարտ:

Կրթասիրաց Վարժարանը, իր 72 տարիներու երախտաշատ վաստակով,
սպիտակ նուիրած է հարիւրաւոր արժէքաւոր դէմքեր, որոնք իրենց կարեւոր
ներդրումը բերած են ի փառս մեր «փոքր ածուին»:

Կրթասիրաց Միութեան ու Կրթասիրաց Վարժարանին նուիրուած մեր
գրողութիւնը կը փափաքէինք վերջացնել, սերունդներու վաստակաւոր դաս-
տարակ—կրթիչ երախտաւոր Գրիգոր Պողարեանի յուզիչ խօսքերով. «Բազ-
մախպար գաւակներով երջանիկ մէկ ըմտամիք մը, Կրթասիրացը. ու մաղ-
թամքս է, որ ամ ծիլ. ծաղկի. գորսնայ, նոր ըմծիղներով ի փառս Ազգին,
նախակամ մեր հայրենիքին եւ բոլոր երկիրներուն ուր ասպնջական ենք»:
Վարժերները կատար եւ ջերմագին շնորհակալութիւններ. «Քուշա-
մատեան»-ի հրատարակութիւնը իրականացնող սիրելի բարեկամներ:

«Խօսմակ», Յունիս 1997

ԱՆԴԵՆԱԿԱՆԷՆ ԺՊՏՈՂ ՀԱՅՐ՝ ԼԵՒՈՆ ՇԻՐԵԱՆ

ՊԱՏՐԱՍԵՑԻՆ: ՖԼՈՐԻ ԵՐԵՐԵԱՆ ԵՒ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ, ՓԱՐԻՋ, 1997

Թորոս Թորանեանը, այս անգամ գտած է «Անդենականէն Ժպտող Հայ Մը՝ Լեւոն Շիրեան»:

Տարիներ առաջ, Անդրանիկ Մառուկեան, իր «Մեծերը Եւ... Միւսները» յուշագրութեամբ, հանդիպած էր Տիգրանապատ Շիրեանին, որ իր կեանքին նպատակը բրած էր կազմելու Տիգրանակերտ անդուզական գրադարան մը, բազմալեզու հազարաւոր գիրքերով, քարտէսներով, քանդակներով, դրամանիշերով՝ ցոյց տալով Մեծն Տիգրանի փառքը, անոր կայսրութեան սահմանները:

Տարիներ ետք, 27 Հոկտեմբեր 1997ին, Լեւոն Շիրեանի դստեր՝ Չլորա Շիրեանին հրաւիրով Թորոս Փարիզ է, Անդենականէն երկիր բերելու համար այլապէս մոռացութեան դատապարտուած անոր սիրելի հայրը, արժեւորելու համար անոր պատմական յիշատակը:

Լեւոն Շիրեան ծնած է Եռզկատ, 13 Յունուար 1895 թուականին: Աւարտած է Բոնիայի Զննանեան գոյէճը: 1918—1919ին, հայ որդանոցի մը տնօրէնն է Պոլիս: Ազգ ուսուցիչ Պոլսոյ Պեղագեանի մէջ: Հրաշքով ազատելով ջարդէն, 1923ին կը հաստատուի Փրանսա սկիզբը՝ Մարսէյ, ապա Փարիզ, ուր կը դառնայ հանրածանօթ առեւտրական: Իր արտադրած ապրանքները ունեցած են Արմենիա, Սեդա եւ Սեւան մակերիշերքը, կոշուժով ուսուցիչ ու գրող, մանկավարժական կարողութիւններով օժտուած այս հայորդին երբեք չի լքեր հայկական եւ միջազգային մշակոյթը: Իր կինը՝ Անուշ Աւետիբեան, նոյնպէս Եռզկատէն, կը բախտաւորուին աղջիկ զաւակով մը՝ Չլորա, որ սրբութեան մը պէս պահպանած է իր հօր ձեռագիրներն ու գիրքերը, ունի երկու զաւակ՝ Արան եւ Անոյշը: Առաջինը՝ մասնագէտ բժիշկ, իսկ երկրորդը՝ փոխտնօրէնութեան ղոկատոր: Բժիշկ Արան ունի երկու զաւակ՝ րոյրն այ հայախօս՝ Հանդերձ ընտանեօք:

Լեւոն Շիրեանին տունը ժամադրաւորն էր փարիզահայ մտաւորակա-

նութեան: 1838ին տպագրել տուած է Յակոբ Օշականին «Ստեփանոս Սիւնցի» քնարաբաղը (միջին դարէն): Ետտ կը սիրէր Եահան Եահնուրը: Ան գասախօսութիւններ տուած է, միշտ նիւթ ունենալով Մեծն Տիգրանը, որուն մասին կը պատրաստէր համապարփակ ուսումնասիրութիւն մը, որ իր անժամանակ մահով (վախճանեցաւ 58 տարեկանին) անկատար մնաց: Ունի իր արամբարանական եւ գեղագիտական դատում հայ թէ օտար գրակա-նութեան շուրջ: Ահաւասիկ կարգ մը դատումներ հայոց վերաբերեալ:

Հայերը նախաքրիստոնէական շրջանին տուած են դիւցազներգութիւններ, որոնցմէ միայն պատճառներ հասած են պատմահայր Քորենացիին լիորհու:

Ոչաչատուր Արուիանի «Վէջք Հայաստանին» կը մնայ մեծարժէք եւ յայտնական երկ մը: Անով կը սկսի արեւելահայ գրականութիւնը: Յովհաննէս Թումանեանի «Մասուցի Դաւիթը» նոր ժամանակներու ամէնէն յաջող դիւցազներգութիւնն է:

Վահան Թէքէեան, իրապաշտներէն ետք, արուեստագէտ սերունդին առաջին բանաստեղծն է, որ ունի բնութեան զգացում, շեշտուած անձնա-կանութիւն եւ խորհուրդ:

Անկախութեան պէտք է ընկերանայ ելեւմտական անկախութիւնը:

Ազգի մը մեծութիւնը իր միասնականութեան մէջ է:

Աշխարհի համար ընդհանրապէս եւ մեզի համար մասնաւորապէս ուժն է միայն ուժն է, որ կը վճռէ եւ կը նուիրագործէ որեւէ յաղթանակ: Առաջն ուժի յաղթանակ չկայ, ուժը յաղթապահ է, մինչդեռ զիւսանագի-տութիւնը վերջապահ: Ուժի մթնոլորտին մէջ կը ծաղկի դիւանագիտու-թիւնը: Ուժը ամէն բանէ վեր է (ականջը խօսի Արցախի ազատամարտիկ-ներուն):

Հր. Բ. Արմէն (ԱՄՆ) անգլերէնով գրած է Մեծն Տիգրանի կենսագրու-թիւնը, 1939ին: 1947ին հայերէն թարգմանութեան յառաջարկը գրած է Գա-րեգին Յովսէփեանց կաթողիկոսը, որ ոչինչ կը փոխէ գիրքին ծանծաղ բո-վանդակութեանէն, ընդհակառակը կասկած կը ներշնչէ յառաջարկողին պատմագիտութեան վրայ:

Յակոբ Մանանդեան գրած է Մեծն Տիգրանի մենագրութիւնը, ուր ար-դարօրէն կ'ըսէ, թէ եւրոպական պատմագիրները աչքառու ու անբարեացա-կամ վերաբերմունք ունեցած են անոր հանդէպ: Սակայն Մանանդեան չէ կրցած զօրաւոր հակահարուած մը տալ: Ան չէ պատրաստուած այսպիսի մեծ գատնավարութեան մը համար, մեթոն չունի, աւելի մեծ պատրաստու-թեան մը կը կարօտի:

Դոկու. Հ. Յ. Աստուրեան, 1911ին գերմաներէն լեզուով գրած է աւար-տանուն մը՝ «Քաղաքական վերաբերմունք ընդմէջ Հայաստանի եւ Հռոմիմայ, 1190ին Ն. Բ. մինչեւ 428 Յ. Բ.»): Մեթոն մը կայ այս գիրքին մէջ, ծաւալով փոքր, բայց արժէքով մեծ, սեղմ՝ բայց համադրութեամբ պայծառ այս գործը: Հանգրուան մըն է եւ մեկնակէտ մը նոր ուսումնասիրութիւններու

համար:

ժամանակի շատուածը՝ Սրոնոս, օր մը կանչեց պատմութեան շատուածը՝ Կլիոն եւ ըսաւ.

— Հիւսիսային լայնութեան 40րդ եւ արեւելեան երկայնութեան 41րդ աստիճաններուն մէջէն ձայներ կու գան:

— Տէր իմ, հայերն են, պատասխանեց Կլիոն, պատմութեան մուսան:

— Ովքե՞ր են այս հայերը. տախտակներուն վրայ չեմ հանդիպած անոնց անուան:

— Տախտակներու վրայ կայ անոնց յիշատակութիւնը, Տէր իմ, միայն թէ անփառունակ ժողովուրդներուն յատուկ անփայլ թանաքով արձանագրած եմ անոնց անունը:

— Փառաւոր եւ անփառունակ ժողովուրդներ գոյութիւն չունին, Կլիո՛, ժողովուրդներու վերելքը եւ վայրէջքը իրենց վիճակներուն հետ յարաբերական են:

— Տէ՛ր իմ, ասոնք յաղթուած են շարունակ ասորեստանցիներէն, մարերէն, աքիմենեաններէն, սելեւկեաններէն, պարթեւներէն, հռոմէացիներէն, սասանեաններէն, արաբներէն, ըրզնազացիներէն եւ այլն:

— Բո՛րն ալ հոս կանչէ՛, հրամայեց ժամանակներու շատուածը:

Կլիոն արդէն անյիշատակելի դարերէ ի վեր չէր համակրած այս ժողովուրդին: Բիւզանդացի զպիրներու ձեռքով պատուել տուած էր անոնց պատմութեան մագաղաթին վերջին բաժինը, ուրիշներու ձեռքով այլեւ տուած էր Մեթրոտոր Սկեպուացի գիրքերը, Պրուտարքոսին թելադրած էր հայոց մասին գրուած հռոմէական աղբիւրներուն ամէնէն աննպաստ մասերը քաղել:

Նորէն լսելի եղաւ Սրոնոս շատուածոյ խուպոտ ձայնը.

— Կլիո՛, կրկնեց, բոլորն ալ հոս կանչէ:

— Անկարելի է, Տէր իմ:

— Ինչպէս թէ անկարելի:

— Թանատոսին պէտք է զիմի:

— Թանատոսին, մահուան շատուածո՞յ, ինչո՞ւ:

— Տէ՛ր իմ, անոնք մեռած եւ սրբուած են պատմութեան բեմէն:

— Կլիո՛, ըսաւ Սրոնոս, կողմնակալութիւնը աստուածային հաւատարակչութեան սպիտաքումն է, այսուհետեւ երկու տեսակ թանաք չգործածեն, ճերմակին վրայ սեւով պարտեալը յաղթական է, զրէ՛:

Կլիոն երբ ուշ ատեն իր օթեանը մտաւ, քաշեց սպիտակ մագաղաթ մը եւ գրեց՝ իրականին մէջ սակայն պարտեալն է յաղթականը:

Երեւութեան է հայուն պարտութիւնը, բայց իրական է անոր յաղթանակը:

Գարեթ է ի վեր Մերձաւոր Արեւելքի պատմութիւնը կը գրուի՛ Մուսիբը, Ակկատ, Ասորեստան, Բարեյոն, Հաթի, Սալդի եւ այլն: Ասոնց հետ կը քալէ հայ ժողովուրդը, իր յիշատակութիւնը եւ պայքարները կը կարդանք այսօր կորսուած կայսրութիւններու պատմութեան մէջ ու պատմութիւնը կը հաս-

տատէ թէ մինչեւ 1914 այս ժողովուրդը պահած է իր զիրքը:

Ինչպէ՛ս բացատրել կունակը գետնին գարշապարերու տակ ճգմուած ցեղի մը շարունակական խոլանքը եւ յարատեւութիւնը: Սնդորեմ, արեւմուտքի պատմաբաններ, գիտցէք որ հայը կեանքը նախընտրած է թանգարանէն, որքան ալ յաղթողներ եւ պարտուողներ գոյութիւն ունենան, հայոց զարաւոր պատմութեան լուսաւոր փարոսը պիտի լուսաւորէ ու յուսադրէ ճնշուած մարդկութիւնը:

Հայաստանը երկար ժամանակ կամուրջ մը եղած է շատ մը կայսրութիւններու համար: Բոլորը եկան ու անցան, բայց այդ կամուրջը կայ ու կը մնայ:

Շարունակ անքուն, շարունակ լարուած, շարունակ հսկեր ենք, մեր գանձերուն: Ամբողջ աշխարհ կրնայ քնանալ, բայց հայը՝ ո՛չ:

Հայութեան համար վճռուած է երկարել հսկումը:

Ա. Համաշխարհային պատերազմէն ետք, հայասէր եւ մարդասէր Ֆրիտսլոֆ Նանսէնի նախաձեռնութեամբ, սփիւռքահայ տարագիր հայերուն տրուեցաւ նանսէնեան հպատակութիւն: Այս անցադիրը վաւերաթուղթ մըն է, որ կը հաստատէ թէ այդ թուղթը կրողները բռնի տարագրեալներ են՝ հայրենիք վերադարձի իրաւունքով:

Լեւոն Շիրեան, հայ իրաւ մտաւորականը, մինչեւ մահ չընդունեց իր արարած երկրին հպատակութիւնը եւ ապրեցաւ ու մահացաւ որպէս ռեֆիլմիլ Արմենիէ՛՛ հայ տարագիր, ինչպէս Արշակ Զօպանեան եւ ուրիշներ:

Նմարգրող Թորոսը, արդարօրէն կը խորհրդածէ, ի՞նչ պիտի ըլլայ ճակատագիրը Լեւոն Շիրեանի չքնաղ զբաղարանին եւ հաւաքածոններուն: Ու կը թելադրէ զանոնք նուիրել Երեւանի Պետական Համալսարանին, յսկիթացեալու՝ անոր անունը:

Այս առթիւ, տանք անհաւատալի բայց իրաւ լուր մը. անխոնջ հրապարակագիր, յուշագրող, բանաստեղծ, արձակագիր, հրատարակիչ, ճանապարհորդ, բեմքասաց, եռանդուն մշակութային գործիչ՝ Թորոս Թորանեան, արդէն եղած է... եթեանասուն տարեկան, երբ կը կարծուէր թէ ան հազիւ թեւակոխած է... յիսունը:

Առիթէն օգտուելով, ջերմօրէն կը շնորհաւորենք Թորոսին ծննդեան եօթնասուներեակը, մաղթելով որ արժանաւորապէս տօնուի անոր յորիշանը, որպէս տէր Թորոսհրատ 180 հրատարակութիւններու: Անսպասեալ ու դաւար տարիներ հայ մամուլի ու զրականութեան այս կամուրին:

«Աարթօք», 9 Յունիս, 1998

«ԲՈՒՆԱԳԱՂԹԻ ՀԱՅ ԿԱՐԱՒԱՆՆԵՐՈՒ
ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ 1915–ԻՆ ՍՈՒՐԻՈՅ
ՏԱՐԱԾՔԻՆ»

(Պատկերագրող ալյում
խմբագրեց՝ Տոքթ. Ռուպեր Ընպեճեան)

Հայկական Յեղասպանութեան 80ամեակին առթիւ, ուշագրաւ աշխատասիրութիւն մըն է ներկայ գրախօսուող Ալյումը: Այսօր, երբ իր վերջալոյսը կ'ապրի Մեծ Եղեռնի վերապրողներու վերջին փաղանդը, եւ յետեղեռնեան սերունդներու յիշողութեան մէջ աշխարհագրական տարտամ երբեր են հայասպանութեան վայրերուն անուները, կենսական աշխատանք պէտք էր, 80 տարիներ ետք, պատմութեան յիշողութեան, հայ սերունդներու ուշադրութեան եւ համայն աշխարհի գիտութեան, վերալանձնել հայ բազմութիւնները մահուան առաջնորդող ճանապարհներու եւ կեղրոններու փաստագրական տարագրութիւնը ու վաւերագրական քարտէսը: Ահաւսիկ, հանրաձայնօթ ակնարոյթ, գիտնական եւ հասարակական անխոնջ գործիչ Տոքթ. Ռուպեր Ընպեճեան, տարիներու տքնաջան աշխատանքով, հրապարակ կը հանէ հայկական ջեղասպանութեան, բռնագողթի հայ կարաւաններու երթուղիներու եւ հայասպանութեան կեղրոններու պատկերագրող բազմալեզուեան Ալյումը, պատմութեան դատաստանին յանձնելով ջեղասպան թուրքին լենկթիմուրեան արարքները եւ փաստացործնէ ի գրեւե հանելով անոր շինծու ուրացումները:

Սոյն աշխատանքը հաղորդուած է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի սփիւռքագիտութեան բաժնի գիտական լրակատար նիստին, 26 Դեկտեմբեր 1989 թուականին եւ յանձնարարուած է հրատարակութեան:

Ալյումին պատրաստութեան նիւթական օժանդակութիւն երբած է Հայկական Վիդեո Ընպեճեան Մշակութային Փոնտը, իսկ հրատարակութիւնը ստանձնած է Վիդեո Ընպեճեան զրազարանը, 1994ին:

Աշխատասիրութեան իր հովանաւորութիւնը ընծայած է, Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Ժողովի Գործադիր Մարմինը, որ իր յայտարար-

րութեամբ կ'ըսէ. «Սոյն պատկերագրող Ալյումը, կը լրացնէ զրաւոր, բաւաւոր, պատկերային եւ յաւանտողական առկայ վաւերագրութիւններու յարբը, ընթերցողը ծանօթացնելով այն վայրերուն, ուրկէ անցելային անցած են զէպի մահ քայտղ կարաւանները, կայաններ՝ ուր անոնք կանգ առած են, թորքերու ստոյգ վայրերը, ինչպէս նաեւ բռնագողթը գործադրող օսմանեան ոստիկանութեան կեղրոններն ու յարակից տեսարաններ»: Տեքստը հարկերէն, արարքերէն, ռուսերէն եւ անգլերէն, մանրամասն տեղեկութիւններ կու տայ, շեշտելով արար ազնիւ ժողովուրդի կարեկցութիւնը տարագիր հայութեան հանդէպ:

Ալյումը հարստացած է զուճար երկու քարտէսով եւ Տէր-Զօրի Նահատակ Մատուռին ու համալիրին նախագիծերով: Ան կը բացուի հայկական ջեղասպանութեան երթուղիներու եւ կայաններու գունուար քարտէսով, պատրաստուած Տոքթ. Ռ. Ընպեճեանի եւ ճարտարապետ Շահէ Տէր Գեղորդեանի կողմէ:

Յառաջաբանը զրած է Տոքթ. Ռուպեր Ընպեճեան, որ նկարագրականը կ'ընէ Ալյումին «Մենդոց»ին:

Մեծ Եղեռնի մասին լոյս տեսած է վաւերական հարուստ գրականութիւն հայերէնով եւ օտար լեզուներով: Վերջին տարիներուն աւելցան նաեւ ձայնագրուներ վերապրողներու եւ ականատեսներու վկայութիւններուն՝ անաս-լոյտական երկղներով: Նաեւ փաստագրութիւններ, բարբարոս գործ Փայլին տեղագրին ջանքերը ի սպառ ջնջելու հայ մշակոյթի կոթողներն ու արձանագրութիւնները, պատմաշինութեամբ նենգափոխելու իրականութիւն, նոյնիսկ օտարներուն առջեւ գանոնք հուշակելով «Թրքական մշակոյթի նմոյշներ», այլ խօսքով՝ էթնիկական ջեղասպանութիւն, հայասպանութեան եւ հողասպանութեանէ ետք:

Սակայն կար մեծ բաց մը, ունենալ բռնագողթի երթուղիներու պատկերային վաւերագրութիւնները: Անհրաժեշտ էր զտնել «իրաւ մարդը՝ իրաւ տեղը»: Հրաշքը պատահեցաւ, երբ 1988ին, ինքնակամ ներկայացաւ քամիշ-լիարնայ սասունցի Դանիէլ Պետրոսեան, առաջարկելով նկարահանել տարագիր հայ անաւաններու երթուղիները, իր առաջնորդութեամբ: Դանիէլ, երկարամեայ պաշտօնեայ նաթթի ընկերութեան մէջ, 30 տարի չափչափած էր Սուրիական անապատը ծայրէ ծայր որպէս շրջուն գործավար՝ իր հօրմէն՝ սունմապետ Հէյնեց Պետրոսէն ժառանգած էր հրազատ ժողովուրդի հանգիւ պանահման սէր, քաջամտօթ արարքէն լեզուին, ան շիւտած էր ամէն զասակարգի մարդոց հետ, ծանօթացած հայոց տեղահանութեան անցու-զարձերուն, քաղած լրացուցիչ տեղեկութիւններ բռնագողթի հին ճամբաներուն, թուրք ոստիկանական կեղրոններուն, ջարդերու վայրերուն եւ անոնց հեղինակներու մասին:

Դանիէլին ընկերակց Մինաս Քէօզկէրեան, յանձն առաւ իր մեքենայով անձամբ տանիլ անձնակազմը: Լուսանկարելու համար գտնուեցաւ քաղաքիս ստաւիտար սիրող լուսանկարիչներէն Տոքթ. Յակոբ Տէր Գրիգորեան: Այս

երեքին միացաւ նկարիչ եւ լուսանկարիչ Եսայի Թումա՝ Մուսա Լեբաւ յայտնի հերոս Եսայի Եղուպեանի թուր. արձանագրելու շրջապտոյտի մանրամասնութիւնները:

16 Մայիս 1988ին, խումբը ճամբայ ելաւ շրջագայելու բռնագաղթի երթուղիները:

Սոյն շրջագայութեան պատկերահանուած նկարաշարքին աւելցան, 1973ին Ռաս-ուլ-Անի եւ Տէրպէտիէի միջև Ալիէ կոչուած վայրի մէջ, հայտն ածիւններով լեցուած ջրհորներու նկարներ՝ Հակոբակ Քասկիզեանի խումբին կողմէ:

Ապա, կը նկարագրուին երկաթուղագծի երկայնքին էյնթիլի եւ յարակից շրջանները, Գաթմայի կայարանը: Այս վայրերուն մէջ սպանուած էին 300,000 հայեր: Նաեւ կարաւաններու երթուղիները հայկէսէ զէպի հարաւ, Արեւելեան Անատոլիայէն Պարսից [Արարական] Մոց նահանջող հայութիւնը:

Կանխամտածուած հայասպանութեան հանդամանքը բացայայտելու համար, կը նկարագրուին տեղահանութեան ոճրային բնութագրութիւնը, փոխադրումի մարդասպանական միջոցները, մասնաւոր բնաջնջման ենթարկուած երթուղիները հայկական կարաւաններու եւ ծրագրուած մահացու զրկանքներ:

Այլոմը կը պարունակէ մատենագիտական ճոխ ցանկ՝ հայերէն, արաբերէն, թրքերէն, գերմաներէն, ֆրանսերէն, անգլերէն գիրքերու հայկական ցեղասպանութեան վերաբերեալ: Կը պակսի ուսուերէն գիրքերու բաժինը:

Հատորին վերջաւորութեան կը տրուի անուանի քարտէսագիր գեղապետ Ջատիկ Ռանգատեանի հայկական տեղահանութեան գունաւոր քարտէսը:

Կաւելցիները քանի մը յաւելուածական նոթեր մեր նիւթին վերաբերեալ՝ Սուրիական անապատի Սաֆա զիւղի չէչէն բնակչութիւնը, առաջնորդութեամբ գիւղապետ Ահմէտ Սըլէմի, թալանած եւ սպանած է 100,000 հայ:

Ռաս-ուլ-Անին 30 քմ. արեւելք Ալիէ գիւղի տասնեակ հորերուն մէջ գտնուած են 10,000 հայու դիակներ: Իսկ Ռապուրի մօտիկ անյատակ հորի մը մէջ՝ 100,000:

Քեսապէն տարագրուած 8,000 հոգիէն, քանի մը հոգի հազիւ վերադարձած է:

Էյնթիլի եւ շրջակաները, սպանուած են 250,000 հայ, իսկ Քաթմա՝ 60,000:

Տէր Ներսէս Ա. Քհնյ. Թաւուզեան, իր օրագրութեան մէջ, 1916, Հոկտեմբեր 9ին կը գրէ. «Այսօր, անցեալ տարի Պոսէլլա (Համայն մօտ գիւղ մը) զրկուած գաղթական կիներուն թարուած տեղերը գտանք, որ մեծ հոր մըն է, չուր եւ ոստ լեցուցած են բոլոր մեռելներուն վրայ, որոնք երկու հարիւրէն աւելի կը նկատուին»:

Տրապիզոնի կուսակալը, 50,000 մանուկ եւ կին ծովուն մէջ խեղդամահ լինի տուած է:

Լոնտոն հրատարակուող «Տիւ Ռոմիլիտեմընթ Սէլէզիմ»ը, իր 4 Ապրիլ 1903 թիւով, կը հրատարակէ իր աշխատակից Ռոպըրթ Ֆիլքին յօդուածը, որ լրագրողը ի միջի այլոց, կը գրէ. «Քսաններող դարու ստաջին ցեղասպանութիւնը տեղի չունեցաւ նացի Գերմանիոյ մէջ, այլ՝ թրքահայաստանի, որ, օսմանեան կայսրութեան կուսակալութիւնը ցեղասպանական արշաւի անցաւ քրիստոնէայ հայերու դէմ: Եւ սպանող իր բարձրակէտին հասաւ 1015 թուին, երբ մէկ միլիոն տղամարդիկ, կիներ ու երախաներ իրենց մահը գտան»: Անգլիացի լրագրողը կը նկարագրէ Եփրատի վտակ՝ Ռապուր գետի վրայ գտնուող Մերկետէ աւանը: Ռապուր գետը «սեւ գաղտնիքներ ունի»: Այս հողերուն վրայ, ոչնչացած են 50,000 հայեր: Մերկետէն եւ անոր շուրջ գտնուող սուրիական անապատը եւ թրքահայաստանի հազարաւոր գիւղերը գարձան հայ ժողովուրդի Օշլիցը, աշխարհի մոտացութեան տուած ցեղասպանութեան վայրերը: Թուրքերու կազմակերպած տեռորը, կը նպաստակալորէ հայ ժողովուրդին բնաջնջումը՝ հայերը արեւելեան Անատոլիան եւ Անդր-կովկասի բնակիչները եղած են Ք.Ա. Տրդ դարէն սկսեալ: Առաջին համաշխարհային պատերազմէն աւաջ, երկուքուկէս միլիոն հայեր կ'ապրէին թրքահայաստանի մէջ, որոնցմէ մէկուկէս միլիոնին մահ սահմանուած էր»:

Այս սպանդանոցէն վերապրող հայ մը՝ Պօղոս Սարգիսեան, կը միշտ թէ Մերկետէի սպանող տեւած է օրեր ու օրեր: Տարագրեալ հայեր կը հանէին Մերկետէի բլուրն ի վեր, խումբ-խումբ կը կանգնեցնէին, կը կապկպէին, յետոյ անոնցմէ մէկը փամփուռուով կը սպաննէին: Սպաննուողը իր ծանութեան ազդեցութեամբ խումբը վար կը զլտորէր եւ բոլորը միատեղ Ռապուր ինչոյով կը խեղդուէին: Քեմալիէի ժողին մէջ թուրքերը սպաննած են 20,000 հայ, իսկ Պիթիլիսի մէջ, Տիգրիս գետին խորը, խեղդամահ ըրած են 000 հայ կիներ: Երզնկայի մէջ այնքան մարդ գետամոլն ըրած են, որ գետը իր հունը փոխած է եւ սկսած հսուի հարիւր հարտ անդիէն:

Հայկական սպանդանոցները բազմաթիւ են սուրիական անապատին մէջ: Մերկետէէն 50 մղոն հիւսիս, կը գտնուի Ծէտտէտէն, որ փողը Օշլից մին է: Հոս կար քարայր մը, ուր թուրքերը լեցուցած են հազարաւոր հայեր, թխած են զանոնք քարայրէն ներս, ապա, քարայրի բերնին վառած են հակա խորոյկ մը, ծուխը ներս տուած: Մարդիկ սկսած են հազալ այնքան ատեն, ինչեւ որ եղած են խեղդամահ: ուրեմն թուրքը թեքնոլոնիք ցեղասպանութիւն սկսած է Ծէտտէտէի մէջ:

Աւելցնենք որ վերջերս Մերկետէի քարայրներուն մէջ գտնուեցան խեղդամահ եղած եւ հրկիզուած հազարաւոր հայերու դիակներ: Հոն հիմը դրուեցաւ յիշատակի մատուոխ մը:

Ամերիկացի հիւպատոս Լեյսի Տէյլլիս, 1915-1917 թուականին, Թուրքիոյ նիւրքին շրջաններու հսկայ տարածքին միակ օտարերկրեայ ականատես

վկան եղած է: 1989 թուին ամերիկացի պատմաբան Սիւզան Բլէյլը, աշխատելով պետական նախարարութեան մէջ, Հանդիպած է Հիւպատոս Տէյլիսի փաստաթուղթներուն — նամակներ եւ հեռագիրներ: Ան Համախմբած է բոլոր գրքի մը մէջ՝ անուանելով զայն «Մահուան Տարածք»: ըստ Հիւպատոսին թուրքերը ոչ միայն սպաննած են տեղացի 150 հազար Հայերը, նոյնքան եւ ակելի հոն բերած էրզրումի եւ Տրապիզոնի տեղահանուած Հայերը:

Փրփրը կը պարունակէ բաց նամակ մը, թուրքերէն կաշառուած Հերայ Շայլոք Պեռնար Լեւիս պատմաբանէն որ կը փորձէ ուրանալ Հայկական ցեղասպանութեան գոյութիւնը, ինչպէս վերջերս իր Հայրենիքը Խորալէյի պետութիւնը եւ անոր կրթական նախարարութիւնը, «չզայրացնելու Համար զաշխակից թուրքերը»:

1912ին, գերման ներքին գործոց նախարարութիւնը, իր կատարած մարդահամարով, Թրքահայաստանի Հայոց թիւը ցոյց կու տար 3 միլիոն 600 հազար: Անգլիացի լրագրող Ռապրթ Ֆիսք կը վիշէ 2 միլիոն 500 հազար Հայութիւն, իսկ Պոլսոյ Հայոց պատրիարքարանը 2,600,000: Սակայն ճշմարտութեան մօտը գերմանական աղբիւրն է, որ օգտագործած է նաեւ օսմաննաւ աղբիւրները: Յամի Տեառն 1922ին Հայոց թիւը մնացած էր 500 հազար, ուրեմն Հայկական ցեղասպանութեան զոհ զացած է 3 միլիոն Հայութիւն, եւ ո՛չ թէ մէկ կամ մէկուկէս:

Ջերմագին շնորհակալութիւններ Տոքթ. Ռուպեր Զեպեճեանին, որ Հայկական ցեղասպանութեան 80ամեակի նախօրեակին, Հայ, արար եւ օտար ուշադիր ընթերցողին նկատողութեան կը յանձնէ, երկար տարիներու տքնաջան հետազոտութիւններու արդասիք՝ 1915ի բռնազաղթի Հայ կարաւաններու երթուղիներուն վաւերագրական պատկերազարդ Ալյոմը, իր գուշաւոր քարտէսներով:

Փրփրը դալմոր ու եռանդդ անսպա՛ռ, սիրելի՛ բժիշկ, որպէսզի իրագործես ազգանուէր այլ ծրագիրներ, առաջին առթիւ սուրիահայ «Փեղարզ» տարեգիրքին Ծրոյ Հատորին հրատարակութիւնը:

Մագիանքներ քաջաոգջութեան, յարողութեան ու արեւշատութեան:

«Խօսնակ», Մարտ-Ապրիլ 1995

ԱՅՆԹԱՊԱՀԱՅ ՈՂԻՆ

Գերաշնորհ Տիրան Արքեպս. Ներսիսեան, պատմութիւն Այնթապի հայոց պատմագիրքին հրատարակութեան առթիւ, 1953 թուակիր նամակով մը կը գրէր. «Այժմ, երբ հետզհետէ այնքապցիներու յաջող սերունդը, որ ծնած եւ հասակ նետած է աշխարհի գանազան մասերուն մէջ, կը դադրի այլիս այնքապցի ըլլալէ, բուն այնքապցիներուն վերջին նուիրական պարտքն է իրենց անցեալն ու կատարած գործը անմահացնել, պատմութեան մէջ արձանագրելով ինչ որ այն հին ու գեղեցիկ քաղաքին մէջ իրագործուած է, իրենց ինքնութեան հաւատարիմ հայ գաղութի մը կողմէ: Այնթապի հայոց պատմութեան բուն ընելիքը կը կայանայ անոր մէջ, որ ան կը սրտացնէ հայուն հոգիին պայծառ ու անքայտ լոյսը: Այնթապի հայութիւնը պրոյի ժամանակներուն մնաւանդ, իր համեստ բայց յոյժ պատուաբեր բաժինը բերած է մեր փոքր ազգին մեծութիւնը կերտելու գործին մէջ»:

Իսկ իր կարգին, պատմագիրքին հեղինակը՝ Փրոֆ. Գէորգ Ա. Սաբաֆեան գիրքին յառաջաբանին մէջ կ'աւելցնէր. «Բայց երբեք պիտի չլքնը, պիտի չտրամանք ոգեկան Այնթապը, հայկական առաքինութիւններուն ամրոցը, մեր ջերմ եկեղեցասիրութիւնը, խանդաբորք ազգասիրութիւնը, նախանձայարոյց դպրոցասիրութիւնը, գործնականութեան ոգին, իշխանիին յարձակումներուն դէմ ծառանալու եւ քրգանալու խիզախութիւնը, եւ լարախաղաց դիւնագետներու հետ դիւնագիտական մարզին վրայ չափուելու իմաստութիւնը: Այո՛, այս բոլորը, եւ այն բոլոր տարրերը որոնցմով թրծուեր է այնքապցիութեան նկարագիրը, պիտի պտղտցնենք մեր սիրտներուն մէջ ու պիտի կտակենք մեր նոր սերունդին, որպէսզի ոգեկան Այնթապը ապրի յաւիտեան: Կեանքի զիրար խաչածնող ու հարուստը հոսանքներուն ալիքներուն ապահով կերպով վերապրելու համար իսկ անհրաժեշտ է վերծանել, ուսումնասիրելու հետազոտութեան առարկայ դարձնել հայրենի ժառանգութիւնները, ցեղին հոգեկան ստացուածները: Այո, Այնթապի հայութիւնը արժանի է հոյակապ յուշարձանի մը՝ ապագայ հայ սերունդներուն ընծայելու համար ներշնչումի կենդանի աղբիւր մը.

ցայտեցնելու իր ակամակիտ ակերև գզգասիրութեան, անճանազոհութեան, իմաստութեան այն դասերը, զորս մեր հայութեան կեանքին մէջ գտած ենք իրենց տիտամակամ պայքարներուն մէջ»։ Եւ ակնարկելով Այնթապի պատմազրիթին հրատարակութեան նախաձեռնութեան, փորձեալօրը կ'ըսէր։— «Լոս Անճելըսի այնքապցիները, միասնակամութեան հիմանակ ու կատարելաբ օրինակը հանդիսացան»։

Այսօր, աշխարհով մէկ ջրուած այնթապահայութիւնը, որքան ալ իրաւապէս եւ օրինաւորապէս դպրուած է այնթապցի ըլլալէ, սակայն ուր որ ալ գացած է, խորքին մէջ, գործնապէս չէ լքած իր այնթապցիութիւնը, չէ մոռցած իր պապերէն ժառանգած աւանդութիւնները, այսինքն ողբկան Այնթապը, որ կը նշանակէ եկեղեցատիրութիւն, դպրոցատիրութիւն, թուեղ ազգատիրութիւն, ջերմ հայրենասիրութիւն, միասնակամութեան ոգի, գործնականութիւն, նախաձեռնութիւն, բարեգործութիւն, սէր հանդէպ հայ մասուլիս եւ զբաղանութեան նոյնիսկ չէ հրաժարած իր հայրենական խոհանորդէն, Սուրբ Մենդեան եւ Ս. Յարութեան տօներուն առթիւ իր աւանդական ճաշատեսակներէն։

Ապացոյց՝ Այնթապէն սկսած, հայազարութեան մէջ հրատարակուած հազարաւոր գիրքեր, հաստատուած տպարաններ, լոյս տեսած նուրբ յայնճապակիի գործարանը... Հայէպի եւ Պէյրութի մէջ Հիմնուած հայրենակցական եկեղեցին, ազգային մակույթը, գեղարուեստը, նուրբ արհեստները, մարզական կեանքը, կուսակցութիւնները շատ բան կը պարտին այնթապահայուն միաբերին, անձնագոհութեան, նախաձեռնութեան ոգիին։ Յիշեցնենք կարգ մը բարեփոխական կարեւոր իրադրո՞ւմներ։

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՒՔ. Նոր Այնթապ Աւանի դոյառոււմը ժանեակի, վարադոյրի եւ բարակ գուլպաներու իր գործարանով, Գէորդ Մոմճեանի նուրբ յախճապակիէ ֆապրիքի հաստատումը։

ՀԱԼԷՊ. Այնթապու կրթատիրաց վարժարան, որ 72 տարեկան է։ Կրթատիրացի Յարութիւնեան մանկապարտէզը, Ս. Աստուածածին նոր եկեղեցին, ՀԲԸ Միութեան Գէորդ Նազարեան հանդիսասրահ, Վիտլիք ձէպէճեան գրադարան, Տորթ Թուպեր ձեպեճեան Ակնարուժարան, Գէորդ Պաղըճեան—Զարիկեան թանգարան, Հայ Մերանոցի Լեւոն Նազարեան գրադարան—սրահը։

ՊԵՐՏՈՒԹ. Լեւոն Կ. Նազարեան վարժարան, Երուանդ Տեմիրճեան վարժարան, Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահ, Պիքֆայալի Երուանդ Տեմիրճեանի Ս. Աստուածածին մատուո, Անթիլիասի Երուանդ Տեմիրճեան Կեդրոն, Արմէն եւ Միւի Յարութիւնեան Փոնտ հայերէնի ուսուցիչներու ի նպաստ եւ Ս. Էջմիածնի նուիրատու 10 հազար քառալեզու «Հաստով Առստովանիմ», Կարօ եւ Քնարիկ Յարութիւնեան նուիրատու հայկական դպրոցներու Տորթ Օննիկ Համալսարան — ՀԲԸՄի Փոնտ։

ԵԳԻՊՏՈՍ. Լեւոն Նազարեանի Այրիանոց։ Աւետիս Զազըճեան՝ Փոնտ հայերէնի եւ հայոց պատմութեան ուսուցիչներու։

ԱՄՆ. Նիւ Ճըրջի (Սետը Պրուք), ՀԲԸՄի Նազարեան սրահ, ՀԲԸ Միութեան մօտ՝ Փոնտեր Լեւոն եւ Սաթենիկ Նազարեաններու, Մարի Նազարեան—Մարգարեանի, ՀԲԸՄի Նազարեան կեդրոն՝ (Կարպիս, Նուպար, Նապար) Սան Ֆերնանտօ, Քանոկա Փարք (Գալիֆորնիա), Սարգիս եւ Սեդա Տեմիրճեան, Լոս Անճելըս, Կրկրորդական վարժարան Ալիք եւ Մարի Մանուկեան դպրոցին կից, Վարուան Ճիւնիշեան Յիշատակի բարեգործական Հիմնարկ, Ս. Ներսէս Ծնորհալի ճեմարան եւ դպրեմանք Տիրան Արքեպս. Ներսոյեանի։

ՌԻՐՈՒԿՈՒԷՅ. Մոնթէվիտէօ. ՀԲԸ Միութեան Նազարեան նախակրթարան, Յարութիւն Թուրէնեան՝ հայկական ուստիո՞ժամ, 50 տարեկան։

ԱՐժԱՆԹԻՆ. Պուէնոս Այրէս. ՀԲԸ Միութեան Նազարեան սրահ, Միւրէքեանները՝ հայրենիք—սփիւռք մշակութային կապեր եւ երպատագիտական յուշարձան նուիրած արժանիքներն փողովուրդին։

ՊԵՆՃԻՔԱ. Մելաքեան եւ Հայկ Արայանեաններ բարեգործող Պէյրութի Համազգային ճեմարանին եւ Ս. Էջմիածնի բարեգործման ժան Յովհաննէս Ապաճեան ազգային բարեբար։

Պատմազրիթ Այնթապի հայոց Գ. Հատորը, փայլուն ցոլացումն է սոյն Այնթապահայ ոգիին։

Այս առթիւ, իրեցնենք Բերիոյ թեմին երբեմնի կորովի Առաջնորդ՝ Արատազդ Արքեպս. Սիւրմէանի պատմական մէկ խոստովանութիւնը. «Եթէ երկրորդ անգամ աշխարհ զայի, պիտի ուզէի այնթապցի ծնած ըլլալ»։

Արդարեւ, իրաւացի էր Սրբազանը, քանի որ իր պաշտօնավարութեան ընթացքին միշտ շրջապատուած էր այնթապցի կարող եկեղեցականներով (քահանայէն մինչեւ կաթողիկոս, դպրոցի անօրէններ, կրթական մշակներ, կուսակցականներ, փաստարաններ, երեսփոխաններ, մտաւորականներ)։

Փրոֆ. Գէորդ Ա. Սարաֆեան, ակնարկելով Այնթապի հայոց երկհատոր պատմազրիթին, (1953) բնած էր.— «Այնթապի հայութիւնը արժանի է հոյակապ յուշարձանի մը՝ ապագայ հայ սերունդներուն ընծայելու համար մեր-չնչումի կենդանի աղբիւր մը»։

Ահա թէ ինչու համար մեր անվերապահ գնահատանքին ու աջակցութեան արժանի են, ինչպէս անցալին, նոյնպէս այսօր Լոս Անճելըսի Այնթապի հայոց պատմութեան Գ. Հատորի խորագրութիւնը եւ համակիր անդամները, այդ հոյակապ յուշարձանին վրայ աւելցնելու համար յիշարժան բանդակ մը, որպէս «ներչնչումի կենդանի աղբիւր» այնթապահայ ներկայ եւ ապագայ սերունդներուն համար։

Վարձքերնիդ կատար, սիրելի՛ բարեկամներ։

ԵՆ. Սոյն յօդուածը շատոնց գրուած ըլլալով, ցանկիմ մէջ պետք է աւելցնել—

1) Անթիլիասի Ե. եւ Ա. Տեմիրճեան երիտասարդական կեդրոնը։

2) Յարութիւն Միմնեանի բարերարութիւններն ու մեկեմասութիւնները:

3) Պէյրութի ՀՀ դեսպանատան Նուպար Նազարեան համալիրը:

4) Երեւանի Ս. Գրիգոր Լուսատւոյի Տաճարին Ս. Տրդատ, Նազար Նազարեան (Նիւ Գրրզիէն) \$600.000 տոլար:

5) Նիւ Եոքքի Նուպար ճամբարին համար Նազար Նազարեան \$500.000:

6) Արմէն Յարութիւնեանին վերջին մեկեմասութիւնները:

7) Կարօ Յարութիւնեանին նուիրատուութիւնները:

8) Կարպիս Նազարեան Հրատարակչական Ֆոնդ (Պէյրութ), \$10.000:

9) Ալպէր Ալպաճեան, բարերար:

10) Յարութիւն Արսլանեան, բարերար:

ՅԱԻԵԼՈՒԱԾ՝ ԱՅՆԹԱՊԻ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԱՇԽԱՏԱՄԻՐԵՑ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՄՈՆԵԱՆ

Մօտերս, լոյս տեսաւ ինքնատիպ գիրք մը՝ խմբագրութեամբ եւ ներառութեամբ Գոկոս Վաչէ Ղազարեանի, որպէս յաւելուած «Պատմութիւն Այնթապի Հայոց» Գ. հատորին (Լուս Անճելլոս, 1994): Հեղինակը գնահատելով հանդերձ հրատարակութիւնը, որպէս կարեւոր իրականացում, արդարօրէն կ'անդրադառնայ ձոն նկատուած թերիներուն, մոռացումներուն ու բացթողումներուն:

Շնորհակալ գործ մը կատարած է Յարութիւն Միմնեան, քանի որ իր այս նորարարութեամբ, նոր ուղի մը բացած է յուշամատենագրութեան ասպարէզին մէջ: Որեւէ յուշամատեն, ըլլայ Հայրենակցական կամ զպրօցական, ակամայ պիտի ունենայ իր թերացումները եւ առ այս յաւելուած մը պիտի կատարէ յաւելումները, սրբագրէ թերիները, մանաւանդ պիտի պատճառէ անգործութիւն խռովեալ մտոց:

Հայրենակցական յուշամատենի մը պատրաստութիւնը կը պահանջէ հսկայական աշխատանք, տարիներու համբերատար հաւաքում, որ պիտի ըլլայ սուեալ Հայրենակիցներուն համագործակցութեան եւ միասնակապութեան արգասիքը:

Թերթիւով բազմիցս կրկնուած յայտարարութիւնները, զրկուած հարիւրաւոր հարցաթերթիկները հրաւէր մըն էին բարի կամեցողութեան տէր Հայրենակցական գրիչներուն, իրենց մասնակցութեամբ դիւրացնելու խմբագրութեան աշխատանքը, այսպէս խմբագրապետը ոչ համայնագէտ եւ ոչ ալ սուր աչքեր ունի համատեղելու աշխարհով մէկ ցրուած Հայրենակիցները:

Յարութիւն Միմնեան, առաջին առթիւ, ի զուր կը ջանայ արդարապէս Հարցաթերթիկներուն ու կոչերուն չպատասխանողները: Ասոնք երեք դասակարգի կը բաժնուին: Առաջինը՝ անփոյթներ են եւ անտարբերներ, երկրորդը՝ հատուածամոլները (կոչը ինչո՞ւ «Ազգակիցին մէջ այ չերեցաւ» եւ

երրորդը՝ ինքնագոհ մեծամիտներ, որոնք իրենք զիրենք արժանի չգտան հոն երևնալու: Յաւելուածի հեղինակին «քիթին տակ» էր Այնթապի պատմագիրքին խմբագրութիւնը, անհրաժեշտ էր առաջին աւթիւ գործակցել անոր հետ, անշուշտ էթէ փափաքէին, ներկայացնելով իր արդար դիտողութիւնները, նշել իր կողմէն նկատուած մուգումներ ու բացթողումները, նոյնիսկ զրաւոր տար Զիրումէն եւ միւս հայ բոլորու վարքը, Միմոնեան եղբայրներու կենսագրութիւնը, իր ազգական ժիրագոներու եւ Շիթիլեաններու կենսքը, իր ճանչցած նշանաւոր անձնաւորութիւններու ցանկը, մեծ ձեռագրագէտ Նորայր Արք: Պողարեանին մեծագործութիւնները, Տէր Ներսէս Ա. Քհչյ. Թաւուզճեանին նշագրութիւնը, տեղեկացնելով Լօզանի համալսարանի իր մանչին մասին եւ այլն, կը խորհինք, որ խմբագրութիւնը շնորհակալ պիտի ըլլար իր թանկագին գործակցութենէն:

Որպէս օրինակ՝ այս աւթիւ կը փափաքինք Յարութիւն Միմոնեանին ուշադրութեան յանձնել հետեւեալ անտեսումի պարագան. Հալէպի մէջ, 1993ին հրատարակուեցաւ Այնթապու Կրթասիրաց վարժարանին յուշամատենաւը: Մատուցի այնթապարեանկ Քաղաքցան Օվէին եւ Այնթապցի Մեննուշին երեք գաւակները, որպէս Այնթապ ծնած եւ Կրթասիրաց վարժարանէն շրջանաւարտներ, արժանի էին յիշատակուելու յուշամատենանին մէջ: Անդրանիկը՝ Միմոն, հանրածանօթ դրագէտ եւ խմբագրագետ—հրատարակիչ «Սփիւռք»ի, միջնեկը՝ Գրիգոր, ժամացոյցի մեծ վաճառական, կրտսերը՝ Յարութիւն, «Ժամացոյցի թագաւոր», յայտնի ազգային բարերար եւ գրասէր մեկնեալ, հրատարակած է Գուրգէն Մահարիին տիկնոջ՝ Անտոնիայի «Իմ Ողիականը» գիրքը, Լեւոն Զորմիսեանին երկու հատորները, Եր. Օտեանի ժողովածուն, Գեղամ Սեւանի «Սփիւռքահայ գրականութիւն» Բ. հատորը եւ այլն: Կրթասիրաց վարժարանին նուիրած է 5,000 տոլար: Իսկ Հայաստանի Ոսկեթաւ գիւղի մէջ (Թալինի շրջան) դպրոց մը կառուցանելու համար տրամադրած է 200,000 տոլար, եւ այլ բարերարութիւններ, իսկ վերջին օտեանագէտ՝ Սարիբիկ Մանուկեանին մենագրութիւնը: Այս բոլորով մէկուեղ՝ ոչ մէկ յիշատակութիւն:

Իր տպագրութենէն առաջ, «Յուշամատենաւը» աչքէ անցուցած ըլլալով, մենք զրաւոր ներկայացուցած էինք մեր դիտողութիւնները խմբագրական կազմին, յատկապէս թիւրդրելով կենսագրական պատուոյ տեղ մը տալ կրթասիրացեան մեծ գրագէտ եւ վարժարանին փառքը կազմող Միմոն Միմոնեանին, սակայն անօգուտ: Գալով իրմէ հրատարակուած հրաշալի պատմուածք «Կրթասիրաց Հայակերտման Հնոց»ի, խմբագիր Թորոս Թորանեան կրնայ վկայել թէ ինչ դժուարութիւններէ անցաւ զայն հրատարակելու համար: Նախ՝ մերժեցին, ապա ստիպումի տակ առաջարկեցին կրճատել եւ սրբագրել պատմուածքը:

Նոյնպէս «մոռացած» էին յիշատակել Միմոնեանին դարձկեր էլի՝ Նագրեանը, երկարամեայ լրագրող, խմբագիր հայերէն եւ ֆրանսերէն թերթերու, մինչդեռ խմբագիրը յանձնած էր մեր կենսագրութիւնը:

Սակայն չբեղանքը պատրաստ է. «յուշամատենաւը պատրաստողները մասնագէտներ չեն», թէեւ կարող են սրբագրել Միմոնեանին գեղեցիկ գրութիւնը եւ գեղի իրենց դիւր չեղող մասերը:

«Պատմութիւն Այնթապի Հայոց» Գ. հատորին խմբագրութիւնը կը յայտարարէ, թէ «յաւակնութիւն չունի կատարեալ գործ մը կատարած ըլլալու, բնականաբար կան թերացումներ, նաեւ՝ ակամայ մոռացումներ»:

Արդարեւ, իրաւունք ունի խմբագրութիւնը, քանի որ իսկապէս կան կարելու մոռացումներ եւ բացթողումներ: Կարելի էր չաճապարհ, համբերատար ըլլալ, հետամուտ ըլլալ հայրենակիցներուն նոր ու փառաւոր բարեփոխներուն, կրթական օճախներու, երիտասարդական կեդրոններու:

Անհրաժեշտ էր խտացնել կարգ մը նիւթեր (օրինակի համար՝ Կէտիլեան գեղըպատանի պատմութիւնը զրաւած է գրքին 15 սուղ էջերը, հարկ է ճշդել կարգ մը հեղինակներու «վառ հայրենասիրութիւնը», խիստ մաղէ անցընել եւ կրճատել կենսագրականները):

Ուսուցչապետ Գրիգոր Պողարեանը, իր «Այնթապականք» Ա. հատորով (Պէյրութ, 1974), տուած էր կարեւոր բաժին մը՝ «Այնթապցիներուն մուտքը սոցալգրութեան, հայ մամուլին, հայ գրականութեան եւ հայ մշակոյթին», մինչեւ 1974: Անպայման պէտք էր շարունակել այս նախաձեռնութիւնը մինչիւ պատմագիրքին տպագրութեան թուականը՝ 1994: Անհրաժեշտ էր աւելի օգտագործել հայրենակցական պարբերաթիւթիւնը՝ «Հայ Այնթապ»ի եւ «Նոր Այնթապ»ի (1960—1992) բովանդակութիւնը, որ զանձ մը կը պարունակէ հայրենակցական թանկագին լուրերու: Անելի կարելի է պոկել մեծ պատմագիր Գուրգէն Եազըճեանին անունը: Աւելի կարեւորել Նոր Այնթապ Աւանի իրագործումը: Գէորգ Մոմճեանի նուրը յախճապակիէ գործարանը եւ Այնթապու Կրթասիրաց վարժարաններու՝ «հայակերտման հնոց» վաստակը (1924—1994), շեշտելով ուսուցչապետ Գրիգոր Պողարեանին կատարած մեծ դերը եւ նոր վարժարան կառուցանող կամուրները:

Ըրիւ անտեսուած է այնթապահայ սերունդին ըրած կարեւոր ներգրումը հայրենակցական այլ դպրոցներու հիմնադրութեան՝ հայ կուսակցութեանց որպէս ղեկավարներ, մարզական շարժումներուն (Արարատ, Մարտիկ, ՀՄԸԸ, ՀՄՄ), երիտասարդական կազմակերպութիւններուն (ՀԵԸ, ՍԵՄ, ՀՕԿ, Ներգաղթի Կոմիտէ, Ասպետներ), անոց զրազարաններուն: Ձմռանայ այնթապահայ մեր երեսփոխանները՝ Շահէ Պարտուեան, Յակոբ Տնիկճեան, հայրենակից անուանի բժիշկներուն՝ Յարութիւն Միմոնեան, Աւետիս Խաչատուրեան, ղեղազորներուն եւ ատամնարոյթներուն նպաստը իրենց որդեգրած երկիրներուն ու մայր հայրենիքին: Տակաւին վաստակաւոր փրօֆեսօրներ, տնօրէններ, ճարտարագէտներ, նկարիչներ, քանդակագործներ, երաժիշտներ, միջազգային համրաւի տէր գիտնականներ, գիտնական Լուիթեր Միմճեան, կենսաֆիզիկոս Հրայր Յոյնեանեան, նաեւ մեծանուն կղերականներ: Անհրաժեշտ էր աչքէ անցընել "Who's Who"ներու

չարքը, ըլլայ միջազգային, ըլլայ հայերուն նուիրուած «Ո՞վ է նա» (Տոքթ. Ռուպեր Չեպեճեան), "Who's Who Among Armenians in North America", քաղելու մեր անուանի հայրենակիցներուն անունները, նաեւ պէտք է յիշել Անթիլիասի մեր արժանաւոր հայրենակից հայրերը՝ Վարդան Արք. Տեմիրճեան, Տիրալը Մ. Վրդ. Փանոսեան (աթմ՝ եպիսկոպոս), Նաւասարդ Վրդ. Մարդոյեան, Տ. Վահան ՔՆԿ. Պալէզորգեան Արժանի պատուոյ տեղ յատկացնել մեծագոյն հայ Գալիֆորնիոյ նահանգապետ (ուսթը տարի) Զորն Տէօբլէճեանին եւ անոր պատուական, մեծ հայրենասէր զօր՝ Գորգէնին:

Հայրենակից երաժիշտներ՝ Վահրամ, Ստեփան եւ Գէորգ Խմմիսեաններ, Յակոբ Մանուկեան, Ներսէս Նալպանտեան, Ներսէս Մանուկեան, Վաչէ Պարսուճեան, յայտնի դաշնակահարուհի Մարիլին Քենտերճի, դաշնակահար խմբավար Տիւ. Ազնիւ Մանուկեան, քեմանչահար Ռուբէն Գարախան, դպրապետներ՝ Գէորգ Գանտահարեան, Յակոբ Տէր-Պրոքնեան, մեծ բացականեր՝ Լեւոն Վարդան, Զարէ Միլթոնեան, Փրոֆ. Գէորգ Նըրրոբեան, Սարգիս Եսփոճեան, Նուպար Յակոբեան:

Այնթապցի բարերարներու մեծագործութիւնները՝ Տեմիրճեան եղբայրներ, Նազարեան եղբայրներ, Յարութիւնեան եղբայրներ, Գէորգ Պազըճեան, Յարութիւն Միմոնեան, Ալպէր Պոյաճեան:

Հայրենակիցներուն կառուցած կրթական օճախները, հանդիսասրահները՝ Հայէպի Գէորգ Նազարեան սրահ, Պէլլութի Տեմիրճեան կեդրոն, Տեմիրճեան եւ Լեւոն Միլթոնեան սրահ, Նիւ Ճըրզիի Նազարեան սրահ, Ալեք Մանուկեան դպրոցին կից Տեմիրճեան վարժարան, Նազարեան համալիր, Պոյաճեան սրահ, Պուէնոս Ալիէսի Նազար եւ Արտեմիս Նազարեան սրահ, Մոնթէվիտոնի Նազարեան դպրոց եւ սրահ:

Վերջինը՝ Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ տաճարին Տրդատի Մատուռն էր 600,000 տոլար, Նազար եւ Արտեմիս Նազարեաններու կողմէ:

Դիւանագիտութեան ասպարէզ՝ Երեւան, Շահէն Լեւոն Գարամանուկեան, Հէ նախագահին աջ քաղկնիքէն:

Այնթապահայերը եղած են մեծ գործարարներ, աշպէս՝ ճարտարարուեստական Յովհաննէս Գասարճեան (Պէլլութ), Արմէն Յարութիւնեան (քոսմթիթ, Պէլլութ), Շահնուր եւ Արթիւր Փրոքճեան (գորգ), Գէորգ Պազըճեան (գորգ, Փարիզ), Նազար Նազարեան (հիւստուածեղէն, Նիւ Ճըրզի), Յարութիւն Միմոնեան (Գալիֆորնիա, գործարանատէր), Ժազդոյ Նազարեան (Պրազիլ, ուլուք), Միւրէքեան (Պուէնոս Ալիէս, նայլոն), Ալպէր Պոյաճեան (ԱՄՆ, արարական հացի «Ֆագաւոր»), Արամ Միւլաճեան (Պէլլութ, ալլումինիում), Կարապետ Մարգարեան (Պէլլութ, ալլումինիում), Գէորգ Անտոնեան եւ զաւակներ (ԱՄՆ, գործարանատէր):

Մեր պրպտուներուն ընթացքին, գտած ենք 200է աւելի մոռցուած եւ յիշուելու արժանի հայրենակիցներ: Արդարեւ, իր աւանդութեանց համաձայն, այնթապահայը սիրած է եկեղեցին, դպրոցը, ուսումը, մշակութիւնը, ազգային գործունէութիւնը:

Վերոյիշեալ բոլոր տուեանները ցոյց կու տան, թէ արդարացի է Յարութիւն Միմոնեանի պահանջը այնթապահայ հայոց պատմութեան հրդ հատորի մը հրատարակութեան, որուն բովանդակութեան համար կան արժանաւոր բաւարար նիւթեր, ի փառս այնթապահայ նոր սպազայ սերունդներուն, սերտօրէն կապուելու իրենց արմատներուն:

Երգակացներով՝ նկատի առնելով Յարութիւն Միմոնեանին տեղին ելուտները, Վարդան Արք. Տեմիրճեանի դիտողութիւնները, Թորոս Թորանեանին, էլի Նազարեանին եւ այլոց ցոյց տուած բացթողումները, կարելի է պատրաստել անթերի եւ կատարելի հրդ հատոր մը՝ Այնթապահայ Պատմագիրք մը, որ պէտք է շունենայ նշգրակներ, զերծ ըլլայ խնկարկումներէ, ունենայ նոր յաւելումներ, որպէսզի արդարացնէ իր գոյութիւնը մեր զրապարաններուն մէջ, ինչպէս կը ըչէ Վարդան Արք.: Եւ քանի որ նման նախաձեռնութիւն մը լաւ ընդունելութեան պիտի արժանանայ զրասէր, հայրենասէր եւ մեկնաս Յարութիւն Միմոնեանին մօտ, կարելի է անթիջապէս գործի ձեռնարկել յուշամատենին պատրաստութեան, առանց պէտք ունենալու: Այնթապի հայրենակցական միութիւններու երկարապատու օգնութեան եւ խմբագրապետութեան տակ Գեորգ Վարդան Արք. Տեմիրճեանի, օգնական խմբագիրներ ունենալով Տիրալը Մ. Վրդ. Փանոսեանը, Նաւասարդ Վրդ. Մարդոյեանը, պատմագիր Լեւոն Վարդանը, խորհրդակալներ Փրոֆ. Գէորգ Նըրրոբեանը եւ Փրոֆ. Գէորգ Պարտաքճեանը, զանձապահութեամբ Յարութիւն Միմոնեանի, պայմանով որ տպագրութիւնը կատարուի Լիրանի մէջ, ունենալու համար աւելի մատչելի ժողովրդական գին մը:

Սրտագին յաջողութիւններ:
Ով որ քաջ է, ինչ կը սպասէ:
«Յաւելուած»ին մէկ արժանիքներէն է հրապարակումը զօրավար Արամ Պարամունուկեանին նամականիին, որ թանկագին վկայութիւն մը կը կազմէ մեծ հայրենասէրին պայծառ ու վեճ հողիին:
Իսկ Միմոն Միմոնեանին գրիչէն փրցուած «Այնթապական Յուշի Մուկնները», ընթերցողին մօտ պիտի առաջանէ մորմոք յաւէտ կորուսեալ հայ Այնթապին եւ արդար հիացում՝ մեծ այնթապցիին տաղանդին:

«Արարոց», 14 Հոկտ. 1997

ԴԷՄՔԵՐ

ՄՈՒՑՈՒԱԾ ՄԵՐ ՊԱՏՄԱԲԱՆ ՄԵ՛
ՓՐՈՖ. ԳԱԲՐԻԷԼ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
1885-1935

*Մտաւորականներ կան՝ որոնք լուսաւոր հետք մը կը թողուն իրենց
կտին, շնորհիւ իրենց ձգած ստեղծագործութիւններուն, իսկ ուրիշներ ալ
կան՝ որոնք ի չգոյ՛ իրենց տպագիր խօսքին, իրենց մահէն ետք կը մտնեն
մոռացութեան գիրկը:*

Ակամայ այս վերջին դասակարգին կը պատկանէր Հայեպահայ հասարակութեան քաջածանօթ մեծ ազգասէր եւ հայրենասէր Փրոֆ. Գաբրիէլ Միքայէլեան, որ դժբախտաբար իր անժամանակ մահով (յիսուն տարեկան կ'երբ մեռաւ, յարարերարար կարճ բայց խոստմնալից տարիք մը զիտնականի մը համար) չկրցաւ իր պատմադրական խիզախ որոնումներուն հայաստան արդասիքը փոխանցել ապագայ սերունդներուն: Բազմակողմանիօրէն պատրաստուած էր այդ ազգօգուտ գործին համար, լաւապէս զինուած բարձր մտապաշարով՝ բանասէր, պատմաբան, հնարան, բեւեռագէտ, աստուածաբան, երաժշտագէտ, արարագէտ, ասորագէտ, Հիթիթագէտ, եւ սեմական բարբառներու մասնագէտ, լեզուագէտ (գիտէր նաեւ ողջ կամ մեռած բազմաթիւ ուրիշ լեզուներ), եւ այլն:

Անկոխ գետիններու սիրահար էր Փրոֆ. Միքայէլեան, կը հաւատարմիայն փաստացի անփոտելի տուեալներու եւ այս հիման վրայ ալ կ'ուզէր գրել հայոց պատմութիւն մը, որ կոչուած էր յեղաշրջելու շատ մը վարկածներ, երեսան հանելով հնադարեան հայկական քաղաքակրթութեան իսկական գիմագիծը եւ համամարզկային վաստակը: Արդէն ձեռնարկուած էր գրելու, ֆրանսերէն լեզուով հայոց պատմութիւն մը համաձայն բեւեռագրական նութայտ վերձանումներու եւ հնագիտական գիւտերու, որոնցմով այնքան հարուստ է Սուրիական հայրենիքը որպէս հնութեան բաց եւ գոց թանգարան:

Այս նպատակին իրագործման համար, իր նախագահութեան տակ կազմած էր պատմաբանասիրական յանձնախումբ մը, խոստմնալից երիտա-

սարդներէ, որոնցմէ յիշենք Երուանդ Պապայեան, Ստեփան Ինճէեան, Գեղամ Շահինեան, էլի Նազարեան, Յակոբ Ալեքսանեան, Ալիշան Պալարեան, Մեկանթոն Արսլանեան, Թորոս Լոյխանեան, Կարապետ Սաղունճեան, Զործ Նուրէնեան, Սերոբ Սերոբեան, Վահան Իսպիրեան, Սամուէլ Քիւրեճեան, Կարապետ Քիւրեճեան, Պարզեւ Մրսիրեան, Տիրան Վարդանեան Ասոնք բարոյական, զբական եւ հետազոտական ամակցութիւն պիտի բերէին իրեն։ Սակայն իր փառիսյաժեմ երազին իրականացումը կը կարողէր Մայր Հայր Սնկիթի բանասիրական ջեմը մթնոլորտին, հայրենի մեծավաստակ պատմադէտներու ամակցութեան, Մատենադարանին եւ Պատմութեան Թանգարանին։ Նման հակապական ծրագիր մը պէտք ունէր նիւթական եւ բարոյական ամուր նեցուկի։ ահա թէ ինչու Փրոֆ. Միքայէլեան մնաց քանքարաթաքոյց, մանաւանդ իր կանխահաս մահով եւ յետ մահու ձեռագիրներուն անյայտացումով։

Իր արժէքաւոր գրութիւնները կը մնան մեծ մասամբ Հայէպի Հնագիտական Ընկերակցութեան ամսաթերթ «Ռոլլի Արքեպիսկոպի Սիրիէն» մէջ, որուն խմբագիրներէն էր։ Վարչական անդամներէն էր նաեւ Հայէպի Թանգարանին, որ կը հովանաւորէր այս հրատարակութիւնը։

Իր ձեռագիրներէն մաս մը, ըստ «Սուրիա» թերթին, եւ արժէքաւոր գիրքերը փոխադրուեցան Երեւան, ուր արժանի ուշադրութիւն չեն գրաւած ցարդ։ Անոնց ուսումնասիրութիւնը հաւանաբար կարեւոր նորութիւններ բերէր Հայ պատմագիտութեան համար։

Փրոֆ. Միքայէլեան ծնած էր Այնթապ 1885ին. գաւակն էր քիլիսցի Գարբիկին (Գարբիէլ) որ հայր էր բազմանդամ բնտանիքի մը՝ Հայկույ, Եւուսի, Հելլէն, Գարբիէլ եւ Զործ (յայտնի յանձնակատար)։

Իր կրթութիւնը ստացած էր Փրանսիականներու Այնթապի Թերրաս-Սանթա վարժարանին մէջ, ապա յղիւեկով ձենովայի Աստուածաբանական ձեռնարանը, դարձած էր վարդապետ։ Կատարելագործուելով Հռոմի կրօնական Բրորականտի վարժարանին մէջ եւ լաւապէս զինուած աստուածաբանական, լեզուաբանական եւ գիտական պաշարով, աս յղիւեակ է Մերձաւոր Արեւելք, որպէս Լատին կրօնաւոր գործելու համար Տիրոջ Դաշտին մէջ։ Ամբողջովին կտրուած էր ազգային գիտակցութենէն, իր ժողովուրդին պատմութենէն, մինչեւ Համաշխարհային Ա. պատերազմին սկզբնաւորութիւնը։ Սակայն իր սքեմին ու պաշտօնին ընձեռած կարելիութիւններուն շնորհիւ, ան մօտէն ակնաստեւ ու իրագեկ կը դառնայ հայկական ցեղասպանութեան ներքին ծալքերուն եւ արհեստանքով տեսնելով այսպէս կոչուած «քաղաքակիրթ եւ քրիստոնէայ» պետութիւններու անտարբեր եւ չահախնդրական կեցուածքը հանդէպ աշխարհի առաջին քրիստոնէայ ազգին անպաշտպան ու տաղանդաւոր գաւակներուն, հոգի-փոխութիւն մը տեղի կ'ունենայ իր մէջ, հայկականութեան քննաճառը բլիթները կ'արթնան, ու հակառակ Սրբազան Պապին բանադրանքի ազդարարութեան, կը նուիրուի ազգասիրական ու քաղաքական գործունէութեան ու

վերջապէս օր մը հրաժարելով իր Ուխտէն ու պատկանած Եկեղեցիէն, կը վերադառնայ Հայաստանեայց Մայր Եկեղեցիին գրկէ։

Պօղոս Նուպար Փաշան, մեծապէս զնահատելով զինք, կը քաջալերէ որպէսզի շարունակէ իր ազգանուէր ընթերցը, զորս չի խնայեր քանի մը տարի եւս, ի շահ Հայկական նուիրական Դատին։ Ապա կ'անցնի Լոնտոն, ուր տեղացիի մը հետ գործակցաբար կը հաստատէ թարգմանչական գրասենեակ մը։ 1929ին կը վերադառնայ Հայէպ, իր ընտանեկան պարագաներուն մօտ, որոնք 1920ին ձգած էին Այնթապը։

Անձնական դասերու կողքին, Հայէպի Ամբիկեան Գոյնճին մէջ, պատմութեան դասախոս էր, Փրանսերէն լեզուով պաշտօն մը, զոր ան շարունակեց մինչեւ իր մահուան տարին։

Փրոֆ. Միքայէլեան Մայր Հայրենիքի չեզոք վերածնունդին ու Հայ պետականութեան կազմաւորութեան մէջ կը գտնէր Հայ ժողովուրդին փիլիսոփայական պաշտօնութիւնը եւ անոր դարաւոր իդէոլոգիան իրականացման կրօնը։

Ահա՛, թէ ինչո՞ւ ան առաջին օրէն նուիրուեցաւ հայրենասիրական գործունէութեան՝ դառնալով սիրուած նախագահը Հայէպի ՀՅԿին։

Իր կարապի երզը այն զոյգ մը դասախօսութիւնները եղան, զորս ան ստուաւ, մին՝ Հայ Փռնչութեան Պատմութեան շուրջ, իսկ միւսը՝ Արեւելեան եւ Հայկական երաժշտութեան մասին, մահէն քանի մը ամիս առաջ։

Հնարած է քիւրտերէնի եւ չերեզերէնի այլուրեքներ եւ կազմած՝ քերականութիւնը։ Կ'աշխատէր գանոնք ընդհանրացնել, դասաւանդելով մասնաւորներու։

Որպէս հնարան մեծ հեղինակութիւն կը վայելէր միջազգային շրջանակներու մօտ, որոնք վիճելի խնդիրներու շուրջ կ'առնէին զիսնակաւի իր կարծիքը։

Կանխահաս մահը, որ պատահեցաւ Կիրակի կէս գիշերին, 26 Մայիս 1936ին, սիրտի կաթուածով, կտրելով անոր կեանքին թելը, կիսաւարտ ձգեց անոր փրանսերէն հոյակապ Հայոց Պատմութիւնը, որ անպայման նոր խօսք պիտի լսէր հայ ժողովուրդի ծննդեան վկայագրին մասին։

* * *

Փրոֆ. Գ. Միքայէլեանի մահուան առթիւ, Հայէպի Հնագիտական Ընկերակցութեան անդամ եւ տեղույս յայտնի իրաւաբաններէն Գարբիէլ Լաւլի, դրած է գեղեցիկ յօդուած մը «Ռոլլի Արքեպիսկոպի Սիրիէն» 1936ի (Թուրուար, Փետրուար, Մարտ) միացեալ թիւին մէջ, էջ 10-15, ուր հանդամանորէն կ'անդրադառնայ իր մեծ բարեկամին կեանքին ու գործունէութեան, հետեւեալ տողերով. «Գարբիէլ Միքայէլեան ծնած է 1885ին Այնթապ, որ Կիլիկիոյ մտաւորական կեդրոնն էր եւ Եղեւսոյ Քրիստոնէայ իշխանապետութեան զլխաւոր նուիրապետութիւններէն մէկը։ Կը սերէր բարեկեցիկ եւ Կաթողիկէ ընտանիքէ մը։ Գարբիէլ նախ յաճախեց ծխական Գոյնճը,

ապա երիտասարդ տարիքին մեկնեցաւ Հոռոմ՝ կատարեցազործելու համար իր ուսումը: Իր ուսանողական կեանքին ընթացքին, ան ի յայտ բերած է ըմբռնողութեան զարմանալի կարողութիւն մը: Իր ուսուցիչները կը հիւանային իր մէջ տեսնելով ոչ միայն զօրաւոր իմացականութիւն մը, որ յանախ բնութեան երջանիկ մէջ կարգեւն է, այլեւ ուսման համբերտար և շարքաւ աշխատանքը, որ կամքի զօրութեան ապացոյցն է: Մեծնալով գիտական միջավայրի մը մէջ, շրջապատուած անձուկէր ուսուցիչներով, երիտասարդ Միքայէլեան ինքզինք ամբողջութեամբ եւ վերջնականապէս նուիրեց ճշմարտութեան փնտռութեան, պատմութեան ուսումնասիրութեան, մտային գիտելիքներու, դառնալով Պսակաւոր՝ գրականութեան: Ան նախ կոչուեցաւ փրոֆեսէօրի պաշտօնին՝ Հոռոմի եւ ապա Իտալիոյ գանազան քաղաքներուն մէջ: Բնագործէն հակամէտ ըլլալով Արեւելքի գիտութեան, ան մասնագիտացաւ Սուրբ Գրոց ուսումնասիրութեան եւ սեմական լեզուներու մէջ: Անոր համարքը տակաւ աւելի զօրաւոր եւ հիմնաւոր կը դառնայ, այնպէս որ Եւրոպայի ամէնէն աչքատու կաթողիկէ համալսարանները կը փափաքէին զայն ունենալ իրենց մէջ: Ան նշանակուեցաւ Ֆրիպուրկի Ազատ Համալսարանի Սեմական լեզուներու ամբիոնին ղսաստօս: Ունեցաւ շատ մեծ յաջողութիւն ու այնուհետեւ ան ճանչցուեցաւ համաշխարհային գիտական շրջանակներու կողմէ:

«1914—1918ի Մեծ Պատերազմին ժամանակ, զայրացած այն անմարդկային վերաբերումներէն, որուն նշաւակ դարձած էին իր հարեանակիցները, ան լքեց իր ուսումնական կեանքը, օգնութեան հասնելու համար դժբախտ հայերուն, որոնք չարչարուած էին, վտարուած իրենց երկիրէն եւ անգթօրէն նահատակուած:»

«Պորապէս դթասիրտ, Փրոֆ. Միքայէլեան շրջեցաւ եւրոպական մեծ քաղաքները, կատարելով ճանդանակութիւններ, կազմակերպելով օգնութեան կոմիտէներ, իր ամբողջ ոյժով սփոփելով մարդկային տառապանքը: «1929ին ան եկաւ հաստատուելի Հայէպ, ուր իր եղբայրները կը բնակէին 1920էն ի վեր: Գրեթէ վերջացած ըլլալով փրկութեան եւ վերականգնումի իր մեծ առաքելութիւնը, ան ինքզինք նուիրեց ուսումնասիրութեան եւ հմտութեան:»

«Հայէպ իր բնակութեան ընթացքին, ան ապրեցաւ միայնակ կամ լաւ է եւս ըսել, մանաւանդ՝ իր գիրքերուն հետ: Մեծաւոր եւ անպատճառ պզտիկ յարկարաժմիրի մը մէջ:»

«Ան կը մտածէր միայն ձեռք անցրել չին ձեռագիրներ, անտիպ գործեր, հնագիտական կամ պատմագիտական արժէք ունեցող փաստաթուղթեր: Իր փառասիրութիւնն էր երեւան հանել, վերձանել հետաքրքրական գաղափարանշաններ, հին եւ անթարգմանելի համարուած մեհենադրական արձանագրութիւններ:»

«Ան կը պահէր եւրոպացի մասնագէտներու հետ մշտական գիտական թղթակցութիւն: Գալով մեծ գործերու, շիտակը շատ քիչ րան հրատարակեց: «Գրեցէր միմիայն երբ նորութիւններ ունիք հաղորդելիք.— կը յանձնարար-

րէր Փրոֆ. Միքայէլեան իր նորագործներուն,— գրել կարենալու համար, քեւ տարբեր ձեւի մը տակ, ինչ որ ըստու է արդէն, ոչ միայն դժբախտ սովորութիւն մըն է, այլեւս ապուշ յաւակնութիւն մը: Պէտք է աշխատանքին սոյլ գիտարարութիւնն է ան թէ քաղաքացիութիւն»: Փրոֆ. Միքայէլեան գործնականապէս շատ քիչ գրեց: Իր հազուադէպ յօդուածները, լոյս տեսած մեր ամսաթերթին մէջ կամ այլուր, ճշմարիտ հաղորդումներ են, որոնք արժանի են լուսարանելու եւ ուսուցանելու Եւրոպայի ամէնէն հմուտ մասնագէտները: Անոնք թանկագին գիտքեր են, որոնց մասնակից կը դարձնէ գիտական աշխարհը:»

«Յաջորդական յօդուածներու շարք մը հրատարակուած «Ռեվիյ Արքիտիք Միքիէն»ի 1931ի տարուան ընթացքին, կը կազմէ փոքր դասագիրք մը հիթիթական լեզուներու մասին: Ինչպիսի հաստատուն եւ տրամարանական մեթոտներ, ինչպիսի հմտութիւն, ինչպիսի պայծառութիւն կը բերէ ընթացանութեան եւ մեկնարանութեան մէջ հատուկոտոր եւ գրեթէ ամբողջովին ջնջուած այն հիթիթական հինգ քարերուն: Հետեւողութեամբ ան կը հասնի ամէնէն արդիւնաւէտ արդիւնքներու: Ան երբ կ'արտայայտուէր մեհենագիր նշաններու բազմաձայնութեան մասին, անոր վարկածը անմիջապէս կը հաստատուէր մեծ գիտնական Ա. Հ. Սայի կողմէ, որ կը գրէր իրեն.— «Դուք իրապէս իրաւունք ունիք խորհելով որ այդ հիթիթական մեհենագիրները բազմաձայն են»:»

«Փրոֆ. Միքայէլեան եզրակացուցած էր արիականին եւ սեմականին ներթափանցման մասին, Քրիստոսէ առաջ 13րդ դարուն: Այս արդիւնքին հասան շատ աւելի ուշ, ամէնէն հմուտ ասորագէտները:»

«Շատ խղճամիտ, փափաքելով ճանչնալ հնագրեան ժողովուրդները, իրենց իսկական վաւերաթուղթերով, Փրոֆ. Միքայէլեան ուսումնասիրեց, շատ մասնալատուկ ձեւով մը, չին լեզուներու տարբեր գիրքեր: Արտաբերելու իր գանազան մեթոտներով, մեծապէս շահագրգռեց Փրոֆ. Միքայէլեանը, որ նուիրեց հոյակապ գործ մը, հազար լրացած, արարերէն զիրին եւ անոր այլեւայլ ձեւերուն: Ջերքեգերէնի համար որ այնքան ազգատ է տեսական գիրքերով, ան խոչոր հատորով մը ամփոփեց քերականութեան եւ ուղղագրութեան կանոնները:»

«Փրոֆ. Միքայէլեան հրատարակելու վրայ էր երկու հատորներով Հայաստանի պատմութիւնը իր ծագումէն մինչեւ մեր ժամանակները: Ասիկա պատմական գործ մըն է, լեցուն հմտութեամբ, վաւերականութեամբ եւ ճշգրտութիւններով: Գիրք մը՝ ապրուած քան թէ գրուած. քանի որ Փրոֆ. Միքայէլեան չափազանց սիրած է Արեւելքը պատմելու համար ճշգրտութեամբ անոր յաղթանակները, իրագործութիւնները, անկումները եւ փաւրքը:»

«Անոր բոլոր գործերը լոյս տեսած կամ հրատարակելի, հետեւողական գիտագիտութիւններուն են Արեւելքի, որ եղաւ օրբանը հնագրեան բոլոր քաղաքակրթութիւններուն, մարգարէութեան եւ խորհրդականութեան երկիրը:»

Հուսկ ապա, Մեթր Գ. Ղազէլ կ'եզրակացնէ իր յօդուածը հետեւեալ բաղձանքով. «Մաղթելի է որ կազմուի կոմիտէ մը, հրատարակելու համար անհետացած Փրոֆեսօրին անտիպ գործերը: Անիկա յետ մահու եւ հրապարակային յարգանք մը պիտի ըլլար այս բարձր գիտնականին, որ իր կեանքին ընթացքին ճանչցուեցաւ եւ գնահատուեցաւ միմիայն սահմանափակ շրջանակի մը հիացողներուն կողմէ, ըլլայ Սուրբոյ, ըլլայ Եւրոպայի գիտնական շրջանակներու մէջ: Ասիկա միաժամանակ պիտի ներկայացնէ նշանակելի ծառայութիւն մը գիտութեան ընդհանրապէս, եւ Արեւելքին՝ մասնաւորապէս»:

Հայազէտներու համար բացառիկ շահեկանութիւն կը ներկայացնէ Փրոֆ. Միքայէլեանի համեմատական սպառելի աշխատութիւնը հիթիթական լեզուներու մասին, զոր ան հրատարակեց 1931ին, «Ռըվիւ Արքեոլոժիք Միքիէն» ամսագրով յաջողական համարներուն մէջ: Ան հոն երեւան կը հանէ հանգիտութիւններ այդ լեզուներուն եւ հայերէն գրարարի միջեւ, ցոյց տալով համեմատման բառեր եւ հոյուումի նոյնանման ձեւեր: Այս առթիւ ան կը գրէ. «Հայկական բանասիրութիւնը կը տեսնէ իր առջն բացուիլը նոր հորիզոններու հիթիթական լեզուներու փաստաբուրժուարում լոյսին տակ»:

Այս առթիւ յիշատակենք մեծ երաժշտազէտ Ռուպէր Պեռնարի «Երաժշտութեան Պատմութիւնը» համայնագիտական աշխատութիւնը, որուն Գ. հատորին մէջ միջազգային հեղինակութեան համարաւ ունեցող երաժշտազէտը կը խօսի Հայկական ազդեցութեան մասին հիթիթական շրջանին նոյնպէս Հայկական մշակութիւնի ներթափանցման մասին զբայի ժողովուրդներուն վրայ կը գրէ Վիգէն Ռեչուսեան իր «Նիթիթիթիթի, դուստր Տուշրատայի» հոյակապ ուսումնասիրութեան մէջ:

Մեթր Գ. Ղազէլի յօդուածին վրայէն անցած են անլիլ քան քառասուն երկար տարիներ, բայց անոր մաղթանքը արձագանգ գտած է միայն ամսագրերի մէջ: Ափսոսալի է տեսնել թէ մոռացութեան ու անյայտութեան թանձր փողին ծածկած է մեծ մտաւորականին յիշատակն ու մեծարժէք նորարար ստեղծագործութիւնները: Մեթր Ղազէլ իր իրազեկ խօսքերով կը վկայէ արարեղէնին նուիրած հոյակապ աշխատութեան, չերգեցերէնի ջերմ կանուցեան ու մանաւանդ հրատարակութեան պատրաստ Հայաստանի պատմութեան սքանչելի զոյգ հատորներուն մասին:

Արդեօք ո՛ր մնացին այդ թանկարժէք ձեռագրերները, ո՞ր բարերար ձեռքը պիտի կարենայ վերցնել միտութեան ջօղը մեծ ազգասէր, հայրենասէր ու գիտնական Փրոֆ. Գարբիէլ Միքայէլեանի վաստակին վրայէն:

«Գեղարդ», Սուրիակայ Տարեկոր
1976-1978, Մրացեալ թիւ. Բ. Գիրք

ԵՐԳԱՀԱՆ ՓՐՈՖ. ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ

Ճակատագրի բերմամբ, բազմաթիւ հայ տաղանդաւորներ ծաղկած են ստոր պարտէզներու մէջ եւ ստեղծագործած: Ոմանք ուրացած են իրենց ինքնութիւնը, ինչպէս Մայքըլ Աւուշն (Տիգրան Գուլումեան), Հանրի Քրուսայ: Իսկ ուրիշներ՝ հաւատարիմ մնացած են իրենց հայկական արմատներուն եւ իրենց հայութեամբ պատիւ բերած Ազգին «Փոքր Ածուծին», ինչպէս Ռուբէն Մամուլեան, Ռուիքոմ Մարոյան, Մայքըլ Աւուշն Կրտսեր, Շարլ Ազնաւուր եւ այլք: Այս վերջին դասակարգին կը պատկանի, հայեպահայ թիթիթարէն ծրարական եւ վեճնտիկի պիեթուն վրայ ծաղկած, հայ ժողովուրդի հաւատարիմ գաւակ՝ երգահան Փրոֆ. Աւետիս Նազարեան, որուն պատուարներ անունը արդարօրէն արձանագրուած է Հայկալի Մայր գաղութին Պատուոյ Ցանկին մէջ:

Երգահանը ծնած է Արեւմտեան Հայաստանի Պարբերդ քաղաքը 7 Յունուար 1929ին, ակնցի հօրմէ եւ արարելիքի մօրմէ: 1931 թուականին՝ երկու տարեկանին, ընտանեօք տեղահանուած ու փոխադրուած է Հայկալ: Իր նախնական կրթութիւնը ստացած է Հայկալի Ազգային Հայկազեան վարժարանին մէջ, ապա անցած՝ Միթիթարեան վարժարան, բանաստեղծ Հայր Վահան Յովհաննէսեանի տնօրէնութեան օրով: Աչքերուն սաստիկ տկարութեան պատճառով կը ստիպուի վերջնթիթ դասարանէն թերաւարտ թողուլ ուսումը, 1948-1952 ժամանակաշրջանին համար:

Հաւատարիմ ակնցի իր ժառանգութեան, փոքր տարիքէն, անսահման սէր եւ անդիմադրելի փափաք ունեցած է դէպի երաժշտութիւնը: Երաժշտութեան իր առաջին ուսուցիչը կ'ըլլայ Ռիմաքի Քրոսաբովի «Ներդաշնակութեան դասագիրքը», որ կարեւոր գիտելիքներ կ'ընծայէ իրեն:

1952 թուականին, երգահան եւ խմբավար Բարսեղ Կանաչեանի Հայկալ ակադեմիան ճակատագրական նշանակութիւն մը կ'ունենայ երիտասարդ Աւետիսին համար: Կոմիտասի մեծանուն սանը, յանձն կ'առնէ գրադուլի ու գրասանդղէ անոր: Կանաչեանը, երաժշտազէտի իր սուր հոտառութեամբ,

կը նշմարէ որոշ ձիրք իր աշակերտին մօտ ու կը թելագրէ անոր նուիրուիլ երաժշտական դաստիարակութեան ու ասպարէզին:

1953ին կը մեկնէ Պէյրուս, ուր կը հետեւի Գեղարուեստից Ակադեմիայի ստեղծագործական քառամեայ դասընթացքին, — ղեկավարութեամբ Փրանսացի յայտնի Փրոֆ. Պերթրան Ռոպինարի, — զայն աւարտելով երկու տարուան ընթացքին: 1954ին Հալէպի Միփթարեան Վարժարանի երբեմնի տեսուչ եւ հայրենաշունչ բանաստեղծ Հայր Վահան Վրդ. Յովհաննէսեան, կը քաջալերէ Աւետիսը որ մեկնի Վենետիկ, հետեւելու համար յօրինումի տասնամեայ դասընթացքներուն, տեղւոյն Պենէտէթթօ Մարչելլօ երաժշտանոցէն ներս, ինչ որ իրականութիւն կը դառնայ շնորհիւ մասնակի օժանդակութեամբ ԶԲԼ Միութեան: 1962ին, կը վկայուի խմբային երաժշտութեան եւ խմբավարութեան մէջ, դասախօս ունենալով Սանթէ Զանտըր եւ աւարտելով երաժշտանոցին ութամեայ չրջանի հերթական դասընթացքը, կը ստանայ երգահանի վկայական՝ փրոֆեսէօրի տիտղոսով, իրրեւ աւարտածառ ներկայացնելով վենետիկեան երաժշտութեան 1500ի չրջանի յատկանշական դէմքերէն՝ «Մոնթելելերտի եւ իր գործերը»: Երաժշտանոցի իր ուսուցիչներէն էին, յօրինումի դասընթացք՝ Փրոֆ.ներ Պրուսօ Քօլլիթօ, Կապրիէլէ Պիանքէ, Վոլֆանկօ Տայլա Վեքքիա, իսկ երաժշտական պատմութիւն եւ երաժշտարանութիւն՝ Մայսթրօ Ֆապիօ Ֆանօ:

Իր յաջող ուսումնառութեան առթիւ, առաջին մրցանակի կ'արժանանայ երկու անգամ: Նոյն տարին երաժշտանոցի տնօրէնութեան կողմէ կը հրաւիրուի դասաւանդելու երաժշտական տեսութիւն եւ ձայնական երաժշտութիւն:

Զերբագատուելու համար աչքի տկարութենէ, 1962ին Ժընեւի «օփթալմոլոթիք» հիւանդանոցին մէջ կ'ենթարկուի աչքի բարդ վիրահատումի գործողութեան մը, որ բարեբախտարար յաջող կ'անցնի:

1963ին, յաջողութեամբ աւարտելով բարձրագոյն դասընթացքի առաջին տարին, կը ներկայացնէ երկու ստեղծագործութիւններ, առաջինը՝ «Թրիօ» ֆլուիթի, քլարինէթի (ին սի պետոյ) եւ ֆակոթի համար, իսկ երկրորդը՝ «Երեք Փուկա պասակեթոյ ռոմպ», զաշնամուրի կամ չեմփալոյի համար:

1965ին, կը վկայուի իրրեւ երգահան եւ երաժշտալէզտ, մասնագիտանալով հանրայայտ երաժշտական փրոֆեսէօրներու մօտ: Նոյն տարուան Ապրիլ ամսուան մէջ կ'արժանանայ Վենետիկի մէջ յայտարարուած Ա. Մատտերի անուան ստեղծագործական առաջին մրցանակին: Մարտ 23ին, տեղւոյն պետական սիմֆոնիք նուագախումբը կը կատարէ Փրոֆ. Աւետիսին «Վոկալիցցօ» սոփրանոյի եւ նուագախումբի համար գրած ստեղծագործութիւնը: 1966ի Յունիս 8ին, հրապարակային կատարումի կ'արժանանայ ուրիշ մէկ երկը՝ «Լա պոլլաթա Մաքապտան», որ մեծ յաջողութիւն կը գտնէ: 1966 թուականի վերջաւորութեան կը ստանայ յօրինումի վկայական իրրեւ տեսական աշխատութիւն ներկայացնելով «Հայ երաժշտութիւնը հեթանոսական չրջանէն մինչեւ վաղ միջնադար»:

Նշելի յատկանշական պարագայ մը՝ Փրոֆ. Աւետիս Նազարեան, իր երաժշտական դաստիարակութեան եւ կատարելագործումի համար, կը նուիրէ 13 երկար տարիներ՝ 1953—1968: Ուսանելի կէտ մը մեր երաժշտասէրներուն համար, ցոյց տալու համար թէ երաժշտական լուրջ դաստիարակութիւնը ինչ ահագին ջանք եւ աշխատութեան կը պահանջէ: Սակայն, պէտք չէ յուսահատիլ, քանի որ Արամ Յաչատուրեանի երաժշտական դաստիարակութիւնը սկսաւ իր 18 տարեկանին, իսկ ինչպէս կը տեսնենք, Փրոֆ. Աւետիս Նազարեան, սկսած է 23 տարեկանին: Այնպէս որ, կենսականը աշխատանքն ու սէրն է: Փրոֆ. Ա. Նազարեանին տիրազօնը այլազան է՝ դաստիարակչական, ստեղծագործական, դասախօսական, երաժշտագիտական եւ հայանպատ, «գիւտարարական» աշխատանք: Ատեն մը եղած է Հոռոմի ռատիոկայանի «փրոկրամաթորէ» յայտագիրի վարիչ: Յաճախ իր ձայնագրութիւններէն կը ձայնասփռուին:

1962էն սկսեալ, Մայսթրօ Նազարեան կը դասաւանդէ երաժշտական տեսութիւն եւ ձայնական երաժշտութիւն, Մեսթրէլ (Վենետիկ) եւ Հոռոմ: Որպէս ստեղծագործ—երգահան, գրած է ամէն ձեւի երաժշտութիւն, ինչպէս ձայնական, սենեկային, այսինքն համաձուլագային՝ որդեգրելով արդի երաժշտական լեզուն: Անոր ոճը կը պատկանի փոլիթունալ եւ տոտեքսֆոնիա (սերիալ) ուղղութեան: Մայսթրօն կը խորհի թէ արդի ժամանակներուն կարելի չէ աւանդական ձեւով ստեղծագործել, ան շատ մօտ չէ յառաջապահ (աւանկարոյի) գիծին, նաեւ որպէս արուեստ՝ չ'ընդունիր էլեքթրօնիքայի երաժշտութիւնը որ այնքան տարածում գտած է ԱՄՆի մէջ:

Ան սիրած է յօրինել մանուկներու համար: Անոր կարգ մը մանկական երգերը լոյս տեսած են իտալերէի կարողական դասագիրքերու մէջ, նաեւ հրատարակած է 45 թուրնոց սկաւառակ մը մանուկներու համար: Լոյս ընծայած է իտալերէնով գրքոյկ մը՝ հայկական երաժշտութեան եւ պատմութեան մասին, իսկ շատ մը ուրիշ գործեր լոյս տեսած են զանազան երաժշտական անթոլոյիներուն մէջ:

Նուագահան Ա. Նազարեան, շատ ջերմ ընդունելութեան արժանացած է Մայր Հայրենիքի մէջ: 1963ին, իր գործերէն երկու անգամ կը կատարուի հիւանանան «Հայրենարագծ Հնչիւններ» համերգին ժամանակ: Արուեստաւոր Յիջիլիա Բուտեանի խմբագրութեամբ հրատարակուած «Հայրենարագծ Հնչիւններ»ու Բ. հատորին մէջ լոյս տեսած են անոր գործերուն մասին՝ նոյն հեղինակուհին գրած «Մփիւռքի հայ երաժիշտներ» բաժնին մէջ (1968), ուր յայտնէր անդրադարձած է Մայսթրոյին երաժշտական գործունէութեան: Հայրենական մամուլը դրուատալից տողեր նուիրած է անոր, երեւանի ձայնասփռուի հաղորդումներուն մէջ յաճախ կը լսուին իր գործերէն, ռատիոկայանը վերջերս հաղորած էր «Լա Պալլաթա Մարապլա» («Մետելապար Գեղօնը» ներշնչուած միջնադարեան Ֆրանսացի չրջանի մեծ բանաստեղծ, յելուգակ Ֆրանսուա Վլլյօնի նշանաւոր բանաստեղծութիւններէն): Հանրայայտ ստեղծագործողը, Հայաստանի Հանրապետութեան եւ

Հայաստանի Քոմբոզիթօրներու Միութեան հրաւերով, երեք անգամ, հիւր եղած է Երեւան՝ 1974, 1979 եւ 1980 տարիներուն: Իր վերջին այցելութեան առթիւ, Հետք տարած էր որպէս նուէր՝ խտայացի 17րդ դարու նշանաւոր հեղինակ Տոմինիքո Սքարլաթիի «Մեմ Տիգրան» օփերային ճաշնագրուած (երեք դար յետոյ բեմ հանուած) երաժշտութիւնը, որ շատ մեծ խանդավառութիւն ստեղծած է: Իւրաքանչիւր անգամ, իր ներկայութեամբ ու մասնակցութեամբ, կատարուած են հեղինակային ելոյթներ:

«Օտար Երաժիշտներ Հայ Արուեստն Եւրո» բնաբանով, Փրոֆ-ը կատարած է պրպտուներ եւ ըրած «գրուտեր, երեւան հանելով բազմաթիւ երաժշտական գործեր, որոնց օտար հեղինակները օգտագործած են Հայոց պատմութենէն դրուագներ եւ կամ ներշնչուած՝ Հայկական մօթիվներով երգերէն, ինչպէս «Մեմ Տիգրան» օփերան, եւ Հայկական թեմաներով գրուած շատ մը գործեր, «Լա սիմֆոնիա Արմենիա» եւ ուրիշներ, ուղարկելով զանոնք Երեւան:

Երաժշտագիտական յօդուածներով աշխատակցած է «Յառաջ», «Ազգաբար», «Նախբի» եւ այլ թերթերու, Հայերէն եւ իտալերէն: Նոյն բնագաւառին մաս կը կազմեն Հայ երաժշտութեան եւ երաժշտական զանազան նիւթերու մասին տուած իր դասախօսութիւնները: Մասնակցութիւն բերած է երաժշտական բազմաթիւ համադուամարներու եւ մասնագիտացման դասընթացներու, նոյն ատեն ունենալով երաժշտական ելոյթներ:

1961—1962 տարիներուն, մասնակցած է «Երաժշտական Արձակուրդներ» յայտագրին, Վենետիկի մէջ: 1971ին մասնակցած է սեմինարին՝ Սթրաւինսքիի երաժշտական լեզուին նուիրուած ուսումնասիրութիւններ մը: 1976էն, Փեքստայի մէջ, իր մասնակցութիւնը բերած է երաժշտական Տիտաղի-կայի դասընթացներ:

1975ին, տուած է Հայ երաժշտութեան պատմութեան մասին շարք մը դասախօսութիւններ՝ իտալական զանազան քաղաքներու մէջ, հրատարակելով իտալերէնով գրքոյկ մը՝ սոյն նիւթին շուրջ: 1987ին, Վենետիկի մէջ:

1975ին, Հայ արուեստին նուիրուած միջազգային Ա. գիտատոյժին, տուած է դասախօսութիւն մը՝ Իտալիոյ Պերկանօ քաղաքին մէջ: 1974ին Երեւանի եւ 1982ին Լիոնի մէջ կայացած Հայկական երաժշտական համագումարներուն, խօսած է արդի Հայ երաժշտութեան մասին:

1986ի Օգոստոս ամսուան ընթացքին, Վենետիկի Միթիարեան Հայրերու կողմէ կազմակերպուած Հայագիտական ամառնային Բ. դասընթացքին, Մուրատ—Ռաֆայէլյան Վարժարանին մէջ, հանդէս եկած է իր երկու դասախօսութիւններով, նիւթ ունենալով «Ժամանակակից Երաժշտութիւնը եւ կոմիտաս»:

Մայիսթրօն, իր փոքր տարիքէն սկսեալ, սիրած է մանկական երգեր գրել: 1955ին, Մայիսթրօն Վենետիկի մէջ հիմնեց Հայ Ուսանողներու Միութիւնը: 1978ին Հոռոմի մէջ, իսկ 1983ին Վենետիկի մէջ նոյնպէս հիմնեց Հայ Մշակութային կոստան Զարեան կեդրոնը, որ 1981ին մաս կազմեց

Իտալիա — Ու. Միութիւն Բարեկամութեան միութեան, իրրու Հայկական մշակութային բաժին, նպատակ ունենալով Հայկական մշակոյթը ծանօթացնել իտալացիներուն: Մինչև այսօր, կեդրոնի պատասխանատուները կը նկրկայացնեն Հայկական շահերը: Իր այս գործունէութեան համար, 1982ին, կեդրոնը ստացաւ Պատուոյ վկայական մը Հայաստանի Հանրապետութեան կողմէ: Նոյնպէս Պատուոյ զիւր մը ստացաւ Մենթրէլ (Վենետիկ) քաղաքին կողմէ, 1987ին:

1988ին, Վենետիկի մէջ հիմնեց կոմիտէ մը Հայկական դատի պաշտպանութեան, ծանօթացնելու՝ Հայ ազգին ողբերգական պատմութիւնը եւ լուսարանելու 1915ի Մեծ Եղեռնի սարսուղեցիկ ղէպերը, Հայկական ցեղասպանութեան կանխամտածուած եղիւկութիւնը, թրքական կառավարութեան կողմէ, զոր ան՝ մինչև այսօր կ'ուրանայ իր Հայաստանական եւ ռոգասպանական արարքները: կոմիտէն այս ուղղութեամբ կազմակերպեց խորհրդատոյցներ եւ սիմֆոզիումներ: Անոր շնորհիւ, Հոռոմի մէջ, իտալական Ընկերակազմակերպութեան Միջազգայնականի պիւլոսն, Հայկական դատը ներկայացուց իտալական խորհրդարանին եւ ծերակոյտին: 1990ին, Հայկական պատուիրակութիւն մը հրաւիրուեցաւ, իտալական ծերակոյտին առջեւ պատկերացնելու համար իտալիկները Լարարալի վէճին:

Մինչև այսօր, կոմիտէն կանոնաւորապէս կը շարունակէ իր օգտաշատ գործունէութիւնը, Հայ մշակոյթը, Հայկական դատը եւ զարարադեան ղէպերը ծանօթացնելով իտալացիներուն եւ նոյն ատեն փոխադարձ կապ պահելով Երեւանի հետ:

Մայիսթրօն Նազարեան հեղինակած է գործեր նուագախումբի, սենեկային երաժշտութեան, երգչախումբի եւ զանազան գործիքներու համար, հրատարակած է ութը կտոր իր ստեղծագործութիւններէն: 1971ին հրատարակած է «Երեք հայկական երգեր» երգի եւ դաշնամուրի համար: «Տիգրիսի մէջ» Ֆիլմի, քարինէթ իմ սի պեմոլ եւ Ֆակոթի համար: 1973ին «Իլ Վոլպիցցո» թերթի սոփրանայի եւ փոքրիկ նուագախումբի համար:

1975ին «Իլ բրոֆիս» օրկի, քարինէթ իմ սի պեմոլ եւ «Լ'օբբեդմ փարաֆրասիս», օրկի, մարինայի, դիօֆոնոյի, կլոբփիլիէի եւ գիպրաֆոնոյի համար: 1979ին, «Լա Պալլաթա Սարապրա» Ֆրանսուս Վիլյօնի բոլորով եւ «Լ'էփիթափ» պարիթոնի, երգչախումբի եւ մասնաւոր նուագախումբի համար: Սոյն հրատարակութեան ծախքը Նոպալիսի Լիքթ Մարտիկեան հիմնադրամը 1980ին, իսկ Մուրը Լազարի հրատարակչական տունը հրատարակած է Ի Վենիսի Բանիսի Փըր Պանիլիսի:

1982ին, հեղինակած է երաժշտութիւնը Ս. Թեհլիրեանին նուիրուած «Աստիկանք Պերլին» Ֆիլմին, որ մեծ յաջողութիւն գտած է Ֆիլմը պատրաստուած է 1882ին Միլիկընի մէջ (ԱՄՆ): 1983ին պելիքական—Ֆրանսական ռատիոկայանը արձանագրած է ձայնասփուած է «Լա Պալլաթա Սարապրա»ն, կատարուած Ռատիո—Թէլէվիզիոն Պելիկա—Ֆրանսէզի Նուվել

Օրբէսթր Աէնֆոնիքի կողմէ, տնօրէնութեամբ Պրիան Ծորէնսթամանի եւ Ալիանս Բօտայի: ղեկավար՝ Անարէ Հանտրպօշի: 1984ին, նոյն նուագախումբը արձանագրեց եւ ձայնասփոնց «Իլ Վոքալիցցօ», երգեցողութեամբ Սոփրանօ Ֆրանսուպ Հեննոյի, ղեկավարութեամբ Ճորձ Տիւրոթիկոյի:

50ական թուականներուն, Հալէպի մէջ գրած է նոյնիսկ մանկական օփերաներ, որոնք յաջողութիւն գտած են հայ դպրոցներէն ներս: Այս մարզին մէջ, հրատարակած է «20 Մանկական Երգեր»: Այս ուղղութեամբ լոյս ընծայած է մանկական երգերու սկաւառակ մը: Մանուկներու եւ պատանիներու համար գրած երգերը, տեղ գտած են իտալական դասագիրքերու մէջ: Գրած է «Երեք մանկական հայկական երգեր», մեցցո-սոփրանայի եւ դաշնամուրի համար: Անոնցմէ փունջ մը, ուղարկած է Երևան, որոնք կատարուած են «Արեւիկ» համոյթի կողմէ, ղեկավարութեամբ Իտպրթի Պետրոսեանի:

1977ին, մասնակցելով մրցանքի մը, 230 թեկնածուներու մէջ կը շահի Ա. մրցանակը եւ իրաւունք կը ստանայ սահմանելու կարեւոր պաշտօն մը Հոռոմի ձայնասփոնէն ներս, որպէս տեսուչ «փրոկրամաթոր» յայտագրին:

Փրոֆ. ը գրած է նաեւ Քուարթեթթօ ա'Աքքի ին Տոէ Թեմփի. Ունա Մարչիա եւ Լէ Թոէ Տագեթ Արմենէ. նուագախումբի համար հեղինակած նաեւ Տիս Վիոլի Նիսքիթուն, Պրիւքսէլի ռատիոկայանի ֆրանսական բաժնին համար, որուն համար դարձեալ պատրաստած է «2 թրիօ եւ ընդերթ» օպերայի եւ նուագախումբի համար:

Մայնսթրոյին գործերը կը ձայնասփոնէին Երեւանի, Պէյրութի, Փարիզի, Լիոնի, Կիւրտոսի, Պրիւքսէլի, Վենետիկի, Հոռոմի եւ եւրոպական ու իտալական այլ քաղաքներու ռատիոկայաններէն:

1986 թուականին, Փրոֆ. Աւետիս Նազարեան, փափաք յայտնած էր որ Հալէպ քաղաքը օժտուի երաժշտանոցներով: Մայնսթրոյին երազը իրականացած է այսօր, քանի որ կը գործեն հայկական երեք երաժշտանոցներ՝ Իրթասթրաք Շալիօթիային Միութեան, Սահակեան Վարժարանի Բարսեղ Կանաչեան եւ ՀԲԸՄ-ՀԵԼԻ երաժշտանոցը, պէտք է աւելցնել, որ Հալէպի պետական երաժշտանոցէն ներս (Սեպիլ) ուսանած են եւ կ'ուսանին բազմաթիւ հայ աշակերտներ, իսկ ուսուցչական կազմին մէջ գտնուած են եւ կը գտնուին որակաւոր շատ մը հայ ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ: Առանց մոռնալու ողբացեալ երաժշտագէտ եւ խմբավար եւ ռուսացի Գէորգեանը, որուն տունը ինքնին՝ «Միմի» երաժշտանոց մըն էր իր երկու բաժնիներով, պետական՝ երաժշտական դիտելիքները, քոմպոզիտիւն, քոմպոզիտիւն, տիքթէ միւլգիթալ եւ գործնական դաշնամուր, ձեռնադաշնակ եւ թաւ-նութակ:

1992 Մայիս 22ին, Վենետիկի երաժշտանոցի դահլիճին մէջ կը նուագուին Մայնսթրոյին «Լէ Թոէ Տագեթ Արմենէ» գործը, գրուած հարուածային գործիքներու, ու «Ուսումները» երգեհոնի ու հարուածային գործիք

ներու համար, մեծ յաջողութեամբ: Նոյն գործերը կը նուագուին 1992 Հոկտ. 9ին եւ 31ին Պոլսի Պոլսի Աքատեմիա Ֆիլհարմոնիքայի մէջ, որոնք նմանապէս կ'արժանանան զնահատանքի եւ կրկնութեան: 1992 Դեկտ. 14ին ու ապա՝ 1993ի Փետր. 22ին, ճարտնական Սաք Սուրի եռեակը (սոփրանօ, քոմպոզիտ, դաշնակ), կը մեկնարանէ Նազարեանի «Կարօսի Երգը» Հալէպէն լեզուով, որ յաճախ մաս կ'ազմած է իրենց յայտագրին: Համերգին ձայնագրութիւնը կը ձայնասփոնէ իտալիոյ ռատիոյէն:

1993, Յուլիս 19ի երեկոյան, Վենետիկի Տելլա Բալա եկեղեցիին մէջ տեղի կ'ունենայ ԱՄՆի Չաթթանուկա քաղաքի տղոց երգչախումբին համերգը, բաղկացած 8-14 տարեկան 42 մանչերէ: Յայտագրին մաս կը կ'ազմէին երկձայն խմբերգներ Մոցարթի, Հայտընի, Պոռէէ, Քոլէ, Նազարեանի, որուն չորս երգերը՝ մեկնարանուած հայերէն, շատ կը սիրուին եւ ջերմ ընդունելութեան կ'արժանանան:

Մայնսթրօն անդամ է Իտալիոյ Գոմրոզիթէօրներու Միութեան, իսկ վերջերս կ'ընտրուի Վենետիկի (Վենետիկի) երգահաններու «Լա Նուովա Մուզիքա» ընկերակցութեան վարչական: 31 տարի իտալական երաժշտութեան ծառայելէ ետք որպէս ուսուցիչ, 1993ին հանգստեան կը կոչուի կամաւորապէս, քանի որ կրնար 5 տարի եւս պաշտօնավարել: Մայնսթրոյին նպատակն է ամբողջութեամբ նուիրուի իր արուեստին, բաւական ծրագիրներ կան որոնք պէտք է իրականանան - յաւ ըրած է երգահանը, քանի որ մարդ չի գիտեր որուն համար կը զօղանջն գանդերը:

Հին փափաք մը իրականացնելու եւ իր հարազատները տեսնելու համար, Փրոֆ. Աւետիս Նազարեան, անցեալ տարուան վերջաւորութեան կ'այցելէ «Երազային Հալէպը» եւ կ'առնէ իր քառասուն տարուան կարօտը իր «Հայրենաբաղձ հելիւներուն» արձագանգը տուած էր յողուածով մը, որուն խորագիրն է «Ինչպէ՞ս Չսիրելի Հալէպը» («Գանձասար»):

Լուսահոգի Հայր Եփրեմ Տէր Նազարեան չէր մոռցած գնահատանքով արտայայտուել իրենց նախկին սանին մասին, «Հալէպի Միտիարեան Վարժարանի Յուշամատեն»ով:

Մեր նախկին հայրենակից երգահան Փրոֆ. Աւետիս Նազարեանին ի սրտէ կը մտղթենք քաջաւորութիւն, արեւշատութիւն ու յաջողութիւն իր սիրելի փափաքներուն իրականացման համար, որպէսզի մշտապէս պանծացնէ «Փոքր Ածու»ին մեծ պատիւը, օտար հորիզոններու սակ:

«Խօսմակ», Դեկտ. 1995

ԵՐԳԱՀԱՆ ՅԱԿՈՒՄ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Մելգոնեան կրթական Հաստատությունը՝ գրազէտներու, մանկավարժներու, հրապարակագիրներու եւ արուեստագէտներու կարգին, հայ ազգին պարզեւած է երկու բարձրորակ երաժշտագէտ-երգահաններ՝ Հրանդ Գէորգեան եւ Յակոբ Ս. Մանուկեան:

Յակոբ ծնած է Հալէպ եւ երաժշտականութիւնը ժառանգած է իր հօրմէն՝ գեղածայն երգիչ Սամուէլէն եւ տաղանդաւոր խմբավար եւ դաշնակահար Հորաքըրջմէն Օրդ. Ազնիւ Մանուկեանէն (չետագային տիկինը քեանհայտա Ռուրէն Գարբախիւն):

Յակոբ մեծցած է ընտանեկան երաժշտութեամբ յագեցած միջնորդութիւն մը մէջ եւ սկսած է նուագել ջութակ:

Իր նախնական հայեցի կրթութիւնը ստացած է տեղւոյն Հայ Աւետարանական Իմամանուէլ վարժարան, ապա բարձրագոյնը՝ Ալեքսիօ գոլէճ-բախտաւորութիւնը ունեցած է ուսանելու Մելգոնեան կրթական Հաստատութեան մէջ՝ որ եղած է դարբնոց խոստմանից ուժերու յայտնաբերման, ուրկէ շրջանակարտ եղած է 1951ին: Հաստատութեան երաժշտութեան ուսուցիչ վաստակաւոր Վահան Պէտէլեան, իր աշակերտին մէջ նշմարած է երաժշտութեան հուրը, օժտանածութիւնը եւ քաջախրած գայն: Առիթով մը եւս խոստովանած է. «Քեզմով միշտ հայարտացած եմ, քանի որ վաքսում տարիներու ուսուցչութեան ընթացքին հանդիպած տաղանդներու լաւագոյններն են եւ արժեցնուցած են ինքզինքը ծառայելով այն վեհ արուեստին, որ կը կոչուի երաժշտութիւն»:

Կիպրոսի իր ուսանողական տարիներուն իր մասնակցութիւնը բերած է որպէս ջութակահար, տեղւոյն նուագախումբէն, ուստիոկայանին եւ դպրոցներու նուագախումբերուն: Վարած է Մելգոնեան Հաստատութեան եւ Նիկիոսի եկեղեցական երգչախումբերուն փոխ վարիչի պաշտօնը եւ դեկավարած ուստիոկայանի հայկական բաժնին երգչախումբը:

Աւանդութիւն եղած է, որ Եթովպիոյ Հայկ Սէլասիէ կայսեր նախածնունդութեամբ, հայ երաժիշտներ ստանձնեն կայսերական նուագախումբին

եւ փողերախումբին ղեկավարութիւնը: Հոն պաշտօնավարած են Հալէպէն՝ երաժիշտ Գէորգ Նալպանտեան, որ հեղինակած է կայսերական մաղթերգը, յետագային նաեւ իր եղբոր որդին երաժշտագէտ Ներսէս Նալպանտեան եւ իր եղբայրը խմբավար եւ ջութակահար Յակոբը:

1953ին, Յակոբ եւ իր տիկինը դաստիարակչուհի Սրբուհին, կը հրավիրուին Ատիս Ապպա, ստանձնելու հայ ազգային վարժարանի տնօրէնութիւնը: Այս առթիւ, կայսրը զինք կարգած է վարիչ կայսերական նուագախումբին եւ փողերախումբին. պաշտօնի վրայ մնալով քսան տարի Հայկ Սէլասիէ կայսեր խնդրանքով, շրջած է Եթովպիոյ քաղաքներն ու զիւրիբը, ձանազներու եւ կորուստէ փրկելու երեք հազար տարուան հնութիւն ունեցող եկեղեցական եւ աշխարհիկ եթովպիական երաժշտութիւնը: Կարեւոր է, որ հրատարակուին Յակոբին հաւաքած երաժշտական երգերը, քանի որ հայ եկեղեցին ու դաւանակից եթովպիական ուղղափառ եկեղեցին մեծ հանդիսութիւններ ունին իրարու հետ եւ անպայման եթովպական եկեղեցական երաժշտութիւնը ազդեցութիւնը կրած է հայկականէն:

Հայերը՝ մօտ 2000 հոգի, բարգաւաճ կենցաղ ունէին: Կայսեր սպանութիւնէն ետք հաստատուեցաւ գինեւորական ռուքատրութիւն, ապա մարքսիստական վարչաձեւ: Հայերը ցարդ մնացին 200 հոգի: Սուրբ Գէորգ եկեղեցւոյ մէջ ամէն կիրակի կը մատուցուի Ս. Պատարագ՝ սարկաւազ վարդգէս Նալպանտեանի կողմէ:

Հայերը բացին նոր դպրոց մը, ուր Եթովպիոյ պետական նախարարներուն զաւակները կը յաճախեն, իսկ մարդական «Արարատ» կեդրոնը կը գործէ, իր կողմէ ճաշարանով, ուր կը ճաշեն դիւանագէտներ, օտար առեւտրականներ եւ նախարարներ, բարձրաստիճան պաշտօնեաներ:

Եթովպիոյ քաղաքական վերիվարումներուն պատճառաւ, Մանուկեան ամուր, 1971ին կը հաստատուի Լոնտոն, ուր Յակոբ տասներեք տարի շարունակ կը ղեկավարէ իր հիմնած «Կոմիտաս» երգչախումբը:

1978ին Անգլիոյ էլիզապէթ թագուհին թագադրութեան 25ամեակի տօնախմբութեան իր երգչախումբով մասնակցութիւն բերած է, արժանանալով բարձր գնահատանքի: Ի վերջոյ հաստատուած է Թորոնթօ քաղաքը, հոն հիմնելով ՀԲԸ Միութեան երգչախումբը:

Երգահան Յակոբ Մանուկեանին տրամադրուր բազմաժամեր է՝ մենբերգային, բազմաձայնային զուգերգային, դաշնամուրային եւ բազմազան ալ ստեղծագործութիւններ:

Նախկին հայպահայ երաժշտագէտ եւ երգիչ Ֆերտինանտ Գայմազաժեան հետեւեալ ձեւով կը բնորոշէ մայիսթրոյին արուեստը. «Մանուկեանի կրկերուն մէջ կը զգանք հոգիին բաբախող ջերմութիւնը, իրաքանչիւր տողի մէջ արտի զարկերուն քրքրակամութիւնը կը յայտնուի երաժշտական ձայներու յիմնակայանութեան մէջ, այնպէս որ երգը իր ամբողջութեամբ թափանցումները կը կատարէ ունկնդիրին հոգիին մէջ՝ յուզելով անոր մերաշնչութիւնը»:

Մամուլի տակ են մայեսթրոյին հարիւր յիսունէ աւելի ձայնագրեալ երգերը՝ նախակրթարանի աշակերտներուն եւ սօնական առիթներու համար: Երգահան Յակոբ Մանուկեան նաեւ դրող է (մատենաչար թորոս թորանեան), գրած է մենագրութիւն մը նուիրուած քեմանչիստ Ռուբէնին եւ Տիկ-Ազնիւ Մանուկեանին: Այլ գիրք մը, ձօնած է իր մօրը յիշատակին:

Մեր նախկին հալեպահայ երգահանին կը մաղթենք նորանոր յաջողութիւններ եւ ստեղծագործութիւններ:

ԱՂԲԻՒՐՆԵՐ

«Կեանքիս Պատկերազարդ Ժապաւեճ», Հրանդ Գեորգեան, Հալէպ, 1983:

«Անկախութիւն» երկշաբաթերթ, 31 Հոկտեմբեր 1996:

«Չարքօք», 20 Գեկտ. 1997

ԿԵՆՍԱՖԻԶԻԿՈՍ ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ

Հալեպահայ մեր նախկին հայրենակից կենսաֆիզիկոս Դոկտ. Հրայր Յովնանեան համբաւաւոր նորարար ղէմք մըն է եւրոպական եւ ամերիկեան գիտական շրջանակներուն մօտ, որպէս գիտարար կարեւոր յայտնագործութիւններու: Առ այս, հռչակուած է 1996ի Տարուան Մարդը Անգլիոյ մէջ, իսկ 1997ին՝ ԱՄՆ:

Դոկտ. Հրայր Յովնանեան ծնած է Հալէպ, 1920ին: Իր հայրն էր յայտնի վիրաբոյժ եւ Ռամկավար Ազատական յայտնի ղէմք Տօքթ. Ֆիլիպ Յովնանեան, որ Համաշխարհային Ա. պատերազմի ընթացքին, որպէս պատասխանատու բժիշկ էյնթիլիի (Ամանոս) երկաթուղիի գերմանական հիւանդանոցին, կատարած է փրկարար դեր, ցերեկով օգնելով հայ գաղթականներուն, իսկ գիշերով՝ լեռ բարձրացած հայ քաջամարտիկներուն: Մայրն էր Ռոզա Ճեպեճեան (Տօքթ. Աւետիս Ճեպեճեանին քոյրը): Իր աւագ եղբայրը կ'ըլլայ Տօքթ. Օգոստին Յովնանեան, Հալէպի Այթուճեան հիւանդանոցի նախկին փոխ տնօրէն՝ նորարար յայտնի վիրաբոյժ մը, յետագային փոխադրուած ԱՄՆ:

Դոկտ. Հրայր իր նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի Հայ Աւետարանական Էմմանուէլ վարժարան, իսկ բարձրագոյնը՝ Ալիփփօ գոլէճ: Ապա կը յաճախէ Պէյրութի Ամերիկեան Համալսարանը, ուրկէ շրջանաւարտ կ'ըլլայ 1942ին, պսակաւոր գիտութեանց կոչումով: Նոյն հաստատութեան մէջ, երկու տարի պաշտօնավարելէ ետք, կը մեկնի ԱՄՆ շարունակելու իր գիտական ասպարէզը: Կը վկայուի Պրատուն Համալսարանէն, 1947–1949 իր Բի. Ըի տոքթորականը կը ստանայ Գալիֆօրնիոյ Պեյքլըլի Հիլզ համալսարանէն, 1951ին, որպէս կենսաբժշկական ինժեներ (Biomedical engineer):

Դոկտ. Հրայր յետ այնու կ'ունենայ յարաճուն վերելք եւ յաջողութիւն գիտական ասպարէզէն ներս: Մինչեւ 1983, ան հրատարակած է 40է աւելի աշխատութեան բարձրորակ ուսումնասիրութիւններ. եղած է ո՛չ միայն դասական ստոււմով հետազօտող, այլ նաեւ հնարող: Իր անունով արդէն կան ԱՄՆի

մէջ վեցէ աւելի արտոնագիրներ (patent), կենսա-բժշկական գործիքաւորումի բնագաւառէն ներս:

Որպէս Հանրածանօթ զիտնական, 60ական թուականներուն ան մաս կը կազմէ ԱՄՆի տիեզերագիտութեան ՆԱՋԱի կեդրոնին (Ուաշինկթըն): Ան նշանակուած էր որպէս ներուէ մասնագէտ տիեզերագնացութեան կենսագիտական ծրագիրներու իրականացման եւ գործիքաւորումին: Երջանիկ գուգադիպութիւն, ուրիշ ականաւոր Հայ զիտնական մը՝ Նորայր Սիւսկեան, Սովետական Միութեան մէջ, կոչուած էր կատարելու միևնոյն կենսական դերը Սփութիքներու բնագաւառին մէջ:

Դոկտ. Հրայրին գլխաւորած բաժնին վստահուած էր լուսինէն բերուած նմոշներու քննութեանց տարրալուծումի ծրագրային գործընթացը:

1967ին, Դոկտ. Հրայր յղացաւ աչքի ճերմակ սպանակը հեղուկացնելով արտահանելու եղանակը, որով ան դարձաւ Հայրը faco-emulsification մեթոտին, որով գերձանային այիքներու ազդեցութեամբ կը հալեցուի սպանակը եւ դուրս կը ձծուի, առանց աչքը կտրտելու:

1970 թուականին ան կը նշանակուի Cooper Vision Inc-ի Հաստատութեան ակնարուժութեան, քիթ-կոկորդի եւ ատամնարուժութեան բաժիններուն փոխ տնօրէն:

Ատեն մը ետք, ան կը դառնայ պետ ԱՄՆի առողջապահական վերհսկումի սպասարկութեան, ստուգելու սննդեղէններու եւ դեղորայքի արդիւնարեութեան ազդուութիւնն ու ապահովութիւնը, 2000 տարբեր յարմարանքներու վրայ:

Դոկտ. Հրայրին անունը վաղուց տեղ գտած է ամերիկեան Who's Whoներուն (Ով է Նա) շարքին, նոյնպէս Who's Who Among Armenians In North America, Inaugural Editionի մէջ, 1995: Ան յիշուած է նաև կենսագրական միջազգային հրատարակութիւններով, բրիտանական կենսագրական կեդրոնը իր վերջին հրատարակութեամբ, Դոկտ. Հրայրը անդամ է ամերիկեան բազում զիտական ընկերակցութեանց: Ան հիմնադիրներէն է Պէյրուի Հայկազեան Համալսարանին, անդամ է Ամերիկայի Հայ Միսիոնարական Ընկերակցութեան եւ հոգարարձու Նիւ Եորքի Հայ Աւետարանական եկեղեցիին:

Դոկտ. Հրայր կնքած է հայեցի ամուսնութիւն, Սիրան Նորեանին հետ, գաւակներն են Ռոզմէյրի Ճէյնի, Ճոն Անիթա եւ Ճոն Ֆիլիպ:

1990ին, ԱՄՆ մեկնելէ 40 տարի ետք, հայրենարազմութիւնը գինք բերաւ «Երագային Հայէպ», որ իր յառաջդիմութեամբ անճանաչելի եղած էր Դոկտ.ին համար: Ան խանդավառութեամբ եւ սիրով ընդունուեցաւ Հայ եւ արար զիտական շրջանակներէ:

Ջերմօրէն կը շնորհաւորենք նախկին Հայկազայ հայրենակից Դոկտ. Հրայր Ֆիլիպ Յովնանեանը, իր զիտական սրացիկ վերելքին եւ գիտարարութեան համար, մաղթելով որ իր զիտութենէն մասնակից դառնայ Հայոց նորանկախ հայրենիքը:

ԱՂԲԻԻՐՆԵՐ

«Գնդարդ» Սուրիահայ Տարեգիրք, Ե. գիրք, Հալէպ, 1996

«Ով է Նա» (անգլերէն, միջազգային)

«Ով է Նա» (անգլերէն, հայերու համար)

«Ձարթօք», 18 Փետրուար 1998

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԴՈԿՏՈՐ ՏՐԴԱՏ ՍՈՒՐԱՏԵԱՆ

(1915 Տիգրանակերտ – 1995 Հալեպ)

Տասնհինգի հայկական ցեղասպանության խորշակը, շատերու կարգին նաեւ ցան ու ցրիւ ըրած է Արեւմտեան Հայաստանի Տիգրանակերտցի բարեկեցիկ Մուրատեան ընտանիքը: Հինգ տարեկան ծնողազուրկ մանուկ Տրդատը՝ ինքզինք գտած է Տէր-Զօրի անապատին մէջ, բոպիկ, անօթի ու ծարու: Անձնօթք, բարի արար մը, որպէս ազնիւ Սամարացի, մահէն կեանքի բերած է անօգնական մանուկը, կերակրելով զայն: Նախանամական այս բարիքը չէ մոռցած հասուն Տրդատը եւ հետագային իր ճիտին պարտքը համարած է, իր առաջին գիրքը. «Արարական դասական փիլիսոփայութիւնը» նուիրել նաեւ անձնօթք Արարին, որ փրկած է իր կեանքը: Իր երախտագիտութիւնը այդ բարեբարին միջոցաւ, կ'երթայ բարեգործ ու ասպնջական Արար ազգին, որ ապաւէն տուաւ, իր հացին կէտը բաժնեց բնակեր եւ հայրենագուրկ հայու բեկորներուն հետ: Տարիներ ետք, միայն հրաշքով է որ Տրդատ պիտի գտնէր իր երկու եղբայրները՝ Հրանդն ու Երուանդը եւ ջորիկը՝ Փերուզը:

Իր նախակրթութիւնը կը ստանայ Հալեպի Ազգային Վարժարանին մէջ, որուն հայրենաձուէր ուսուցիչները՝ Տիրան Աճէմեան, Միսաք Սիսեան, Խոտար Ոսկերիչեան (յետագային Մաշտոց Քահանայ), Կարապետ Կիւլեպէյեան եւ Տնօրէն Օ. Շիշմանեան, որոնք ուխտած էին իրենց դաստիարակութեան յանձնուած Ապրիլեան այդ անբախտ սերունդէն հասցնել ապագայի ազգանուէր ներկայացուցիչներ: Ուսումնական 1929–30 տարեշրջանին, չըմանաւարտ լ'ըլլայ Ազգային Հայկազեան Վարժարանէն: Իր բարձրագոյն կրթութիւնը կը ստանայ Հալեպի Ֆրէր Մարիստներու Շամբարիա Գոլէճին մէջ, 1931–35:

Ամանները, արձակուրդի չըջանին, սովորութիւն ըրած էր յաճախելու, յայտնի ջիմիկոս՝ Վահան Սեմերճիպաշեանի տարրալուծարանը, որ սկզբնական չըջանին կը գտնուէր Քանաթէ պողոտայի անկիւնադարձին Աուճէթ

Տօրթոր Քեյնալի, ապա փոխադրուեցաւ Թիլիլ պողոտայ: Հոն կատարուող փորձարկութիւնները, զինք կը մղեն փնտելու արդիւնքներուն զրդապատճառները: Տրամարանական այս տեսութիւնը, զինք պիտի առաջնորդէր քարթէզեանական ուսմունքով, իր հանրայայտ տեսութեամբ: «Ես կը մտածեմ, ուրեմն՝ ես կամ»:

Կենսաշահութեան մղուած, ատեն մը կը պաշտօնավարէ Սեպիլի պարտէզէն անդին, ըլլալի մը վրայ թառած Փրանսական զինուորական գործունային մէջ, որ հանրութեան ծանօթ էր իր նախկին անունով՝ Գերմանական գորանոց (Այման զըշար): Երկինքէն ինկած ոսկիէ խնձոր մը եւ բախտորոշ անակնկալ մը կը ներկայանայ իրեն երբ Հալեպի Փրանսական Լիսէն կը հաստատէ փիլիսոփայութեան բառամեայ երեկոյեան դասընթացք մը, մասնակցութեամբ Փարիզէն եկած մասնագէտ ուսուցիչներու: 1936–1939 տարիներուն, յափշտակութեամբ հետեւելով դասերուն, կը վկայուի «Մանսիոն քրիլ պիւն» (քաջայաւ) յիշատակութեամբ, այսպէսով ան կը կատարէ իր առաջին մուտքը՝ փիլիսոփայական գիտութիւններու աշխարհէն ներս: Այս չըջանին, Հալեպի Ղանթէլ Հաճարին փողոցի երկայնքին գտնուող Քան Հիլթրոզէ առեւտրական կեդրոնին մէջ, գոյութիւն ունէր անգլիական Շիւքք բնկերութիւնը՝ արտածումի եւ ներածումի նշանաւոր հաստատութիւն մը, որուն զվաւուր զբաղումն էր, մեծաքանակ բուրդի—բամբակի—կաշուեղէնի եւ աշխատողուած աղիքի արտածումը: Մեծագոյն մասնագէտ պաշտօնեան էր յայտնի Ֆիգիլիոս Սուրէն Գալէնէսը (յետագային մեծ բարբար) որուն կը միանայ Պերճ Սապպաղեան (Ապու Ֆարէս),— անուանի լուսանկարիչ եւ գեղանկարիչ Նուպար Սապպաղեանին երէց եղբայրը,— լեզուագէտ եւ հմուտ զբամագէտ: Բախտը կը ժպտի Տրդատ Մուրատեանին, երբ ինք եւս պաշտօնի կ'անցնի Շիւքք բնկերութեան մէջ, ուր կարելիութիւն կ'ունենայ զարգացնելու իր ձիրքերը առեւտրական, լեզուագիտական, հաշուապահական եւ գիտական ճիւղերու մէջ: Իր գիտելիքները զարգացնելու նպատակաւ, կը տիրանայ Փրանսերէն, անգլերէն եւ գերմաներէն լեզուներու, հայերէնի, արաբերէնի եւ թրքերէնի կողքին: Այս ուղղութեամբ կը վկայուի Ֆիլմիքս համալսարանի իրաւաբանական ճիւղէն եւ Պէլլութի Առեւտրական Վարժարանէն: Ի վերջոյ, զինուած առեւտրական տոկուն ու փորձառու գիտելիքներով, կը հիմնէ ներածումի եւ արտածումի իր անձնական հաստատութիւնը, նախ ներսի շուկայի Մէճիտէի խանին մօտ, ապա Ղանթէլ Հաճարինի իր գրասենեակը, առեւտրական թիւ 5 զբամատան վերելի յարկը:

Այս բոլորի կողքին կը թուի ազգային գործունէութեան եւ կը հմտանայ փիլիսոփայական գիտութիւններու ասպարէզին մէջ. տասնհինգ տարի մասնակցութիւն կը բերէ Հալեպի ՀԲԸ Միութեան Շրջանակային Յանձնաժողովին որպէս ատենապետ եւ Կրթական Յանձնախումբին՝ որպէս ատենապետի: Իր տանի խմբակական աշխատանք՝ ստանձնելով «Երկիր» պարբերականը «Միտք եւ Արուեստ» բաժինը, կը ստորագրէ հոգեբանական եւ մանկավարժական յօդուածներ, կը կատարէ հանրամատչելի դասախօսու-

թիւները կ'աշխատակցի «Մշակույթ» պարբերաթերթին և սուրիահայ «Գեղարդ» տարեգիրքին:

Գալիֆորնիայ «Կոլորն Սթեյթս» համալսարանէն կ'արժանանայ Դոկտոր փիլիսոփայութեան տիտղոսին, պաշտպանելով իր դոկտորական թեզը, «Արարական դասական փիլիսոփայութիւն»ը:

Հակառակ իր բազմազգադուածութեան, կ'ունենայ հեղինակային աշխատու գործունէութիւն, փիլիսոփայական իր գիտելիքներէն մաս հանելով հանրութեան, իր մատչելի ոճով եւ ժողովրդային մօտեցումով: Օգտաշատ եւ զեղեցիկ նախաձեռնութեամբ, իր իւրաքանչիւր երկասիրութիւնը կ'ունենայ իր արարական բաժինը, ուր իր գաղափարներն ու գիտութիւնը մատչելի կը դարձնէ արար հեղինակաւոր մտածողներու: Ասոր շնորհիւ, արար ակնաւոր Հոգեբաններ կ'արտայայտուին իր գիրքերուն մասին, իսկ սուրիական հեռատեսիլը իր մշակութային բաժնին մէջ (ՄԵՃԷԼԻԵ Սագգաֆա) կ'անդրադառնայ իր երկերուն: Իր առաջին գործը կը նուիրէ «Արարական դասական փիլիսոփայութեան», 1973, Պէյրութ, կատարելու համար երախտագիտական պարտք մը: Գիրքը կ'արժանանայ ջերմ ընդունելութեան, մանաւանդ արարական մտաւորական շրջանակէն: Անոր կը յաջորդէ «Կիններու հոգեբանութիւնը», Հայէպ, 1983, որ արդար հետաքրքրութիւն՝ կը ստեղծէ ինչպէս հայ իրական նաեւ արական սեռին մօտ: Ապա «Փիլիսոփայական փորձ» կանգնի և մահուան մասին՝ Հայէպ, 1986, յախտեանական եւ այժմէական նիւթերու նուիրուած հանրամատչելի վերլուծում մը: Վերջին գործն է «Յիշողութիւնը եւ իր խանգարումները», Հայէպ, 1992, օգտակար լուսարանութիւն մը ժողովուրդին: Հրատարակութեան պատրաստ երկասիրութիւններ էին «Մանուկին հոգեբանութիւնը» եւ «Երազներու հոգեբանական վերլուծումը»: Իր կարապի աշխատասիրութիւնը կ'ըլլայ «Լաւատեսութեան Փիլիսոփայութիւնը», յոյս եւ ոյժ ներշնչելու յուսահատներուն եւ ընկճուածներուն:

Դոկտ. Տ. Մուրատեան, իր հեղինակութիւններով միշտ ջանադիր եղած էր փիլիսոփայական խորթին հարցերը իրենց իրենց բարձրագիւր պատուանդանէն ու դիւրեմբունելի ոճով մատչելի դարձնել հասարակութեան, օգտակարը միացնելով հանելիին: Ահա՛ թէ՛ ինչու համար, առաջին հերթին «անմարսելի» կարծուած իր գիրքերը, արագ սպառուած կ'ունենային:

Մուրատեան Մշակութային նախարարութեան Հայէպի կեդրոնի տնօրէն Ուսուցչական Պէթրի Նասրը, անդրադառնալով Դոկտ. Տ. Մուրատեանի «Արարական դասական փիլիսոփայութիւն» երկին, կ'ըսէ. «Ան ջանացած է հայ ընթերցողը հաղորդակից դարձնել արարական հանճարեղ մտածողներուն աշխարհաշայտեցիկ, մտածողութեան, նորարարութեան եւ համաշխարհային մշակութային գանձարանէն, անոնց բերած թանկարժէք ներդրման: Ան կ'ըսած է յստակ կերպով ցոյց տալ արար քաղաքակրթութեան պատկերը՝ սկսելով արարական մշակութիւնէն, ապա անցնելով արարական փիլիսոփայութեան հասանքներուն: Իւրաքանչիւր արար փիլիսոփայի ուսումնասիրու-

թեան, անոր միտքերուն եւ գիտելոյն մէջ, շնչտած է անոնց առաջնահերթութիւնը այն եւրոպացիներուն վրայ, որոնք արարներուն գիւտերը օգտագործելով, վերագրած են իրենց անմին կամ նուազագոյնը օգտուած անոնց մէջ: Իրողութիւններ՝ որոնք հետագային յայտնաբերուեցան: Դոկտ. Մուրատեան, իր գրութեամբ կը հասնի ներկային, անկէ առնելով ապագայի տեսլականը եւ գիտնականի մը հաստատ արամարտութեամբ կը գրէ. «Արարները պատմութեան առջեւ կը կենան արար նժոյզի մը նման, հպարտ իրենց անցեալով, հաստատ եւ լուսաւոր՝ իրենց ապագայով»:

Արդարեւ, Դոկտ. Մուրատեան տուած է փաստացի բազմաթիւ տուեալներ, որոնք կը փաստեն թէ՛ արարներ նպաստած են միջազգային քաղաքակրթութեան, անոնք նոյնիսկ կանխած են եւրոպացիները, դարեր առաջ գիտական, գրական, բժշկագիտական, ուսողական, երաժշտական եւ փիլիսոփայական մարգերուն մէջ, ըլլալով առաջատարներ: Արարական փիլիսոփայութիւնը աւելի մարգիցանական և յառաջդիմական եղած է: Ապացոյց՝ արար նշանաւոր փիլիսոփաներու եւ գիտնականներու կենսոյն ու գործունէութիւնը, ինչպէս՝ էլ-Քենտրի, էլ-Պարապի, Իպոն-Մինա կամ Ալէօսինա, էլ-Չագալի, Իպոն Թուֆէյ, Իպոն Ռուշտ կամ Ալէյոյէ, էլ Ռագի Թարգմանած են Պղատոնի, Արիստոտէլի, Սոկրատի, Եպիկուրի եւ հին աշխարհի միւս մտածողներու եւ Աղեքսանդրիոյ դպրոցին բոլոր հեղինակներ, որոնց բնագիրները փճացուած էին օտար արշաւանքներու ժամանակ: Առանց արարներու թարգմանութեան, մանաւանդ սուրիացիներուն, այսօր քաղաքակրթ Յուրպան պիտի չունենար յունական դասական գործերը: Նոյնը կարելի է ըսել հայերէն թարգմանութեանց համար:

Արդ ժամանակներուն պատկանող բացառիկ գործ մըն է «Տասը Յօդուածներ Աշխի Մասին» արարերէն գիրքը, որ ակնարուտութեան մասին գրուած ամէնէն հին գիրքն է: Թուրանագէտ Մուհամմէտ Իպն Մուսան, կազմած է ժողովրդականացած գրահաշիխ առաջին գիրքը Ժ. դարուն: Սիլվիոս Ք. պապը, Եւրոպա ներմուծած է արարական թուականները: Անդրլիացի Ուիլիամ Հարվէյ (1578-1657) բացատրած էր արեան շրջանառութեան գրութիւնը, կէտ առ կէտ օգտագործելով արար բժշկագետ Իպն Ալն-Նաֆիսի (մահացած՝ 1288) գրութիւնը Չարլզ Տարլիինէն ինը դար առաջ: Այի Պրն էլ-Ապպաս խօսած է կենդանիներու տեսական եւ թափանցիկ փերման նիւթէն, իր միտքիք աշխարհաշայտեցող առած է արար Սուֆիդի-հերին: էլ-Պարապի կանխած է կենդանիներու տեսական լայնելիքը, իր «Լաւագոյն աշխարհի տեսութիւն»ով: Արար գիտնական էլ-Ռագիին հնարած է ծծմարային թթուն, աբլուր, թրոնալ ջուրը, ուսումնասիրած՝ «Մաղկախտը եւ կարմրախտը»: Արդի եւրոպական սրագրութիւնը հիմնուած է արարերէն ուղղագրութեան վրայ, եւ բազմաթիւ աշխուռ հայեր եւս օգտուած են

արքա մտածողութենէն: Միջնադարի հայ բժշկապետներ, — Մխիթար Հերացի, Ամիրտովլիսի եւ ուրիշներ, մեծապէս օգտագործած են արքա բժշկա-
գիտութեան գիտելիքներէն: Աւետիք Իսահակեան, իր հանրածանօթ պոէ-
ման, ստեղծած է հետեւողութեամբ արքա մեծ մտածող եւ աշաղուրկ նշա-
նաւոր բանաստեղծ Ապու Ալա—էլ—Մասարիին, բնակիչ սուրբական Մասար-
րա գիւղաքաղաքին, Հալէպ—Համա—Հոմս ճամբուն վրայ:

Դոկտ. Տ. Մուրատեանին երկրորդ գործն է «Կիներու Հոգեբանու-
թիւնը» ուսումնասիրութիւնը, որ կրթմ ընդունելութեան կ'արժանանայ երկ-
սեռ հասարակութեան կողմէ, գիրքը աւելի լաւ ըմբռնելու համար, յանուն
ընտանեկան ներդաշնակ կեանքի մը:

Դամասկոսի համալսարանի հոգեբանութեան ամպլոնի վարիչ Դոկտ.
Պաւտ Էլ Հաքիմ, գնահատելով գործը, թելադրած է որ ան արաբերէնի
թարգմանէ, որպէսզի արաբ ընթերցողներն այլ օգուտին առոր լուսարանու-
թիւններէն:

Դոկտ. Մուրատեանին յաջորդ գործը կ'ըլլայ «Փիլիսոփայական փորձ»
կեանքի եւ մահուան մասին» գիրքը: Արդարեւ, առաջին ակնարկով վախազ-
ղեցիկ խորագիր մը, որ սակայն հեղինակին գրելով դարձած է հանրամատ-
չելի նիւթ մը:

Դամասկոսի համալսարանի գրականութեան, փիլիսոփայութեան եւ
ընկերային գիտութեանց բաժանմունքի նախագահ **Դոկտ. Փրոֆ. Թայյէպ**
Թէզզիին, կ'ըլէ թէ իրապէս խորագրեւումի արժանի փորձ մըն է այս ու-
սումնասիրութիւնը, որ կը հանդիսանայ կոչ մը ի նպատակ կեանքին եւ հրա-
ւէր՝ համաշխարհային խաղաղութեան պահպանման:

Հայրենիքէն, փիլիսոփայական գիտութիւններու թեկնածու **Վլատիմիր**
Բաղդասարեան, կը թելադրէ գիրքը վերահրատարակել իրենց մօտ, քանի որ
մեծ հետաքրքրութիւն կը ներկայացնէ ընթերցող լայն շրջանակներու
համար:

Դոկտ. Տ. Մուրատեանին վերջնագրոյն մենագրութիւնն է «Երեւոյն-
թիւնը եւ իր խանգարումները», հանրամատչելի վերլուծումը այն կարեւոր
հարցերուն, որոնք մեծապէս կը հետաքրքրեն ընթերցասէր հասարակու-
թիւնը:

Երեւանի պետական համալսարանի հոգեբանութեան Ամպլոնի վարիչ՝
Դոկտ. Փրոֆ. Յովսէփ Թիւթիւնեան, իր ներածական խօսքով կ'ըլէ. «Նա,
չնորհակալ աշխատանք է կատարել, լայն հայ հասարակութեանը ներկայա-
ցնելով մարդկային ամենաբարձր եւ կարեւորագոյն հոգեբանական յատ-
կութիւններին մէջ՝ յիշողութիւնը եւ հիւանդագին վիճակները»:

Դոկտ. Տ. Մուրատեան, հասցուցած է գիտնական սերունդ մը իր գա-
ւակներէն՝ կրտսեր տղան **Տըքթ. Փրոֆ. Արշակ,** որ Սէն Լուի քաղաքին Սէն
Լուի համալսարանի գեղձարանութեան Ամպլոնին վարիչն է, — գրած է
«Երեւոյնի Ազդեցութիւնը Արեան Վրայ» ուսումնասիրութիւնը, հրա-
տարակուած UCLA համալսարանին կողմէ, Լոս Անճելըս, 1987ին: Իր

գուտար՝ ջլխտագէտ (նեւրոլոգ) **Տոքթորա Մարալ,** լոյս ընծայած է
ձլլախտաբանական երեւոյթները բնական ձեւերու մէջ շրջանին (Նիւ Եորք,
1986) գիտական գործը: Անդրանիկ տղան **Ենովքը,** ունի աղիքներու մշակ-
ման աշխատանոց մը, Նիւ Ճըրզի:

Բանի մը տող զոկտորին եղբայրներուն մասին: Միջինի եղբայրն էր
քաղ հռետոր, ներհուն մտաւորական եւ Հալէպի Մէլատանի (Նոր Գիւղ)
կիլիկեան վարժարանի տնօրէն՝ հանրածանօթ Հրանդ Մուրատ Ուսում-
նաստիչ երիտասարդ, ՅՅական թուականներուն, յաջողած էր ներգաղթել
Հայաստան, շնորհիւ հայ մշակոյթի դեսպան Արշակ Չօպանեանին: Երե-
ւանի մէջ կը հետեւի Համալսարանի ընկերային եւ քաղաքական գիտու-
թեանց դասընթացներուն: Բայց խիզախ միտք, քննադատած է իրեն խորթ
թուող կարգ մը երեւոյթները, որոնք պատճառ դարձած են զինք «նստե-
ցիկու» Երեւանի «Ճաշարանը» (քանտը), ուր... ընկերակից կ'ունենայ Վիեն-
նայի Միլիթարեան Միարանութենէն յայտնի բանասէր՝ Հայր Ներսէս Ակին-
եանը: 1935ին, նոյնպէս շնորհիւ Արշակ Չօպանեանին, կը վերադառնայ Հա-
լէպ, ուր կ'ունենայ ընկերային եւ կրթական գործունէութիւն, կ'ամուս-
նանայ Վենետիկի Միլիթարեան հայրերէն Հայր Եփրեմ Տէր Ղազարեանի
քրոջ հետ եւ որպէս երախտագիտական պարտք, կը հրատարակէ «Կեանքի
Մէջ» բանաստեղծական հաւաքածոն, ձօնուած Արշակ Չօպանեանին: Երէջ
եղբայրն էր Երուանդ Մուրատեան, նկարող եւ գծագրիչ Հայէպի քաղա-
քապետութեան մէջ: Դոկտ. Մուրատեանին աներորդին կ'ըլլայ Պէլլուսթի
Փարակէօզեան Հաստատութեան սիրուած բժիշկներէն, «Ջարթօք» իւ Ս.
Փրիկիչ հիւանդանոցի ամսաթերթին աշխատակից Տոքթ. Բիւզանդ Հայլաճ-
եան:

Սեւանի Իմաստասիրութեան կաճառէն (Երեւան), որուն պատուոյ նա-
խագահն է Գիտական Ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումեան,
իւր նախագահը՝ Ակադեմիկոս Գէորգ Բրուտեան, — Դոկտ. Տ. Մուրատեան
կը ստանայ 27 Փետրուար 1991 թուակիր հրաւէր մը, մաս կազմելու կաճա-
ռի փաստարկման հետազոտութեան ինստիտուտի տնօրէններու Միջազ-
գային խորհուրդին:

1 Սեպտ. 1993 թուակիր նամակով, Ակադեմիկոսը կը տեղեկացնէ թէ
1987ին, Սեւանի մէջ հիմնադրուած «Իմաստասիրութեան կաճառը»
վերակոչուած է «Հայոց Փիլիսոփայական Ակադեմիա», որուն հայ անդամ-
ներուն կողքին, մաս կը կազմեն նաեւ 12 օտարազգի փիլիսոփաներ: Անոր
գլխաւոր առաջադրութիւնը պիտի ըլլայ իր շուրջ համախմբել, զանազան
երկիրներու մէջ գտնուող փիլաքահայ փիլիսոփաները, որպէսզի հայրենիք—
սփիւտք համատեղ գործակցութեամբ, հայ իմաստասիրական միտքը արժա-
նանայ միջազգային ճանաչումի:

Վերջերս, Յինլանտայի փիլիսոփայութեան կաճառէն (Հելսինքի), հրա-
ւիր ստացած էր մօտերս տեղի ունենալիք փիլիսոփաներու միջազգային հա-
մադուումարին մասնակցելու դասախօսութեամբ մը, նուիրուած արաբական

դասական փիլիսոփայության:

Դոկտ. Տ. Մուրատեան, իր փիլիսոփայական արդար վաստակով, լծուած էր Հարստացնելու հայ փիլիսոփայական գրականութեան վտիտ գանձարանը, այսինքն՝ սփիւռքեան իմաստասիրական անապատի մէջ կազմած էր, փիլիսոփայական ովասիս մը:

Մեր առջադրանքին եւ ծանօթացման շնորհիւ, վերջին օրերուն, Դոկտ. Տ. Մուրատեան ձեռնարկած էր ուսումնասիրելու, մոռցուած իմաստասէր Հայկազուն Ս. Տէտեհեանի կեանքը (ծնած Ալլիստան 1884 — մահացած Աղեքսանդրիա 1943), որ հիմնած էր թաքնադիտական վարժարան մը՝ Թղթակցութեամբ մը ունէր իմաստասիրական հարուստ ժառանգութիւն մը:

Իր մահուանէ քանի մը օր առաջ, ուրախութեամբ ինծի կը յայտնէր թէ, կը պատրաստուի Երեւան մեկնել, մասնակցելու համար հայոց փիլիսոփայական Ակադեմիայի տնօրէններու ժողովին:

Դոկտ. Տ. Մուրատեանին կարապի երգը կ'ըլլայ «Լաւատեսութեան փիլիսոփայութիւնը» երկը, որուն վրայ կ'աշխատէր քանի մը տարիներէ ի վեր: Վերջին գիշերը, առաւօտեան ժամը երկուքին, սրբազրեյէ ետք ձեռագիրին վերջին էջերը, լաւատեսութեամբ մտած էր անկողին, առաւօտ կանուխ շարունակելու համար իր սիրական գործը: Սակայն, խորհուրդ մարդկան՝ կամք Աստուծոյ, հազիւ քանի մը ժամ ետք, սիրտի անակնկալ տագնապ մը վերջ կու տայ մեր քարեկամին գործունեայ ու բեղմնաւոր կեանքին: Արդարեւ, փիլիսոփայական վախճան մը, գրիչը ձեռքին, ինք կը մեկնի այս անցաւոր աշխարհէն, սակայն անմոռանալի պիտի մնան իր միտքին պտուղները՝ փիլիսոփայական երկերը:

Հողը թեթեւ գայ եւ բարի յիշատակդ անմոռաց, լաւատես փիլիսոփայ Դոկտ. Տրդատ Մուրատեան:

«Խօսնակ», Նոյեմբեր 1995

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԻՆ ՋՈՒԹԱԿՐՆԵՆՄԻ ՍԻՒՔՔԱՐԻ

Բնիկ սերաստապոյցի, շրջանաւարտ տեղւոյն երաժշտանոցէն եւ բանակի նախկին օդաչու, ռուս տաղանդաւոր ջութակահար Միշէլ Պորիզեմբօ, Պոսէն գալով վերջնականապէս հաստատուած էր Հայէպ, ուր պիտի հասցնէր իր կեանքին ողջ տեւողութեան որակաւոր ջութակահարներու փառանք մը: Գերեզմանները մասնաւոր դասեր կու տար Պոսեան Գիւպի իր բնակարանին մէջ, պանդոկ էլիանի դիմաց, իսկ գիշերները կը նուագէր Իւնիոն Ֆրանսէզի մէջ, պանդոկ Պարոնի հանդիպակաց կողմը, դաշնակի ընկերակցութեամբ իր հայրենակից Միշէլ Չեքերտֆի:

Հայէպի Ելեմտական նախարարութեան երիտասարդ պաշտօնեաներէն Լուիֆի Սիւքքարի, շրջանաւարտ Անտիօքի Ֆրէյր Մարիսթեներու Գոյէճէն, իր յընթեամբ, ուշիմութեամբ եւ ձեռներէցութեան շնորհիւ, առաջին մէկ օրէն ուշադրութիւնը գրաւած էր Մայիէի տնօրէն Երուանդ ԽՓ. Չօրեանի, որ զայն առած էր իր հոգածութեան տակ: Երբեմն կատակելով, ան կ'ըսէր Լուիֆիին. «Գիտե՛ս, տղա՛ս, դուն օր մը Մայիէի ամէնէն բարձր պաշտօնեան պիտի ըլլաս»: Եւ իրօք ալ, իրականացաւ մեծ ելեմտագէտին նախատեսութիւնը: Լուիֆի Սիւքքարին ապագային դարձաւ Մայիէի կեդրոնական Գանձատան (Դամասկոս) տնօրէնը, բարձր ու պատասխանատու պաշտօն մը, զոր ան վարեց ձեռնհասօրէն, բազմաթիւ տարիներ: Երաժշտութեան ջերմ սիրահար էր Լուիֆիին, կը նուագէր բաւականին՝ ջութակ, դասեր ստնկելով Պորիզեմբօյէն: Յաճախ կ'այցեիէր անոր, ունկնդրելու համար անոր մտղական ճպտոր, իր հետ տանելով իր առջինեկ երկու մանուկները՝ Տիան ու Նեճմին:

Այս ձեւով փոքրիկները մեծցան երաժշտական մթնոլորտի մը մէջ եւ երբ անոնք հազիւ 5-6 տարեկան էին, սկսան ջութակի դասերուն՝ մայնսթրույնի մօտ: Տղայոց երաժշտական ըմբռնողութիւնը բացառիկ էր, մանաւանդ թիւ երկուքին՝ Նեճմինին: Միաժամանակ անոնք դպրոց կը յաճախէին, անհրաժեշտ գիտելիքներ սորվելու համար: Սակայն դպրոցական գրասեղաններ անոնց համար թմրուկի տեղ կը բռնէին եւ աշակերտներով կը կազմա-

կիրպէին Ֆանֆարի տողանցք մը. անանկ որ անոնց բարի վարժապետը՝ ռաթէզ Իպրահիմ, օր մը իր պարտականութիւնը սեպնց ներկայանալ Պրն-Միւքբարիին ու ի խորոց սրտի յայտնելու համար որ տղաքը ուսման մէջ ապագայ չէին խոստանար եւ լաւ պիտի ըլլար գանոնք արհեստի մը դէնը... Սակայն Պրն. Լուիթֆին, իր սովորական բարի ժպիտով անոր պատասխաննց, թէ՛ տղաքը արդէն ընտրած էին իրենց պրիեստը՝ երաժշտութիւնը, եւ թէ՛ Աստուծոյ շնորհիւ անոնք ապագային պիտի դառնային երաժիշտներ:

Մայնսթրո Պորիգենքոյի, Հայէպի Աւստրիական Հիւպատոս Փրոֆ. Վայսելի, միաժամանակ կարող դաշնակահար եւ բօխչի Ռուդեր Ծնպեճեանի բարերար միջամտութեան շնորհիւ պետական պատասխանատու շրջանակներու մօտ, Տիւսին ու Նեմմինի երաժշտական տաղանդը ուշադրութիւնը գրաւեց կրթական Նախարարութեան, որ բարեղէպ որոշումով մը, իր պատրաստակամութիւնը յայտնեց տղաքը դրկել Փարիզի Ազգային Երաժշտանոցը՝ զարգացնելու համար վաղ տարիքէն իրենց երաժշտական ձիրքերը:

Բարեգործականի Երջանակային Վարչութեան պետ ԲԺ. Ռ. Ծնպեճեանի նախաձեռնութեամբ, իրենց վերջին նուագահանդէսը տալով Հայէպի ՀԲԸ Միութեան հանդիսարահին մէջ, 1951ին, 11–12 տարեկան հասակին, Տիւս եւ Նեմմին ըսնեցին Լոյս Քաղաքին՝ Փարիզի ճամբան:

Ետո խիստ էին Ազգային Երաժշտանոցի ընդունելութեան պայմանները եւ սակաւթիւ՝ տրամադրելի տեղերը Այս առթիւ Երաժշտանոցի ջութակի դասատու Փրոֆ. Ռոյան Եարմին նամակով մը կը գրէր Միջին Պորիգենքոյին. «Սիրելի Պաշտօնակիր, թոյլատրեցէք ձեզի գրել այս նամակս, յայտնելու համար զարմանքս որ Հայէպի պէս տեղ մը, այնքան հեռու երաժշտական կեդրոններէ, կը գտնուի ջութակի ուսուցիչ մը, որ կըրցած է ուսուցանել իր պատանի աշակերտին այնքան ճշգրտօրէն ջութակի նրբին արուեստը եւ որ սակաւթիւներէն եղաւ յաջողածներէն մուտքի քննութեանց մէջ: Ըսեմ անմիջապէս որ հոս, Փարիզի մէջ, պատանիներ որակաւոր դաստիարակներու հոգածութեան տակ կը պատրաստուին, տարիներու ընթացքին, յաջիշահարելու համար ընդունելութեան դժուարին պայմանները: Պատանիները յուսախար չըրին իրենց անձնուէր ուսուցիչը, համակիրները եւ կրթական Նախարարութիւնը: Նեմմին շրջանաւարտ էլաւ Ազգային Երաժշտանոցին ստանալով 1958ին, 18 տարեկանին, առաջին մրցանակը ջութակի, իսկ Տիւսն նոյնպէս, առաջնութեամբ՝ սոլիստի, արմոնիի, քոմպոզիտի եւ քոմպոզիտի մէջ:

Պատանիները յուսախար չըրին իրենց անձնուէր ուսուցիչը, համակիրները եւ կրթական Նախարարութիւնը: Նեմմին շրջանաւարտ էլաւ Ազգային Երաժշտանոցին ստանալով 1958ին, 18 տարեկանին, առաջին մրցանակը ջութակի, իսկ Տիւսն նոյնպէս, առաջնութեամբ՝ սոլիստի, արմոնիի, քոմպոզիտի եւ քոմպոզիտի մէջ:

Թանձին Նեմմինին, գեղարուեստական աշխարհի երկնակամարին վրայ ծնած էր արար վիրթիոզ մը:

Երաժշտապետ Պորիգենքոյի եւ Բօխչի Ռ. Ծնպեճեանի բարեխօսութեանց շնորհիւ Մովսեսական հիւպատոս Գէորգ Զիկերխաննանի եւ Ազգային Մշակութային Նախարարութեան մօտ, Սուրիական բարեխնամ կառավարութիւնը հոս այ օրոշութեան հասաւ անոր, գայն դրկելով Մոսկուա, կատարելագործուելու համար միջազգային համաբաւար ջութակահար եւ յայտնի

մանկավարժ Տաւիտ Օյադրախի մօտ, անմիջական հսկողութեան տակ վաստակաւոր դասատու Փրոֆ. Պորիս Վլաստիսթովիչ Պիէլինսքի: Ուսման տարիներու վերջաւորութեան, իր տեղեկագրին մէջ Օյադրախ կը գրէր իր սանին մասին. «Նեմմի աչքի կը զարնէ իր կատարողական բարձր արուեստով եւ թէքնիքով, երաժշտական խոր ըմբռնողութեամբ, զգայնութեամբ եւ սրանչելի յիշողութեամբ. ապագայ վիրթիոզի բոլոր տուեալներն ունի ան եւ պիտի խօսուի իր մասին»:

Նեմմինի Մոսկուա կեցութեան շրջանին, գիտական առաջնութեամբ մը հոն այցելեց ԲԺ. Ռ. Ծնպեճեան: Առիթէն օգտուելով, ան միջամտեց Հայկական հիւպատոսին մօտ, որուն ֆանքերուն շնորհիւ Նեմմին ելալի ունեցաւ Մոսկուայի Ռատիոկայանի միջազգային բաժինէն, որուն ընթացքին խօսնակը անդրադարձաւ անոր կենսագրութեան ու տաղանդին մասին:

Ու ահաւասիկ՝ «յանդուգն երիտասարդը տրապէզին վրայ», Նեմմին միջազգային մրցանքներու մէջ, միս–մինակը, առանց որեւէ թիւթական ու բարոյական աջակցութեան, ապաւինելով լոկ իր տաղանդին:

1963ին, Պրիւքսելի մէջ տեղի կ'ունենայ Պելիքայի էլիզապէթ Թագուհիի անուան երաժշտական միջազգային մրցանքը: Նեմմին կը բերէ իր մասնակցութիւնը, ի յայտ բերելով փայլուն նուագածութիւն: Թեթեւեղ երաժշտական քննադատներ միահամուս կը նախատեսեն առաջին մրցանակի համար Նեմմի Միւքբարին, ցարդ անձնօթ ջութակահարը. սակայն միշտ չէ որ միջազգային դաստակալի անդամներ կը ծառային արդարութեան աստօղյն, այլ անոնց սրտին թիւերը ակելի զգայուն եւ մամոնային ու քաղաքական նրբին հաշիւներու: Նեմմին կը շնորհէ... Յրդ տեղը Նոյն այս մրցումին, Հայաստանէն յայտնի ջութակահար Ժան Տէր Մերկերեան կը դատուի... Յրդ:

Նեմմի 1965ին կը մասնակցի Մարկրիթ Լոն–Ժազ Թիպոլի անուան մրցանքին, Փարիզ: Նեմմին կը գրաւէ Երդ տեղը: 1967ի Մայիսին, Նիւ Եորքի մէջ կը կատարուի ջութակի միջազգային մրցում մը, կազմակերպութեամբ Լրմանթիթ հաստատութեան: Նեմմին կը ստանայ բազմաթիւ մրցակիցներու մէջ 2րդ մրցանակը. առաջինը կը յատկացուի Նիւ Եորքի ջութակահար հրեայի մը: Մեծ յաջողութիւն մըն էր Նեմմինի համար այս պատուաւոր արդիւնքը, հրէական դրամատիքական միջնաբերդին մէջ: Այս առթիւ ամերիկացի յայտնի վիճագործ Ֆրանց Միլլէր Լոս Անձելլեսին իր թանկարժէք ջութակներէն մին կը նուիրէ Նեմմինին, հետեւեալ ձօնով. «Թող ջութակի մեծած բայց միշտ կենդանի փայտիկները լեզու առնեն ձեր ճարտար մատներուն տակ»:

Տանք նաեւ արդար գնահատանքի բացառիկ պարագայ մը եւս: Նեմմին նուագահանդէս մը կու տայ Փարիզ, Քաղաքապետական թատրոնի սրահին մէջ, 15 Մարտ 1971ին: Տոմսերը շաբաթներ առաջ պակասած են: Երեկոյթին դիւղը, անանթօթ տիկին մը ներկայանալով մուտքի տոմս մը կը պահանջէ, լսելով թէ՛ այս մենակատարութեան համար յատկապէս Լոզաննէն հոս եկած

է: Այս պարագան կը տեղեկացնեն Նեմմին, որ գալով Հիւրամեծարութեանը ներս կ'առաջնորդէ տիկինը: Երեկոյթին վերջաւորութեան, շնորհաւորողներէն կ'ըլլայ նաեւ անծանօթ տիկինը, որ կ'ըսէ. «Մեծապէս Հիւրացած եմ ձեր վիրթիպութեամբ եւ ջերմապէս կը շնորհաւորեմ ձեզ. սակայն, թող տուէք դիտել տալ թէ՛ ձեր ջուրհանքը անյարմար է ձեր տաղանդին: Եթէ մըն է որ ձեզի պէս բարձրորակ ջուրհանքար մը չունի իրեն արժանի գործիք մը»: Ապա իր այցեքարտը տալով, կ'աւելցնէ. «Ձեզի համար վերապահած եմ անակնկալ մը. հաճեցէք հանդիպիլ ինձի»: Այցեքարտին վրայ կը կարդացուէր հետեւեալը.— Կոմսուհի Մէյսուր Օպերմէր, Լոզան:

Տիկինը միջազգային չափանիշով մեկենասուհի մը, մեծ երաժշտասէր մը եւ յայտնի բարերարուհի մըն էր միանգամայն:

Նշանակուած օրը, Նեմմին կը ներկայանայ Կոմսուհի Մէյսուրին: Նոյն օրը տեղի կ'ունենայ հրապարակային անուրջ մը. այլ թանկագին առարկաներու կարգին, կը վաճառուէր հունգարացի համբաւաւոր ջուրհանքար ժողգէֆ Յիլկեթթիի նշանաւոր ջուրհանք՝ Կուռուներիուս, 1600 թուականի: Տիկինը վճարելով անուրդին ամէնէն բարձր գինը՝ 60 հազար սթերլինի պակասով գումարը, տէր կը դառնայ թանկարժէք ջուրհանքին ու գայն նուիրելով Նեմմին, կ'ըսէ անոր. «Ահաւասիկ ձեր տաղանդին արժանի ջուրհանք մը, հմայելու համար աշխարհը»:

Միջազգային նուագահանդէսներ եւ մենակատարումներ կը յաջորդեն իրարու: 1965ին, մենակատար Համամաթի (Թուրուզ) եւ 1967ին, Պալապէթի երաժշտական փառատօններուն, 1971ին Տիվոնի (Ֆրանսա) եւ Մոնրէշոյի (Զուիցերիա) Ֆեսթիվալներուն: Երաժշտական թուռնէներ Ֆրանսայի մեծ քաղաքներուն մէջ, Գանատա, Զուիցերիա, Հիւսիսային Ափրիկէ, եւ այլն: Իսկ անոր պարերական նուագահանդէսները՝ Դամասկոս, Հալէպ եւ Պէլլուսթ, երաժշտական երեւոյթներ են:

Ֆրանսական առածը կ'ըսէ. «Այնպիսի հօր, այսպիսի գաւազ»: Արդարեւ, Լուիֆֆի Միւքարին չորս մանկերն ալ՝ Տիա, Նեմմի, Հիլմի (երկրաչափ), Փայզօ (երկրաբան) իրենց հօր օրինակով դարձած են ազգին պատիւ բերող անհատներ:

Այժմ Նեմմի Միւքարի՝ հոգեւոր ժառանգորդը մտղական ճպտոյի տէր տաղանդաւոր ջուրհանքար Միշէլ Պորիգենքոյի, ջուրհանի դասատու է Փարիզի Ազգային Երաժշտանոցին մէջ, էջով Նորմալ Տը Միւզիք Տը Փարիի, Լիոնի եւ Պոսթրի երաժշտանոցներուն մէջ, միաժամանակ տալով պարբերական նուագահանդէսներ եւ որպէս մենակատար իր մասնակցութիւնը բերելով քաղաքացիական օրհանգրվաններու, նաեւ որպէս մանկավարժ՝ գրաւած է աչքառու դիրք մը եւ իր աշակերտները աչքի կը գարնեն նոյնպէս առաջին դիրքերու վրայ:

1977ի Նոյեմբեր ամսուան ընթացքին, Նեմմին տուաւ, Ֆրանսայի դիտար քաղաքներուն մէջ, ռեսիդաններու մարաթոն շարք մը, թիւով տասնհինգ, որոնցմէ վերջինը՝ Փարիզի Իւնեսքոյի հանդիսարահին մէջ, 30 Նոյեմ-

բերին, միջազգային ընտրեալ հասարակութեան մը ներկայութեան:

Ան հրամցուց, մեծ վիրթիպներու յատուկ, դժուարին ու փորձարարաւոր յայտագիր մը՝ կազմուած Պախի, Եսայիի եւ Փականինիի ջուրհանքի մենանուագներէն, արժանանալով ունկնդիրներուն եւ մամուլին ջերմապէս գնահատանքին:

1977ի Արեւմտեան Մ. Մունդի տունին առթիւ, Դեկտեմբեր 25ի երեկոյան, Սոնթէ Քարոյի ռատիոկայանին խօսնակ տեսակցութիւն մը կազմակերպեց Նեմմին հետ, որուն վերջաւորութեան Հալէպի պարծանք արուեստագէտը ունեցաւ հմայել երոյթ մը, նուագելով Մարագատէն եւ Ռաֆէլէն կտորներ:

Ներկայ տարուան Յունիս ամսուն, Նեմմին տուաւ երկու ռեսիդալ, առաջինը՝ Փարիզի Եան գէլիզի թատրոնին, իսկ երկրորդը՝ Լիոնի Թամբլ տիւ Եանտի հանդիսարահներուն մէջ, բացառիկ յաջողութեամբ, յայտագրի վրայ Պրահմի բոններթոն, էօժէն Եսայիի երեք գործերը, Պախի Սոնատ Ան Տօ մաժէօրը, Փականինիի 24րդ Քարրիսը: Այս առթիւ, փարիզեան «Լը Ծիկարօ» թերթը (22 Յունիս 1978) կ'արտայայտուի «Մտղական ջուրհանք» մասին, գայն դասելով աշխարհի յաւազոյններու կարգին, իսկ «Լը Ժուռնալ Տիւ Լիոն» Մայիս—Յունիս 1978ի թիւով կը դրուատէ «Նեմմին հանճարը»: Բազմալեզու համաշխարհային «Վոթըր Պոթէ» ամսագրերը պատկերազարդ եւ հիացիկ յօդուած մը նուիրած է Հալէպեան տաղանդին, 1978ի Սեպտեմբերին:

Հոս սրտի պարտք է արձանագրել որ Նեմմին զեղարուեստական կազմաւորման մէջ իր զգալի բաժինը բերած է Հայեպահայ ժողովուրդի բժիշկ եւ հասարակական ու մշակութային անխնձ գործիչ եւ արուեստագէտ Ռոպեր Զեպեճեան, որ առջի մէկ օրէն դարձած է անոր զօրավիզ եւ Նեմմին իսկ բառերով, «Հոգեւոր Հայրը»:

Տիան նոյնպէս փրոֆեսէօր է Փարիզի Ազգային Երաժշտանոցին մէջ, երաժշտական տեսական եւ գործնական դիտելիքներու համար: Ունի հեղինակութիւններ եւ արձանագրութիւններ (անընթացաբարձման):

Արարական աշխարհի ջուրհանքի նընըմ^(*) Նեմմի Միւքարիին կը մտղեմեք նորանոր յաջողութիւններ, իսկ վաստակաւոր Լուիֆֆի Միւքարիին՝ երկար եւ քաջառողջ տարիներ:

«Գեղարդ» Սուրիանայ Տարեգիրք,
1976–1978 Միացեալ Թիւ. Բ. Գիրք

*1 Արարեմ քան՝ որ կը նշանակէ աստղ:

ՄԻՍՈՆ ՄԻՍՈՆԵԱՆ (ԾՆՆԴԵԱՆ 84-ԱՄԵԱԿ)
ԵՒ ԱՅՆԹԱՊՅԻ ԲՈՅՐ ՖԻԼՈՍԵՆ

1926—27 դպրոցական տարեշրջանին Հայկզի Այնթապու Կրթասիրաց Վարժարանի մէջ, ունեցանք երեք նորեկ աշակերտներ՝ Միմոնեան երեք եղբայրներ՝ Միմոն, Գրիգոր եւ Յարութիւն: Անդրանիկը՝ Միմոն, դարձաւ Յրդ կարգի իմ դասընկերս: Կարծաճապակ, միջին գիրութեամբ, խելացի եւ հետաքրքրի աչքերով, սեւ դանդուր խիտ մազերով, թրքախառն հայերէնով, կու գար Սուլէյմանիէ թաղամասի հայկական հիւղաւանէն եւ Քեմփի լատինաց վարժարանէն, ուր պաշտօնական լեզուն թրքերէնն էր: Կը սորվէին անշուշտ լատիներէն, կ'երգէին զոյգ լեզուներով երգեր: Առաջին օրէն իրարու համակերպանք եւ դարձանք լաւ բարեկամներ: Ան սկսաւ պատմել իրենց ընտանիքին կեանքը: Հայրը՝ ջաղացական Օվէն (Յովհաննէս), բնիկ սասունցի, Կերմաւ գիւղէն, փախած էր իր ծննդավայրէն, քանի որ արիւնարբու քիւրտ աշխրպետ Պըշարբէ Մալլի, նահատակած էր իր Պետրոս եղբայրը, որ չէր յայտնած հայ ֆետայիններուն թաքստոցը: 20 տարիներէ ի վեր հաստատուած էր Այնթապ, ուրիշ թաղամասիւ պէքէպ սասունցիներու պէս: Միակ նպատակն էր վրիժառութիւնը: Սակայն երբ լսեց որ Անդրանիկ իր ընկերներով սպաննած էր աւագակապետը, ամուսնացաւ այնթապցի Մէնուշին հետ եւ ունեցաւ երեք մանչեր:

1921ին, 16 հազար այնթապահայերու հետ, բռնահանուեցան զէպի Հայկզի փրկարար ամբ:

Հայր Օվէն, հոս եւս սկսած էր շարունակել ջաղացականի իր գործը, մինչեւ այն օրը, երբ անկուշտ թուրքերը խափանեցին պատմական Քուլք գետակին ջուրերուն հոսիլը գէպի Հայկզի: Այսօր եւս, թուրքը կը փորձէ նոյնը ընել հայկական Ծփրատ գետին եւ Տիգրիսի ջուրերուն համար, քաջալերուած իմփերիպիստական պետութիւններէ, որոնց շնորհիւ տիրացաւ ժամանակաորապէս սուրիական Սանճաքին եւ հիւսիսային Կիպրոսին: Մեծապետական բորենիները նոյնը կ'ընեն հայկական Արցախը պոկելով՝ նուէր տալու վաշկատուն ազերիին, վասն նաՔթի:

Սակայն, Հայր Օվէն, աւելի մեծ վիշտ մը ունէր, աղքատութեան եւ

անգործութեան պատճառաւ, հաւանական էր, որ իր երեք մանչերը լատին դառնային, գրիւած հայ դպրոցէն: Ակնարկելով իր «լատինական դպրոցին», Միմոնեան կ'ըսէ դիպուկ կերպով. «Ես ի՞նչ աչքիմ, արդէն կորսուած էի, լատինացած, օտարացած, գրեթէ քրիստոնեայ... թուրք մը դարձած»:

Դրուագ մը այս առթիւ: Դպրոցէն լատին վարդապետներէն լատիով Միմոնին բացառիկ ուշիմութիւնը, Սեն Լուի հիւանդանոցին «Մեր Սիւփերիոր»ը՝ զքսուհի Միմոնուհի, կը փափաքի որդեգրել այս ուշիմ եւ խոստումնալից պատանին, հոգայ անոր բժշկական բարձրագոյն ուսման եւ կրթութեան ամէն տեսակ ծախսերը Փարիզի լաւագոյն բժշկական համարսարանին մէջ, ապագային զայն դարձնելու համար Սեն Լուի հիւանդանոցի թշկպպետ:

Դէպի օտարացում տանող «հրապուրիչ այս ծրագրին ղէմ առաջին ծառայողը կ'ըլլայ անգործ ջաղացական Օվէն, լսելով «չեղի—չըլլար»։ նաեւ լոյր սասուեցիներն ու մշեցիները եւ կ'արձակեն իրենց վերջնագիրը (վեթոն)։ «Ձեռք թողկի»:

Իրենց տանիքէ քահանան, Այնթապի հայոց հերոսամարտի Ղեւոնդ Երէց՝ արմաշական Տ. Ներսէս Ա. ՔՏՆյ. Թաւուզեանն էր: Օր մը, զայրացած Օվէն, կը պոռայ քահանային երեսին. «Լատիններ տարան զիմ տղէն», որ թարգմանի «լատինները տարին իմ տղան՝ Միմոնը»: Յաջորդ այցելութեան, Տէր Ներսէս կը հրահանգէ Օվէնին. «Գնա՛ իրաւարան Քէօրճէման Յակոբ Էֆենտիին զրասենեակը, տղադ հետդ տար»: Իրաւարանը (յետագային Գարամանուկեան) հայրը կ'ըլլայ զօրավար Արամին եւ մեծ հայրը Հէնայազահին զիւանապետ եւ խորհրդական (աթմ նախարար) Ծահէն Լեւոնի Գարամանուկեանին: Անոր յանձնարարականին վրայ, Միմոնեան երեք եղբայրները կը սկսին յաճախել Կրթասիրաց վարժարան: Միմոն կ'ըսէր. «Մեծ էր տարբերութիւնը երկու դպրոցներուն միջեւ, անօրպետի մը տարածութեամբ: Այստեղ հայերէն էին դասաւանդութիւնները, քրքրութեմ դէպի հայոթիւն ամառ կամուրջ մըն էր այս վարժարանը՝ Կրթասիրացը, որ հասցոց հսկայ սերունդ մը: Հայակերտման հնոց դարձաւ: Ան Կիլիկիան հոգեպէս կամրջօց Հայաստանին»:

Այսպէս, մարմնի բժիշկ՝ վիրաբուժապետ չղարձաւ Միմոն, սակայն որպէս «հոգեբու բժիշկ», հայրենասիրութիւն սրկից հազարաւոր հայորդիներուն:

Հայագիտական եւ պատմական ընթերցասիրութիւնն ու շարադրութեան պահէրը զիս ու Միմոնը մտերիմ բարեկամներ դարձուցած էին: Յայտնի էր որ ան ապագային պիտի դառնար բանասէր եւ գրագէտ, անշուշտ թէ՛ հուշար իշխար յարմար հոգի վրայ: Իր մագերէ կտորէ կու տար պատմաբանի տեսքով, Պերպիեր Սարգիսին (Մապուեճեան) մօտ: Արդէն ընարած էր գրական ծածկանուն մը՝ Նումիս, Միմոն անուրը կարդալով հակառակ կողմէն: Ան երբեմն հետը դպրոց կը բերէր նոր մատիտ, գրիչ, թուղթ եւ շաքարեղէն: Կ'ըսէր թէ երկրորդ մայրիկ մը ունէր, իր մօրաքոյրը՝ Գոյր

Ֆիրմէն, որ Շրվալիէ հիւանդանոցին մեծաւորուհին էր: Տեղացիները ձէմե-
լիէ թաղամասին մէջ գտնուող Փրանսական Սեն Լուի հիւանդանոցը, սովոր-
ութիւն ունէին կոչելու իր բժշկապետներուն անուններով, այսպէս Շրվա-
լիէն, Ֆրիւշոյի հիւանդանոց, իսկ հիւղականին բնակչութեան համար, ան
Ալինթապցի Մասէօրին հիւանդանոցն էր: Օր մը, զիս միասին տարաւ Քոյր
Ֆիրմէնին մօտ, սիրունաստես, համակրելի, վառվառուն աչքերով, համակ
շարժում մասէօր մըն էր Սիմոնին մօրաբոլորը: Մեզ լիացուց անուշեղէննե-
րով ու պոնպոններով, տուաւ գրեթէ կանաչ պիտոքներ եւ թելադրեց որ դա-
սարանին առաջիններէն ըլլանք:

Մեր ուսուցիչներն էին. առաջին տնօրէն՝ Արրահամ Մէրայտարեան
(յառնի թնոր Յովսէփին եւ լուսանկարիչ Զաւէնին հայրը), երկրորդ տնօ-
րէն՝ Գրիգոր Էքմեքեան (իրաւարան, Տէր Գալուստ Ա. Քհնյի հայրը), եր-
րորդ տնօրէն՝ Գրիգոր Պողարեան (մանկավարժ, 28 տարի տնօրէն, Տէր Գա-
րեգին Ա. Քհնյի որդին, մեծ ձեռագրագէտ Նորայր Արք.ի եղբայրը, հա-
մալսարանի դասախօս կենսաբան Գրիգորեանին հայրը), Տիրգրան Մե-
րոպեան (խմբավար Մեքրոպին, օմերայի թնոր Գարեգին եւ աստուծոց
Սիրվարդին հայրը), Նիլա Պապանեան (յետադային քահանայ), Միհրան
Գապագեան (բիւիագէտ) եւ ուրիշներ:

1929—30 տարեշրջանին, ես ու Սիմոնը փայլուն կերպով շրջանաւարտ
եղանք Կրթասիրացէն, իր Գրիգոր եղբայրը՝ 1932—33ին, իսկ Յարութիւնը՝
1935—36ին:

1932ին, Կրթասիրաց վարժարանէն Անթիլիասի Դպրեվանքը մեկնեցան՝
Սիմոն Սիմոնեան, Պարգեւ Պարսուեան, Արմէն Տէր Պետրոսեան, Լեւոն
Պերդուտեան, Լեւոն Պէրեարեան, Սարգիս Եսփուճեան, Կարապետ Սա-
պուճեան: Յետագային բոլորն ալ դարձան վաստակաւոր ուժեր ազգային
ծառայութեան մէջ:

Ուսուցչապետ Գրիգոր Պողարեան, Սիմոնին համար արդարօրէն կ'ըսէ.
«Յայտնապէս ժառանգած է այնբայցիներու առեւտրական ճկունութիւնը,
նախաձեռնողի յանգճութիւնը, նոյնիսկ երգիծողի սրամտութիւնը»:

Գրող, բանասէր, խմբաչիր, ուսուցիչ, պատմագիրներու հեղինակ Սի-
մոն Սիմոնեանը ծնած է Ալինթապ, 1914ին: Հալէպի Կրթասիրաց վարժարա-
նէն (1928—30) եւ Անթիլիասի Դպրեվանքէն շրջանաւարտ (1932—35), ան
կ'ընդգրկէ կրթական ասպարէզը: Այս շրջանին կը դասաւանդէ Հալէպի
Հայկազեան եւ Կիւլպէնեան վարժարաններուն մէջ:

Հայեպահայ ուսուցչական միութիւնը, որուն հիմնադիրներէն էր Սի-
մոնը, 1945ին կը հաստատէ սեփական տպարան մը՝ Սեւան Ժաշէյոն շուկայի
փայտավաճառներու խանին մէջ: Տպարանին վարիչ՝ Լեւոն Պերդուտեան,
իսկ հրատարակչական մասը կը ստանանէ Սիմոնեանը: Այլ գիրքերու
կարգին, լոյս կը տեսնեն «Սեւան» պարբերաթերթի Ա. եւ Բ. պրակները եւ
Հայրենաբաղձ Ներխասարդներու Միութեան «Դէպի Նրկիր» (Ա.—Ծ. պրակ)
պարբերականը:

1946ին կը գառնայ Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանցին գիտական
աշխատակիցը, խմբագրելով անոր «Յիշատակարան Զեւազարցի» Ա. եւ Բ.
հատորները: Միաժամանակ, ան դպրիվանքին մէջ կը դասաւանդէ Հայ հին
դպրութիւն եւ գրարար, կը խմբագրէ «Հասկը» Կաթողիկոսարանին պաշ-
տօնաթերթը եւ «Հայագիտական Հասկը»:

1955ին Պէյրութի մէջ կը հիմնէ իր սեփական Սեւան տպարանը, ուրկէ
1958—74 կը հրատարակէ «Վիւնթ» անկախ շաբաթաթերթը, 16 տարիներ:
Եթէ Հայր Օվէն ցորենը կ'աղար ւնայ համար, Սիմոն իր Սեւան «Ջա-
ղացեցի» աղաց Մալխասեանի, Անառեանի, Օրմանեանի, Արեղեանի, Զա-
րենցի, Բակունցի, Շիրազի, Պարոյր Սեւակի գործերը եւ զանոնք հրատարակ
հայ գրասէր հասարակութեան որպէս հոգեկան հաց: Նոյնիսկ Պարոյր Սեւա-
կին «Նիցիի Լոյս»ը Սիմոնեանը հրատարակեց Պէյրութ, Երեւանէն առաջ,
որ կալանքի տակ էր այդ զուլմ—գործոցը: Նոյնպէս Յովսէփեան Շիրազի
կարգ մը քերթուածները:

Աւելցնենք Գրիգոր Պողարեանի վկայութիւնը Սիմոնեանին մասին.
«Պատմագէտ—քանատր ու իրապէս ստատարական Սիմոնը Այնթապով ու
այնթապցիներով (Շահէ Արք., Բարգէն Կաթողիկոս) է կերպարուած»:

Բարգէն Կաթողիկոս Սիմոնեանը կոչած էր «փոքրիկ բանասէր», որ
մեծ գործեր տեսաւ եւ դարձաւ սփիւռքահայ գրականութեան եւ մամուլին
ազդեցիկ դէմքերէն:

Գիտարահան Յակոբ Օշական ըսած է. «Վստահ մտածէ պարտքիդ
մեր գրականութեան մէջ շատ քիչերու վիճակուած բախտ մը՝ բեգի կը
սպասէ»:

Տանք նաեւ Սիմոնեանին անձնական վկայութիւնը իր մասին. «Իմ ժա-
մանակը, իմ կեանքը, իմ սնոյի բերքը ցացած են ուրիշներու, իսկ թեթեւ
շա՛տ թեթեւ քաներ եկած են իմ կողմ»:

Հակառակ այսքան նուիրումութեան եւ հայրենապաշտութեան,
հայրենասիրութեան մարմնացում Սիմոնեանը հռչակուեցաւ «հայրենիքի
թշնամի» եւ անոր արգիլուեցաւ Հայաստան մուտքը. քանի որ ան մատնա-
շար էր Ղարաբաղի անարդար վիճակը, 1937ին Հայաստանի 800 մտաւորա-
կաններու մաքրագործումը բարձրաձայն կոչած էր «Նոր Ապրիլ 24», ար-
ստած էր Հայրենական պատերազմին զոհարելու Վարդանի Բանակի
500,000 մարտիկները եւ հայմանդամները՝ փոխարէն ոչինչ ստանալով, աւե-
լին՝ վրայ տալով Ղարաբաղն ու Նախիջեանը, հայահոծ Ախալքալաքը, Ան-
ախիքը, Լուրի շրջանը «Նուիրան», Սուրմուլան «պախիչ» տրամի եւն «Եօյ-
տաշ, համայնավար, հակաիմփրիալիտ» թուրքին եւ մասամբ նորին: Պատ-
մական Հայաստանի 100.000քմ.²էն մնացած էր միմուճար 30.000քմ.² տարա-
ծութիւն մը, որ «յանուն եղբայրական ընկերվարութեան» դարձած էր
27.000քմ.² արդէ Հայաստանի գորգալպի քարտէսը:
Ան կ'ըսէ. «Միա Հայաստանը, ուր արգիլուած է իմ մուտքը, այդ ո՞վ է

որ կրճայ արգիլել իմ մուտքս Հայաստան», ու յանկարծ, կը նետուի քար տէսին վրայ ու հասակով մէկ պառկելով կը գոչէ. «Ո՛վ կրճայ զիս դուրս հանել Հայաստանէն, թո՛ղ հրամսմէ, ահա՛ ես Հայաստանցիս մէջն եմ»:

Թէ՛ն Հայաստանը շտեմեց անոր յորելեանը, սակայն հեռաւոր Լոս Անճելլոս տունը 1983ին: Այս առթիւ Սիմոն կ'ըսէ. «Ափսո՛ս: Արարատը, Սուրբ Էջմիածինը, քաղաքամայր Երեւանը, Ալագեազը, Սասնայ լեռները, Հայքի երկիրը, ամեն շատ սիրող, զայն իր հայոց պատմութեան վեց դասագիրքերուն մէջ պատմող մարդուն յորելեանը, մեծարանքի յիշատակը պիտի տօմօնի իր սիրած, պատշաճ հայրենիքէն ամենէն ետու վայրի մէջ: Անիծուին, Սիմոն»:

Ֆիզիքական եւ մտաւորական անսահման գերյոգնածութիւնը գինք տարին անդիի դէմը, 74 տարեկանին, 1986ին: Սակայն իր ձգած թանկագին բերքը, անձնական ստեղծագործութիւնները, լեռնականներու հակատագիրին նուիրուած էջերը, պիտի անմահացնեն իր անունը:

Կրտսեր եղբոր՝ Յարութիւնին ճիսին պարտքն է անոր մտքին ու գրիչին գահարները քաղել «Սփինք»էն ու քանի մը հատորներով այժմէացնել անոր անունը:

Սիմոնեանին մօրաքոյր-մայրիկը՝ Քոյր Ֆիլոմէն Տարագճեանը, յետագային ժիրագօ, ծնած է Այնթապ, 1889ին, առնելով Սիրանուշ անունը: Վաղ պատանեկութեան երազած է ըլլալ մայրապետ, այլապէս ծառայել մարդկութեան: Առ այս, կը յաճախէ Հայէպի St. Joseph de l'Apparition քոյրերու յատուկ վարժարանը, ապա կը մեկնի Մարտէշլի, մասնագիտանալու քոյրերու բարձրագոյն հաստատութեանց մէջ: Իր կեանքի 70 տարիներու ծառայութեան ուղին կը սկսի Տրապիզոնէն. ապա Հայէպ, Սելանիկ, նորէն Հայէպ, Ճեպլի Տրուզ, Սայտա, Ռամալլա: Ի վերջոյ հանգրուանելով Օէլիթայի (Լիբանան) հանգստարանը:

Իր կեանքին մեծագոյն մասը՝ 25 տարի (1918—43) անցուցած էր Հայէպի Սեն Լուի Ֆրանսական հիւանդանոցը, որպէս մեծաւորուհի, դեղաբանի պատասխանատու եւ բժշկապետի առաջին օգնական: Կատարած է անհամար ծառայութիւններ քեմփարնակ հայութեան՝ օգնութիւն, դեղ, դարման հասցնելով հիւանդներուն, աղքատներուն եւ անկարներուն, դառնալով քեմփին պահպան հրեշտակը եւ Սիմոնեան եղբայրներուն երկրորդ մայրիկը:

Իր բարուք միջամտութեան շնորհիւ յաջողած է դուրս հանել հրաշապատու գործեր. անհաւատալի բաց իրաւ: 20 տարիներէ ի վեր բանտն էր 101 տարուան ցիւանս մահուան դատապարտուած էյնէջի «Երկզպրէշք» չէթէ ներսէսը: Քոյր Ֆիլոմէն անձամբ Պէյրութ երթալով, 1942ին խնդրելով բարձր բոմիսէրին ներողամտութիւնը ձեռք բերու անոր ազատութիւնը: Ներսէս 1946ին ներգաղթեց Հայաստան եւ հոն ալ ամուսնացաւ: Իր դուստրը՝ Մարիա Ապանան դարձաւ օփերայի յայտնի մենիզդուհի եւ շրջապատյունը կատարեց աշխարհով մէկ:

Սիմոնին միջնիկ եղբայրը՝ Գրիգոր, հայկական մատուցածը, որպէս «պոլշեիկ» նետուած էր Հայէպի խան Սթանպուլի գնտանը: Դատական եւ այլ միջամտութեամբ կարելի չէր ազատել զան: Գաղութարար Ֆրանսացիները ցուէն անկի կը վախճային քան՝ «համայնավարներէն»: Քոյր Ֆիլոմէն անկարելին կարելի ընելով, դիմելով Պէյրութի բարձր բոմիսէրին, ազատեց զայն բանտէն:

Համաշխարհային Բ. պատերազմին, արդար միջոցներով կարելի չէր տպագրական թուղթ ձարել: Քոյր մօրաքոյրը բարեխօսութեամբ, Սիմոն ստացաւ 1 թոն տպագրական թուղթ, 500 ս. ոսկիի փոխան: Սեւ շուկայի վրայ կ'արժէր 50,000 ս. ոսկի: Անով, Սիմոն նախնորեց հրատարակել դասագիրքեր, լուսաւորելու համար աշակերտները:

Սեն Լուի հիւանդանոցին մէջ յաղող վերահատուցեան ենթարկուած էր անապատի «թագաւոր» Մրճհէմը: Քոյր Ֆիլոմէն բարեկամութիւն հաստատելով անոր հետ, ապահովեց բազմաթիւ անկարող հիւանդներուն նիւթակեր:

Ամէն շաբաթ, քեմփարնակ հիւանդներէն 50 հոգի կ'ընդունուէին Սեն Լուի հիւանդանոց, բոլորն ալ անվճար: Քոյր Ֆիլոմէն մօտէն տեսած ըլլալով հայոց ջարդերը, ջերմ համակիր եղաւ ներգաղթին, հոգալով շատ մը անկարողներուն նիւթական կարիքը:

Կ'աջօ՛ք յիշատակել Քոյր Ֆիլոմէնի կեանքէն պատմական հանդիպում մը: 1935ին, Սիմոնին շրջանաւարտութեան տարին, ամալբերջի հանդէսին Անթիլիաս հաւաքուած էին անոր հարազատները, մօտիկ ազգականները եւ ի շարս անոնց, Սիմոնեան եղբայրներուն երկրորդ մայրիկը՝ Քոյր Ֆիլոմէն: Բարգէն կաթողիկոս, որ լաւատեղեակ էր այնթապցի մասէօրին ազգանուէր ու հարեմասիրական կեանքին, առանձնակի տեսակցութիւն մը ունեցաւ անոր հետ, առաջարկելով հիմնել հայ քոյրերու հաստատութիւն մը կամ անոնց յատուկ վանք մը: Սակայն սկզբունքի տէր Քոյրը, մերժեց դրժել իր ուխտը: Ան իր գործով ցոյց տուած էր արդէն իր ազգին հանդէպ իր նուիրումնութիւնը:

Քանի մը տող ալ Սիմոնին կրտսեր եղբոր, ազգային բարերար, մեկեանաւ ժամացոյցի «թագաւոր» եւ գործարանատէր Զուլիցիբիոյ մէջ՝ Յարութիւնին մասին:

1960ին, իր Հայէպ այցելութեան առթիւ, կ'այցելէ կրթասիրաց վարժարան եւ հաշուապահ Պետրոս Ռոճային գրասեղանին վրայ դնելով 5000 տուրք, կ'ըսէ. «Ռոճա՛, եկալ մեր յետեակ պարտքերը վճարելու քեզի, իրենց սովորներով»:

Հայաստանի թալինի շրջանի Ոսկեթաս գիւղին մէջ, դպրոց մը կառուցանելու համար նուիրած է 200,000 տղար:

Մեկեանա եղած է հետեւեալ գիրքերուն. Գուրգէն Մահարիի կնոջ՝ Անտոնինային «Իմ Ողիսական» յուշագրութիւնը, Լեւոն Զորմիսեանին երկհատորեակը, Եր. Օտեանի ժողովածուն, Գեղամ Սեւանի սփիւռքահայ գրա-

կանուխան Բ. Հատորը եւ վերջերս՝ օտեանազէտ Մարիբեկ Մանուկեանին մենագրութիւնը (40 տարուան աշխատանք):

1976ին, Պէյրութի էշրեֆիէ Հայահոծ Թաղամասի «Արմենիա» փողոցին վրայ, Սասունցիներու Հայրենակցական Միութեան Տան Հանդիսասարահին բարերարը եղած է, ի յիշատակ իր հօրը Օվէին: Սոյն Միութեան մշտական նախագահը եղած էր իր Հանգուցեալ Միմոն եղբայրը:

Վերջերս, Յարութիւն նուիրեց 10,000 տոլար Երեւանի Խնկօ Ապեր զրազարանի նորոգութեան:

Յարութիւնին մօրեղբայրները՝ Ճորճ, Գրիգոր, Արթին Ժիրագոները եղած են ժամացույցի Միջին Արեւելքի մեծագոյն վաճառականները, նոյնպէս մեծ քուրճիկ՝ Ճորճին (Ճիրճէ) տղան՝ Ժաք Ժիրագօ:

Վարձքերնիդ կատար, Միմոնեան Հարազատներ:

«Չարթօնք», 6 Յունիս 1998

ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐԸ՝ ՆՈՒՊԱՐ Լ. ՆԱԶԱՐԵԱՆ

Քառասուն օրեր առաջ, 29 Ապրիլ 1996ին, Նիւ Ճըրզի, անժամանակ մահով մը կեանքէն հեռացաւ ՀԲԸ Միութեան բարերար անդամ, Լիրանանի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ, լիրանանահայ գաղութի դործարար կարկառուն ղէմքերէն՝ լիրանանեան Արժանեաց չքանչանակիր, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ա. կարգի պարգեւատրեալ Պրն. Նուպար Լ. Նազարեան, խոր սուգի մատնելով իր հարազատները, ՀԲԸ Միութեան մեծ ընտանիքը, ՀԵԸԻ Ասպետներու Համախմբումը ու գործակից բարեկամները:

Անոր վաղահաս մահով, Նազարեան ընտանիքը եւ համայն Նազարեան զերդաստանը կորսնցուցին թանկագին ներկայացուցիչ մը. հայ ազգը՝ զիտակից եւ բարեգործ հայրենասէր մը. հայ դպրոցը՝ կենսայից աջակից մը. Հայաստանեաց Առաքելական Եկեղեցին՝ աւանդապաշտ եւ հաւատաւոր պաշտպան մը, ՀԲԸՄը՝ ի հօրէ բարերար անդամ մը, իսկ ՀԵԸԻ Ասպետները երկարամեայ (35 տարի) հիմնադիր ատենապետ մը:

Նազարեան բարեհամբաւ դերդաստանի ողջ պատմութիւնը, հարուստ եղած է ազգանուէր մեկնեաններով, հայրենանուէր գործիչներով եւ մեծանուն բարեգործներով:

Գերդաստանի նահապետներէն ընիկ Ազուլիսցի (Գողթն հայկական գաւառէն) Նահապետ Կիւլնազար (1629—1695), վեներտիկի մէջ, 10 Սեպտ. 1687ին հրատարակած է հայ աշխարհարար առաջին դիրքը՝ «Պարզարանութիւն հոգեհուսազ Սաղմոսացն Դաւթի Մարգարէին»:

Գերդաստանի պատմական ղէմքերէն, Խոճա Նազար (1565—1636), ուրեմն մեզմէ 403 տարիներ առաջ, եղած է փրկարարը Ս. Էջմիածնի, հրը Շահ Արբաս, հայ գաղթականին էջմիածնասէր վերջին յոյսն ալ չքացնելու համար կ'որոշէ հիմէն քանդել Ս. Էջմիածինը եւ զայն վերակառուցանել հին ձևով, Սլազան քաղաքի մօտ:

Մեկնեսա եւ հրատարակիչ Խոճա Նահապետին երեք որդիները՝ Խոճա Պալնազար Կարապետ, Խոճա Կիւլնազար Յարութիւն եւ Խոճա Շահնազար Եղիան, Ազուլիսէն Այնթապ դալով, 1720ին կը հիմնեն հայոց առաջին գե-

բեզմանատունը եւ կը վերանորոգեն 1723ին, Հայոց Ս. Աստուածածին եկեղեցին:

Ասոնց յաջորդներէն, մեծահարուստ Հաճի Նազար Պէջ Նազարէթեան (1817–1887), եղած է Այնթապի պարսկական աւագ հիւպատոս եւ ամերիկեան փոխ հիւպատոս: Այնթապի Ամերիկեան Կեդրոնական Թուրքոյ Գոյէճին շինարարութեան մասնակցած է 10 հազար օսմանեան ոսկերչարմով:

Հաճի Նազար Պէջին տղան՝ Նիկողոս Աղա Նազարէթեան (1841–1890), եղած է այնթապահայոց լուսաւորութեան մեծագոյն ղեմքը, բանալով դպրոցներ, գիշերալիւն վարժարաններ, կիրակնօրեայ յարաններ եւ կառուցանել տալով Հայոց մեծագոյն եկեղեցին՝ Ս. Աստուածածին, եւ այլն: Ան քաջարար եւ արդիւնաւոր ձեռով պաշարեցաւ ամերիկացիներու կողմէ հովանաւորուած բողոքականութեան շարժումին եւ անգլիացիներէ քաջալիրուած անկլիգանական պատուհասին ղէմ:

Նիկողոս Աղային Արմենակ տղան (Ա. Ն. Նազար), դարձաւ ազգային յայտնի դործիչ, նշանաւոր հրապարակագիր եւ ՌԱԿի հիմնադիրներէն:

Լիբանանեան պատմութեան մասնագէտ եւ պատմագէտ Տիգ. Նինա Նազարէթեան Տորթ. Ե. Ճիտէճեան թոռուհին է Նիկողոս Աղային:

Յետագային, գերդաստանի առեւտրական եւ բարեսիրական յաւաքոյն ներկայացուցիչը եղած Լեւոն Կ. Նազարեան, որ Պէյրութի մէջ, 1992ին հիմնած է Համանուն վարժարանը:

Առեւտրականութեան եւ բարեգործութեան աւանդութիւնը, ժառանգեցին իր որդիները՝ Կարպիս, Նուպար եւ Նազար, որոնք ո՛չ միայն ճոխացուցին հորենական գործը, այլ եւ դարձան ամբողջական բարերարներ, կատարելով բարեսիրական մեծագործութիւններ: Լիբանանեան աղէտալի պատերազմի շրջանին, մնացին տեղւոյն վրայ, ղեկավարեցին ՀԲԸ Միութեան նաւը, օգնութեան հասնելով կարօտեալ ընտանիքներու եւ Հայ դպրոցին:

Պրն. Կարպիս եղած է ՀԲԸ Միութեան բարերար երկարամեայ անդամ, հիմնադիրներէն ՀԵԸԻ Զարեհ Նուպար ակումբին, գանձապահ եւ ատենակցի ՀԲԸ Միութեան Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովին:

Իր եղբորը Նուպարին հետ արժանացած են Լիբանանեան Արժանեաց շքանշանին, իսկ Նազարին հետ՝ երեք եղբայրները ստացան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ա. կարգի պատուանշանը: Կարպիսը հաստատած է նաեւ 10 հազար տուրլի հիմնադրամ մը՝ գրական անտիպ երկերու հրատարակչական գործին:

Կրտսերը՝ Նազար, փոխ-նախագահն ու զանձապահն է ՀԲԸ Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին, անդամ է ՀԲԸ Միութեան նախագահական ակումբին: Իր տիկնոջ Արտեմիսին հետ (որ թոռուհին է նախկին սուրիահայ երեսփոխան Հրանդ Սիւլահեանին) Թէնըֆլայի Ս. Թոյմաս Հայց. եկեղեցիին (Նի. Ճըրզի) սրահին շինութեան ըրած են 100.000 տուրլի նուիրատուութիւն մը: Եղած է միկնուսար ղեկավար Հանրի Մորկընթաուի յուշերու գիրքին եւ Վահան Թէքէեանի նամականիին: Պուէնոս Այլիս (Ար-

ժանթին) շինել տուած են Նազար եւ Արտեմիս Նազարեան սրահը. Հայաստանէն որդեգրած է չորս սաներ Կիրարսի Մելգոնեան Կրթ. Հաստատութեան մէջ: ԱՄՆի Արեւելեան թեմի նախկին առաջնորդ Թորգոմ Արքեպս. Մանուկեանի կողմէ ստացած է Ս. Վարդան զնահատանքի պնակիտը: Ստանձնած է էջմիածինէն Երեւան ուսանողներու երթեւեկութեան օթոքարի ծախքը: Կարպիս եւ Նուպար եղբայրներու մասնակցութեամբ ՀԲԸ Միութեան մօտ (Նի. Ճըրզի) կառուցած է Լեւոն Կ. Նազարեան սրահը, իսկ Քառակ Փարք (Գայիթորնիս) Մարի Մանուկեան եւ Սարգիս-Սեդա Տեմիրճեան երկրորդական վարժարանին կից՝ մարզական Նազարեան համալիրը, իսկ Մոնթեվիտէօ՝ (Ուրուկուէյ) Նազարեան նախակրթարանը: ՀԲԸ Միութեան մօտ, հաստատած են Լեւոն եւ Սաթենիկ Նազարեան, Բարունակ Թովմասեան (10 հազար տուրլ), Մարի Նազարեան-Մարգարեան (48 հազար տուրլ), Նազար եւ Արտեմիս Նազարեան (50 հազար տուրլ), իսկ վերջերս՝ Նուպար Լ. Նազարեան հիմնադրամները (Ֆոնտ):

Նազարեան եղբայրներու միկեննատութեամբ լոյս տեսաւ «Պատմագիրք Նազարեան գերդաստանի (1475–1988)» հատորը, Պէյրութ, 1988, (հեղինակութիւն էլի Թ. Նազարեանի եւ քարտիսագրութիւն Կարապետ Թ. Նազարեանի, պատմագիրական եւ ճիւղագրական արժէքաւոր տոհմագիրք մը):

Միջին եղբայրը՝ Նուպար, իր հայեցի տոհմային կրթութիւնը ստացած է Պէյրութի Հայ Աւետարանական Գոյէճը, ապա 1937ին անցած է Ամերիկեան Համալսարանի Ֆրանսական բաժինը, որուն առեւտրական ճիւղէն վկայուած է պատուոյ յիշատակութեամբ: Նոյնպէս վկայուած է Ֆրանսական պետութեանէն՝ իրրեւ առեւտրագէտ:

Շրջանաւարտ ըլլալէ ետք իր արդիւնաւոր ղեկավարութիւնը բերած է հորենական գործին: Իր յաճախակի ճամբորդութիւններով ղէպի աշխարհի չորս ծագերը, ընդլայնած է Նազարեան հաստատութեան գործառնութիւններու ցանցը, ստանձնելով ներկայացուցչութիւնը աշխարհահասակ մակնիչով ճարտարաբանական մեքենաներու, ինչպէս ԲՖՊա, Փէկասիւօ, Իսթմէն, Հոֆմէն, Թոյթա, Կլոյլը եւ այլն:

Պէյրութի Ազատ Գօտիի մէջ, 1953ին հիմնած են հագուստեղէնի եւ թրանզլոթի մեծ գործարան մը «Մանսի» մակնիչով, 400 գործաւորներով, Մեծաւոր Արեւելքի մէջ եզակի Ան կողպտուեցաւ, քանդուեցաւ եւ հրկիզուեցաւ Յունիս 1976ին, Լիբանանի աղէտալի կոխներուն: Միեւնոյն ճակատագրին ենթարկուեցան Պուրճի իրենց հսկայ գործատունը եւ վաճառատունը:

Հօրենական բարի աւանդութեան հետեւելով, իր գործօն մասնակցութիւնը բերած է բարեսիրական եւ ազգային գործերու, ՀԲԸ Միութեան եւ ՀԵԸԻ գործունէութեանց: Եղած է հիմնադիր ՀԵԸԻ Ապետներու Համալսարանին եւ անոր Ատենապետը ամբողջ 35 տարի: 1983ին ի վեր ստանձնած էր ատենապետութիւնը ՀԲԸ Միութեան Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի: Եղած է Ռօթարի Գլխաւոր Արարչի Յարաբերութեանց բաժան-

րութեան, հայրենասիրութեան եւ բարեբարութեան գերդաստանային
անմահ ֆաշը:

Աստուած հոգին լուսաւորէ:

Վարձքդ կատար ու հողը թեթեւ՝ սիրելի՛ նուպար:

«Խօսնակ», Յունիս 1996

ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ ԷԶԵՐ

ՀՐԱՇԱԳՈՐԾ ՄԻՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Նախ, պատմական հակիրճ ակնարկ մը, հայ բարեպաշտական շարժումներուն մասին, որոնց շարքը այնքան ալ կարճ չէ ու բարեգործութեան կանաչ, ազատարար դասին պատմութեան խորերէն կու գայ, հասնելով մինչև մեր օրերը: Երրորդ դարուն կար իշխանուհի Ազուիթան, որ կուրանոցներ-բորոտանոցներ կը հիմնէ ու անձնապէս կը ծառայէ հայ հիւանդներու:

Մեծն Ներսէս Պարթև Հալապետ կ'ընդարձակէ հիւանդանոցներու ցանցը, նաև կառուցանել կու տայ իջևաններ՝ ճամբորդներու համար, 4րդ դարուն:

Սահակադուխտը Գառնիի քարայրներուն մէջ հաստատած էր բուժարաններ՝ ջրատարներուն համար, անձամբ ծառայելով: Իսկ 9-10րդ դարուն՝ Աշոտ Գ. Ողորմած թագաւորը անձամբ կ'օգնէր հիւանդներու: Նաև Ռոստոփանոյ թագուհին եւ Արծրունի Դերենիկ իշխանը:

Նոյնը կ'ընեն նաև հայոց կիլիկիոյ Զապէլ թագուհին, իր որդին Լեւոն Գ. եւ աղջնակը՝ Տիմին: 18-19րդ դարը բարեգործութեան ջանքեր կը բռնեն Լազարեան տոհմը (Մոսկուա, Սէն Փեթերսպուրկ), Յարութիւն Ամիրա Պեզճեան (Պոլիս) եւ Ալեքսանդր Մանթաշեան (Կովկաս եւ Փարիզ):

1863 թուականի 17 Մարտին, կը հիմնուի Պոլսոյ մէջ Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, իսկ 1876 Ապրիլ 15ին, կը հիմնուի Արարատեան Ընկերութիւնը: 1879 թուականի Ապրիլ 11ին, դարձեալ Պոլսոյ մէջ կը կազմակերպուի Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը: 1879 թուականի Մայիս 1ին, ծնունդ կ'առնէ Գլբոցասէր Տիկնանց Ընկերութիւնը:

1908 Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն ետք, կը վերակազմուի «Հայոց Միացեալ Ընկերութիւն»ը:

Մինչ այդ, 1881ին, Թիֆլիսի մէջ կը հիմնուի Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը: ու երբ կը ծնի ՀԲԸ Միութիւնը, յամի տեսուն 1906ին,

ան ինքնաբերաբար կը ժառանգէ այս բոլորը՝ զորս զինք նախորդող միութիւնները ունեցած էին, որպէս տեսիլք ու գործունէութիւն:

Գահիրէի մէջ, հայկական համազգային միութեան մը ծնունդի գաղափարը առաջին անգամ պաշտօնապէս չեփրուած է Այնթապահայ գարթօնքի ռահպիշանքներէ ուսուցչապետ, հրատարակագիր, ազգային գործիչ, պատմագէտ եւ հեղինակ Վահան Մ. Բիւրքճեանի (1863-1961) կողմէ, ահա՛ թէ ինչպէս իր յուշերուն մէջ, ան կը պատմէ այս պարագան. «Գահիրէի մէջ, 1904 Ռեկտ. Դից սկսալ հրատարակել «Լուսաբեր» երկօրեայ թերթը, որ կը ջատագովէր երկու հիմնական խորհուրդ, Ա. - Դադրեցնել քաղաքական ցոյցերը եւ անաբեկական արարքները, Բ. - Հիմնել հայկական միութիւն մը: Այս վերջից ուղղութեամբ քայլ մը առնուեցաւ 1905 Հոկտ. 26ին, տասնընդոս Բողոքն ժողովի կողմէ: Աստուք երկուքը Այնթապացի էին. - Տոթթ. Նազարեթ Քէլէճեան եւ Յարութիւն Շէպէճեան՝ Քաղաքական ժողովի անդամներ. երկրորդ ժողովի մը պէտք չմնաց սակայն: Պօղոս Փաշա Նուպար որ «Լուսաբեր»ը կը քաջալերէր ամսական 10 ոսկի յատկացումով, եւ կը բաժնէր անոր տեսակէտ, հաւանած էր գլխի կանգնելու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան որ պաշտօնապէս հռչակուեցաւ 1906 Ապրիլ 15ին»:

Յայտնի ուսուցչապետ Գրիգոր Պօղարեան, իր կարգին այսպէս կը նկարագրէ Բարեգործականի ծնունդը.

«Վահան Մ. Բիւրքճեանի Եգիպտոս գտնուած յիշանին, երբ հիմնեց «Լուսաբեր» երկօրեան, անոր ուղեգիծ դարձնելով զատապարտուած «կուսակցական անհետատես արկածախնդրութիւններու եւ յեղափոխականութեան», առաջադրանք ընելով ծնունդ տալ հայկական համազգային միութեան մը - գաղափար՝ զոր սիրով ողջունեցին Պօղոս Փաշա Նուպար, Երուանդ Աղաթոն, Բժիշկ Նազարեթ Տաղաւարեան եւ ուրիշներ: Որդեգրած ուղին իր ղէմ թշնամիները յարոյց, սպառնական գիրեր ալ ստացաւ (սպանապիլքներ, որուն անմիջ զորս պիտի ըլլար «Լուսաբեր»ի խմբագրութեան կոչուած Արփիարեան, 1908ին), բայց Համազգային միութեան առաջադրանքը, քաջալերուած օրուան քաղաքական ժողովէն եւ Եգիպտոս հաստատուած նախկին իր երկու աշակերտներէն - Յարութիւն Շէպէճեան եւ Տօթթ. Նազարեթ Քէլէճեան, հասանութեան արժանացան եւ 1906ի Ապրիլ 15ին ծնունդ առաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, հիմնախիղճ տակ մեծանուն հարու, Պօղոս Փաշա Նուպարի եւ գործակցութեամբ ականաւոր ազգայիններու»:

Բիւրքճեան 1907ի Նոյեմբերին հետագա Եգիպտոսէն: Սակայն, այնուհետեւ ակելի քան քառասուն տարի ծառայեց համազգային այդ Մեծ Միութեան, եղաւ քարտուղար, եղաւ անոր թերթերու խմբագիր «Հայ» (1909), «Յուշարար» (1912-1916 եւ 1923-1939), եղաւ վարիչ-անօրէն, մինչեւ 1939 թուականը, երբ հանգստեան կոչուեցաւ ու հռչակուեցաւ ցիկանս պատուակալ անդամ:

15 Ապրիլ 1906 տարուան Ս. Յարութեան բարեբաստիկ տունին կիրակի օրը, յիշատակելի թուական մը պիտի մնայ հայոց պատմութեան մէջ, որպէս ծնունդ հայ մեծագոյն եւ նախաինքնավար կազմակերպութեան՝ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, որ կատարած է ու կը կատարէ օրհնաբեր փրկարար անփոխարինելի դեր, ըլլալ ի Հայաստան Աշխարհ, ըլլալ պիտութի տարածքին: Սոյն նշանակալից օրը, Պօղոս Փաշա Նուպար, մտածումէն գործի անցնելով, իր բնակարանը հրաւիրած էր իր գաղափարակից եւ կարեւոր դիրքերու վրայ գտնուող ինք աչքառու ազգայիններ, որոնք էին.

Ա. - Հիւրընկալ Պօղոս Փաշա Նուպար (1851-1930). առաջին նախագահ, Նուպար Փաշա Նուպարեանի (1825-1899) որդին, գիւղատնտես, մէքենագէտ, ճարտարագէտ-գիւտարար, բազմաթիւ գիտական գիրքերու հեղինակ, Եգիպտոսի երկաթուղիներու ընկերութեան ընդհանուր անօրէն, դրամատուներու նախագահ, Վրաստանի կառնիքի ընկերութիւններուն հիմնադիրը:

Բ. - Եագուպ Արթին Փաշա (1842-1919). ղոկտոր իրաւաբանութեան, եւ օրէնսդրութեան, Եգիպտոսի կրթական փոխ-նախարար հեղինակ շատ մը գիտական երկաթուղիներու, եգիպտական կամառի նախագահ, ՀԲԸ Միութեան փոխ նախագահ:

Գ. - Մկրտիչ Անդրանիկեան (1851-1938). Պօղոս Փաշային գործակիցը՝ պետական գործերու մէջ: Ան է որ Եգիպտոսը օժտած է «Ռոթմարի» ջրհան մէքենաներով:

Դ. - Երուանդ Պէյ Աղաթոն (1860-1930). մասնագէտ հողագէտ, հիմնադիր Եգիպտոսի հողագործական ընկերութեան եւ սենտիքային:

Ե. - Մկրտիչ Պէյ Մարկոսով (1849-1919). ճարտարապետ, երկրաչափ, հանրօգուտ յիտութեանց քննիչ:

Զ. - Կարապետ Եղիայեան (1833-1911). մեծահարուստ կալուածատէր, ռուսական փոխ-հիւպատոս: Իր անունով պիտի ըլլայ Եղիայեան ուսանողական հիմնադրամը:

Է. - Առաքել Պէյ Նուպար (1881-1954). Պօղոս Փաշային անդրանիկ որդին՝ ուսանած Անգլիա եւ Ֆրանսա:

Ը. - Կարապետ Պէյ Շէրլիտճեան (1851-1926). Եգիպտոսի արտաքին գործոց նախարարութեան ղիւսնապետ եւ առաջին քարտուղար, 1899ին Սուէզի ջրանցքին բացման ներկայացած է եգիպտական կառավարութեան կողմէ:

Թ. - Յովհաննէս Պէյ Յակոբեան (1855-1917). Եգիպտոսի ներքին գործոց նախարարութեան մէջ ղիւսնապետ եւ թարգմանիչ:

Ժ. - Տօթթ. Նազարեթ Տաղաւարեան (1862-1915). յայտնի ազգային գործիչ (յետագային Մեծ Եղեռնի նահատակներէն):

Ահա՛ այսպէս մեծահարուստ, ղիւրքի տէր, մեծափարձամ կեանքի վարժ, բայց ջրմտ ազգասէր եւ սրտցաւ հայրենասէր տասը ազգայիններ, ծնունդ տուին

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, կամաւորապէս եւ անձնուիրաբար թուեցան իրենց հայրենակիցներուն վիշտը ամօքելու, անոնց կարիքներուն հասնելու զմայլեղի նախաձեռնութեամբ: Անոնց վառած անմահ շահը, վստահիքի ձեռքբերու անցնելով, վառ կը մնայ ցարդ ու ահաւասիկ 90 տարիներէ ի վեր կը լուսաւորէ, բարիք կը սփռէ, ու կը սփռփէ հայ կեանքի բոլոր բնագաւառները, հետզհետէ բարգաւաճելով ու շատանալով:

Լաւագորն ձեւով պատկերացնելու համար, Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութեան ազգանուէր գործունէութիւնը, ստորեւ կու տանք վիճակագրական կարգ մը տուեաններ. թող թուանշանները խօսին:

90ամեայ իր կեանքին ընթացքին ան ունեցած է վեց ականաւոր նախագահներ, հետեւեալ չըջաններով.

Ա.— Պօղոս Նուպար Փաշա (1906-1930), որդին Նուպար Փաշայի:

Բ.— Գալուստ որդի Մարգարի Կիւլպէնկեան (1930-32):

Գ.— Ջարեհ Նուպար (1932-40) որդի Պօղոս Փաշայի:

Դ.— Արշակ Գարակէօզեան (1943-1953):

Ե.— Յիկանս նախագահ Ալեք Մանուկեան (1953-1986):

Զ.— Լուիզ Միմոն Ալեքի Մանուկեան (1986էն ի վեր):

Հայէպի մէջ, 1924ին, երբ կարգ մը ազգասէր եւ դիտակից այնթապահայեր, հիմը կը դնէին հայրենակցական դպրոցի մը՝ Այնթապու կրթասիրաց Վարձուներ, անոնք կարգապահ ընտրած էին հետեւեալ իմաստալից սկզբունքները՝ Մանուկ մը կրթել, Ազգ մը կրթել է, կրթութիւնը օրորոցէ պէտք է սկսի, այս ձեւով շեշտը դնելով հայեցի դաստիարակութեան վրայ:

ՀԲԸ Միութեան հիմնադիրները, Պօղոս Փաշա Նուպարէն սկեսայ, որ 1908 Մարտ 4ին Գահիրէի Գալուստեան Ազգային վարժարանի նոր շէնքին կառուցման նուիրած էր 20,000 անգլիական ոսկի եւ դպրոցին դասարաններուն ամբողջ կահաւորումը, նստարաններ եւ աւարիկաները բերել տուած էր Եւրոպայէն, առաջնակարգ կարեւորութիւն ընծայած էր հայ դպրոցին, անոր միջոցաւ հասցնելու համար հայեցի սերունդ մը, որպէս ազգապահպանութեան գլխաւոր կուտան: Սպիտակ ջարդի դէմ անխորտակ թուամբ Պօղոս Փաշայէն ետք Միութեան բոլոր նախագահները եռանդով եւ մեծ յաջողութեամբ շարունակեցին Հայապահպանման այս աւանդութիւնը, հայ գաղութները եւ վերջերս այ Հայաստանը օժտելով դպրոցական ցանցով մը: Ատոր կողքին, ստեղծուեցան երկուստարական շարժում (ՀԵԸ) եւ կեդրոններ, հանդիսարաններ, մարզական համալիր եւ մշակութիւն ու գեղարուեստական կազմակերպութիւններ, ուսանողական կրթաթոշակները:

Այսօր, Բարեգործականը Հայագաղութներու մէջ կը հովանաւորէ 25 կրթական օժանդներ. Նիկոսիա՝ Մեղրոնեան կրթական Հաստատութիւն, Պէլլուսթ՝ հինգ վարժարաններ, Մոնթրէալ, Մոնթէվիտէօ, Դամասկոս, Հայէպ, Թեհրան, Պուէ-

նոս Ալքէս, Աթէնք, ինչպէս նաեւ Սան Ֆերնանտօ, Տիթրոյթ, Ութթրիթաուն եւ Երեւան՝ Հայաստանի Ամերիկեան Համալսարանը: Հայագաղութներու ուսանողներուն ընդհանուր թիւն է 7000:

Հանդիսարաններ՝ Նազարեան սրահ (Հայէպ), Նազարեան սրահ (Նիւ Ճըրքի), Նազարեան սրահ (Պուէնոս Ալքէս), Մարզական համալիր՝ Նազարեան կեդրոն (Սան Ֆերնանտօ հովիտ, Բանոկա Փարք, Գալիֆորնիա), Սարեան Աղաղեմիա (Հայէպ) Երիտասարդական կեդրոններ՝ Ալեք Մանուկեան կեդրոն (Պէլլուսթ), Երուանդ Տեմիրճեան կեդրոն (Այնթապա), Նազարեան կեդրոն եւ նախակրթարան (Մոնթէվիտէօ, Ուրուկուէյ):

Ալեք եւ Մարի Մանուկեան հիմնադրութեան շնորհիւ իրագործուած են 13 ձեռնարկներ (Փարիզ, Թեհրան, Պէլլուսթ, Ջահէ, Վալանս, Զրանսա, Ալմերո՝ Հոլանտա, Գորտուպա՝ Արժանթին, Մոնթէվիտէօ՝ Ուրուկուէյ, Սան Փաուլօ՝ Պրագայի, Մոնթրէալ՝ Գանատա, Պուէնոս Ալքէս՝ Արժանթին, Թորոնթօ՝ Գանատա, ԱՄՆ):

ՀԲԸՄի վարժարաններ հիմնուած Ալեք Մանուկեանի կողմէ, ինչպէս Ստոթֆիլտ՝ ԱՄՆ, Տիթրոյթ՝ ԱՄՆ, Նիւ Եորք՝ ԱՄՆ, Երուսղէմ՝ Պաղեստին, էլջմիածին՝ Հայաստան:

Հայաստանի Ամերիկեան Համալսարանը հիմնուած է 1901ին: Այս տարեջրկանին ունի 800 ուսանողներ: Բարեգործականը յատկացուցած է համարարանին տարեկան մէկ միլիոն տոլար, նաեւ սակէ գատ կը հոգայ դասախօսական կազմին եւ ուսանողներուն սնտակաւ վճարումները:

Ալեք եւ Մարի Մանուկեան Մշակութային Հիմնադրը, որ ստեղծուած է 1989ին, 10 միլիոն տոլար դրամադուէլ մը ունէր 1980ին: Ամէն տարի, կը յատկացնէ 125 հազար տոլար, որպէս հանգստեան թոշակ, 131 մտաւորականներու եւ ուսուցիչներու, նաեւ կը նպաստէ հրատարակական գործերու:

ՀԲԸՄը ունի 70 մասնաճիւղեր, 21 երկիրներու մէջ: Անդամներուն թիւը կը հասնի մօտ 25 հազարի: Կը հովանաւորէ ուսանողական միջազգային կրթական 325 կրթաթոշակներ, նաեւ հայ թիկնածուներու:

Միութիւնը ունեցած է 1910-1905, հարիւրաւոր նուիրատուութիւններ, որոնց հասոյթէն կը նպաստաւորուին շուրջ 400 հազար հայեր, աշխարհի 22 երկիրներու մէջ տարածուած:

1989էն ի վեր, 40 հազար նուիրատուներ 17 միլիոն տոլար տրամադրած են Միութեան, անոր Հայաստանեան ծրագիրներու իրականացման:

Ժամանակին, նախաինքնամական օգնութիւն ընծայած է ազատագրական շարժումներուն: Այնթապի հերոսամարտին, որբահաւաքի եւ որբանոցներու հիմնադրութեան, Հայաստանի երկրաշարժին, սովեալ Հայաստանին, Արցախին եւ այլն: Բուժման համար Հայաստանէն ԱՄՆ փոխադրած է հիւանդներ:

Միութեան Հայ Երիտ. Ընկերակցութիւնը պարբերաբար կը կազմակերպէ

Նուստարդեան խաղեր:

Յկեանս նախագահ Ալեք Մանուկեանի նուիրատուութիւններու զոււարթ կ'անցնի 60 միլիոն տորաբը: Եղած է մշտական գորակիւ Ս. Էլմիճանի եւ բարերար անոր Գանձատան:

Յատուկ հիմնադրամով մը, 1949ին, որ այսօր կը հասնի 16 միլիոն տորարի, ան յատկացուցած է ցարդ 4 միլիոն տորար հարկական յարանուանութեանց եկեղեցիներուն:

Ալեք Մանուկեանի բարերարութեանց գլուխ գործոցը պիտի ըլլայ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ տաճարին կառուցումը, Երեւանի մէջ, Հայոց զբոստոնութեան ընդունման 1700ամեայ տարեդարձին առթիւ, անմահանուն Երջ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին առաջարկով:

Առ ի գնահատանք, 1965ի Մարտ ամսուն, Ալեք Մանուկեան Հայաստանի պետութեան կողմէ արժանացաւ «Ազգային Հերոս»ի շքանշանին եւ «պատուոյ քաղաքացի»ի կոչումին:

Նախագահին ամերիկեան ձեռնարկներու եւ համախարաններու յատկացումը, կը հասնի բազմաթիւ միլիոններու:

Անմահանուն ազգային բարերար Ալեք Մանուկեանին բարեգործութեան ջանք անցաւ իր դստեր՝ Տիկ. Լուիզ Մանուկեան Սիմոնին, որ հմտութեամբ կը ղեկավարէ ՀԲԸ Միութեան նաւը: Իր մասնաւոր հոգածութեան առարկայ կ'ընէ ազատ, անկախ Հայաստանի Հանրապետութիւնը, առանց մոռնալու Սփիւռքի գաղթօճախներուն կարիքները:

Բարեգործութեան Աստուածահաճոյ այս սրբազան գործը կը ծաւալեն նաեւ ի շարս այլոց՝ Գրգր Գրիգորեան, Հրաբ Յովնանեան, Վաչէ Մանուկեան, Վահան Շամբեան, Մեծատուրեան, Մելանթին եւ Հայկ Արսլանեան եղբայրներ, Գէորգ Մոմճեան, Լեւոն Նազարեան եւ որդիք՝ Կարպիտ, Նուպար, Նազար, Յարութիւն, Արմէն եւ Կարօ Յարութիւնեան եղբայրներ, Գէորգ Նազարեան, Կիւլպէնկեան Հիմնարկութիւն, Գէորգ Պազրոնեան, Մելգոնեան եղբայրներ, Երուանդ Հիւսիսեան, Տիկ. Սընտիկեան, Յարութիւն Սիմոնեան եւ բազմաթիւ ուրիշներ:

Կ'արժէ հոս վերջիւղել առաջին նախագահ Պողոս Փաշա Նուպարին բարերարութիւնները: 1924ին ան կը հիմնէ հայ ուսանողական Նուպարեան հիմնարկութիւնը՝ Պրիւբսիլի մէջ, 20,000 անգլիական ոսկի զոււարթով: Անգլիոյ Օքսֆորտ համալսարանին մէջ հաստատել կու տայ հայ գրականութիւն եւ պատմութիւն, նուիրելով 4000 անգլ. ոսկի:

Փարիզի համալսարանական միջազգային ուսանին մէջ, Պուլվար Ժուրտան, 1930ին շինել սուած է Մարի Նուպար հայ ուսանողական տունը, ծախելով 3 միլիոն ֆրանք եւ օժտած զայն գրադարանով մը: Երեւանի մէջ կառուցել սուած է Մարի Նուպար ակնաբուժական հիւանդանոցը 14-260 ոսկի զոււարթով:

Դարուհի Յակոբեան մայրանոցը, Նուպարաչէնի հիմնարկութեան մասնակցած է 100.000 տորարով: Նուիրելով 26.000 ոսկի, տպագրել սուած է Մաղաքիա Արք. Օրմանեանի Ազգապատումին Գ. հատորը:

1915ին նշանակուած է Ազգային պատուիրակութեան պետ: Հիմը դրած է Նուպարեան Մատենադարանին, 1928ին, Փարիզ, գնելով 6 սենեակնոց յարկարաթին մը, 300.000 ֆրանքի:

Պողոս Փաշա Նուպար (1851-1930, Յունիս 25) ասրեցաւ շուրջ ութսուն տարի, որուն կէսը նուիրեց հայ ժողովուրդին ու հայկական դատին:

Այս առթիւ, յուզիչ, պատկերալից եւ յատկանշական դրուագ մը Պողոս Փաշայի կեանքէն, ակնաստեի վկայութեամբ՝ Տէր Վարդան Աւագ ՔՏՆյ. Տիւր-ժարանի) ցոյց տարւ համար թէ ինչպիսի բարոյական բարձր անստգլխտ արժանիքներու տէր անձնաւորութիւններ էին եւ են ՀԲԸ Միութեան հիմնադիրները եւ յաջորդող նախագահները:

«Մեծ պահքի, ուրբաթ առաւօտ էր: Աղեքսանդրիոյ Ս. Պողոս եկեղեցին զգեցած էր տօնական օրերու շքեղութիւն, պատճառը՝ Պողոս Նուպար Փաշայի այցելութիւնն էր, որ կու գար Փարիզէն ամէն տարի պահոց շրջանին, խորագրած բարեպաշտութեամբ Ս. Բաղդրիթիւն առնելու:

«Ես գիտեր ո՛րքիլ է ի՛նչպէս դարիպ ծերունի մը՝ ցնցոտիներով ծածկուած եւ հնամաշ ծակոտն կօշիկներով՝ ծուկին եկած ճոր գորգիկ վրայ եւ ինքնամուտաց վերացումով կ'աղօթէր, ձեռքերը կործքին վրայ խաչաձեւած:

«Բահանց՝ այս որ տեսաւ... իր բազուկին ու ձեռքին պոկուած շիկերով բոցեց ծերուկին ուր եւ գնդակի մը պէս շարտեց քանի մը քայլ անդին:

Պողոս Նուպարի ուշադրութեան չվրիպեցաւ այս նողկալի տեսարանը: Ան ուղղութեա դէպի ծերունին, ծոցեան, կանգնեցոց զայն, բոցեց անոր սակրոտ ձեռքէն եւ տարաւ կեցոց դասին մէջտեղ՝ գորգիկ վրայ:

– Չաւակա, – ըսաւ. Բագիւ լսելի ծայնով մը, – դու՛ն ալ իճնի հետ ծուկի կեկոր այս գորգիկ վրայ: Աստուծոյ տան մէջ երկուքս ալ Բաւասար ենք»:

Ան... յաւիտեաններու մէջ փոստաւորեալ մեծութիւն մըն է եւ այդ լուսապսակով այ՝ պիտի մնայ մշտականեղան իրերայաջորդ սերունդներու կեանքին մէջ, որքան ժամանակ բարեգործականը իր աշխարհատարած մասնաճիւղերով եւ բանակային անդամակցութեամբ կը դոյատեւէ սիրոյ եւ զթութեան ճակատներու վրայ՝ պայքարելով իշուատութեան, զրկուածութեան եւ տգիտութեան դէմ:

Պողոս Նուպար եւ իր արժանաւորազոյն յաջորդը, բարեգործութեան անմահ դաստիարակը՝ Ալեք Մանուկեան, Աստուածային ծրագիրով ստեղծուած անկրկնելի ձեռնդներն են հայ նահատակ ժողովուրդի կեանքին մէջ:

Անոնց զեղանձանչ փառքը պիտի նսեմանայ ո՛չ մէկ ժամանակ եւ հարու-

թեան յարտեւումին հետ, դարէ դար, սերունդէ սերունդ պիտի շողան հայրենի երկնակամարին վրայ, որպէս երկինքէն առաքուած գթութեան, հեզութեան, զոհողութեան առաքելափայ կերպարներ:

Կեանքի մէջ իսկական մեծութիւնը այն մահականացու մարդն է, որուն սիրտը կը գործէ գթութեան եւ զոհողութեան սրբազգած բաբախումներով: ՀԲԸՄը Հայաստանի մէջ կատարած է հետեւեալ ուշադրաւ իրականացումները:—

Ա.— Հայաստանի Ամերիկեան Համալսարան, հիմնուած 1991ին: 1991–1992 տարեկանին ունեցած է 100 ուսանողներ, 1992–93ին 200, 1993–94ին 450, 1994–95ին 800 ուսանողներ: Միութիւնը տարեկան մէկ միլիոն տոլարէն զատ, կը հոգայ նաեւ դաստիարակներուն եւ ուսանողներուն ամսականները: Շրջանաւարտ ուսանողները կը մասնագիտանան ԱՄՆի մէջ:

Բ.— Գեղազիտական եւ վերականգնողական վիրաբուժական կեդրոն. ունի 22 անկողին, երկու վիրաբուժական սրահ եւ ինամատարական բաժին մը: Միութիւնը 1-4 միլիոն տոլար արժողութեամբ բժշկական սարքեր առաքած է:

Գ.— 10 հազար թոն սննդամթերք պահող սառնարան, որ հաստատուած է Գիւմրի եւ արժած է 4-8 միլիոն տոլար:

Դ.— Մանկական ստեղծագործական կեդրոններ, ստեղծուած 1933ին, 800 երախաներ կը յաճախեն, դպրոցական ժամերէն ետք:

Ե.— Սեւեակն ընծայարան, հնգամեայ ծրագիրով, օրական 12 ժամ դասանդութիւն:

Զ.— Ապուրի խոհանոցներ, 1993էն սկսեալ, շաբաթը 6 օր, 300 հոգի կը ստանան կերակուր:

Է.— 100 հոգինոց ֆիլհարմոնիա, 1993էն սկսեալ, երաժշտագէտ եւ խմբավար Լուսի Ճգնաւորեանի ղեկավարութեամբ, տրամադրելով նիւթական միջոցներ, երաժշտական արդիական գործիքներով իրականացնելով ժայնագրութիւններ, սատարելով անոնց հիւրախաղերուն՝ Հայաստանէն դուրս:

Միութիւնը նոյնպէս նիւթապէս կ'օգնէ Գիւմրիի սիմֆոնիք խումբին, յայտնի կազմին եւ երգչախումբին:

ՀԲԸՄը Հայկաի մէջ հիմնուած է 10 Մարտ 1910ին, նախաձեռնութեամբ Արաճառցական տեղապահ Շահէ Մ. Վրդ. Գապարեանի, իր կազմին մէջ ունենալով Տոքթ. Սամուէլ Շմաւոնեանը, Գաբրիէլ Խանճեանը, Իսկենտէր Գաբաճեանը, Օննիկ եւ Արմէն Մազլումեաններ (հիւրանոց Պարոն): Յետագային գործունեայ անդամ-ղեկավարներ եղած են՝ Տոքթ. Յովհաննէս Հրեչտակեան, Երուանդ Զօրեան, Արմէն Մազլումեան, Մարտիրոս Գունտաբճեան, Մեթր Գեղամ Երէջեան, Արամ Մինասեան, Տոքթ. Ռուպեր Ծեպեճեան, Մեթր Ռուբէն Պողոսեան, Գառնիկ Գալսեան, Տոքթ. Միքայէլ Տիմֆեան, Տոքթ. Օսկարտ Հրեչտակեան եւ այլն:

Միութեան գործունէութեան պատկը եղած է Նաճարեան-Կիլիպէնկեան կեդրոնական երկրորդական վարժարանի ստեղծումը, Սարեան Ակադեմիան, Բարեգործականի Նազարեան հանդիսապահը, ՀԵԸԻ գրադուումը, Աղամեան թատերախումբը, Սպենդիարեան նուագախումբն եւ երգչախումբը, Բարեգործականի հակա չէնքը, դարմանատունով եւ այլն:

Վերջերս, արարական պատկերասփիռէն ցուցադրուեցաւ եգիպտական երկարատե ֆիլմաչար մը՝ «Պատուազէթ էլ Հայունի» (Հայունէէն Դարպար) վերնագրով, ուր Պօղոս Փաշա Նուպարին հօր՝ Նուպար Փաշայի կերպարը ներկայացուած էր սխալ եւ հակապատմական աննպատ լոյսի տակ, որպէս Եգիպտոսի մէջ օտար ներկայութեան ջատագով, մինչդեռ Փաշան իր ամբողջ կեանքը, 50 տարի, նուիրած էր Եգիպտոսի բարորութեան, անկիրութեան եւ յառաջդիմութեան: Ահաւասիկ կարգ մը ապացոյցներ.— Ֆերոսիանտ սըր Լեւսեփը (հեղինակ հակապական ծրագրին) եւ Սուէզի Ջրանցքի Փրանսական ընկերութիւնը եգիպտական կառավարութեան ստորագրել տուած էին համաձայնագիր մը, որուն համաձայն Ջրանցքի երկու ասիերուն վրայ գտնուող եւ տասնեակ քիլոմետրներու վրայ տարածուող հողերը պիտի պատկանէին Փրանսացիներուն: 1863-64 թուականներուն աշնան եւ ձմրան Նուպար Փաշա զբացած է Փարիզ եւ չեղեալ յայտարարել տուած համաձայնագիրը ազատագրելով Եգիպտոսը հողային զբաւումէ. Նուպար Փաշան 1863ին հասաւ իր լիցիտութեան բարձրակէտին, դառնալով իսմայիլ Փաշայի աջ բազուկը եւ Եգիպտոսի ոչ պաշտօնական մեծ վեզիրը: Ան նախապէս գլխաւորեց երկաթուղային գիծերու ընդհանորէնութիւնը, նաեւ զլուս հանեց 1860-62 թուականներուն դրամական համաձայնութիւնները, ստեղծեց խառն դատարանները:

Փարիզէն վերադարձին, կը նշանակուի արտաքին գործոց նախարար: Նախապէս հանրօգուտ շինութեանց նախարար էր:

Երախտապարտ Եգիպտոսը 1904ին, 3 Յունիսին Աղէքսանդրիոյ մէջ բարձրացուց Նուպար Փաշային արձանը, Գահիրէի մէջ փողոց մը անուանուեցաւ «Շարէհ Նուպար» (Նուպարի պողոտայ):

Եգիպտոսի հողագործները զինք յորջործած են «Ապու Միլա» (Ջուրերու հայրը), «Ապու Ֆեյլահ» (Մշակի հայրը): Ջրանցք մը «Նուպարիէ», երկաթուղի կայան մը՝ «Մուհամմաթ Նուպարի» (Նուպարի կայարան), բամբակի աղիւս մէկ տեսակը՝ «Ըթթըն Նուպարի»: Կը խորհիմ աբաբներ բաւարար է հերքելու բեմադրիչին շարամտութիւնը եւ սոցիալիստիկը:

Կը փափաքիք վերջացնել մեր յօդուածը, արձանագրելով ՀԲԸ Միութեան զոյգ նախագահներուն կտակ-պատգամովը՝ Պօղոս Փաշային արտասանած պատմական խօսքով.

Պօղոս Նուպար Փաշա. «Աստարել մեր հայրենիքի վերաշինութեան, Հայաստանից, որուն պէտք է միշտ լսուից մեր լուսալից աչքերը»:

65 տարիներ ետք (Պօղոս Փաշան վախճանած էր 24 Յունիս 1930)ին ցկեանս նախագահ Ալեք Մանուկեան կը յայտարարէ 1905ին. «Ափիուքի մը կայքերուն մէջ, ուր որ ալ գտնուիճք, աշխատիճք ու գործենճք, մեր այքերը յառած Մասիսներուն, հայկական յատրծութեան տեսլականով, մեր ուժերը Հայաստանի հետ են, Հայաստանի համար են: Ինչ բանի որ Հայաստանը կարօտ է, մենք պարտաւոր ենք բաւարարելու»:

4 Մարտ 1908ին, Գահիրէի Գալուստեան Ազգային վարժարանի նոր շէնքին հիմնարկէքին առթիւ, Պօղոս Փաշա Նուպարին արտասանած խօսքերը, ապրան տարիներ յետոյ, կը հնչեն այնքան այժմէական եւ անյետաձգելի. «Միմիայն բոլոր հայոցս Միութիւնն է որ պիտի կրնայ յաջողցնել այս յոյսին (Միութեան) իրականացումը: Մեր ճիգերը ամուլ մնալու կը դատապարտուիճ, երբ համերաշխութեան ոգիէ մը չառաջնորդուիճք: Այսպիսի նպատակ մը արժանի է միացնելու ամէն բարի կամեցողութիւնները»:

Ո՛վ ականջ ունի, թող լսէ:

«Խօսնակ», Մայիս 1996

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՄ ԻՍԿԱԿԱՆ ԹԻՒՆ

Դոկտ. Անդրանիկ Զեյնպեան, — «Զարթօնք», 20 Օգոստ. 1997 թուակիր, — ստորագրած էր փաստագրական ուշադրաւ յօդուած մը՝ Հայ ազգայնականութեան թիւին մասին, 301—1920 թուականներուն. որպէս եզրակացութիւն հեղինակը հայ նահատակներուն թիւը ցոյց կու տայ 1.860.000, փոխան ենթադրեալ մէկուկէս միլիոնի:

Նախ ականարկ մը նետենք յօդուածին տուեայներուն հայ ազգայնականութեան թիւին մասին, սկսեալ 301 թուականէն երբ քրիստոնեայ դարձաւ հայ ժողովուրդը: Սոյն ժամանակաշրջանին հայոց թիւն էր 4.000.000:

Հայ ժողովուրդի քրիստոնէութեան դարձէն շուրջ 700 տարի ետք, 11րդ դարու սկիզբները, հայերը 4.000.000էն բարձրացած էին 6.000.000ի Միայն 2.000.000 յաւելում մը եօթը դարերու ընթացքին, գլխաւոր պատճառ ունենալով բիւզանդացի յոյներուն եւ արաբներուն կեղեքումներն ու հարստահարութիւնները:

Սելճուքներու, թիւրքմէններու, մոնղոլ—թաթարներու եւ օսմանցի թուրքերուն Փոքր Ասիա ժամանումը, առաւել՝ տեղացի վաչկատուն ու վայրագ քրիւտներուն եւ ճելանիներու սարսափը, 1473 թուականին թուրք—պարսկական պատերազմը հայկական հողի վրայ, որ տևեց 300 տարի, աման կարելիութիւն չտուին հայ ազգայնականութեան, ընդհակառակը ծայր տուած էր գաղթի ընդհանուր շարժում մը:

1880 թուականին, Մկրտիչ Արք. Խրիմեան, հրահանգեց իր օգնականներուն՝ Արիստակէս Վրդ. Սարգիսեանին եւ Գարեգին Եպսկ. Սրուանձտեանցին, որպէսզի կատարեն Թուրքիոյ հայ բնակչութեան մարդահամարը, որով յայտնի եղաւ որ ամբողջ Թուրքիոյ հայութեան թիւն էր 2.600.000 թրքական 17-210.000ի ղիմաց. հետաքրքրական է գիտնալ թէ վան գաւառի մէջ հայոց թիւն էր 180.000—200.000, թուրքերու 30.000ի եւ քրիւտներուն 130.000ի ղէմ:

Խրիմեան Հայրիկի մարդահամարէն երեւան կու գայ թէ 1000 թուականին 6.000.000 հասնող հայ ազգայնականութիւնը մօտ 900 տարիներ ետք, մինչեւ 1881 թուական, ոչ միայն չէր աւելցած, այլ՝ կէսէն աւելի պակասած

էր՝

1880էն մինչեւ 1915, 35 տարիներու ընթացքին, Հայութիւնը տուաւ 300.000 զոճ համարեան ջարդերուն. 10.000 զոճ Սասնոյ կռիւներուն եւ 30.000 զոճ Առանալի կոտորածին. ընդամէնը՝ 340.000 զոճ. մինչեւ 24 Ապրիլ 1915, Հայութեան թիւը մնացած էր 2.980.000:

24 Ապրիլ 1915էն առաջ, Կ. Պոլսոյ, Իգժմիրի, Թուրքիոյ արեւմտեան ծովեզերեայ շրջաններուն Հայ վերապրողներուն թիւը եղած է 300.000:

Թուրքիոյ արեւելեան սամանամերձ գաւառներէն 350.000 Հայութիւն ապաստանած էր Անդրկովկաս:

Հեղինակ Դոկտ. Սուրբոյ անապատներէն վերապրած Հայերուն թիւը ցոյց կու տայ 150.000, ինչ որ անհաւանական եւ անընդունելի թիւ մըն է. քանի որ սուրիական անապատներ (Գաթմա, Ռաքթա, Շէտտէտէ, Տէր—Չօր, Մեքէնէ եւ իր քարայրները, Ռապուր գետակի քովէն անխտակ հորերը) «Ելլած» էին Հազարաւոր Հայեր, եւ այլն: Այս ուղղութեամբ տեսնել յուշերը՝ Պապական Ռոմային, Սարգիս Լալէճեանին, Տիգրան Ճէպէճեանին, Գրիգոր Պօղարեանին, Պալաքեան Վրդին, Կարօ Համալեանին եւ այլն: Հազուադէպ վերապրողներ եղան, որոնք ազատեցան հրաշքով, ոմանք գիշերանք փախչելով, ոմանք մեծեալներու տակ մնալով, քանի մը Հատ պէտէվիներու կողմէ փրկուելով, բոլորը Հազիւ մատի վրայ Համրուող: Այո՛, վերապրողներ եղան, սակայն ո՛չ թէ սուրիական անապատի անձաքածիր աւազներէն, այլ Սուրբոյ Հարաւէն՝ Հատուրանի շրջանէն. Դամասկոս, Տէրաս, Սելիմիէ, եւ այլն. բարի արարներուն հիւրընկալ ընթացքին շնորհիւ:

Անհրաժեշտ սոյն նախաբանէն ետք, անցնինք մեր բուն նիւթին:

20ական եւ 30ական թուականներուն, Հայէպի մէջ կ'ապրէր գերմանազէտ Հայ վաստակաւոր ուսուցիչ մը՝ Մարութ Սինանեան, որ կը պաշտօնավարէր Հայկազեան դպրոցին մէջ: Ատեն մը ես ալ հետեւեցայ անոր դասերուն: Օր մը տեղեկանալով, որ ես թուրքալիստական փորձեր կ'ընեմ, ըսաւ թէ ինձի պիտի ցոյց տար բացառիկ վաւերագրական արժէք ունեցող գերմանական աղբիւր մը: Բերաւ երկու գերմաներէն թերթեր, մին Պետլիմը Թաձօթ Պլաթիի 1914ի թիւ մը, իսկ միւսը՝ Պետլիմը Զայթունկի 1921 թիւ մը: Առաջինը ունէր խմբագրական ծանօթութիւն մը, ուր կ'ըսէր հետեւեալը. «Իր ռազմագիտական նպատակներուն Համար, գերման ներքին գործոց նախարարութիւնը հրահանգած էր 1912 թուականին, Թուրքիոյ իր բոլոր հիւպատոսարաններուն, խորհրդապահական կերպով կատարել մարդահամար մը, երեւան հանելու համար Թուրքիոյ տարածքին Հայութեան ճշգրիտ թիւը, օգտագործելով նաեւ օսմանեան աղբիւրները եւ քրտարեան շրջանները: Թերթը ձեռք ձգած էր օսմանագիտական արժէք ունեցող այլ տօսիչն եւ կը հրատարակէր Հայութեան թիւը, վիլայէթ առ վիլայէթ (դրուած էին անունները): Վերջաւորութեան, Հայոց ազգարեակցութեան թիւը ցոյց կու տար 3.500.000: Պոլսոյ պատրիարքարանը, իր մարդահամարին համար, անշուշտ չէր կրնար օգտագործել օսմանեան աղբիւրները եւ

Հայերով բնակեցուած քրտական շրջանները, որոնք իրաւացիօրէն անմատչելի մնացած էին իրենց հասողութենէն. նոյն թուականին 1912ին, ըստ պատրիարքարանի թիւերուն, Հայեր Թուրքիոյ մէջ 2.100.000ի իժած էին (Հայր Վահան Յովհաննէսեան, Պատմութիւն Հայոց, 1100—1956, էջ 341), վերջին (1915—1918) ահաւոր կոտորածը Հայերէն խեց շուրջ 1.100.000 զոհեր, մնացածներէն 800.000 անձեր կրցան ապաստանի կոփկաս եւ ալլուր:

Պետլիմը Զայթունկի 1921ի թիւով մը, յօդուածագիր Հանց Նիւման, Հայոց ցեղասպանութեան նուիրուած իր յօդուածով, ուր կը վկայակոչէ գերման պատերազմական նախարարութեան կազմած, Հայ ազգարեակցութեան մարդահամարը, 1912ին, Մեծ Նիւռնի Հայ նահատակներուն թիւը ցոյց կու տար 3.000.000 (երեք միլիոն) միայն, 500.000 մնացորդացով:

Ժամանակին, մեծ արձագանգ գտնող լեճ պատմադէտ եւ Հայագէտ Պոկտան Կեմպարքիի նշանաւոր «Բաց Նամակ Թուրք Բարեկամիս» գրութեան առթիւ, իմ շնորհաւորութիւններս յղած էի յօդուածագրին եւ քննադատած վերջին խօսքը՝ «Թուրք ազնուական ժողովուրդ», ա՛յնքան փաստարկներով ներկայացնել Հայոց ցեղասպանութիւնը եւ ի վերջոյ «ազնուական կոչել զայն գործադրող ժողովուրդը, անպայման վրէպի եւ անուշադրութեան արդիւնք կրնար ըլլալ: Արդարեւ, մեծահոգի պատմաբանը, նամակով մը ներողամտութիւն խնդրեց իր ակամայ անփութօրէն գործածած «ազնուական»ին համար:

Առիթէն օգտուելով, Հայագէտին տեղեկացուցի գերման երկու թերթերուն տուած տեղեկութիւնները Թուրքիոյ Հայոց իսկական թիւէն 3.500.000 եւ Մեծ եղեռնէն 3.000.000 նահատակներուն համար, խնդրելով լուսարանութիւններ այս առթիւ. պատասխանեց թէ տուած թիւերը ճշմարիտ էին, քանի որ ան հաւաքած էր անփխտելի վաւերաթուղթեր այս ուղղութեամբ, լեճ եւ գերման պատերազմական նախարարութիւններու արխիւներէն: Սակայն, զժբախտաբար իր բոլոր հաւաքած վաւերաթուղթերը հրոյ ճարակ եղած էին Վարչաւիդ մեծ հրքեշին ժամանակ:

Ահաւաստիկ հրատապ լուսարանութեան կարօտ խիստ այժմէական եւ Հայոց ցեղասպանութեան պատմութեան համար կենսական խնդիր մը. «Ենթադրեալ» մէկուկէս միլիոնին ճիշդ կրկինը՝ երեք միլիոն:

Վերոյիշեալ տուեալները բարեհաճ ուշադրութեան կը յանձնենք Հայոց ցեղասպանութեան մեծ մասնագէտներ՝ Դոկտ. Վահագն Տատրեանի եւ Դոկտ. Ռիչարտ Յովհաննէսեանի:

«Խօսմակ», Ապրիլ 1998

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ ԵՒ ՎԱՐԴԳԵՍ ՀԱԼԷՊԻ ՍԷՋ

1915ի Ապրիլիան արհաւիրքի օրերուն, ձերբակալուելով ուրիշ հարիւրաւոր հայ մտաւորականներու կարգին, հայ նորավէպի իշխան, հայ իմացականութեան պաշտօն դէմքերէն, անդուզական հետտոր, ազգային երեսփոխան, Պոլսէն ալ մեկտու սօսմանեան փարլամենթին՝ Գրիգոր Զօհրապ եւ իր ընկերը՝ Վարդգէս Սերենկիւլեան՝ ազգային երեսփոխան եւ Կարնոյ մեկտու. քաջ բնմտասաց, իրենց մահուան ճանապարհին, որպէս առաջին հանգրուան, շոգեկառքով զրկուած էին Հայէպ, ուր պահ դրուած Պապ էյ Ֆարաճի Ռոտըլ Ֆարաճ պանդուրը, հսկողութեան տակ գաղտնի ոստիկանի մը:

Համիտեան ռեժիմի վերջին օրերուն, հայածանցը սկսած էր Գրիգոր Զօհրապին դէմ, — նոյնիսկ արգելած էին դատ վարել, — սպաստանած էր Ֆրանսա, ուր Մարսէլ Լէար ծածկանուծումով, ֆրանսերէն հրատարակած էր գիրք մը՝ «Հայկական Հարցը փաստաթուղթերու լոյսին տակ»: Հետաքրքրական է գիտնալ, թէ ան թուրքոյ հայութեան թուաքանակը կը նշէր 3,000,000 փոխան ազգային պատրիարքարանի 2,800,000ի, իսկ գերմանական աղբիւրները ցոյց կու տային 3,500,000:

1908ի խարեպատիր եւ աղէտալի «սահմանադրութեան» հռչակումէն խանդավառ, Զօհրապ վերադարձաւ Պոլիս, մաս կազմելով մասունական բարձր լոծերուն եւ ցոյց տալով համակրանք եւ գործակցութիւն իթթիհատական շարժումին, ըլլալ ազգային ժողովներու ընթացքին, ըլլալ սօսմանեան խորհրդարանի նիստերուն: Ան հաւատարմութեամբ էր, թէ շնորհիւ երիտթուրքերու, նոր արշալոյս պիտի ծագէր սօսմանեան բռնատիրութեան տակ ապրող ժողովուրդներուն, սակայն մղոններով հեռու էր կռահել, թէ իթթիհատի ռեժիմը պիտի նշանակէր հայ ժողովուրդին բնաջնջումը, ցեղասպանութիւնը: Անմոռանալի պիտի մնայ իր զգայացուցչաց ատենարանութիւնը Պոլսոյ Թագսիմի պարտէզին մէջ, թուրք եւ հայ նահատակներու սգահանդէսին (1908 Օգոստոս):

Հայէպի իրենց կեցութեան ընթացքին (25 օրեր — Յունիս—Յունիս) երկու փորձեր տեղի ունեցան տարագիրները ազատագրելու՝ փախուստի

միջոցաւ, որոնք կարեւոր են Զօհրապագիտութեան համար:

Առաջին փորձին համար սիրաշօթար անտիպ պատու մը կը պարտինք հալիպահայ յայտնի հաւաքորդ եւ պահեստադէտ Պրն. Սորէն Ֆիլաճեանին: Այդ օրերուն, Հայէպի առաջնորդական տեղապահն էր Տ. Յարութիւն Ա. Քհնյ. Յայեան: Հայ երկաթուղայիններուն միջոցաւ լաճ ըլլալով անոնց ժամանումը, ոստիկանապետ Ֆիլքրի պետի արտօնութեամբ դացած էր պանդուկ անոնց հոգեւոր միթիարութիւն տալու: Վերադարձին, 1915ի Յունիսին, Հոգեւորական բակը կը հանդիպի Ս. Քառասուն Մանկանց եկեղեցոյ դպրապետ՝ սասունցի Պաշիկ Յակոբեանին (յետագային Տէր Պաշատուր): Անոր կը պատմէ ճակտին քրտինքները սրբելով. «Երբ Զօհրապին սենեակը մտայ, պահապան գաղտնի ոստիկանը պոռաց վրաս ըսելով. «Էրմենիճէ հասախ, թուրքէն քոնուշաչաքըն, փափագ» (հայերէն խօսիլը արգիւտած է. թուրքերէն պէտք է խօսիս): Տեղէն ցատկելով պոռակաց Վարդգէս. բայց Զօհրապ զիցք համդարտնցուց եւ խնդրեց որ «Նարեկ» կարդամ. «Ընկալ քաղցրութեամբ Տէր Աստուած Հօր»... Կարծես բառեր խնդրեցին կոկորդա եւ չկրցայ շարունակել ընթացումը: Վարդգէս լուռ էր. իսկ արցունքները կը վազէին Զօհրապի աչքերէն. ան հիւանդ էր. կարծես դառնօրէն կը զգար մտաւայտ վախճանը»:

Տէր Հօրմէն բաժնուկելով, Պաշիկ կը վազէ յայտնի մարգիշ եւ որբարիտոյ Լեւոն Արզարեանին եւ Տոքթ. Տիլարան Պարտազճեանին մօտ ու կը պատմէ եղելութիւնը, իսկոյն կը ծրագրեն փախուստի միջոց մը, որ հետեւեալն էր. Լեւոնն ու Տիլարանը գիտուած պիտի սպասէին պանդուկի դրան մօտ, Պաշիկը պիտի բարձրանար վեր ու ատրճանակով գիտաթափ պիտի ընէր պահակ ոստիկանը ու երկու պարագաները առեւանդելով դուրս պիտի դային պանդուկէն, որուն մօտ պիտի սպասէր քիլիսցի քաջարի հայ կառապան մը: Պուժը չորսով պիտի սուրբար սուրիական անապատի ուղղութեամբ: 1915ի Յունիս 1ի առաւօտուն, ժամը 9:00ին, ազատարարները հասան պանդուկ, որ չըջապատուած էր ժանտարմներով եւ գաղութի ոստիկաններով: Երկու կառքեր կը սպասէին դուրսը: Պաշիկը ծպտուած էր որպէս արար Ֆելլահ: Ան բարձրացաւ վեր, դէպի տարագիրներուն սենեակը: Վարդգէս զղազրգիտ կը ճեմէր սենեակին մէջ, իսկ Զօհրապ նստած էր աթուռի մը վրայ, բուրգէ ծածկուց մը ծուկներուն, կը դողար յուլիսեան արեւ-տաք օրերուն Յանկարծ պահակ ոստիկանը զգաստանելով սուրին ծայրը մօտեցնելով Պաշիկին կուրծքին, կը պոռայ. «Տըշարը չըք. փիս իրիփ» (դուրս ելիր, ազտու մարդ): Մրագիրը ջուր ինկած էր, քանի որ անկարելի էր նման պայմաններու տակ դուրս բերել տարագիրները: Չորս օր ետք անոնք ճամբայ հանուած էին դէպի Ուրֆա եւ նահատակուած սպանդանոցին մօտ, արիւնարուր Չեքեզ Ահմետին կողմէ:

Սակայն ըստ մեզի, եթէ նոյնիսկ հրաշքով ազատարարները հասնէին տարագիրներուն սենեակը, անոնք պիտի մերժէին փախուստի դիմել, քանի որ Զօհրապ, 21 Յունիս 1915ին, նամակ մը գրած էր իր կնոջ՝ Բարապի, որ-

պէսզի դիմէր Պոլսոյ իր մատն եղբայրներուն ու իթթիհատական ղեկավարներուն՝ Շէյխ ուլ Խալամ, էնվեր Փաշա, Խալիլ Պէյ ու Թալէաթ ու ամէն վարկեան մեծ յոյսով ու անուն վատաբանամբ կը սպասէին եղբորը՝ Թալէաթին գալիք աւետարեք հետազորին:

Մեր վերագրումը ակելի փաստացի դարձնելու համար կու տանք փախուստի երկրորդ տարբերակը, ակելի կատարեալ եւ հարիւրէն հարիւր արդիւնաւոր:

Գրիգոր Զօհրապ եւ Վարդգէս Հայէպ կեցութեան իրենց 25 օրուան շրջանին, առաջին իսկ օրէն, Օթէլ Պարոնի պարոններուն (Օննիկ եւ Արմէն Մազլումաններ) հոգածութիւնը վայելեցին:

Զօհրապ՝ օրուան ոստիկանապետ Ֆիքրի Պէյի կողմէ արտօնուած էր ուզած տեսնը երթալ Օթէլ Պարոն, ուր յաճախ կը մնար ճաշի: Պարոն Արմէնը կը վկայէ, թէ շէն կոչնական մը չէր: Օր մը շամփանիա կը բանայ Զօհրապ կը հրճուի, մտաբերելով իր երբեմնի կենցաղը, բայց յանկարծ կը տիրի զխաւկցելով իր կացութեան եւ ձեռքի բաժակը վար կը ղնէ, առանց կաթիլ մը խմելու:

Կուսակալ ձէլալ պէյ օգտուելով Զօհրապի տկարութենէն, զայն Տօթթ Ալթունեանի հիւանդանոցը փոխադրել կու տայ:

Օր մը, Պրն. Արմէն կ'ըսէ Զօհրապին. «Դուք իբրաւունք չունիք մեռնելու, դուք մեր ժողովուրդին հիմա ակելի պէտք էք. մենք ձեզ անվտանգ կը փախցնենք»: Ան կը պատասխանէ, թէ ինք կարճ ժամանակ մը առաջ, աշինքն ղէպի Հայէպ ջըռուկէ առաջ, ճաշած էր Թալէաթին հետ, որ զինք սպահովուցած էր, թէ իրեն համար եղածը պարզ ձեւակերպութիւն մըն է, ժամանակաւոր: Ուրեմն իր՝ փախուստը պիտի նշանակէր անվտանգութիւն բարեկամի մը նկատմամբ, որ վերին ղեկավարն էր կայսրութեան: Աւելին՝ ինք եւ Թալէաթ կը պատկանէին մատոնական կրօնատ Երիւրնթ օթեակին, կրօնատ Մեթլըր արխոդոսով: Խնդճ Զօհրապ, կ'անդիտանար որ «եղբայր» Թալէաթը ստորագրած էր իր մահովնը:

Փախուստի ծրագիրը մը կը մշակուի, քաղաքապետութեան բժշկապետ Տօթթ. Գրլընեանի եւ իր փոխանորդ Տօթթ. Թուֆիք Պէյին կողմէ, իրենց աջակից ունենալով Դամասկոսի արար երեսփոխան Շիւքրէ Պէյ էլ Ասալին: Գործը պիտի վարէր Հայէպի ազդեցիկ ընտանիքներէն՝ Համիտ էլ Ճապրի Անոր բարեկամները, տարագիրներու ճամբորդութեան ընթացքին, պիտի յարձակէին անոնց կառքին վրայ, որպէս աւազակներ ու զանոնք առեւանգելով պիտի փախցնէին ձեզիբէրի շրջանը, ուր հետքերին պիտի կորանցնէին:

Վրայ կը հասնի ձեմալ փաշան: Զօհրապ աղերսապիւր մը կու տայ անոր եւ Վարդգէս կը տեսնուի անոր հետ: Փաշային մեկնումին յախորդ օրն իսկ նոր կուսակալ պէտք էր. Սամի Պէյ անոնց ըսաւ, թէ պիտի մեկնէին փաշային հրամանով:

Զորքաւոր զիւրեք, 22 Յուլիս 1915ին, Տօթթ. Գրլընեան մաքուրի կ'ըն-

գորինակէ Զօհրապի ինքնակենսագրութիւնը, գոր պիտի ներկայացնէր Զօհրապ Տիարպեքիբի պատերազմական ատենին...:

Հինգշաբթի, 23 Յուլիսին, Տօթթ. Գրլընեան եւ Օննիկ Մազլումեան կ'ուղղուին ղէպի Օթէլ Ռոտ էլ Ֆարատ: Տօթթ. Մազլումեանին կը տեղեկացնէ փախուստի ծրագիրը, գոր կը յայտնեն տարագիրներուն: Զօհրապ կը խանդավառուի ու կը սկսի խորհրդակցել Վարդգէսին հետ, որ բոլորովն հակասակ էր:

Ան կ'ըսէ. «Տոթթոր, ես կաղ, ան ծեր ու հիւանդ, չեմ կարծեր որ կարենանք այս մեր վիճակով անապատները թափառիլ: Ես վստահ եմ, որ Տիարպեքիբի պատերազմական Ատեանիմ առջեւ, մենքզմեզ պիտի արդարացնենք: Միճղեա եթէ փախած ատեննիս բոնուիմք, այլեւս յոյսի ամեն դուռ կը փակուի մեր առջեւ»: Վարդգէս կը յամտուի եւ վերջիվերջոյ կը յաջողի համոզել նաեւ Զօհրապը:

Ինչպէս կը տեսնուի, ոչ մէկ մտավախութիւն Վարդգէսի եւ Զօհրապի մօտ, զիրենք սպասող եղբրական վախճանին համար, մանաւանդ որ Մարտ 31ի շարժման դժեղակ օրերուն, Զօհրապ փրկած էր հրէշներ Թալէաթին եւ Խալիլ պէյերուն կեանքը: Անոնք միամտութեան մորթ հագած էին: Նոյն մտավախութենէ զերծ էին նաեւ Գարեգին Խաթակ, Է. Ակնունի, Ռուրէն Զարգարեան, Տօթթ. Նազարէթ Տաղաւարեան եւ Թարութիւն Ճանկէօզեան, որոնք շարժմէ մը Հայէպի բանտին մէջ մնալէ յետոյ, ջըռուցան ղէպի Մեթլընէ, ուր նահատակուեցան:

Դահճնապետ Զերքեղ Աճեմտ կը պատմէ հպարտութեամբ. «Հալէպէն կլած էին, ճամբան հանդիպեցանք, իրենց կառքերը պաշարեցի: Քերթաթա Վարդգէսիմ ուղեղը մաուզերի գնդակով պայթեցուցի, յետոյ Զօհրապը ձեռք անցուցի, ոտքիս տակը առի, խոշոր քարով մը զլուխը ճզմեցի, ճզմեցի, ճզմեցի մինչեւ որ սատկեցաւ» եւ տակաւին թուրքը կը բարբառէ թէ ամէն ինչ «ուշտուրմա» է (չիմծո):

Ե՛կ վարդապետ, ու մի խելազարուիր: Նահատակ Շիւքրի պէյ էլ Ասալիի եղբորը, Սապրի պէյ էլ Ասալի, բանիցս յայտարարած է. «Մեղք Զօհրապին, կրնար փրկուիլ եւ չուզէ»:

Այսպէս, համատարած միամտութիւն ամենեցուն, դատապարտելի անձնասիրութիւն, անբուժելի բարեմտութիւն, հայ ղեկավարներուն մօտ: Դարերով ապրել անոնց հետ ու չկարենալ հակնալ անոնց հողեքանութիւնն ու մտայնութիւնը: Վանի թուրք զինուորներուն ղեկավար վենեզուելացի գորավազար կ'ըսէ. «Վա՛յ անոր, որ կը հաւատայ թուրքին խօսքին»: Տանք բանի մը պատկերայից օրինակներ:

Սահակ Կաթողիկոս քաջամարտիկ Ջէյթուեցեան. «Եթէ յանձնուիք, մեր բիթն իսկ չ'անցնիր սիւնէ»:

Գրիգոր Զօհրապ – Մեր փախուստը պիտի նշանակէ անվտանգութիւն բարեկամի մը նկատմամբ, որ վերին ղեկավարն է կայսրութեան: Իր ինքնակենսագրութիւնը պատրաստուած էր ինքզինքը արդարացնելու Տիարպեքիբի

պատերազմական ատենանին առջեւ...

Վարդգես — Ես օսմանցի եմ: Վախնալիք բան չունիմ:

Է. Ակնունքի — Մահուան համար չեմ գղջար, բայց կը գղջամ խարուելուս համար: Թալչաթ օր մը առաջ իրեն տեսութեան եկած էր:

Տոքթ. Ն. Տաղաւարեան — ՀԲԸ Միութեան կանոնադիրը թրքերէնի թարգմանած էր:

Հակառակ Ատանայի ջարդին զոհ գացած 30,000 հայերուն, կազմակերպուած իթիթիհատի կողմէ, Զօհրապ կ'ընէ Ազգային Ժողովի մէջ. «Ըմբռնելու ենք, որ պատահած աղէտը համիտեան շրջանի վերջին մէկ ցնցումն է: Ես վստահ եմ, որ մեր թուրք հայրենակիցները կարենից են մեր հայրենակիցները ազատելու խուժանէն, օսմանեան երեսփոխանական ժողովի արարքները քննադատել պատշաճութեան դէմ է եւ այս ժողովի իրաւասութեան վեր միանգամայն. մեր թուրք հայրենակիցներուն համար վիրաւորացիք է: Ժողովէն պիտի խնդրէի, որ հաւատք ունենան օսմանեան գերագոյն մարմնի բարի տրամադրութեանց»:

Հաւանարար, Զօհրապը կ'օտորած էր միամտութեան միջազգային մրցանիշը, տեղին է ըսել. «Վա'յ թեզ քաղաք, որ թագաւորը այսքան խոխա է, կ'օհ ու կ'կուշ»:

Է. Ակնունքի զօրավար Անդրանիկին. «Անդրանիկ ջան, այլեւ ո՛չ մէկ հայու քիթը պիտի չարիւնի»: Արդարեւ, ողջ քիթ չմնաց որ արիւնի:

Դաշնակցութեան Վիեննայի ընդհանուր ժողով (1907, Մարտ):

Տուէք ձեր քուէն իթիթիհատին, նրա համար աշխատելը հայի համար աշխատել է: Կեցցէ՛ ընկեր Փանջունին:

Երեք հօգիներ միայն լաւապէս հասկցած էին թուրքին հոգերանութիւնը:

Նուպար Փաշան՝ սուլթանին. «Տարիներէ ի վեր Թուրքիայէն դուրս ապրած ըլլալով, տեղւոյն կացութեան անտեղեակ եմ»:

«Փազանագուսպ» Օրմանեան պատրիարք, ազգային ղեկավարներուն «մի՛ խարուելք երեւոյթներէն, եւ մի ուրախանաք, ես լաւ հոտ չեմ առներ այս շարժումէն, կը վախնամ որ ծուղակ մը ըլլայ այս «սահմանադրութիւնը»՝ մեր վախճանը փութացնել եւ ամէն գաղտնիք չյայտնել: Ծշմարտութիւնը խօսած ըլլալուն համար պատրիարքը մահափորձի ենթարկուեցաւ:

Զօրավար Անդրանիկ. «Այդ ոճբագործներուն փոճակները, որոնք հոն նստած են, ես անոնց չեմ հաւատար: Երիտթուրքերու այդ համալի՛չ կարգախօսները թակարդ մըն են՝ ձեզ բոլորդ իր մէջը առնելու համար: Անդրանիկ կը թելադրէ անոնց, որ չերթան Պոլիս. «Ներք տեսնէք, բայց գոնէ ժողովուրդը մի խարէք»:

Ուրիշ գլուխ գործոց մը. Ճաշակեցէք զի քաղցր է:

Հայաստանի նորակազմ հանրապետութեան վարիչները, 1918, Յուլիս 17ին հեռագրով կը դիմեն Պոլիս, գինուորական նախարար Էնվեր Փաշային. «... Անդրանիկ փաշան խուսափել է մեր կառավարութիւնից: Նա մտա-

դիր է ուժեղ բանակ կազմել, տեղից սեպարատ պետութիւն եւ յարձակուել ձեր վրայ: Ոնդրում ենք միջոցներ ձեռք առնել նրան վերջնականապէս ջախջախելու համար»: Նախագահ Յ. Քաջապանունի, գինուորական միխիթր Արամ փաշա Մանուկեան, խորհրդի նախագահ՝ Սահակեան: Մեծ պրաւօ:

Մեր ազգային ղեկավարները խմելու տեղ հայկական գետի Եփրատի գուլալ ջուրերը, ըմպելու էին անգլիական թաժժ գետի պղտոր ջուրերը, որ՝ պէտքի ներարկուէին նենդութեամբ, կեղծաւորութեամբ, ստախօսութեամբ եւ շնագիտութեամբ: Մէկ բառով դիւանագիտութեամբ, մաքրավելութեամբ:

Ի՛նչ ցուցանէ առակս. Հայաստանի Հանրապետութեան արդի ղեկավարները կը պատուաստուէին Աղուէագիտութեամբ, դէմ դնելու Մինսքի խմբակի համահայտագահներուն ճանապարհութեան եւ նաֆթափորի սատարաններուն:

ԱՂԻԻՐՆԵՐ

Արիսի Խորէն Յիլանեանի. Հալէպ:

Պապուսթին Օթէլ Պարոնի — Թորոս Թորանեան, Պէյրոս 1987:

Արեւմտահայաստանի կորուստը — Թորոս Վեհապետեան, Պէյրոս 1990:

Յուշարձան — Թեոդիկ, 1919, Պոլիս:

«Զարթօնք», 29 Յուլիս 1998

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԷՆ ԱՍԹԱԼԻ ԴԱՇՆԱԳՐԵՐԸ

(ԿԱՐՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՆ 77-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ)

Յատկապէս հայ ժողովուրդը, բախտաւոր աստղի տակ ծնած ազգերու գասակարգին չի պատկանիր: Քաղաքական աննպաստ պայմաններ միշտ հայածած են զինք, երբ կը կարծուէր թէ իր վերջնական փրկութիւնը այնքան մօտ է: Իրաւունք ունէր մեծ մարդասէր Ռոմէն Ռոլան, երբ կ'ըսէր. «Այլ պիտի ըլլար ճակատագիրը Հայաստանին, եթէ անոր ընդներքին մեք գտնուէինք սեւ ոսկի եւ ազնի մետաղներ»:

Դառնանք արեւմտեան կողմն աշխարհի. 10 Օգոստոս 1920ին, ստորագրուեցաւ Սեւրի պայմանագիրը (Փարիզի մօտ արուարձան մը): Սոյն դաշնագրով Թուրքիա կը ճանչնայ Հայաստանը իրրեւ ազատ եւ անկախ պետութիւն մը, կը հաւանի անոր սահմաններուն ճշդութիւնը յանձնել ԱՄՆի նախագահին (Ուիլսոն) իրաւարարութեան, կ'ընդունի 1915ի լքեալ գոյքերու օրէնքին ապօրինութիւնը, կ'արտօնէ 1 Յունուար 1914էն յետոյ երկրէն հեռացողներուն վերադարձը, յանձն կ'առնէ ազատել անոնց զրաւեալ կալուածները, կը հաւանի դաշնակիցներուն յանձնել պատերազմական ոճրագործները, սակայն այս ամէնը թուղթի վրայ:

21 Սեպտեմբեր 1921ին տեղի ունեցաւ Լոնտոնի խորհրդաժողովը, օրակարգ ունենալով փոփոխութեան ենթարկել Սեւրի դաշնագիրը: Ժողովին նախագահ Լոյս Ճորճ (անգլիացի), թուրք պատուիրակութեան կը յանձնէ որոշումագիր մը, ըստ որուն Սեւրի դաշնագիրը փոփոխութեան կ'ենթարկուէր հիմնապէս, ի նպաստ թուրքերուն եւ ի վնաս հայերուն: Ուրեմն մինչ այդ, շատ ռուրեր անցած էին Քուէք գետէն (այն ատեն առատ ջուր ունէր):

Փետրուար 28ին, նախագահ Լորտ Քրոզըն, կը հարցնէ Փրանսացի պատուիրակի Պերթրոյլին. «Փրանսա արամաղի՞ր է Կիլիկիոյ մէջ մասնաւոր ռեժիմ մը հաստատելու թէ ոչ»:

Փրանսացին կը պատասխանէ. «Փրանսան (ասպետական) Կիլիկիան պարպելու պարագային. որոշած է խառն ոստիկանութեամբ մը ապահովել

«փոքրամասնութեան» կեանքը»: Մէկ վայրկեանի մէջ, հայկական մեծամասնութիւնը «փոքրամասնութիւն» եղած էր Փրանսացիին շորնալիք բերին մէջ: «Ազատ եւ անկախ Հայաստանը» դարձած էր "Foyer national Armenien" (այսինքն հայկական ազգային օճախ): Յետագային միեւնոյն խայտառակ սենարիոն պիտի կրկնուէր սուրիական Սանճաքի մէջ. «հոգատար» բայց գաղութարար Փրանսացիներուն կողմէ:

9 Մարտ 1921ին, Լոնտոնի մէջ թուրք պատուիրակի Պեքիր Սամի Պէյ եւ Փրանսացի պատուիրակի Պրիան կը կնքեն Փրանքօ-Թուրք դաշնագիր. որով հայկական Կիլիկիան կը յանձնուէր թուրքերուն. առանց որեւէ երաշխաւորութեան:

Տար յողուածներէ բաղկացած Փրանքօ-Թրքական գաղտնի դաշնագիրը արդէն ստորագրուած էր Անքարայի մէջ, Հոկտեմբեր 20ին, տիրահուշակ Ֆրանքլին Պայիտին կողմէ:

Ռուսական եւ հայկական դասալիք զինուորներ կը պարպեն հայկական հողերը:

Հիմա դառնանք արեւելեան կողմն աշխարհի:

Ռուսաստանի մէջ, 29 Հոկտեմբեր 1917ին, Լենին ձեռք առաւ իշխանութիւնը, մթազնեցաւ աշխարհն հայրք, քանի 24 Յուլիս 1923ին ստորագրուեցաւ Լոզանի ամօթալի դաշնագիրը, որով հայկական վեց նահանգները՝ կարսը, Արտասանը, Սուրմայուն եւ ամրողջ Կիլիկիան կը յանձնուէին թուրքերուն, զրկելով հայերը իրենց դարաւոր իրաւունքներէն: Իսկ քեմալական Թուրքիոյ համար կը բացուէր նոր այգաբայ:

Հալէպի մէջ 1918ի աշնան, պաղեստինցիներուն Հրդ «Երլտրըմ» (կայծակ) զօրաբանակի սպայ Մուսթաֆա Քեմալ, որ կեցութիւն հաստատած էր Օթէլ Պարոն, թիւ 28, գաղտնի համաձայնութեան եկաւ անգլիական «Հիլ Մեծըսի Սըրվիս»-ի պատասխանատու սպաներուն հետ, որուն համաձայն Անգլիան բարոյագէտ, նիւթապէս եւ զինուորապէս պիտի աջակցէր Մ.Ք.-ի «միլիտերիկան յազարնական» (ազգայնական) շարժումին, պայմանաւ որ ան արդիւրէր ուսուական յառաջխաղացքը ղէպի տաք ջուրեր, ղէպի Տարտանել, զոր «դաշնակիցներ» խոստացած էին Ռուսիոյ: Մուսթաֆա Քեմալ հաւաստիացուցած էր անգլիական կողմը. թէ «Թուրք ժողովուրդը մեծագոյն թշնամի է պոլշեկովին. զոր պէտք է ոչնչացնել այնտեղ, որտեղ կը յայտնուի»:

1920 թուականի զարնան վերջաւորութեան, Մոսկուա ժամանեց Ռալիլ Փաշամ, որ Մուսթաֆա Քեմալէն յատուկ նամակ մը բերած էր Լենինին. երդում ընելով որ ինք եւս հակաիմփրիալիստ համայնապար է եւ սերտ գործակից բարեկամ Սովետ Միութեան, պայմանաւ որ առ ոչինչ նկատուի Սեւրի դաշնագիրը: Սովետի հրեայ ղեկավարները, որոնք գաղտնածածուկ մասոններ էին Մուսթաֆա Քեմալին պէս, անմիջապէս կը խածնեն խայծը:

1920 Յուլիսին, Մոսկուա ժամանեց թրքական պատուիրակութիւնը. զլիսաւորութեամբ արտաքին գործոց նախարար Պեքիր Սամի Պէյի, որ

հանդիպումներ ունեցաւ Չիչերինի եւ Քարախանի հետ: Չիչերինը անկեղծօրէն կը ցանկանար մինչեւ 1914 թուականը Հայկական մեծամասնութեան տարածքները Հայաստանին վերադարձնել: որուն ոխերիմ հակառակորդն էր Միսիլին: որ մինչեւ վիզը վարակուած էր թրքամոլութեամբ: Չիչերինի որդեգրած հայանպաստ կեցուածքը փոխարինուեցաւ Միսիլինի հակահայկական դիրքորոշումով: որմէ քաջախելուած թուրքները դրսևորեցին խիստ անգիջող դիրք: 1920 թուականի ամրան, աւարտեցաւ խորհրդա-թրքական «Ֆարեկամութեան եւ եղբայրութեան» պայմանագիրը: զոհացուծ տրուեցաւ Մ. Քեմալի պահանջներուն՝ ստանալ 100.000 հրացան, 5 միլիոն փամփուշտ, 400 հրանօթ, 500 դնդացի, 200 դաշտային հեռախօս, 75 հագար արկ, 100 բեռնատար մեքենայ, 100.000 զինուորի համազգեստ. վառելիքներէ իւր 5 միլիոն ոսկի ուտրի, որուն մէկ միլիոնը Եւրոսոֆ Քեմալը հետը տարաւ Անքարա: Այս բոլորը, ըստ Միսիլինի, «պատժելու» համար «իմփերիալիստ» Հայաստանը եւ վերջ դնելու «Հայկական Հարցին»: Ան ըսած էր թուրք պատուիրակին: «Դուք լաւ փորձ ունիք «իմփերիալիստ» հայերուն հետ, չարունակեցէք ձեր ընթացքը, մեզմէ որեւէ ընդդիմութիւն չէք տեսներ»: Այսպէս, «ժողովուրդներու մեծ առաջնորդը» թրքական խրտուխլակին հազցուցած էր «համաշխարհային յեղափոխութեան ջահակիր» տիտղոսը:

Ուժասպառ ու բզկտուած Հայաստանը: 1920 թուականի Դեկտեմբեր 2ին, ստրկուեցաւ կնքել Ալեքսանտրապոլի նուաստացուցիչ եւ կողոպտիչ դաշնագիրը:

1921 թուականի Փետրուարի 26ին, Մոսկուայի մէջ վերսկսան խորհրդա-թրքական բանակցութիւնները, քաջախելուած Միսիլինի կողմէն. անոնք որդեգրեցին անգիջող դիրք: Չիչերինի արդարացի բոլոր պահանջները ի դերու ելան. հայ համայնավար մեծաւորներ երբեք տէր չեն եղած հայկական պահանջներուն, փրկելով իրենց գլուխները:

1921 թուականի Մարտ 16ին, Մոսկուայի մէջ ստորագրուեցաւ «Ֆարեկամութեան եւ եղբայրութեան» պայմանագիր, որուն շնորհիւ թուրքները տիրացան Կարսի ու Արտահանի, նաեւ Սուրմալուի մարզերուն:

Առաջին յօդուածով չճանչնալ որեւէ միջազգային դաշնագիր: Ինչ որ ուղղուած էր Սեւրի պայմանագիրին դէմ:

Երկրորդ յօդուածով, Հայկական Նախիջևանը կ'անցնէր Ատրպէյճանի խնամակալութեան տակ:

Մոսկուայի տրտահուչակ պայմանագրին յաջորդեց, 13 Հոկտեմբեր 1921ին Կարսի խայտառակ դաշնագիրը: պատմագէտ Գ. Բորեան կը գրէ, «Հայաստանի խորհրդայնացումից յետոյ Հողային առաւելագոյն զիջումները կատարուեցին թուրքիոյ, Հայաստանի հաշուոյն, Կարսի մէջ: Աւելի ծանր եւ աւելի աննպաստ խաղաղութիւն քան Կարսինն է՝ պատմութեան էջերի վրայ հազիւ քնն կարելի է գտնել, Կարսի դաշնագիրը ըստ էութեան ամենավատթար եւ ամենախայտառակ խաղաղութիւնն էր Հայաստանի համար: Կարսի դաշնագրի այն յօդուածը, որով Նախիջևանի շրջանը կազմուծ էր մի ինք»

նախար երկրամաս Ատրպէյճանի հովանաւորութեան տակ: լրացնում էր Հայաստանի անձնատուութիւնը թուրքիոյ առջեւ:

Կարսի դաշնագրով, Հայաստանը ծախու դրուեց խորհրդային արեւելեան քաղաքականութեան ճանապարհին ի շահ համաշխարհային յեղափոխութեան»:

Այսպէս, Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերնրով, արեւմտահայկական վեց նահանգներ զոհարեւուեցան քեմալական թուրքիոյ Հայ ժողովուրդը զրկուեցաւ իր կենսական տարածքներէն: Մոսկուայի պայմանագրով Հայաստանը կտրեցին 26 հագար քառ. քմ. տարածքէ: Աւելին՝ Միսիլինի սաղարանքով Արցախը եւս նուիրեցին պեղրի թուրքերուն:

Պատմական գիտութիւններու թեկնածու Արմէն Կարապետեան կը խորհրդածէ- «Իր թիկունքում կնքուած դաւադիր պայմանագիրը չեղեալ համարելու համար հայ ժողովուրդը իր յուր պէտք է դնի միմիայն իր ուժերի կամքի ու պատրաստակամութեան վրայ, միասիրտ ու միաբանեցը դառնալու վրայ, այսինքն միշտ ի գօրու է անմահանուն մեծ նահատակ եղիշէ Չարենցի պատմական պատգամը:

ԿԱՐԵՒՈՐ ԵՄՆՈՒԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամերիկեան «Նիւ Եորք Թայմզ», իր 29 Մարտ 1998 թիւով տուած է աշխարհի ամէնէն նշանաւոր 69 խախամներու (ազատ հրեաներ) ցանկը, որուն մաս կը կազմեն ի միջի այլոց՝ Լուսի եւ Նէյլ Արմսթրոնկ, Մուսթաֆա Աթաթիւրք, Միմոն Պոլլիւար, Օմար Պրատիլ, Քազանովա, Վոլթեր Քրայլէր, Մարք Շաքալ, Սըր Ուինսթըն Չըրչիլ, Թագաւորներ Էտուարտ Ի. եւ Լ., Էլինկթընի դուքսը, Տուկլաս Ֆերպանիա, Ալեքսանդր Ֆլեմինկ, ձերայտ Ֆորտ, Պեննամին Ֆրանքլին, Հանրի Ֆորտ, Քլայք Կէյպլը, ձիւզեփէ Քարլպալտի, Ֆրանց Լիզլ, Տուկլաս Մըքարթըր ձորճ Մարշալ, Թէոտոր Ռուզվելթ, Ֆրանքլին Ռուզվելթ, Ռոչիլտ, Ուոլթըր Սքոթ, Հերի Թրուման, Վոլթեր, ձորճ Ուալինկթըն, Վելլենկթընի կոմսը, Օսքար Ուայլտ եւ այլն:

Ինչպէս կը տեսնէք, Մուսթաֆա Աթաթիւրք բազմած է այլ նշանաւորներու կարգին: Ահա թէ ո՞ր էր թաղուած շան գլուխը:

Ֆ. Պուլլոն, գաղտնի համաձայնութեամբ թուրքերուն յանձնած էր 110,000 հրացան, 2,500 թոն ուղղամթերք, 10 օդանաւ, 2000 մի, 10,000 զինուորական հագուստ, իսկ միւս կողմէ, զինաթափած էր հայ կամաւորներ: «Լեֆտոն էթրանթէ»ի հայ զինուորները ճգմելով «փոքր դաշնակիրը», որուն խօսք տրուած էր Կիլիկիան: Տնտեսական շահը յաղթած էր «պատուոյ խօսք»ին:

Օտմանեան դրամատան դրամազլուտն մեծագոյն մասը կը պատկանէր

Փրանսացիներուն, ինչպէս նաև երկաթուղային գործառնութիւնները:

Փրանսան, Կիլիկիոյ հողերուն վրայ գտնուած ատեն, անգլիացիները ընդատակեայ ձեւով կը գինէին թուրք միլիտրները (ազգայնականներ):

Փրանսական ապահովագրական «Իւնիօն» ընկերութեան մօտ, հազարաւոր հայեր ապահովագրուած էին: Անոնց մեծամասնութիւնը զոհ գնաց թրքական ջարդերուն: Ո՞վ տէր պիտի կանգնի հայկական իրաւունքներուն ընկերութեան մօտ:

Փամանակին, հայ նշանաւոր խոջաներու միլիարաւոր դրամադուլտները կուլ տրուած են Անկլո-իւտրիք պանքին կողմէ:

«Չարքոնք», 30 Մայիս 1998

ՄԵՎԼԱՆ ՉԱՏԷ ՌԻՖԱԱԹԻ ԳԻՐՔԻՆ ՄԱՍԻՆ

Օսմաներէն լեզուով այս գիրքին հայերէն թարգմանութիւնը, ունեցած է երեք սպաղարութիւն, Պէյրութի Տօնիկեան գրատան կողմէ, «Օսմանեան Յեղափոխութեան Մութ ծալքերը» խորագրով: Ասիկա յարմարացուած վերտառութիւն մըն է, քանի որ գիրքին տիտղոսն է օսմաներէնով՝ «Թուրքիա ինքելապընըն իչ ելիզի», որ թարգմանի՝ «Թրքական բռնահարուածին ներքին երեսը»: Այսպէս, բնագիրին մէջ չկան ոչ օսմանեան ոչ յեղափոխութեան բառեր եւ ոչ ալ «մութ ծալքերը»:

Օսմանեան չկայ, քանի որ գործի վրայ են իթթիհատ թիրաքի դեկավարներ եւ ոչ ալ տեղի ունեցած է յեղափոխութիւն, որ կ'ենթադրէ ժողովուրդին մասնակցութիւն: Եղածը իթթիհատական բռնահարուած մըն է, կամ կուսակցական պետական հարուած:

Սարգիս Սարգրեան, իր «Կիսադարեան Յուշամատեան»ին (1895-1945) մէջ կը գրէ. Բեամիլ փաշայի դահլիճը կը կորսնցնէ պալքանեան պատերազմը ու կ'իյնայ, պատերազմական նախարար Նազըմ փաշա եւ Մահմուտ Շէվքէթ փաշա կը սպաննուին: Իթթիհատի փախստական անդամները մէջտեղ կ'ելլան, Թալէաթ եւ էնպէր իրենց ափին մէջ կը կեդրոնացնեն ամէն ինչ (էջ 67):

Հայէպի մէջ, 1920ին, գիրքին հրատարակութեան վաղորդայնին, քեմալական դործակալներ, կը փորձեն սպաննել Մէվլան Չատէն, զայն թուրեաւորելով: Յետագային, թուրքեր մեծ ջանք թափած են չէզոքացնելու համար անոր յայտնութիւնները: Իրենց այս ջանքերուն մէջ, իրենց օգնութեան հասած են կաշաւքը եւ ինամիական կապերը՝ Փիէր Լօթիական ձեւով:

Այսպէս, Սիտըլ Իստ Սքատիս ամսաթերթին Թրք հատորին մէջ, թիւ 3, Հոկտ. 1973, անգլիացի վարձկան գրիչ մը, կը փորձէ «փոշիացնել» գիրքին կարեւորութիւնը, յայտնելով որ Մէվլան Չատէ թուրքիա չէ գտնուած, որեւէ կապ չէ ունեցած իթթիհատի հետ եւ ապրած է Վիեննա: Ժողովրդային առածը կ'ըսէ. «լաւ սրինգ է, եթէ կը նուարէ»: Եւ ստատիստիկական պղտը դուրս մնացած է:

Արդարեւ, հայեպահայ յայտնի գիտական դէմք, Տոքթֆ. Ռուպեր Զեպեճեան հաւաստի ու փաստացի տուեալներու հիման վրայ, փաստած է թէ Մէվլան Զատէ Ռիֆայթ նախկին իթիֆհատական մըն էր եւ ապրած թուրքիա: Սերտ յարաբերութիւն մշակած է իթիֆհատի պարագլուխներուն հետ, այն աստիճան որ իր բարեխօսութեան շնորհիւ, Զեմալ փաշայի մօտ, կախաղանէ փրկած է Մէրպէտ թերթի խմբագիր Ահմէտ Պէտէվէ Քուրանը: Տոքթֆ. Ռուպեր այս մասին գեկուցած է Հայկեօր Ուրֆացիներու Մշակութային Միութեան կազմակերպած սիմֆոզիոսին առթիւ: Դասախօսութիւնը յոգուածի ձեւով, լոյս տեսած է, Հայաստան «Նորք» հանդէսին մէջ (էջ 148—155), Ապրիլ 1990ի թիւ: Հարկ է տպագրել անգլերէնով:

Այժմ, գործի լծուած է «խնամի» ամերիկացի «պատմաբան» փրոֆ. Հիթ Լաուրի, որ ամուսնացած է թրքուհիի մը հետ: Ան յանձն առած է պրպտումներ կատարելու Ուաշինկթընի պետական գրադարանին մէջ, երեւան հանելու դեսպան Հանրի Մորկընթաուի նօթատետրը (1915—1916, 26 ամիսներ), «փաստելու» համար որ ան յերիւրածոյ գործ մըն է, եւ հայերուն «չինածը: Թորոս Թորանեան» իր «Թրքական համաթուրանականութիւնը փարագլուխի ծածկուի» գիրքին մէջ (էջ 128—129), կու տայ ցարտուն օրինակ մը: Փրանսերէն գրուած այս գիրքին մէջ հեղինակը զրամով թուրքերու կողմէ գնուած անձ մը — կայ նկար մը՝ ուր՝ ներկայացուած են ջարդուած, մորթուած մարդիկ: Նկարին տակ գրուած է.— Տեսէք հայերու գազանութիւնները: Ահա հայերու կողմէ մորթուած թուրքերը»: Նկարը շատ դիտելու պէտք չունեցայ, աղիտարչ տեսարանին կեղորոն կար հայ քահանայ մը, մէկ ձեռքին սուրբ գիրք, կուրծքին խաչ, որ կ'օրհնէր հայ նահատակները...

Էյիս Այլընտ կղզիին թանգարանին մէջ կը ցուցադրուէր, Ապրիլ 24, 1915ին կախաղան հանուած հայերու նկարը: «Պահպան» չլրլալուն, թուրքերը աղճատած են նկարին տակի գրութիւնը, իսկ թանգարանին «բարեխնամ» պատասխանատուները վերցուցած են նկարը: Ամերիկեան դեմոկրատի, բայց միակողմանի սէր:

Ասիկա այս կղզին է, որուն բարեգարգման համար Այեք Մանուկեան հազարաւոր տղար նուիրած է:

Թուրքերը անդու կ'աշխատին, «կը շինեն» (ույտումա) կեղծ փաստաթուղթեր, Անքարայի մասնաշատուկ գրադարանի մը մէջ կը հաւաքեն հայկական ցեղասպանութեան նուիրուած գիրքեր, օտար լեզուով եւ հայերէն, լուսանկարներ, ժպտաւէճներ, ելին: Կը ստանան հայ թերթերը, կը պատրաստեն «հայագէտներ» ու գործակալներ: Ըստ քուէյթեան «էլ Քապաս» լաւատեղեակ թերթին, անոնցմէ ութը հոգի զրկուած են Արարական երկիրներ:

Հայերս տակաւին ժամանակ չունեցանք մերձեկնալու Վատիկանի արժիւններուն (որոնց վրայ աւելցած են, պուլկարներէն զնուած հազարաւոր օսմանրէն փաստաթուղթեր՝ հայերու վերաբրեալ, նաեւ ամերիկեան Պորտ

ընկերութեան, պուլկարական, աւստրիական եւ այլ վաւերագրերու: Իսկ ուսուականները... Թաղուեցան Զոն կիրակոսեանին հետ, Մոսկուայի «հիւանդանոց»ներէն մէկուն մէջ: «Անբաղձային» գնաց... «աչքի փուշ» Պարոյր Սեւակին մօտ):

«Չարքոնք», 19 Յուլիս 1991

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԲՆԱԿԱՆ ԷՐ ԹԷ՞ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Ակադեմիկոս Միրզան Աղպապեան, պատասխանելով այս ճակատագրական հարցումին, կ'ըսէ («Զարթեմ», 3 Մայիս 1991)։

«Իմ եզրակացությունս պատահածը բնական երկրաշարժ մըն էր: Ոչ պայթում մը յառաջացուցած էր երկրաշարժը եւ ոչ ալ երկրաշարժին հետեւած էր պայթում մը: Ասոր փաստերը գիտական են: Այն ալիքները, որոնք կու գան երկրաշարժէ մը, եւ անոնք՝ պայթումի մը հետեւանք են, իրենց տարբերությունները շատ ծանօթ են գիտնականներուն: Մենք գրանցումներու վրայ կը տեսնենք այդ ալիքներուն յաճախականությունն արձանագրած է այս մարզէն ներս: ԽՍՀՄի մէջ պատահած հիւլէական ուռմբի մը փորձը, մենք ի վիճակի ենք հոս, քանի մը ժամ ետք արդէն իմանալու: Ոչ միայն կը հասկնանք թէ ո՞ւր պատահած է, այլեւ ինչ ուժգնություններով եւ հասկնանք երկրաշարժներու գրանցումները իմ մասնագէտ ընկերներու հետ բաղդատելով գրանցումները՝ ԱՄՆի, Հայաստանի եւ Շոտլանդի մէջ կատարուած, մեզ համոզեցին թէ բնական երկրաշարժի մը ալիքներն են»:

Ուրեմն, ըստ յարգելի ակադեմիկոսին, շնորհիւ գրանցումներու, կարելի է տեսնել երկրաշարժի մը կամ պայթումի մը հետեւանք՝ ալիքներուն յաճախականությունն արձանագրածը, եւ եզրակացնել: Ակադեմիկոսը կ'աւելցնէ. «Այսպիսի բացատրությունները մը կը գոհացնէ գիտնականները, բայց ժողովուրդը չի գոհանար, քանի որ քաղաքական իմաստով կասկածամիտ է»:

Արդարեւ, Հայաստանի ժողովուրդին կարծիքն է, «Թուսները գործն են», ինչպէս գրած էր Դուկտ. Վաչէ Ղազարեան: Աղէտին զուգահեռությունը՝ Արցախի պահանջատիրությունն հետ, նկատուեցաւ ճակատագրական միջոց, կտորելու հայ ժողովուրդին ու պետության գիտադրողական ոգին: Երկրաշարժէն քանի մը ժամ առաջ, Խորհրդային մարաշխառ Եաղով, գիշերանց անակնկալ կայծակնային այցելություն մը տուած էր սահմանա-

պահ ուս գիտնորներուն ու անոնց հրահանգած իսկոյն հետանալ վտանգաւոր գոտիէն: Միաժամանակ, ազերի գիւղացիներուն գաղտնի հրամայուած էր անմիջապէս լքել շրջանը, իսկ ստորերկրեայ Սպիտակին մէջ, ամբարուած էին բնաջնջումի գաղտնի գէնքեր:

Քանի մը տարիներ առաջ, Ֆրանսայի մէջ երեւան հանուեցաւ լրտեսական գայթակղություն մը, որուն հետեւանքով, երեսունի մօտ խորհրդային պաշտօնատարներ եւ գործակալներ, վտարուեցան Ֆրանսայէն: Ի՞նչ էր խնդրին էությունը: Ֆրանսացիք գտած էին կարելոր գիտ մը, որով կարելի կ'ըլլար արգիլել ալիքներու յաճախականությունը եւ սանձել շողարձակումը, այլ խօսքով՝ քողարկել գործողությունը: Երբ քաղաք մը ենթարկուէր հիւլէական ուժերակոծումի, շէնքերը պիտի մնային անվթար, նոյնիսկ այծերը անվտանգ պիտի մնային:

Խորհրդ. Միությունը, անցեալ տարի յայտարարած էր թէ ինք միակողմանիորէն կը զողորեցնէ ընդերկրեայ հիւլէական փորձարկությունները: Ինչ որ զարմանալի է, երբ դիմացի կապիտալիստական գերպետությունը քառամարակ կ'արշաւէ դէպի համաշխարհային տիրապետությունը լվկայաստղերու պատերազմը, տրամաբանական չէ որ մրցակից պետությունը, յանուն մարդկայնական վսեմ զգացումներու, զողորեցնէ իր փորձերը: Հաւանաբար գտած էր անոնց յայտնությունը արգելակող միջոց մը:

Փրոֆ. Կեննատի Սոպրո, նախագահ Խորհրդային Միության երկրաշարժական մասնագէտներու խմբակին, կարելոր ուշադրություն արժանի հարցազրոյց մը ունեցած է «Սովիետսբայա Ռասիա» թերթի թղթակիցին հետ: Փրոֆ. Սոպրոն կը յայտնէ թէ, Հայաստանի տարածքին հաստատուած երկրաշարժական գործիքները, աղէտէն տասնվեց ժամ առաջ հասանգած էին եւ թէ մասնախատուկ ծակերու մէջ գտնուող ջուրի ջերմությունը յանկարծ դահլավիթած էր: Դժբախտաբար, այս գրանցումները նկատի չեն առնուած...»

Գալով Քիւնէն գիտնական էմմա Իվանովնա Նեմախանովիչի նախագրույթություններուն եւ ահագանգային գործունէությունն, Փրոֆ. Սոպրոն կը ջանայ շարժառիթն չէզոքացնել անոնց կարեւորությունը, անշուշտ ինքզինք արդարացնելու համար:

Տեսնենք թէ ինչ կ'ըսէ Ուքրանիոյ երկրաբանական հիմնարկի աշխատակցուհի էմմա Նեմախանովիչը: 1988 Ապրիլին, եւ կամիսագուշակած էի Հայաստանի երկրաշարժի մը հաւանականությունը եւ այս մասին զեկուցած էի նոյն մասուտան Տոմսք տեղի ունեցած դասախօսության մը ընթացքին: Ապա, հետաձայնեցի Միսաչքայա, ուր կը գտնուի Գիտություններու Ակադեմիային Տաղստանի բաժնի երկրաշարժի կայանը, որ ունեցած է նման ստեւալներ: Անձամբ երթալով Տաղստան, հաշուեցի որ երկրաշարժը տեղի կ'ունենայ Նոյեմբեր 25ի եւ Դեկտեմբեր 10ի միջև: Կատարելով ակելի մանրամասն հաշիւներ, նշեցի Դեկտ. 7ը որպէս վտանգաւոր եւ ասիկա ներկայացուցի կրաֆիլի ձեւով: Զեկուցադիրը ներկայացուցի Մոսկուա, Օգոս-

տոս 31ին, իսկ Սեպտ. 5ին Հեռաձայնեցի ներքին նախարարութեան աշխատակից Եացիքիին՝ Վերադառնալով Քիեւ, գեկուցեցի ժէօտինամիքի եւ երկրաշարժերու նուիրուած 10րդ նստաշրջանին: Ըստ կրաֆիքներու, ցոյց տուի թէ՛ ամէնէն հաւանական թուականը Դեկտեմբեր 7ն է եւ մօտաւորապէս ճշդեցի վայրը: Հոկտեմբերին ես գեկուցեցի Քիեւի քաղաքական փրփականտախի Տուրը տեղի ունեցած Համամիութենական ժողովին: Յօրուած մը գրեթէ Քիեւ լրջ տեսնող «Փրոպագտ կոմունիզմա» թերթին, սակայն ոչ տպեցին եւ ոչ ալ նկատի առին: Վերջին անգամ ըլլալով, 1988 Նոյեմբեր 22ին աղէտից կէս ամիս առաջ, վերջին անգամ հաւատեցի մօտակայ երկրաշարժի մասին: Լուրջ ուշադրութեան պարագային, կարելի էր խուսափիլ շատ գոհերէն: Սակայն նորէն փորձեցին թաքցնել: Անհողութեան կանխամտածուած ահաւոր ոււմը պայթած էր Հայաստանի մէջ, Դեկտ. 7ին:

Ուքանիոյ երկրաֆիզիքալի ինստիտուտի տնօրէն ակադեմիկոս Չուծանով, առանց մշննալու յայտարարած է. «Ես չէի ուզում նախօրօք Հայաստանի մէջ խուճապ առաջանել: Ես գերադասում էի, թող լինի գոհեր քան խուճապ»: Իսկապէս չնաշխարհիկ ակադեմիկոս եւ նոյնքան չնաշխարհիկ մտայնութիւն, քանի խնդիրը հայերուն հետ առնչութիւն ունի եւ ոչ թէ՛ հարագատ ազերիններուն:

Գալով Փրոֆ. Սուպրիւնին, թղթակիցը հարց կու տայ թէ՛ կարելի է արագացնել երկրաշարժ մը, ան կը պատասխանէ. «կարելի է գահավիժել» երկրաշարժ մը, եթէ բնութիւնը արդէն զայն պատրաստած է: Երբ որ ճնշումը կը հասնի ՔՐԻԹԻՔԱԿԱՆ աստիճանին, ամէն ճնշում, նոյնիսկ նուազագոյն, կրնայ արագացնել երեւոյթը որպէս հզոր պայթիւն մը, շարժական օճակին մօտ:

Ի բերանէ ճումմէ դատեցար:

Այս բոլոր տուեաններէն ետք, անկարելի է շմտածել Հայաստանի երկրաշարժին ժամկէտին արագացման, գահավիճումին մասին, երբ մահաւանդ նկատի առնենք խորհրդային պատասխանատուներուն անպատկառ յայտարարութիւնները:

Այսպէս Արցախի մէջ «ԱՖիսան» անձնակազմը, իր զօրավարով (Սաֆանով) իր խորհրդականով (Փոսլյանիչքօ), իր փորձառու գինուորներով եւ դասակիբ ազերիններով, ԱՖիզան փամփուշտներով (Տանտրոէն տաս անգամ անելի փտանգւոր) միջազգային օրէնքով արգիլուած: Երեւանի գէնքի պահեստանցներուն մէջ ամբարուած բնաջնուփ ամբողջական դէնքեր (ըստ Երեւանի պարետի յայտարարութեան):

Համաձայն նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին, Մոսկուա չյայտարարուած պատերազմ կը մղէ Հայաստանին դէմ, ազերիական գինեայներու եւ յերուզակներու կողքին: Փոլիթպիւրոյի աղուէսներէն Լուքիանով կ'ըսէ. «Ղարաբաղը եւ մերձ Պայթիկեան երկիրներ, մանրուքներ են մեզի համար: Մենք մի անգամ ահա այսպէս կը թրխկացնենք, եւ ամէն ինչ իր տեղը կ'ընկնի. սկուռեց ճօճուել Ռուսաստանի նաւը, բայց մենք ստիպուած կը

լինենք ուզմական դրութիւն մտցնել»: Ահա ձեզի հրապարակայնութիւն ու քրեմլինեան դեմոքրասիա:

Աւելցուցէք, ներքին զօրքերու նախարարի տեղակալ Զօրավար Եուրի Շաթալինի սպառնալիքը, ամբողջ աշխարհի առջեւ պայթեցնել ի հարկին «մանրուք» Հայաստանի աթոմակայանը, որ պաշտպանուած է ռուսերով, եթէ Հայաստանը փորձէ իր պոչին ծայրը ազատել Մոսկուայի կեդրոնական իշխանութեանց երկաթեայ մամուլին տակէն 73 տարուան գերութենէ մը ետք:

Գալով երկրաշարժային զօտիին շինարարութեան եւ վրանարնակ բնակչութեան տեղաւորման, նախկին վարչապետ Նիքոլայ Ռիժոգով, տուած էր երկու տարուայ պայմանաժամ. ըստ մասնագէտներու, անհրաժեշտ է առնուազն քսան տարի: Մոսկուայի խոստացած վարկէն, ցարդ հարկուէն տասը ստացուած է: Իսկ Պաքուի տրամադրուած 500 միլիոն ռուբլին, որ պէտք էր գործածուէր Արցախի բարեկաման, կ'օգտագործուի կաշառքի եւ Արցախահայութեան տեղահանութեան գործին, օրհնութեամբ Մոսկուայի եւ խորհրդային արտաքին եւ ներքին զօրքերուն:

Պիտի աւելնային նաեւ Ատրպէյճանէն կէս միլիոն հայ տեղահանեայներ եւ փախտակահաններ: Ազերիական այս «ռուբլին» մասին, ակնարկած էր Առաջին Քարտուղարը, երբ Զօրի Բայրախանին եւ Սիլվա Կապուտիկեանին յայտարարած էր թէ՛ «պէտք չէ մոռնալ Ատրպէյճանի մէջ հազարաւոր հայեր կ'ապրին»: այսպէս, առաջին անթիւ, իր թիկնոցին տակէն ցոյց տուած էր խարագանը եւ իր ապագայ մտադրութիւնը: Այս թուականէն ետք «ական»ներու պայթիւնները կը յաղորդեն իրարու, մինչեւ այսօր, որպէս հայ ժողովուրդին զլիտուն վրայ ճօճուող մշտական դաւազան ու «զուրպաշ»:

Հայաստանը տակաւին չի դադիր, ոչ միայն յանդիմանուելէ, այլեւ փառաւոր քաջի ուտելէ, որ կոչի «Ֆիլախա» ու ցեղասպանութիւն:

Ռոկու. Երուանդ Հ. Քատուենի, արդարօրէն կը հարցնէ. ո՞վ պիտի յանդիմանէ ու պատժէ «հարագատ հայրը» իր ջղագրգիւռ, ինքնակորուստին կողմնակալ արարքներուն «յանցագործութեան»ը համար...

Նորերս ստացուած «Հայաստանի Հանրապետութիւն» պաշտօնաթերթը, կը խօսի երկրաշարժի արուեստական, կանխամտածուած ըլլալու մասին, երբ կը գրէ. «Շաթալին սպառնացած է պայթեցնել Հայաստանի աթոմակայանը, որ կը գտնուի Ռ. Միութեան ներքին Գործոց նախարարութեան հսկողութեան տակ: Մոսկուայի ձեռագիրն է կասկած չկայ, եւ հիմա մենք ենք համոզուում, որ պատահական չէին Հայաստանի ու Վրաստանի երկրաշարժը. եւ յետոյ գեներալ Շաթալին եւ թող տեղեակ լինի որ Հայք ծնել է նաեւ Թեւիլրեաններ»:

«Չարթըք», 13 Սեպտ. 1991

ՈՒՐՈՒԱԳԻԾ ՍՈՒՐԻԱՀԱՅ
ՊԱՇՏՕՆԵՒՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ա.

ՔԱՍԱԹՐԻ ԵՒ ԿԱՆՈՒՍՏԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ
ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

Սուրիահայ պատմութեան մէկ անկորնքնելի մասը կը կազմէ Հայ պաշտօնէութեան պատմութիւնը, որ երեւան պիտի հանէ շինարար ազգի մը րազմահարիւր զաւակներուն մասնակցութիւնը Սուրիական հայրենիքին յառաջդիմութեան, բարօրութեան ու աննախնայ լիցանքի, ըլլալ Ֆրանսական Հոգատարութեան, ըլլալ Բ. Աշխարհամարտի ընթացքին, ըլլալ անկախութեան եւ ազատագրութեան սրբազան պայքարի պանծալի շրջանին:

Հայ պաշտօնէութիւնը ճիւղաւորուած էր գլխաւորաբար հետեւեալ սպասարկութեանց մէջ — Քատասթր, Ելեկտրական, Երկաթուղիի, Զուրի, Մխալտտի, Քարիւղի Ընկերութիւնները, Զորարշակական, Հանրային Երիտութեանց, Հնագիտական, Հեռաձայնային, Թղթատարական, Հեռագրական, Ելեւմտական, Հանրային Կրթութեան, Հրէջններու, Երկրագործական, Անասնաբուժական, Հազահատիկի, Երկրագործական Բարեկարգութեան, Եփրատի Ամբարտակի եւ Մերձակալ Հողերու Օգտագործման, Քաղաքայինութեան, Հանրային Առողջապահութեան եւ Բժշկական Սպասարկութիւններ, նաեւ Քաղաքապետութիւն, Սերայ, Ներքին եւ Արտաքին Գործոց Նախարարութիւններ, Երկրագործական, Դպրոց, զանազան Հիւանդանոցներ, Համալսարաններ, Երաժշտանոց, Տեղական եւ Օտար Վարժարաններ, Հիւպատոսարաններ, Դրամատուներ, Զինեալ Ոստիկանութիւն եւ Ընդհանուր Ապահովութիւն, Ոստիկան Զօրաց, Պառն Դատարաններ, Փաստարանական Կանաւ, Արդարութիւն, Գրաքննութիւն:

Ֆրանսական Երջանի Սպասարկութիւններ
Տեղեկատու, Մամուլի, Պատմամիջոցի, Գրաքննութիւն, Մասնաւոր

սպասարկութիւններ, Ժէնի, Թրեզորրի, Քօօրերաթիֆ, Օսեփէ, Փարք տ'Արթիլըրի, Հաշուապահական՝ ալլեւալլ զօրանոցներու մէջ, Ընդհանուր Ապահովութիւն, Ոստիկանութիւն եւլն:

Անգլիական Զանազան Սպասարկութիւններ
Սփիրս Միշըն, Հիլինկ Օֆիս, Սիրա, Զինեալ Ոստիկան, Նասաֆի, Էսքիսի, Ալքիսի, եւալլն:

Կորուստէ փրկելու համար այդ անսահման աշխատանքը, անհրաժեշտ է զրիի առնել իւրաքանչիւր սպասարկութեան հանգամանքը եւ Հայ պաշտօնէութեան անուանացանկը իրենց վարած պաշտօններով: Առաջին քալլը ահաւաստի մենք կ'առնենք, հակիրճ եւ հանրամատչելի ձեւով ներկայացնելով մեր պատկանած սպասարկութեան, այս պարագային Քատասթրի եւ Կալուածական Բարեկարգութեան⁽¹⁾ պատմութիւնը եւ կեանք, անցած եւ գոյ հայ պաշտօնէաներու անունները իրենց պաշտօններով:

Հաճելի է յուսալ որ բարեկամեցողութեան տէր այլ հայրդիներ որոնք աշխատած են կամ կ'աշխատին այլեւալլ սպասարկութեանց մէջ, կը հետեւին մեր օրինակին, փրկելու համար Սուրիահայ պաշտօնէութեան պատմութիւնը, որպէսզի ան մաս կիզմէ անծածօթ զինուորի շիրմին:

Ֆրանսական Հոգատարութեան սկզբնական շրջանին, Ֆրանս-Բարձր Գոմիշնութեան (Պէյրութ) առաջին կարելոր գործերէն մէկը եղաւ հաստատել Քատասթրի եւ Կալուածական Բարեկարգութեան Սպասարկութիւնը (Քարտիսապոսութիւն եւ հողային բարեփոխութիւն) որուն մաս կը կազմէր Կալուածոց Վարչութիւնը⁽²⁾, որ կը յանձնէ կալուածական սեփականութեան վաւերացումները՝ Սենտ Թապպօ կամ Սենտ Թենիլը: Ասիկա հիմնուած, ներշնչուած եւ կազմակերպուած էր համաձայն Զուլիգերական արդիական թեքնիքի եւ օրէնքներու, որոնք աշխարհի ամէնէն կատարեալն են: Աշխատանքի սկզբնական շրջանը սկսաւ Պասապտա (Լիբանան) 1924ին, իսկ Սուրիա՝ 1928ի վերջերը:

Այս կենսական եւ հակառակ ծրագրին իրագործումը վստահեցաւ տաղանդաւոր եւ համբաւուր ֆրանսացի մասնագէտի մը՝ Քամիլ Տիւրաֆուրի, որ իբրեւ երկրաչափ, թոփոկրափ, երկրաբան, ճարտարապետ, քարտիսապոս եւ անգլագական կազմակերպիչ՝ գործին իսկական մարդն էր: Ան որպէս ռեժիսոր (ընդհանուր յանձնառու) ձեռնհասօրէն ամուր հիմնորդ վրայ գրաւ այդ կազմակերպութիւնը եւ շնորհիւ որակաւոր ֆրանսացի եւ սպիտակ ուսուցիչներու թեքնիքներու, ինչպէս հարկուար տեղացի եւ հայ երկրաչափներու եւ գծագրիչներու՝ զայն բարձրացուց թեքնիք, դիպարտեստական եւ արդիական նախանձելի դիրքի մը:

Երբ անսահման աշխատանքէ յոյնած, Տիւրաֆուրին սիրտը դարբեցաւ բարախիլ կանխահասօրէն, 1931ին, անոր Տիկինը շարունակեց գործը ատեն մը եւս, մինչեւ այն օրը, երբ Սուրիական եւ Լիբանանեան իշխանութիւն-

ները 1943ին իրենք ստանձնեցին Քատասթրի Սպասարկութիւնը:

Սուրիական Հանրապետական կառավարութիւնը մեծ զարկ տուաւ անոր, հետզհետէ աւելցուց մասնահիւղեր՝ Դամասկոս, Տէրաս, Հոմոս, Համա, Հայֆայ, Իտիյայ, Լաթաքիա, Թարթուս, Բազա, Տէր-Զօր եւ Հասիէէ, նախապէս նաեւ Անտիոք, Ալեքսանտրէթ եւ Քունէյթրա. բազմապատկեց պաշտօնեաներուն թիւը, սպահովեց արդիական կազմաներ եւ մեքենաներ, բարելաւեց անոնց իրաւական եւ նիւթական կացութիւնը, Դամասկոսի մէջ հաստատեց քատասթրի յատուկ վարժարան մը, ուրիշ ամէն տարի ընթացաւարտ կ'ըլլան երիտասարդ մասնագէտներ, օգտակար ըլլալու Սուրիական Արար-Հանրապետութեան պանծայի հայրենիքին վերելքին:

Սակայն ի՞նչ է Քատասթրը. անիկա այն թեքնիք սպասարկութիւնն է որ թոփոկեցափիք չափումներու եւ հաշիւներու հիման վրայ կ'ը պատրաստէ տուեալ երկրի մը, քաղաքի մը, զիւղի մը, շրջանի մը մանրամասն քարտէսը եւ միաժամանակ երեւան կը հանէ անոնց սեփականութեան իրաւունքը, երկրաբանական, երկրագործական, կենդանական, բուսական, հանքարանական, ազգաբնակչական, ջրաբաշխական եւ այլ կարելիութիւնները, այլ խօսքով, իրաւական, ֆիզիքական եւ տնտեսա-քաղաքական հանգամանքը: Միաժամանակ Քատասթրը կը բարեկարգէ իրենց տարածութեամբ եւ ձեւով մշակութեան անյարմար հողերը, զանոնք ենթարկելով գեղեցկադիտական գործողութեան մը, որ կը կոչուի քեննիլ իսկ Քրանսերէնով տեմանպրման եւ ունամպրման որ է ամնիլորասիոն ֆոնսիէր, արաբերէնով քաքսիմ ալխարի:

Քատասթրի պատրաստած քարտէսներու վրայ է որ կը հիմնուին աշխատանքները հետեւեալ սպասարկութեանց.

— կալուածոց, Ելեւմտական, Հանրային Շինութեանց, Հնագիտական, Զրարաշխական, ելեկտրականութեան եւ ջուրի հանքարանական, մեծ ծրագիրներու գծման, քաղաքաշինութեան քաղաքապետութեան, սահմանա-գծումներու, ամբարտակներու, երկաթուղիներու, ոռոգման, ցանքատարածման, մարդահամարի, ճահիճներու չորացման (Մաթրիսի շրջան), քարիւղի հետազոտման (Քարալուք Տաղ) եւլն.:

Քատասթրը նախապէս մաս կը կազմէր Արդարադատութեան Նախարարութեան. սակայն ներկայիս՝ Երկրագործութեան եւ Հողամշակութեան Բարեկարգութեան Նախարարութեան⁽³⁾:

Այսպիսով երկրի մը յառաջդիմութեան գլխաւոր ազդակներէն մէկը կը կազմէ Քատասթրը, որ Սուրիական չարենիքի իմաստուն ղեկավարներուն իրեն ընծայած կարեւորութեան եւ կարելիութեանց շնորհիւ, իր բուն մասնակցութիւնը կը բերէ մեր սիրելի երկրին փառապանծ վերելքին:

Ստորեւ կու տանք անուանացանկը Քատասթրի զանազան շրջաններու եւ կեդրոններու (շեֆըրի-ռիյաւէ) շին եւ նոր պաշտօնեաներուն՝ նշանակելով անոնց վարած պաշտօնները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՅԱԿ ՍՈՒՐԻՈՅ ԲԱՏԱՍԹՐԻ ՀԱՅ
ՊԱՇՏՕՆԵՆՈՒԹԵԱՆ
1927—1978

Հայէպի կեդրոնին գործունէութեան ծիրին մէջ կ'իյնան հետեւեալ քաղանքները— Ճեպէյ Սամասն, Պապ, Մրմպոն, Ագեզ, Աֆրին, Զարապուս, Այն—Արաբ, Նախապէս նաեւ Իտիյայ, Մարաթ էյ Նամասն, Հարեմ, Զրար-Շուղուր եւ Տէր—Զօր:

ՀԱԼԷՊԻ ՇՐՋԱՆ

Հայէպի շրջանի կեդրոնատեղիները եղած են նախապէս՝ Ճեմիլիէ, Պահսիթա, Սուէյխա, Ագիզիէ, Պապ էյ Զընէյն, դարձեալ Ագիզիէ, Հարթ Զեպպէլ, նորէն Ագիզիէ, Պապ էյ Նասրը, հուսկ ուրեմն Նոր Ապպարա:

ԵՌԱՆԿԻՈՒՄ—ՆԱՓԻԱՎԳԻՏԱԿԱՆ Վաշտի Պետեր (Շէֆ—Ուէյիս)

Յարութիւն Վիզոյիան, (ապա անցած՝ Զրարաշխական Սպասարկութեան եւ Քաղաքապետութեան), Մասիս Բալուլեան, Յակոբ Մարտիրոսեան, Շեֆիք Զարոյուեան:

Երկրաչափական Վաշտի Պետեր

Մասիս Բալուլեան, Աթանաս Քիլահեան, Արամ Ղազարեան, Յակոբ Մարտիրոսեան, Յակոբ Քիրիշեան (ապա անցած Հնութեանց Սպասարկութեան), Բիւզանդ, Երուանդ եւ էտուարտ Պ. Պարսումեան եղբայրներ, Լեւոն եւ Երուանդ Մ. Պարսումեան կողմից (Լեւոն Պարսումեան հետաջային Պէյրութի Քաղաքապետութեան գլխաւոր երկրաչափ, իսկ Երուանդը՝ ճարտարապետ, մեծ յանձնառու եւ յայտնի բանաստեղծ եւ արձակագիր), Յակոբ Գրիգորեան (ապա անցած Զրարաշխական Սպասարկութեան), Աւետիս Աթաշեան, Կարօ Աւազեան, Վահան Մաճառեան, Նեհիպ Հիմարեան (մեծ եղբայր մարմնի գեղեցկութեան համաշխարհային դասիները կրէն՝ Լեւոնի), Ժողէֆ Աւետեան:

Երկրաչափի Օգնականներ

Մրապիտն Տէր Յարութիւնեան (հետագային ուսուցիչ, Բարեգործական քարտուղար, ապա Տ. Աշոտ Քահանայ՝ Հողերու Հովիւ Մանչեսթրի), Սահակ Գալայեան, Անդրանիկ Տէր Կարապետեան, Վարդան Իղմիրեան, Յակոբ Աշգարեան, էտուարտ Թաթուլեան, Ժողէֆ Պազայեան, Իլիաս Յովհաննէսեան, Միտսք Ալայպողանեան, Աւետիս Քիրազեան, Հայգաւակ Լեփեճեան, Յովհաննէս Միրզայեան:

Հաշուազիտական Գրասենեակի Պետեր

Յակոր Միլաճեան, Յակոր Պաղտատեան (տաղանդաւոր եւ նորարար հաշուազէտ մը, որ մահացաւ անժամանակ):

Հաշուագէտի Օգնականներ

Հրանդ Միլաճեան, Սարգիս Էսոյեան, Ռ.Պ. Քարտաշ (ապա խմբագիր Հալէպի «Սփրատ» թերթին եւ հետագային Հայագիտութեան ռուսացի կիպրոսի Մելգոնեան Հաստատութեան մէջ)⁽⁴⁾, ԺողէՖ Աւետեան:

Գծագրիչներու Գրասենեակի Պետեր

Յակոր Միլաճեան, Լեւոն Քենեայեան (ապա անցած Քաղաքապետութեան՝ որպէս Սահմանադրումներու Գրասենեակի Պետ), Կարապետ Յ. Նազարեան (որուն հորեղբայրն է Բարերար Լեւոն Կ. Նազարեան), Թորգոմ Տէր Ղազարեան, Պետրոս Պասմաճեան:

Թեքնիք Կէտադրութիւն

Արամ Սարեան:

Գծագրիչներ

Արտաշէս Ուզունեան, Կարապետ Յ. Նազարեան, Վահան Վարդանեան (ապա անցած Ջրորաշխական Սպասարկութեան եւ Քաղաքապետութեան), Թորգոմ Տէր Ղազարեան, Յակոր Տիբեճեան, Արամ Սարեան, Պետրոս Պասմաճեան, Անդրանիկ Գէորգեան, Համբարձում Մովսէսեան (ծանօթ Համբարձում Եալլա անունով. ունէր բանաստեղծական շնորհք. եղբայրը՝ Բարերարուհիներ Զապէլ Մովսէսեանի եւ էլմաստ Հինայէկեանի), Արսէն Տէր Պետրոսեան, Լուսինիկ Գալսեղեան, Փալլակ Աղապալեան, Մինաս Հազարեան (Կոմիտասեան երգերու վարպետ մեկնարան), Արտաշէս Փելիթեան, էլի Յ. Նազարեան (Նախապէս խմբագիր «Սփրատ» եւ «Լը Բուրիէ Տը Սիրի» թերթերուն), Միշէլ Զ. Արսլանեան, Կարպիս Սողանեմէզեան:

Թեքնիք Գրասենեակի պետ Կարտաշէս Փելիթեան: Երկրաչափական Արխիւներու Գրասենեակի Պետ էլի Յ. Նազարեան (որուն հորեղբայրն է «Պաշար»ի խմբագրապետ Ա. Ն. Նազար):

Դիւանատան Պետեր Ալֆոնս Երեմեան, Ճորճ Հիմիտեան: Քարտէսներու Մելանագծութիւն Պետրոս Պասմաճեան: Քարտէսներու Գծագրութիւն Ենֆիք Զաօղլուեան: Քարտուղար Ճորճ Միրիէթեան: Տպագրութեան Գրասենեակ Միշէլ Պալեան: Շարժանկարներու Մելանագծութիւն Պետրոս Պասմաճեան: Քարտուղար Ճորճ Միրիէթեան: Տպագրութեան Գրասենեակ Միշէլ Պալեան: Անդրանիկ Աւետիսեան, Արշալիր Գուրումճեան, Յովհաննէս Թամատ-

եան, Անդրանիկ Քելէշեան: Երկրաչափի Գործաւոր Մկրտիչ Գրիգորեան:

ՀԻՐԻՆՎՄ ՕՅԻՍ ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ՍՈՒՐԻՈՅ

Բ. Աշխարհամարտի ընթացքին, Անգլիական Հիւրինկ Օֆիսը, օղանաւակայաններու չափումներու եւ գծագրութեան համար օգտագործեց Քատասթրի թէքնիկները, հետեւեալ կազմով—

Երկրաչափներու Պետ Մասիս Բալուլեան: Երկրաչափ Նենիպ Հիմիտեան: Գծագրիչներ Կարապետ Յ. Նազարեան, Թորգոմ Տէր Ղազարեան, էլի Յ. Նազարեան, Պետրոս Պասմաճեան:

Թեքնիք Կէտադրութիւն Արամ Սարեան: Հաշուագէտ Յակոր Պաղտատեան:

ՏԵՐ-ԶՕՐԻ ԵՐՁԱՆ

Քատասթրի Տնօրէն Յակոր Մարտիրոսեան: Գծագրիչ Արամ Սարեան:

ՀԱՄԻՉԵԻ ԵՐՁԱՆ

Փոխ-Տնօրէն Յակոր Մարտիրոսեան:

ԻՏԼԻՊԻ ԵՐՁԱՆ

Փոխ-Տնօրէն Յակոր Մարտիրոսեան: Գծագրիչներու Գրասենեակի Պետ Թորգոմ Տէր Ղազարեան:

ՊԱՄԱՍԿՈՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵԴՐՈՆ

Կեդրոնատեղի՝ Նախ Սալհիէ, ապա Շառէ Ատլիէ եւ Սապա՛ա Պահրաթ: Վերջնական Գծագրութեան Սպասարկութեան Պետ Յովհաննէս Սերոբեան: Եռանկիւնա-չափագիտական Գրասենեակի Պետ Գրիգոր Պոյաճեան: Թեքնիք Գրասենեակի Պետեր Սարգիս Պապիկեան, Պետրոս Դուրեան: Հաշուագիտական Գրասենեակի Պետ Սարգիս Պապիկեան: Երկրաչափական Վաշտապետներ Փանոս Փելիթեան (Նաեւ Դասատու Քատասթրի վարժարանին), Արտաշէս Փելիթեան, Լեւոն Պարսումեան, Կարօ Աւագեան, Ասատուր Վարդանեան, Բենիամին Մենէշեան:

Երկրաչափի Օգնականներ
Երուանդ Կիզիրեան, Յովհաննէս Թնճուկեան, Պարզեւ Փաշայէզեան,
Պետրոս Քիրէճեան, Յակոբ Ուրֆալեան, Կարօ Ծամպուլեան, Յակոբ
Զեչէնեան, Յարութիւն Զեչէնեան:

Հաշուազետներ

Անթուան Աւետեան, Պօղոս Փամկոչեան, Լեւոն Կիրիւմեան:

Գծագրիչներու Գրասենեակի Պետ Մեսրոպ Մեսրոպեան:

Քարտէսներու գծագրութիւն Յակոբ Յակոբեան:

Գծագրիչներ

Մինաս Գուշնազեան, Փայլակ Աղապալեան, Ալեքսան Ալեքսանեան,
Յարութիւն Մեծոյեան, Լորիս Մեծոյեան, Սամուէլ Նաճարեան, Մովսէս Քիւ-
չիւկեան, Հայկ Մելիտոսեան, Սուրէն Սուրեան, Արսէն Ուղուրլեան, Վահ-
րամ Արքաճամբեան, Սահակ Փելթէքեան, Վահէ Աթոյեան, Արքաճամ Գլըճ-
եան, Յարութիւն Ներլէքեան, Մանուէլ Մալաքեան, Գէորգ Յակոբեան, Պերճ
Կարապետեան, Գէորգ Գարաբաղուպեան:

Հաշուակալութիւն

Ոսկան Սարաֆեան:

ՀՈՍՄԻ ԵՐԶԱՆ

Քատասքրի Փոխ-Տնօրէն

Արամ Ղազարեան:

Երկրաչափական Վաշտապետներ

Կարօ Պետրիկեան, Կարօ Աւագեան, Յակոբ Մարտիրոսեան, Վահան
Մաճառեան, Սարգիս Ռաշատուրեան, Յովհաննէս Թնճուկեան, Համար-
ձու՛մ Մերտինեան (Հետազային մեծ յանձնակատար), Արթիւն եւ Հրանդ
Քիրէճեան (եղբայրները Տօթթ՛ Երուանդ Քիրէճեանի), Լեւոն Պարտու՛մեան:

Օգնական Երկրաչափ

Յովհաննէս Մինասեան (Հետազային ծանօթ Հոգեւոր):

Գծագրիչներ

Մանուէլ Մանուէլեան, Լեւոն Գրիգորեան, Պետրոս Դուրեան, Կիրակոս
Թնճուկեան, Մովսէս Քիւչիւկեան, Մանուէլ Մալաքեան, Կարապետ
Պողէճեան, Վահան Թիւթիւնճեան:

Հաշուազետ Սարգիս Էսոսյեան:

Քարտիսագիր Արտաշէս Փելթէքեան

ՀԱՍԱՅԻ ԵՐԶԱՆ

Երկրաչափական Վաշտապետներ

Վահան Մաճառեան, Կարօ Աւագեան, Փանոս Փելթէքեան,

Յակոբ Մարտիրոսեան:

Երկրաչափի Օգնական

Արմէն Յակոբեան:

Գծագրիչներու Պետ

Կարոյ Ծամպուլեան:

Գծագրիչներ

Թազուր Պայրզճեան, Կարոյ Ագարճայեան, Մինաս Հազարեան:

Քարտիսագիր

Քարտէսներու Մելանագծութիւն

Աշխատանոցի Պետ

Արտաշէս Փելթէքեան:

Պետրոս Պասմաճեան:

Նազարէթ Սարգիսեան:

ԱԱԹԱՔԻՈՅ ԵՐԶԱՆ

Հաշուագիտական Գրասենեակի Պետ Նուպար Նազարեան:

ԱՆՏԻՈՔԻ ԵՒ ԱԼԵՔՍԱՆՏԻՆՏԻ ԵՐԶԱՆ

Սանճաքի շրջան, որ թրքական թափանցումէն առաջ Սուրիոյ մաս կը
կազմէր:

Վաշտապետներ

Մասիս Բալուլեան, Յակոբ Մարտիրոսեան, Վահան Մաճառեան:

Գծագրիչներ

Ֆիլիպ Ամիրալեան (զոհ՝ սիրային տրամի մը), Յակոբ Աթաշեան, Մ.
Տէր Գալուստեան:

ԿԱՆՈՒՄՇՈՅ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՆ

Ընդհանուր Տնօրէն Սուրիոյ եւ Լիբանանի

Լեւոն Հազարապետեան:

«Գեղարդ», Սուրիահայ Տարեգիրք
1976–1978 Միացեալ Թիւ, Բ. Գիրք

1.- Արաք. Մնասնահ վէ թաքսին ախարի: Ֆրանս. Service du Cadastre et d'Amélioration Foncier.

2.- Արաք. Էմին Արճը: Ֆրանս. Service Foncier

3.- Արաք. Վազիրէ Էլ Ջիրաս վէ Իլպահ Ջիրայի:

4.- Այս առիթով տանք մանրակա մը.– Խ. Պ. Քարտաշ լա գերմանագետ էր. սակայն
Ֆրանսերէնի քիչ տեղեակ: «Եփրատ» քերթի իր խմբագրութեան ժամանակ կը մտնի
Մարաջախտ Փոշը. որպէս ազգային հերոս, քերթըղ երկարօրէն կը գրեն այս մասին:
Ֆրանսական քերթի մէջ կարդալով որ Մարաջախտը վերջին պատիւներով պիտի մէջ
դրուած է եւ խորհելով որ պիտը իրեն ծանօթ զարեջուրն է (մինչդեռ պիտը երկրորդ
ինաստով դազաղ կը նշանակէ). քերթին մէջ կը տպէ առօր փառք... «Եւ վերջին
պատիւ իրեն Մարաջախտ Փոշը դրոնցաւ զարեջուրին մէջ...»:

ՅԱԲԵԼՈՒԿ



Ա. շարք. Ստողներ ծախեն աջ.- Յովհաննես Գազանճեան, Գրիգոր Պողարեան (տնօրէն) եւ Յակոբ Պարտազճեան (Քահանայ)
Բ. շարք. ծախեն աջ.- Անդրանիկ Տեմիրճեան (երկաթուղի) Ամերիկա, Գեորգ Պերպերեան, Երուանդ Լեյրլուճեան (Թիֆլիսցիներ), Անդրանիկ Եայլեան, Անդրանիկ Կեօրեան, Վահան Թիփլիսցի, Գրիգոր Տէրիմանճեան, Սահակ Պեքարեան.
Գ. շարք. ծախեն աջ.- Սիմոն Սիմոնեան, Էլի Նազարեան, Գեորգ Գանտահարեան, Եղիա Բանոյեան, Կարապետ Նազարեան, Յակոբ Աճոյեան, Պարզեւ Մակարեան.

Նամակներ

Ա.

Հալէպ, 17 Սեպտ. 1997

Սիրելի՛ Յարութիւն,

Ինձի անսահման ուրախութիւն պատճառեց Ձեր անակնկալ գանգը, որ զիս փոխադրեց Կրթասիրաց Վարժարանի Վեֆիլիէ քաղաքացի դպրոցական գրասեղաններուն, ընկերակցութեամբ սիրեցեալ Սիմոնին: Ան արդէն կը փայլէր ապագայ բանասէրի եւ պատմաբանի համբաւով, մագերում կտրուած-բի ձեւն ալ «պատմաբանական» էր. արդէն ծածկանում մըն ալ գտած էր՝ Նոմիս, Սիմոնին հակադարձը: Շա՛տ շուտ մեկնեցաւ «էնդի» դէմը. այսօրուան ժամանակները ա՛յնքան պէտք ունէին իր «խարագան»ներուն: Նոյնպէս վերջիշեցուց «հայրենաբաղձ»ներուն եւ «դէպի Երկիր» խանդավառ ոգիով շրջանակը: Շատեր «այրեցան» այդ նամբուն վրայ, Բիշերուն յաջողուեցաւ տեղ հասնիլ, իսկ Հալէպի հայ արուարձանները կրեցին միլիոնաւոր կոտորուստ:

Աստուծոյ մէկ հրաշքով, երկիմքէն ինկաւ «Անկախութեան անմահական խնձորը», սակայն այս չտեղծեց միաբանութիւն եւ միասնականութիւն: Խորենացիին դարեր առաջ գտած էր վեկուրը— «Ողորմ՛ գեեզ, Հայոց Աշխարհ»: Ձեր քովն ալ հասած է...

Շնորհակալութեամբ ստացայ Ձեր իրաւացի «Յաւելուածը»:

Այնքապահայութիւնը անսպառ գանձարան մըն է, որուն մէկ մասը միայն ներկայացուած է պատմագիրքին մէջ: Ժամանակին ինձի դրկած էին գիրքին *avant projet* (նախա-ծրագիրը), եւ նկատել տուած էի անբարարութիւնը եւ նշած՝ բերիները: Հակառակ որ պատկառելի եւ յոգնատանջ գործ մըն է, կարելի էր աւելի լաւը, եւ արդէն դուք ցոյց կու տաք պատմաագիրքը: Թ. Թորանեանին գրախօսականը արդար դատումներ ունի, սակայն անդին վարդան Արքեպսկ., «պատմագիրքին ներկայ վիճակով, արդարացուցիչ չի գտներ անոր մուտքը մեր գրադարաններէն ներս», ուր կարծես աղամանդներ կը վիտային: Տեղին է ըսել. «Պիրէ վարդապետ, վո՛ր տեսիք սէ, Էօսիմ տէ-մէտիկ»:

Յօդուածս դրկեցի «Զարբօն»ին, երբ լոյս տեսնէ, Ձեզի կը դրկեմ օրինակ մը «Նոր Կեանք»ին համար: Կարելոր է որ նախ Պէլլոսը լոյս տեսնէ: «Զարբօն» 5 Յունիս 1997, Դոկտ. Արա Յովհաննէսեան, յայտնաբերողը

AIDSի վերիսին, մամակ մը գրած էի «Նոր Կեանք»ին որ արտատպան սոյն կարևոր յօդուածը հանեցէ՛լ յիշեցնել:

Ամեն պարագային, բաւարար նիւթեր կան պատմագիրքի 4րդ հատորի մը համար, որ Այնթապահայ «Փոքր Ածու»ին հրաշալի իրականացումները պիտի փաստէ:

Խմբագրապետութիւնը պէտք է յանձնել Վարդան Արքեպսկ. Տէմիր-եանին, քարտուղարութիւնը Լեւոն Վարդանին. խորհրդական Փրոֆ. Գեորգ Խրոյպեան, գանձապահութիւն՝ Յարութիւն Սիմոնեան:

Սրտագին յաջողութիւններ:

Սիրալիբ Բարեկերտով՝
Է.Լ. ՆԱ.ՋԱՄԲԱՆ

Յ.Գ. Մեղի՛, որ արժեցնելու համար Ձեր գործաստանին «ժամացուցային» ասանդութիւնը, պէտք էր Աարգիսօֆին օրինակով՝ Սիմոնօֆ մակնիշով ժամացոյց մը:

Բ.

Հալւպ, 3 Դեկտ. 1997

Սիրելի եւ թանկագին
Յարութիւն Սիմոնեան.

Մեծ ուրախութեամբ ստացայ Ձեր սիրալիբ գանգը եւ անմիջապէս հեռաձայնեցի Պրն. Ռուբէն Տիրարեանին, Ձեր դրկած ծրարին մասին:

Պրն. Տիրարեանը կորսնցուցած ըլլալով իմ հեռաձայնային թիւս, քանի մը օր ակամայ ուշացաւ մեր տեսակցութիւնը: Իմ հեռաձայնային կապէն վերջ, անմիջապէս տեսնուեցանք ու Ձեր Բարեկերտուն հետ յանձնեց ծրարը, որ թարգմանն է Ձեր ինձի հանդէպ պահած անկեղծ զգացումներուն: Այս առթիւ ընդունեցէ՛ք իմ ջերմագին շնորհակալութիւններս ու լաւագոյն մադթանքներս:

Շատ ուրախ եմ որ կը յարեմագնէ՛ք Սիմոնեան ընտանիքին բարի համբարը, Ձեր մեկնասութեամբ ու բարի գործերով:

Մեծապէս ուրախ եմ որ իմ յօդուածս Ձեր «Յաւելուած»ին մասին լաւ ընդունելութիւն գտաւ Ձեր եւ այլոց կողմէն: Առածը կ'ըսէ՛ «Պղատոնը կը սիրեմ, սակայն նշարտութիւնը անելի»: Ազած իրագործումը, Ձեր ըսածին պէս, գնահատելի է. կարելի էր անելի լաւ ընել: Այս ձեռով նամբայ կը քացուի 4րդ հատորի մը հրատարակութեան, որ պատիւ պիտի բերէ Այնթապահայութեան ու պիտի վերացնէ քացրողութեանը. մաքս անելի պիտի արժեւորէ Այնթապահայոց գործունէութիւնը, ինչ որ պիտի խթանէ Այնթա-

պահայ նոր սերունդը արժեցնելու եւ տեսականացնելու Այնթապահայ ոգին, որուն մասին յօդուած մը գրած եմ Պէլլորուքի ՀԲԸ Միութեան «Ռօսնակ» պաշտօնաթերթին մէջ, խմբագիր՝ Արամ Սեփեթեան (թիւ 11, Սեպտեմբեր 1997): Կը ներփակեմ:

Մտաւ շնորհակալ եմ Ձեր դրկածներէն, որոնք անելի լոյս սփռեցին սիրեցեալ Սիմոնին մասին: Եթէ կարելի է, ես Ձեզի պիտի բելադրէի մեկնաս ըլլալ անոր անտիպ գործերուն ու մտնաւանդ հրատարակել քանի մը հատոր անոր «Սփիւտ»ի հաւաքածոյէն, քանսաւր ժիրայր Դանիէլեանի խմբագրով:

«Ջարթօնք»ին դրկած յօդուածիս՝ «Սիմոն Սիմոնեան եւ Այնթապցի Դուստր Քոյր Ֆիլոմէն», հրատարակումը ուշացաւ: Երբ կապ պահէ՛ք Արամ Սեփեթեանին հետ, որպէսզի անմիջապէս հրատարակել տայ յօդուածը, կը խորհիմ թէ մեծ յաջողութիւն պիտի գտնէ:

Եթէ ձեռնհաս Այնթապի պատմագիրքին 4րդ հատորին համար կազմուի Յանձնախումբ մը, սիրով կ'ըջակցիմ:

1998 Նոր Տարուան սեմին, Ձեզի կը դրկեմ ջերմագին շնորհատրութիւններս ու Սուրբ Մնունդի սրտագին բարեմաղթութիւններս, երջանիկ, քաջաոգոյ, ու արեւշատ կեանքի մը համար:

«Նոր Կեանք»ին գրած էի որ հրատարակեմ գիտնական Արա Յովհաննեսեանին նուիրած յօդուածս. հանեցէ՛ք յիշեցնել:

Մշտապէս սպասելով Ձեր բարի գործերուն արձագանգին, լաւագոյն զգացումներով, ողջո՛յն Ձեզի (Սիմոնին սիրած ձեւը):

Սիրալիբ Բարեկերտով՝
Է.Լ. ՆԱ.ՋԱՄԲԱՆ

Յ.Գ. Հազար՛ պիտոս Լեւոն Վարդանին համար, կրնար շատ օգտակար ըլլալ նոր պատմագիրքին: Վերջերս լոյս տեսաւ իր «Հայկական 15ր բուրձ պատմագիրութեան մէջ», մեծ կորուստ Այնթապահայ մտաւորականութեան:

Գ.

Հալւպ, 5 Դեկտ. 1997

Սիրելի Յարութիւն,

Ինչպէս գրած էի Ձեզի, աղուոր յօդուած մը դրկած էի «Ջարթօնք»ին «Սիմոն Սիմոնեան եւ Այնթապցի Մաստր Քոյր Ֆիլոմէն» վերագրով. շատ հետաքրքրական, սակայն ամիսներ է վեր ուշացաւ անոր լոյս տեսնելը, կ'անգիտամամ պատճառը: Արդեօ՞ք իրենց ձեռքը չէ անցած, կամ պարզապէս չեն ուզած հրատարակել:

Ձեր դրկած նիւթերուն համաձայն, յօդուածս նոխացուցի կարգ մը տե-

դիր, շատ լաւ ու ամբողջական յօդուած մը եղաւ: Ինչպէս նամակիս մէջ ըսած էի, հաւանաբար կ'ապ հը պահէ՞ Արամ Սեփեթեանին հետ: Դրոյցեցէ՞ որ ԱՆ-ՄԻՋԱՊԷՍ հրատարակեց զայն: Ի՞ հարկին, արդեօ՞ք «Նոր Կեանք»ը կը հրատարակէ յօդուածս, եթէ տրամադիր են եւ «Զարթօն»էն յոյս չկայ, յօդուածս Ձեզի դրկեմ որ հրատարակել տա՞մ: Եթէ «Նոր Կեանք»ը տրամադիր է հրատարակել յօդուածներս, ուրիշներ ալ կրնամ դրկել: Օրինակ, պատրաստ ունիմ յօդուած մը, որ կը փաստէ թէ Մեծ Եղեռնի 1915-1922, հայ գեղուածներուն թիւը 3 միլիոն է եւ թէ ըստ գերմանական աղբիւրներու, Թուրքիոյ մէջ հայերուն թիւն էր 3.5 միլիոն: Այս յօդուածն ալ դրկեցի «Զարթօն»ին, դարձեալ լուր չելաւ, նաեւ յօդուած մը ամերիկահայ նշանաւոր կենսաբանիկոս Տոքթ. Հրայր Յովնանեանի մասին:

Թերթին մէջ գրած էի թէ 200է աւելի մոռցուած կարեւոր այնքապահայեր կան, սակայն եթէ ամէն տեղ աշխատամբ տարուի, ամոնց թիւը 500ը կ'անցնի: Այնքապահայերը գանձարան են:

Պատմագիրքին մէջ անտեսուած կարեւոր բաժին մըն է, այնքապահայ կորուստներուն ցանկը, 1952էն ազդին: Նոյնքան կարեւոր է հիններն ալ յիշել: Շատ անհրաժեշտ էր հրատարակել Այնքապի քարտէսը, ուր նշանակուած ըլլան այնքապահայ մեր դպրոցներն ու մշակոյթի կեդրոնները: Նման քարտէս մը արդէն յոյս տեսած է պատմագիրքին Ա. հատորին մէջ, գծագրութեամբ քարտիսագէտ եւ յայտնի գծագրիչ եղբորս՝ Կարապետին կողմէ: Ասոր կողմին, յիշատակել նոր հիմնուած դպրոցները:

Նոր լուսարանութիւններ կան Այնքապ անուն ծագումին մասին եւ հայերէնը Այնքապի թուրքերէնին մէջ, Եղիա Տօլպագեան եւ Լեւոն Վարդան եւ ուրիշներ:

Վերջապէս նիւթեր շատ են, կարեւորը անշահախնդիր մարդ եւ անձանուէր գրիչներ գտնելն է:

Ժամանակին ամոնց շատ մը բացթողումներուն մասին գրած էի Եր. Պապայեանին, սակայն «պարբերը» չըրիցի:

Միշտ Ձեզ լսելու սպասումով, սիրալիր բարեկներով՝

Էլի ՆԱԶԱՐԵԱՆ

Յ.Գ. «Ապարէզ»ին մէջ սխալումն կ'այ, երբ կը գրէ. «Մասնոյ Կերմա գիւղէն շաղցապան հոր՝ Օվէի եւ իր սասունցի մօր Մանուշի անդրանիկ որդիին»: Անշուշտ պէտք է ըլլայ. «Ջաղացապան հոր՝ սասունցի Օվէի եւ իր Այնքապի մօր՝ Մենուշի անդրանիկ որդիին»: (Ականջը խօսի Պրն. Եր. Պապայեանին):

«Ապարէզ»ին մէջ կայ պարբերութիւն մը եւս, գոր նկատի առած ըլլալու էր Եր. Պապայեան, որ ահաւասիկ—

Շահէ Ծ. Վրդ. Գասպարեան ինծի հարցուց.

— Դուն այնքապցի* ես, թէ սասունցի:

— Սասունցի, ըսի:

Ասկայն այս պատասխանը յարաբերական է, եթէ կ'ուզես գրականութիւն է, քանի որ Միմոն մտադրած էր անմահացնել շաղացապան Օվէի հայրենիքը՝ Սասուն: Այս ձեւով, Միմոն չի դադարիր Այնքապցի ըլլալէ, Այնքապ ծնած այնքապցի Մենուշ մօրմէն, Այնքապ մկրտուած, շրթնաւարտ Այնքապու կրթասիրաց Կարժարանէն, իր դաստիարակութիւնը կը պարտի մեծանուն Այնքապցիներուն: Այս առթիւ, Գրիգոր Պողոսեան տուած է իր վճիռը, (տեսնել Այնքապականք Ա. հատոր):

Միմոնին հրաշալի Այնքապական պատմութեանը կը փաստեն իր այնքապցիութիւնը, պէտք չկար շահագործել գրական, յարաբերական խօսք մը:

Վ. Սարգիսեան ինձգիմէ կը նկատէ հայ գրագէտ, սակայն չի դադարիր Ֆրէզո ծնած, ամերիկածին գրող ըլլալէ: Ֆրէզո քաղաքը զայն կը նկատէ իր հարազատ գաւաիք ու կը պատուէ:

Եթէ Այնքապցի Յարութիւն Միմոնեան, իր հօր՝ սասունցի Օվէին սիրոյն կը կառուցանէ դպրոց եւ Հայրենակցական Ակումբ, չի դադարիր Այնքապցի ըլլալէ:

Շատ լաւ բնորոշած է՞ իմ գիրքս՝ «Պատմագիրք Նագարեան Գերդաստանը», որ իսկապէս կը ներկայացնէ Այնքապահայ պատմութեան կարեւոր մէկ երեսը: Արդեօ՞ք օրինակ մը ունեցա՞ք:

Ուրիշ կարեւոր պարագայ մը: Ըստ օրինի, բնակիչ մը տեղացի կ'ըլլայ 5 տարի հոն բնակած ըլլալով: Օվէն, 20 տարի Այնքապ ապրելով 4 անգամ Այնքապցի եղած է, անշուշտ առանց մտռնալու իր արմատը:

«Նոր Կեանք»ի յիշեցուր որ հրատարակէ յօդուածս էջած [Aids] վերիսիւսի գիտարար Տոքթ. Արա Յովհաննէսեանի մասին:

ՆՈՅՆ

Եթէ Հալպի եկող մը ըլլայ, հանիր ինծի դրկել Միմոնին «Անժամանորութեան»ը եւ Գուրգէն Մահարիի կնոջ «Անտոնիանայի յուշերը»:

Անշուշտ չէ՞ մոռնար Ս. Մանուկեանին մեծագրութիւնը Եր. Օտեանի մասին, որ յոյս տեսած է:

«Զարթօն»ի ստացանկներուն մէջ յիշուած է:

Ես քանի մը տարիներէ ի վեր «Զարթօն»ի մէջ սկսած եմ շարք մը՝ «Ինչմէր, Հայկապահայ Արժանատրներ Օտար Հորիզոններու Ծակ», մեծամասնութեամբ Այնքապահայեր. մեծ ընդունելութիւն գտաւ: Վերջերս դրկեցի 5 նոր անուններ, «Զարթօն»ի 7 Դեկտ. 1997 թիւին մէջ յոյս տեսած է: Սրտաբան Տոքթ. Յարութիւն Միմոնեանի մասին գրած յօդուածս կը ներփակեն: Ահաւասիկ թերթին գրածը.— «Ստացանք Ա. Ս. Մանուկեան, Երուանդ Օտեան, կեանքը, հրապարակախօսութիւնը, գեղարուեստական վաստակը, Երուան 1997: Ցաւալի է որ չի յիշուիր մեկնեսաին անունը: Ըստ իս, լաւ պիտի

ըլլար որ դուք հաստատէք «Յարութիւն Սիմոնեան Հրատարակչական Ֆոնտ» մը, այս ձեռով չէր մոռցուեր ձեր հրատարակած գիրքերուն առթիւ ձեր ամուսնան յիշատակութիւնը»:

Դ.

Հալէպ, 8 Փետր. 1998

Սիրելի Յարութիւն Սիմոնեան, «ողջոյն»:

Մեծ հաճոյքով ստացայ Ձեր ծրարը, որուն համար կը յայտնեմ իմ շնորհակցանքներս:

Մեծապէս զգացուած եմ Ձեր բարեացակամ զգացումներէն ինծի հանդէպ:

Սիմոնին եւ Քոյր Ֆիլոմէնին մասին գրած յօդուածէս *Բոյի* մը եւս դրկեցի «Զարթօն»ին, յուսամ մօտ օրէն լոյս կը տեսնէ:

Այնքապայիներու Հայրենակցականին «Յայտարարութիւն»ը, պարզ չմեղանք է, աւելին՝ Ձեր «Յաւելուած»ը որեւէ կապ չունի Հայրենակցականին հետ եւ միշտ ի գորու է խօսքի ազատութիւնը:

Նախապէս, ես ալ Ձեր կարծիքէն եմ, որ պատմագիրք Գ.ի խմբագրութիւնը ստանձնէ Դ.ի պատրաստութիւնը, քանի որ ահագին փորձառութիւն ձեռք ձգեցին, ունեցան անտիպ կարեւոր նիւթեր, մանաւանդ տեղեկ եղանակ քաղաքացիներուն ու մտաւարկներուն: Խմբագրական կազմին վրայ պէտք է աւելցնել Փրոֆ. Գեորգ Խրլոպեանը, Փրոֆ. Գեորգ Պարտաբեանը, Յարութիւն Սիմոնեանը: Իսկ որպէս բողոքակցներ, ԱՄՆէն Զարեհ Մելիքեանը, Սարգիս Նախուրեանը, Օր. Անի Խարանեանը: Հալէպէն՝ Տոքթ. Ռ. Ճեպեանեան, Տոքթ. Թորոս Թորանեան, Լեւոն Պերդուբեան, Էլի Նազարեան: Պէլլուրէն՝ Երուանդ Պարսումեան, Դոկտ. Երուան Բասուրի, Արմէն Յարութիւնեան, Վարդան Սրբազան, Տիրայր Ծ. Վրդ., Նուստարդ Վրդ., Տէր Վահան Բեյ.: Դամասկոս՝ տիկիներ Ամահիտ Ասիբեան, Էլիզ Բարսեղեան, Վերծին Տէր Պետրոսեան: Փարիզէն՝ Գեորգ Պազըրեան, Մովսէս Պետրեան եւ Մովսէս Պլաթեան: Մոնթրէլիտէյէն՝ Նազարէր Աթարեան, Ռատիօ Արմենիայէն Տիկին Ռուբենեան: Հայաստան՝ Նոյա Տոլպազեան, եւ այլն:

Կարեւորը այն է որ սիրով յօժար եմ:

Պրմ. Պ. Գայմազամեանը Հալէպէն մօտէն կը ճանչնամք, եղբորս լաւ բարեկամն էր, «Նեփրատ»ի մէջ հիւրընկալած եմ իր յօդուածները: Յատուտ բարեկամը, քաղաքացիական մարտնչներով:

Իսկապէս որ Յակոբ Կարապետեանի գիրքերը «անտէր» մնացին: Կ'երեւի պէտք ունի մեկնասա Յարութիւն Սիմոնեանին, որ ըստ իս պէտք է նուիրուի Սիմոնին հատընտիրներուն հրատարակութեան:

Դ. հատորի մը հրատարակութեան, շատեր կը ձայնակցին Ձեզի, արժեքաւոր է Փրոֆ. Գեորգ Խրլոպեանին կարծիքը:

Կրկնակի շնորհակալութիւններ Ձեր բարի զգացումներուն համար, սիրալիր բարեկամներ Ձեզի եւ Ձեր հարազատներուն, մաղթելով իրականացում Ձեր հայանուէր ծրագիրներուն:

Ողջոյններով՝
Է.Ի.ՆԱԶԱՐԵԱՆ

Յ.Գ. «Նոր Հայաստան»ի մէջ հանդիպեցայ նոր դեղի մը. Arthur Itis, ուսմարի գումարի դէմ, օժանդակ: Տիկինն ծունկի ցաւ ունի, հանեցէ 2 հատ դրկել ինծի, վրամ գրելով Echantillon Médical: Ծնորհակալութիւններ:

Ե.

Հալէպ, 16 Փետր. 1998

Սիրելի՛ Յարութիւն Սիմոնեան,

Մեծ հաճոյքով ստացայ Ձեր դրկած ծրարը եւ Փետր. 8 թուակիր նամակով մը, յանձնելի Ձեզի:

Փետր. 11ին ստացայ Ձեր հեռագրային զանգը, իսկ երէկ, Տոքթ. Թորոս Թորանեան բերաւ Ձեր դրկած «Հայաստանի Երկու Տարիներ» հոյակապ ժամանակագրական գիրքը, որուն համար ընդունեցէ բիւր շնորհակալութիւններ:

Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան գերոյնէ ստանձնեց Հայաստանը, առաւել երկրաշարժ, ազերիական շարժեր, շրջապատում, սովետական 80 տարուայ ժառանգութիւն, սակայն վերջաւորութեան Լարսաղը, դարա (սեւ) բախտ բերաւ իրեն: Ապագան ցոյց պիտի տայ ո՞ր կողմը իրաւունք ունի:

«Զարթօն»ն ալ տպած էր Այնքապայիներուն Յայտարարութիւնը, աւելորդ չմեղանք եւ ինքնադարացում: Ըստ իս պէտք վար, Ձեր գիրքին համար աղուոր յեջում եղաւ. մանաւանդ վերջին տողերը անխմաստ եւ անարդար: Աւելի լաւ պիտի ըլլար, խորոգանալու տեղ, ընդունին իրենց բացթողումները եւ ձեռնարկեն Դ. հատորի մը: Սակայն կը խորհիմ որ իրենց վրայ յոյս դնել աւելորդ է:

«Զարթօն»ին նորէն դրկեցի *Բոյի* մը Սիմոնին նուիրուած յօդուածէն: Միայն կը փափաքեմ որ գրութիւնները իրենց ներկայացան մեքենագրուած, քանի որ գրաշարներուն «նազը» դժուար է քաշել: Տարիներ ի վեր վէճի մէջ եմ իրենց հետ, ուրիշ բերքեր՝ «Սփիւտ», «Արարատ» մեքենագրող պաշտօնեայ ունին: Սակայն հակառակ եղած ահագին նուիրատուութիւններուն, չեմ ուզեր ստանձնել աւելորդ ծախք: Յօդուածը գրելու եւ ձրի, բերքն ալ դրամով գնելու եւ կ'ուզեմ որ մեքենագրութիւնն ալ ստանձնեն: Քանի անգամ իրենց ըսի որ «վերջերք» ընելու տեղ, մեքենագրել տան յօդուածներս իմ հաշուոյս կամ Պէլլուրի Նազարեանները վճարեն, այս ալ իրենց «ղապա-

տայութեան» չեն կերցներ, սակայն յօդուածագիր քաջայերբելու տեղ «սիչիմ» կ'ընեն: Մինչդեռ յօդուածագիր չկայ. երբեմն թիւեր կան բոլորովին անարժէք եւ «թօփլամայ»: Ուրիշ թերթեր, հակառակորդ մամուլ, յօդուած կ'ուզեն վճարուի: Կը փափաքէի հասկնալ, թէ դուք դիւրութիւն ունի՞ք յօդուածները մեքենագրելու տալու (գրամեքենայով կամ ֆոնփիւրըրով. նման պարագայի մը յօդուածները Ձեզի կը դրկէի, նախապէս մեքենագրելու):

Այս ձևով, ամիսներ սպասելու ենք որ իրենց «էփօը» տեղը գայ, քանի որ չեմ ուզեր դիրքս փոխել, վարժութիւն եղած է:

Կը արցնէիք թէ Վարդան ձիմիշեան մարաշցի՞ք է, թէ այնքապցի: Այո՛, այնքապցի, կենսագրականը լոյս տեսած էր «Ջարթօմֆ»ի մէջ 1996ի Նոյեմբեր թիւին մէջ, փնտռեցի չի կրցայ գտնել. «Նոր Կեանք»ը անպայման ունի հաւաքածոն, դիրաւ կրնաս գտնել, 1996 տարի, Նոյեմբեր 5էն 20 Նոյեմբեր:

«Ջարթօմֆ»ի վերջին թիւին մէջ կար Գեղամ Սեւանի գիրքին մասին գրութիւն մը, ուր արժանաւորապէս յիշած էին Ձեր մեկնեատութիւնը: Կը ներփակեմ թերթին կտրօնը. նոյնպէս կը դրկեմ երաժիշտ Յակոբ Մանուկեանին մասին գրած յօդուածս:

Ձեզի ծանօթ, այսօր Լոս Անճելիսարմակ արժէքներու մասին գրած եմ, բոլորն ալ Այնքապցի: Յիշեմ քանի մը հատը — Ալպէր Պոյանեան, Տոքթ. Յարութիւն Միսեան, Տոքթ. Յակոբ Այնքապեան, փրկիկոս Հրայր Յովնանեան, սրտաբան Հրայր Յովակիմեան, Փրոֆ. Յակոբ Ներսոյեան, Տոքթ. Սիլվա Արսլանեան, ճարտարապետ Գարաբեդեան, գիտնական Ճօ Խաչատուրեան, ճարտարագէտ Յակոբ Նազարեան, դպրապետ Արսէն Սայեան, եւ այլն: Նաեւ Փրոֆ. Հրայր Տեմմեան:

Նրուանդ Պապայեան, իր Ձեզի դրկած շնորհակալութեան նամակին մէջ յիշած էր Ձեր գաւակները՝ Սեղան, Թալիմը, Յովանը. հանեցէ՛ք տեղեկութիւններ տալ անոնց մասին, նաեւ Ձեր ազնուափայլ Տիկնոջ:

Գալով ինձի, ազգային գործերուն նուիրուած ըլլալով, (մեղք կորսուած ժամանակին, ուշ ամուսնացայ): Մամչ մը ունիմ՝ Տոքթ. Յարութիւն, որ Հալէպի պետական բժշկական համալսարանը աւարտած ըլլալով, Դամասկոսի մէկ մայրանոցին մէջ կ'ընէ իր մասնագիտութիւնը որպէս Gynecologue:

Ես Գատարքի մէջ 43 տարի աշխատեցայ որպէս Chef de Bureau des Archives Topographiques. դժուար գործ մը. այժմ հանգստեան կոչուած, համեստ կենսաբոշակով, ինչպէս բոլոր պաշտօնեաները: Աստուած ատողութիւն տայ:

Ինչպէս գրած էի, տիկինս ծուկնի ոռմաքիզմ ունի: Ձեզմէ ուզած էի օձանելիք Arthur Itis. կը յուսամ նկատի կ'առնէք: Ապասելով Ձեր բարի յուրերուն, սիրալիր բարեւներ Ձեզի, Ձեր ազնիւ տիկնոջ եւ զաւակներուն:

Է. Կ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Զ.

Հալէպ, 20 Մարտ 1998

Սիրելի՛
Յարութիւն Սիմոնեան,

Բիւր շնորհակալութիւններ տիկնոջս եւ իմ կողմէս Ձեր դրկած դեղերուն համար: Մեծապէս գգացուած ենք Ձեր ազնիւ ժեստին:

Դուք հեռաձայնէն ըսած էիք թէ ԵՒԵԲ տուփ դեղ կը դրկէ՞ Պրն. Արամ Սեփեքեանին միջոցաւ: Մեր ձեռքը հասաւ ԵՒԿԻՒ տուփ. դարձեալ շնորհակալութիւններ քերտղներուն: Յուսամ տիկինս կ'օգտուի Ձեր դրկած դեղին:

Ներփակ Ձեզի կը դրկեմ «Ջարթօմֆ»ին կտրօնը, ուր տպագրուած էր Ձեր ԲԱ.8 ՆԱ.ՄԱ.ԿԸ:

«Ջարթօմֆ»ի 17 Մարտ 1998 թիւով Թորոս Թորանեան գրախօսած էր Գեղամ Սեւանին գիրքը, ուր կ'ըսէ —

«Այս գիրքը կը մար երկար ժամանակ մնալ անտիպ, եթէ Յրք. Սիմոնեանը (Լոս Անճելիւսէն) յամեն չառնէր հոգալ անոր տպագրական ծախսերը»: «Ջարթօմֆ» տակաւին չտպեց Սիմոնի մասին գրած յօդուածս: Յուսամ մօտ օրէն լոյս կը տեսնէ, քանի որ հոգացող կայ մեքենագրութեան ծախսը: Խ՞նչ նորութիւններ կան 4րդ պատմագիրքին համար: Սիրով՝

Է. Կ. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Սուրբ Յարութեան տօնին առիթի, կը շնորհաւորեմք Ձեր անուանակոչութեան Տօնը, մաղթելով Ձեզի աննկայ բարիք:

Է.

Հալէպ 8 Ապրիլ 1998

Սիրելի՛
Յարութիւն,

Կը հաստատեմ 20 Մարտ 1998 բուակիր նամակս, որով շնորհակալութիւն յայտնած էի Ձեզի Ձեր դրկած երկու տուփ դեղերուն համար, նաեւ ներփակած «Ջարթօմֆ»ի մէջ լոյս տեսած Ձեր նամակին կտրօնը:

Երէկ, Շարաք կէտքէ վերջ, ստացայ Ձեր հեռաձայնային զանգը, որուն համար կը յայտնեմ իմ շնորհակալութիւններս:

Տիկինս եւ ես, պարտինք մեր ջերմագին շնորհակալութիւնները յայտնել Ձեզի, Ձեր դրկած դեղին համար, որմէ օգտուեցաւ Տիկինս մեծապէս:

Տոքթ. Թորոս Թորանեան մեկնած է Պէլքրոս, ուր ունի բանախօսութիւններու շարք մը, Ապրիլեան ամսուան առիթի:

Կը տեղեկացնէ՛ք թէ դեղին Յրդ տուփը կը գտնուի Պէյրութ, Պրն. Վա-
րուժամ Ռաշատրեանին մօտ. կը յուսամ կը հասցնէ մեզի, քանի որ Ս. Յա-
րութեան Տօնին առթիւ, Պէյրութէն Հալէպ եկողներ շատ կ'ըլլան:

Սարիքիկ Մամուկեանին գիրքը՝ Նր. Օտեանի մասին, չեմ ստացած Պրն.
Արամ Սեփեքեանին միջոցաւ: Կարելի է որ Տոքթ. Թարսը միասին կը բերէ,
եբք իրեն յանձնուի հատորը, քանի որ պիտի հանդիպի Ա. Սեփեքեանին:

«Զարթօն»-ի 24 Մարտ 1998ի թիւին մէջ, Պրն. Արմէն Յարութեանեան
«փորձած» էր «սրամիտ» տուժակ մը գրել Ջեր յուսարանիչ մամուկեան
առթիւ, սակայն մտոցած էր 4րդ հատորը: Կը ներփակեմ բեքթին կտորներ,
մաւե Տոքթ. Թորոսին յօդուածէն, «Զարթօն» 1 Ապրիլի թիւէն, «Այնթապցի-
ներ, չմոռնանք» խորագրով:

Տոքթ. Թորոսին մեծ հայրը, Սասունէն գալով, հաստատուած է Այն-
թապ, ինչպէս եղած են դուրսէն շատ մը Այնթապ ներգաղթողներ: Տոքթ.-ը
ինքզինքը Այնթապցի կը նկատէ իրաւամբ: Սակայն Ջեր հայրը 20 տարի ապ-
րած ըլլալով Այնթապ, հինգ տարիէն տեղացի ըլլալու իրաւունք ունի, որով 4
ամգամ Այնթապցի եղած է: Ամուսնացած է Այնթապցի Մէննուշին հետ, երեք
մանչերն ալ Այնթապ ծնած են եւ շրջանաւարտ Այնթապի Կրթասիրաց Վար-
ժարանէն, որով Այնթապցի ինչպէ՛ս կ'ըլլայ: Այնթապցի ըլլալով հանդերձ,
ամ ազատ է նախասիրութիւններ ունենալ:

Ջեր գրութիւններուն միտք բանիւն, Այնթապի պատմագիրքին 4րդ հա-
տորին հրատարակութիւնն է, որուն մասին խօսք չկայ Պրն. Արմէնին նամա-
կին մէջ: Արդեօք այս ուղղութեամբ աշխատանք մը կա՞յ Ջեր կողմերը: Պրն.
Ֆերտինանտ Գայմագամեան, կեանագրութիւն ուզած է մարմնի գեղեցկու-
թեան դափնեկիր Լեւոն Հիմիտեանէն, ըսելով թէ պատմագիրքին 4րդ հատորը
պիտի հրատարակեն:

Կարելոյը այս հատորին հրատարակութիւնը պիտի ըլլայ, որպէս ամ-
բողջացուցիչ: Այնթապի Յրդ հատորը երկու հատորով լոյս տեսնելու էր, եթէ
յաւելեայ աշխատանք տանէին եւ չամապարէին:

Կը յուսամ նոր բարեգործութիւններու եւ մեկնասութիւններու ետեւէն
է՛ք: Սրտանց կը շնորհաւորեմ ու կը քաջաբերեմ: Երբ Թումանեանին հատոր-
ները լոյս տեսնեն, գիտ չմոռնա՛ք:

Սպասեմք Տոքթ. Թորանեանին. արդեօք հետը Ս. Մամուկեանին գիրքը
կը բերէ՞, քանի որ պիտի հանդիպի Ա. Սեփեքեանին:

Տիկինս մասնաւոր շնորհակալութիւններ կը յայտնէ դեղին համար:

Ս. Յարութեան Տօնին առթիւ, Ջեզի կը դրկենք մեր շերմագին շնորհա-
տրութիւններն ու սրտագին բարեմաղթութիւնները: Ջեր անուանակոչութեան
բարեբաստիկ առթիւ, ընդունեցէ՛ք մեր լուսագոյն գագսու՛մները: Սիրալիք բա-
րեւներ Ջեզի եւ Ջեր հարգատեններուն:

Սիրով՝
Էլի ՆԱՍՐԻՆՆ

Սիրելի՛
Պրն. Յարութիւն,

Մեծ հանդիպով ստացայ Ջեր դրկած ծրարը, որուն համար կը յայտնեմ
չերմագին շնորհակալութիւններս:

Մեծապէս զգացուած եմ Ջեր ազնիւ զգացումներուն համար: Այս ձե-
տով, լաւատեղեակ եղայ Այնթապականք վերջին նորութիւններուն մասին:

Կրթասիրացի նախկին աշակերտներուն կազմակերպած պարահանդէսը
Ջեր հովանաւորութեամբ, պատասխանն էր առ որ անկ է: Ռ՛վ որ ականջ
ունի, թո՛ղ լսէ, ո՛վ որ աչք ունի, թող տեսնէ, թէ Այնթապցին ինչպէս կ'ըլլայ:
Ըստ քաղաքացիական օրէնքի, 5 տարի վերջ, եթէ մէկուն մայրը ամերիկացի
է, ինք ալ ամերիկացի կ'ըլլայ. տակաւին Ջեր հայրը 20 տարի ապրած է Այն-
թապ, մասնակցած հերոսամարտին, որով 4 ամգամ Այնթապցի եղած է: Ան-
իմ՝ 3 օրակներն ալ Այնթապ ծնած են, Այնթապի Կրթասիրացէն շրջանա-
ւարտ եղած են. տակաւին, ինչպէ՛ս կ'ըլլայ Այնթապցին: Յետոյ, ասով մէկ-
տեղ, ամէն մարդ կրնայ նախասիրութիւն մը ունենալ, սակայն իր ինքնու-
թեանէն բան չի կորսնցնիր, մաւե արժանի կ'ըլլայ յիշուելու այնթապցիական
Յուշամատենի մը մէջ:

Ջեր պատրաստած բացատիկ թիւը Նորայր Արքազանին համար, արժե-
հաւոր ներդրում մըն է, մաւե Ջեր մեկնասութիւնները: Պրաւօ՞ւ՛ շեաշա՛ Ար-
թին, թո՛ղ մարդուն լաւ գործերը յիշուին: Աղուոր «տուշէշ» մը ըրած ես:

Ջեր նամակը Տօքթ. Տիգրան Մակարեանին յանձնեցի, իսկ Ջեր փափա-
կած նիւթերը ծրարով մը դրկեցի Պրն. Արմէն Յարութեանեանին, երկտողով
մը: Անշուշտ «այտըմըշ» պիտի չընէ:

Ջեր փափաքը Այնթապահայ 4րդ հատորի մը համար, ամէնուրեք լաւ
ընդունելութեան արժանացաւ, նայինսկ Ջեր գրածը որ նախկին խմբագրու-
թիւնը շարունակէ, շատ լաւ գաղափար է, քանի որ անագին նիւթեր հաւաք-
ուած են իրենց մօտ, եւ յետոյ լաւատեղեակ եղան բացառումներուն ու լրա-
ցուցիչ նիւթերուն: Կարելոյը աւելի հաւաքական եւ միասնական աշխա-
տանքն է, քանի նիւթականի հարց չկայ. եթէ Պէյրութ տպուի, գինը շատ
աւելի մատչելի կ'ըլլայ:

«Նոր Այնթապ»ի խմբագրութիւնը յանձնած են Տոքթ. Թորոս Թորան-
եանին. լաւ ըրած են, քանի որ նման գործի մը վարպետն է, յետոյ մէկ տո-
ւր Պէյրութ, միւս տո՛ւր արասասանամ, այս գործին մարդն է: Յաջորդ թիւը
պիտի նուիրուի Լեւոն Վարդանին եւ պիտի շարունակուի կամոնցաւորապէս,
ինչ որ լաւ կապ պիտի ըլլայ այնթապցիները իրարու կապող: Հոս պէտք է
Այնթապցիները հաւաքուին Կրթասիրացի շուրջ, սակայն աշխատանք չկայ.

գորաւոր այնքապցիական կազմակերպութիւն կ'ուզէ: «Պաօշները» աչքերնին տնկած են Ա. Աստուածածին եկեղեցւոյ եւ Կրթասիրացին վրայ, կամաց-կամաց կը թափանցեն: Ազգային Առաջնորդարանը հոյակապ նոր շէնք մը շինեց Կիւլպէեկեան դպրոցին համար, աղուոր թատերասրահով մը: Նպատակնին Կրթասիրաց 'Իպրոցը' Առաջնորդարան ընելն է: Կիլիկեանի նախկին աշակերտները միշտ գորավիզ են Հալէպի Կիլիկեանին, սակայն Կրթասիրացի նախկին աշակերտները անտարբեր են եւ «այտրըմը» ընող չկայ: Լսածիս համաձայն, ամերիկացի այնքապցի մը 1 միլիոն տոլար տրամադրած է, Կրթասիրացի հանդիսարանը նորոգելու, սակայն չի կրցայ հասկնալ թէ ո՞վ է այդ «դպատայըն»: Մեզի ազգական արծաթագործ Գեորգ Նագարեան 3 միլիոն սուրիական նուիրեց Հալէպի ՀԲԸ Միութեան, սրահի բարեգարգման: Սրահը կոչուեցաւ՝ «Նագարեան սրահ»:

Քամի մը օր առաջ, Տոբ. Թորոսը վերադարձաւ Պէյրութէն, մեզի հանդիպեցաւ: Արամ Սեփեթեանի բովէն քերաւ ոռմաթիզմի դեղին Յրդ տուփը եւ երկու գիրք՝ Սարգիս Բէնեանէն՝ «Յուշապատկերներ» եւ «Մե ու ներմակ Հայաստանի պատկերն է» գիրքերը, ուրիշ Յրդ հատոր մըն ալ կայ երկր, սակայն չքերաւ: Բէնեանին նկարագրածները իրականութիւններ են: ինք կը նկարագրէ նշմարութիւնները, ուրիշներ չեն համարձակիր. իմ կողմէս՝ շեք-մագին շնորհաւորութիւններ: «Ներգաղթ»ին պատճառաւ, կործանեցին հայեպահայտութիւնը եւ ուրիշ տեղեր, ի գուր տեղ, Սիպիւրի բեկնածուներ տարին, հազար ավստս: Ըսածին պէս, նախկին յանցագործները այսօր հերոսներ եղած են եւ արեւմտահայութիւնը կթան կովի վերածած: Յուսամք որ 80 տարուայ ախտը, անկախ Հայաստանը մաքրէ, սակայն արդէն կէտը դուրս ելաւ: Բէնեանին ըսածին պէս, Սովետական ներքին սփիւռքէն, ուր 2 միլիոն հայութիւն կայ, անկից սկսելու էին եւ ոչ թէ ի գուր տեղ փայտելին սփիւռքը:

Շնորհակալութեամբ ստացայ Սարիբեկ Մանուկեանի «Մերուանդ Օտեան»ը եւ Արգար Արիւնեանի «Կարմիր Լիպուսի»ը: հազար ավստս որ հեղինակը վաղամեռիկ եղած է, իր ներկայացուցածները զգայացուցց են: կանութիւններ են:

Սրեան յոյս տեսած է Վարդան Գրիգորեանին նուիրուած գիրք մը... հայութեան նուիրուած կեանք, 1998:

Տիկնոջ ու իմ կողմէս մեր սրտագին շնորհակալութիւնները կը յայտնենք Ձեզի, Ձեր ղրկած 3 տուփ ոռմաթիզմի դեղին համար, որմէ օգտուեցանք:

Սրտագին շնորհակալութիւններ Ձեր ազնիւ ծեստերուն համար, մարդկերթի Ձեզի փառապաշտութիւն, արեւշատութիւն ու բարգաւառ կեանք:

Սիմոնին եւ Քոյր Ֆիլոմէնին մասին գրած յօդուածս տակաւին յոյս տեսաւ «Ջարթօն»ի մէջ. անտարբեր մարդիկ են, կը գոհանան արտասպասութիւններով:

Բարի եղէք Ձեր բարի լուրերն հաղորդել մեզի, սիրալիր բարեկերտով Ձեզի եւ Ձեր ընտանիքի անդամներուն:

Սիրով՝
Է.Լ. ՆԱԶԱՐԵԱՆ

Յ. Գ. Անցեալ տարի «Ջարթօն»ի մէջ աղուոր յօդուած մը գրեցի Փրոֆ. Յակոբ Ներսիսեանի մասին. «Պոյտը «Մարմարա» քերթն ալ արտասպաց: Կրնայ յոյս տեսնել «Նոր Օր»ի կամ «Նոր Կեանք»ի մէջ:

Թ.

Հալէպ, 6 Յունիս 1998

Սիրելի՛
Յարութիւն, ողջոյններ,

Ձեզի գրած էի 26 Մայիս 1998 թուակիր նամակ մը, կը յուսամ ցարդ ստացած կ'ըլլաք:

«Խօսանակ»ի վերջին թիւին մէջ յոյս տեսաւ «Մեծ Նդռնի Ջոններուն Խակական Քիւր 3 Միլիոն է» բացառիկ յօդուածս: Թերթը տակաւին հոս չէ հասած. հասնելու պարագային, Ձեզի կը ղրկեմ *Լօփի* մը:

Այնքապու պատմագիրքին 4րդ հատորի գաղափարը, լայն արծագանգ գտաւ: Լսածիս համաձայն, Պրն. Նր. Պապայեան հաւանած է գործը շարունակել. քանի որ ահագին նիւթ հաւաքուեցաւ իր բովը եւ հասկցաւ բացթողումները. դուք առաջարկած էիք որ նախկինները շարունակեն 4րդ հատորը, ինչ որ տրամարանական է եւ նպատակայարմար:

Հայաստանեան տպագրութիւնը եւ ուղագրութիւնը անտանելի են, սակայն անդարմանելի: Գոնէ մեր եղբայր արաքներէն օրինակ առնելու են. մէկ գրական լեզու եւ ուղագրութիւն ամենայն Արաքներու համար: Շատ ցաւալի եւ աւելորդ էր Նրեանի Մատենադարանի աշխատողներուն յայտարարութիւնը, քանի որ նման բաներ գրողներուն գործն է: Ջայն պահանջող Պօղոս Մակնցեանն իսկ զգացած էր, քանի որ իր նպատակը լատինական տառերը ընդունելուն էր: «Նքէ գիտնայի որ ասանկ անճոռնի արդիւնքի պիտի հասնէիք, չէիք ծրագրեր», խոստովանած է:

Փրոֆ. Կոնստանդին Խոտովերտեան, Նրեան, կը պատրաստէ «Սփիւռ-փառ» Համրագիտարան» մը: Թերթին մէջ յայտարարութիւն մը ունէր, հաւանաբար տեսած ըլլալու էք, գիրքը հովանաւորող մը կ'ուզէ, հրատարակելով անոր կենսագրութիւնն ու նկարը, նաեւ տրամադրելով բաւարար սքաֆներ, 44 հազար տոլար կը պահանջէ: Աչքերնին Սփիւռքի վրայ տնկած են: Կոմիտասին ճայնապակները գնելու համար 600 տոլար պէտք է, անոնք նոյնիսկ «կը մուրան»: Հազար ավստս:

«Նոր Կեանք»ի Ձեր յօդուածին մէջ կը գրէք... «Գրիգոր Պօղարեանն ալ

նոյն կարծիքէն է»: Հաւանաբար թիրիմացութիւն մը կայ:

Սպասելով Ձեր բարի նորութիւններուն, ընդունեցէ՛ք ջերմագին շնորհակալութիւններս Ձեր ազնիւ զգացումներուն համար: Սիրալիք բարեւմեք Ձեզի ու Ձեր հարազատներուն:

Սիրով՝
Է.Ի ՆԱԶԱՐԵԱՆ

Յ. Գ. Թորոսը այսօր վերադարձաւ Պէրտիքէն, հետը բերաւ «Մուսա-Տաղեան Թորոպանկներ»: Յորելեանը Հոկտեմբերին մնաց: Այսօր հասաւ Միտոնիմ յօղուածը, կը ներփակեմ:

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ ՔՈՅՐ ՖԻԼՈՍՏԵՆԻ

Այս էջերը տպուած տեսնել ուզած է այս գիրքին հեղինակը՝ Էլի Նազարեան:

Ուստի, յետ մտնու կը կատարենք իր բաղձանքը իր իսկ գիրքին մէջ որպէս յանելուած գետեղելով հայութեան նուիրուած քոյր Ֆիլոմենին ինքնակենսագրութիւնը:

Ծ.Խ.

Միտոնեան զարմիկներուս յայտնած փափաքին համաչայն, կեանքիս արշանագրութիւնը կը կատարեն, որ այնքան արագօրէն անցաւ ի ծառայութիւն տառապող մարդկութեան, մի միայն ի փառս Աստուծոյ, մարդոցմէ շնորհակալութիւն չսպասելով: Բանի որ իմ հայրենակիցներս կը փափաքին ծագունս իմանալ, եւ կատարած ծառայութիւններս 80 հազար հայերու, առանց կրօնքի կամ երկրի խորութեան: Պիտի ջանամ զոհացնել զանոնք, շնորհիւ Աստուծոյ:

Ծնած եմ 1890ի Յունիս Իին, Ուղղափառ ընտանիքի մը մէջ, մկրտուած եմ Հայ Ուղղափառներու* ջով, 1890ի Յունիս 9ին, հայրս մինչեւ 1895ի մեծ ջարդը մնացած էր Հայ Ուղղափառ, բայց մայրս Յոյն Կաթողիկէ էր, որ մեզ որկեց Թերրա Սանրայի դպրոցը: Ջարդէն ետք, մեր ընտանիքը եղաւ լայրին, որպէսզի ուրիշ ջարդ մը եթէ պատահի՝ կարենանք պաշտպանուած մնալ:

Տակալին 5-6 տարեկան մանուկ, այսպիսի սարսափելի ժամանակ-



(*) Կարդալ *Հայ Ստաքելական* (Խ.)

ները զիստ անհատական կարողություններն են և կը մտածվի, թե՛ արդեօր քանի մը փարիսիներ եւր պիտի չկարենանք՝ միմիքարեւ իմ մերձակիցներս ամբողջովին նուիրելով անոնց ծառայութեան: Տասներեւ փարիսականիս, երբ առաջին Սուրբ Հաղորդութիւնս առի, լոյսը ունեցայ ընկրելու առաքելութեան նուիրութեան հոգեւոր կեանքը, չգիտով առ յաւեր իմ սիրելի ծնողքս և մեր բնութեան փնտրած բոլոր հաճութիւնքը: Տասներեւ փարիսականիս, բրբրեւէր ստրկեցաւ երկու լեզուով, արարական գիրերով և հայկական գիրերով: Ընդ դասերու բացման օրերուն, Սէն Շոգեֆի մայրապետները Այնթապ եկան աղջկանց դպրոցը ղեկավարելու համար:

Ես ինծի կ'ըսէի՝ ահաապիկ, փափաքածս ունեցայ, իրենց բով պիտի մտնեմ իրեն և որքանեւայ և ֆրանսերէն լեզուն պիտի սորվիմ որպէսզի ծրագիրներս իրականացնեմ: Դժբախտաբար, հայրս բունն մարդ մը ըլլալով, ամէն փորձի ենթարկեց իր աղջիկը՝ արգելք ըլլալու համար անոր: Երկու փարի շարունակ, ուսումներս առնելու ժամանակ, Մայրապետներուն կ'օգնէի բրբրեւէն դասեր փալով: Քանի որ մեծ դիւրութիւն ունէի ուսումնս կատարելու, այս երկու քաներն ալ կը յաջողէի ընէմ միաժամանակ, առանց հօրս գիտակցութեան, որովհետեւ կը պարտապարտեի փափուցելու: Օրին մէկն ալ հայրս ամբողջած ըլլալով, գացի մայրապետներուն մօտ, առանց իր հրամանին: Երբ վերադարձաւ ամբողջութեան, գացիք իրեն քարի գալուստ մտադրելու: Մեկնելու վայրկեանին, ինծի խաբարէմ նշան մը ըրաւ որ անոնց չհեղուիս: Ետեղ մայրապետները փորձութեամբ մեկնեցան: Այդ օրէն անդին սկսան անտեսելի շարձարարներ՝ զորս ստիպուեցայ փախի: Կարգիւր նոյնիսկ եկեղեցի երթալ, ուր օր մտանին մէջ զիս պահելով, չոր հացով, եայլն, եայլն:

Անկասկէ Սրբոց փօնի նախօրեակին, դիմանալով անցուցի աղօթքի և ապաշխարութեան գիշեր մը, որպէսզի յաջողօր օր սուրբերու միջնորդութեամբ իր սիրտը փոխէի: Առաւօտեան իր նախաճաշի ժամանակ, ուրքի ելայ այնպիսի արիւթեամբ որ պիտի ընդունէի նոյնիսկ մեռելի իր ուրբերուն: Ծունկի եկած, ինչոյնցի իրմէ բսելով որ Բարին Աստուած իրմէ կը պահանջէ որ իր եօթը զաւակներէն մէկը նուիրէ իր ծառայութեան: Պարտեցի իրեն Արքայապետի պարտութիւնը, որ միակ զաւակ մը ունէր և Բարին Աստուած ինչոյնց իրմէ որ իրեն զոհէ: Ան չմերժեց, և առանց փարտամեղու ենթարկուեցաւ անոր Սուրբ Կամօրն: Եթէ բոլը չլրատ ինծի մեկնելու, Անկիս Տէրն է որ կարող է բոլ բոլոր զաւակները առնելու: Այս յօսքիս վրայ, ան բողոց իր փոքրիկ զգալը, ուրքի ելաւ առանց նախաճաշը վերջացնելու և գնաց ուղղակի մայրապետներուն դուռը բակելու, իմացնելու համար թէ այլեւս համոզուած էր իմ կոչումիս անկեղծութեան և բոլը կու տար ինծի նոյն վայրկեանին մտնել Բոյրերուն քով:

Այդ օրորքն սկսեալ, առանց ժամ մը եւս սպասելու, չգիցի այս սիրտած օճախը, որովհետեւ իմ շար սիրելի մայրս որ մարտիրոսի պէս կը փրկուէր ինծի համար հինգ փարիէ ի վեր, այնպէս ուղեց Բարին Աս-

տուած որ այլեւս եւ զայն չլրանն: Տասներեւ փարի յետոյ երբ Սուրիա վերադարձայ, ան արդէն վախճանած էր քանի մը օր առաջ: Մեր ամբողջ ընտանիքը պաշտպանուած էր երկնքի յարույն շնորհքով:

Վերադառնանք այս գեղեցիկ և կանաչագարդ երկիրը, Այնթապ, հոն ուր կան Այն Լուպայնի բազմաքի ջիհը աղբիւրները և Քարաքիլիոյի արախեւները, որոնք նոյնիսկ մեռելները կը վերակենդանացնեն: Ժամը մօտ էր վերջին քարներն ընելու, ինքզինքս Բարին Աստուծոյ նուիրելու համար, իմ ծննդավայրիս սիրելի քրիստոնեաներուն և անոնց հոգիներու փրկութեան համար: Ոչ մէկ բան կ'արժէր ինծի՝ Տէրոջմէն ներշնչուած նպատակիս հասնելու համար, երբ առաջին անգամ Ան եկաւ իր առաջին այցելութիւնը փալու:

Շրջանի Մեծաորոսիին մէկ փարի զիս Հայէպ պահեց, ֆրանսական լեզուն կատարելագործելու համար: 1906ի Յուլիսին, մեկնեցայ Ֆրանսա, Մարսիլոյ Նորընծայարանը, փորձի փարիներս սկսելու համար:

13 Մարտ 1910ին կրօնական ուխտերու կատարեցի և զիս առաքելութեան որկեցին Տրապիզոն: Տասներեւ օր ամբողջել էրք, երբ փակուին քսան փարիսական էր, ֆրանսական անցագիրով մը՝ Պոլսէն անցնելու համար, ինծի արգիլած էին բրբրեւէն խօսիլ ինքզինքս վրանգի չենթարկելու համար: Դասպանը զիս կը զործածէր իրեն քարգանակը:

Հասնելով իմ սիրած առաքելութեան Տրապիզոն, հոն գրպայ Կիլիկիոյ մեր նոյն քարքերը, այնքա՛ն նկարագրեց: Հայքը միշտ սիրալիր և միասնական էին, բայց սուրը կատուած էր իրենց վիզերուն, ինչպէս ամէն տեղ: Ինչ որ հիսանալի է մեր ցեղին մէջ, բաշտութիւնն ու հաւաքքն են որ կը զօրացնեն զինք:

Հոս սկսայ սրանչնել բրբրեւէն լեզուի երկրորդական դասեր, երկրաւարդ աղջիկներու աշխատանցի մը մէջ ուր անոնք կը սորվէին ամէն տեսակ արուեստ և նկարչութիւն: Առաւօտները կը գրկուէի դարմանափան մէջ ուր կը ծառայէր քարի մայրապետ մը, բայց ծերացած և յոգնած: Առաջարկեցի փոխարինել զինք, բայց կարգադրելով նաեւ իմ ծրագիրներս, առանց իսնկաբեղու աշակերտներուն ժամերը: Բացարձակ երջանիկ էի ամէն տեսակէտով: Ինքզինքս հեռու կը զգայի ընկրանիքէս, բայց չէի չանչրանամար այցելութիւններէն կամ ուրիշ բաներէ: Իսկական ծաղկուն առաքելութիւն մըն էր ուր զոհուելու բազմաքի առիթներ կային...

Ետադարձութիւնը այս աշխարհիս համար չէ հրած, յարկապէս երբ կ'ուզեմք Յիսուս Փրկչին նմանի: Խոշորութիւնները սկսան մեր դրաքն Ռուսներուն հետ, գիշեր ցերեկ արարափներու մէջ կ'ապրէինք, մինչև 1914ի համաշխարհային պատերազմի յայրաբարտութիւնը: Ռուսական բազմաքի ոմբակոծումները սկսան, մինչև մեր արարաբարտը 1914 Նոյնմեր 22ին: Նախօրեակին, Վալին մեզ վարսահեցոյր որ մենք Աստուծոյ նուիրուած կիներ ըլլալով կրնայինք անհոգ ըլլալ: Բայց իրկիտան արեւն, քսանի չափ արշակուած բանտարկեալներ եկան և մեր սենեակները կերցին և

քողոցին մեզի միայն նրբանցք մը: Յաջորդ օր մեզ յանձնեցին դեսպա-
նատուն իրրեւ գերիներ, սպանելով Բարչր Դրան հրամանը: Բարեբախ-
տաբար զերմանացի դեսպանտիին բարի քրիստոնէայ մըն էր: Ըստատուն
անգամ հեռագիր դրկելով Պոլիս, փերջապէս պարեռագմական նաւ մը
եկաւ մեզ փրկելու, ինչպէս նաեւ ֆրանսական դեսպանատունը եւ փասը
հոգի Քրիստոնէական Կարոցներէն: Մրանք նաւը, պաշտպանուած գեր-
մանացի եւ բուրք սպաներէ, ահաբո՛ւ մնալով այս կոպիտ մարդոց միջեւ:
Ամբողջ Սիւ Շուրը սկանուած ըլլալով, ինչպէս նաեւ Տարբանէրը, նաւը կը
յառաջանար կրիայի քայլերով եւ ծոռոտուտ: Տարբանէի անցքը սարսա-
փելի էր եւ երկիւղալի: Ապա երկու նասակներ եկան որոնց մէջ կային զին-
ուորներ հրացանները փակած, եւ փարին դեսպանը, երկու Ֆրէրները եւ
մեզ: Չզացիք որ նասահանգարէն կը ինչանային եւ բաց ծով կը փոր-
չէին մտնել: Որոշ ժամանակ մը ետք, սկսան նասակները զլիփկայր զար-
ջնել, իւրաքանչիւր անջէ 5 ոսկի պահանջելով եւ ծով քափելու սպառնա-
լիքով: Պարսպ փող փորչեցիքը պոռայ ոսրիկաններուն որոնք խով
սկանը կը շնանային, որովհետեւ համաշայտութեան մէջ էին միւսներուն
հետ: Մեծաւոր Ֆրէրը զինուած էր կապիտիս փակէն, եւ դիմելով ինչ որ
կը պարտաէր, անվախ դիմադարչեց եւ բոլոր ունեցած դրամը ծովուն մէջ
քափեց, գրպանը ամբողջ պարպելով: Ասազ Ուրբար օրը անցուցիքը արա-
մաքանիս պարսպ առջի օրոտընէ ի վեր: Մէկ շէնքէն միւս շէնքը մեզ փո-
խադրեցին ոսրիկաններով շրջապարուած, սպա իրրեւ գերիներ մեզ
առաջնորդեցին Սէնք Էլիզապէթի Մայրապետներուն մօտ, ընդ փնօ-
րիւնութիւն: Ուր օր ետք մեզ դրկեցին Տէրտ Ադան: Չզելով թրքական սահ-
մանը, մեզ լրի կողուպեցին, նոյնիսկ ընկողի ջուրի կարիները:

Այս կատարեալ գրկանքի վիճակի մէջ է որ քանկուած մայրապետ-
ներուն քով, մերջնունը ունեցայ 25 փարիներու մշակած զիրութիւնս, ար-
ուեստս, եւ ուսումս քաղելու եւ ինքզինքս նուիրելու հիւանդներու ինամքին
հիւանդանոցներու մէջ: Ես գործադրեցի այս որոշումս առանց յոգնութիւն
զգալու, գորացած սիրոյ մղումով: Մարսիլոյ մեր Ընդհանուր Մեծաու-
րուիկէն պարուէր եկած էր փեղատրեւ մեզ իւրաքանչիւրը ըստ կարո-
ղութեան: Մեզմէ քանի մը հոգի մնացին Արէնք սպանելով նոր որոշում-
ներու: Հոս մեր դարմանատուներէն մէկուն մէջ սկսայ վիրաբուժութեան
օգնելով գործողութիւններուն եւ հետաքրքրուելով ամէն քանի որ կրնար
խեղձ հիւանդները ստիպել: 1916ը, հայերու մեծ գաղթականութեան եւ
միլիոնաւոր մարտիրոսներու փարին եղաւ, զոր կը կարդայի թերթերու մէջ
եւ այդ լուրերը ինձի մեծ ցաւ կը պարտաւէին հոգիս խորը եւ կընչի ես
ինձի— ընթանք շունքի, սիրող սիրտ մը շունքի որ մըստէ իմ մասիս այս
աշխարհիս վրայ, մեներ ալ միւսներուն կարգին սիրի անցիկը: Մինչ աղ
մենք զեզ ճիւրաբանք ինչով որ Բարին Աստուած մեր աչքերուն առջեւ
կը դնէ: Հոս ես անսպասելի յեղափոխութիւն մը կատարուեցաւ, ուսրի
պէտք եղաւ վրանգներու ընդմէջէն մեկնելի Ֆրանսա ռազմականի մը մէջ

հիւանդ եւ անկար մայրապետներով, որպէսզի Մայր Տունին մէջ հան-
գիստիին գրնեն: Չիս նշանակեցին խումբին ղեկավար, զիչեր եւ զերեկ
նատն վրայ, որպէսզի օգնեն իրենց փրկութեան գօրիկները կապելու, երբ
լուր կը փրուէր որ ծովառումի վրանգ կար: Հրաշքով փրկուեցանք եւ
հասանք ողջ առողջ Մարսիլոյ նասահանգար: Ծովակալը, յաջորդ օր,
հետիտրն քարչրացաւ Նորք Տաճ Եր Լա Կարտ շնորհակալութիւն յայր-
նելու Տիրանօր, եւ սպա շնորհակալութեան այցելութիւն մը Մարսիլոյ
Յարգելի Մայրապետներուն, ըսելով թէ հիւանդ մայրապետներու աղօթ-
ներուն շնորհիւ է որ խուսափած էին քազմաթիւ վրանգներէ:

Հասանք վերջապէս մեր Մայր Տունը եւ յաջորդ ստաւօրն իսկ, Տրա-
պիզոնի իմ ընկերուիկներու մէկուն հետ՝ Քոյր Եօսթաշ, Կարմիր Խաչի
դարմանատուն մը դրկուեցանք զինուորականներ ինամելու, Հոնորա փո-
ղոցին վրայի Ագնուական Տիկնանց վայրը: 465 հիւանդ զինուորներ
կային: Չիս կարգեցին իրրեւ այցելու հիւանդապահուիի, եւ նշանակեցին
նաեւ ինձի 50 անջեր որոնք վիրաւորուած էին զոյլուէն եւ սկանջներէն,
եայլն:

Հիւանդապահի դասընթացքներ գոյութիւն ունենալով այս դարմանա-
տուներուն մէջ որոնք 3 շաբաթ պիտի փետին, փնօրէնուիին ինամալով որ
արդէն շար քան զիւրէի, անցուց զիս 6 անուան դասընթացքներու քննու-
թեանց, որպէսզի միւսներուն հետ ներկայանամ:

Աստուծոյ շնորհքով յաջողեցայ իմ Պարզ Վկայականս առնելու եւ
քաւական ժամանակ ետք Բարչրագոյն Վկայականս ալ, որովհետեւ
առիթը ունեցած էի օգրագործելու ժամանակս սրվելու համար մանրէա-
զիրութեան օրէնքները:

Հասաւ զինադադարի օրը 1918 Նոյեմբեր 11ին: Խեղձ ու մահամերջ,
հիւանդի մը քովն էի որուն աչքերը քաղցկեղով վարակուած էին եւ ան-
բողջ երեսը նեխած էր այս 50 հոգիւնց արահին մէջ: Ծուկի եկած անոր
անկողնին մօտ, եւ սիս կը յսն նուազախումքի մը շայները, ցնձութեան
արաքակները քակին մէջ: Կանգնել ինձի որ պարտագնը վերջացած է
եւ զինադադարը ստորագրուած: Ով Աստուած իմ, անսահման է որոշմա-
ծութիւնդ արարածներոյդ հանդէպ, որոնք այս դառն փորձանքէն անցան
ու մարազործեց զիրենք արիւնի եւ արցունքի քաղնիքի մը մէջ:
Օրհնեա՛լ ըլլա՛յ կամրդ, Ամէն:

Քանի մը օր ետք, կանչուեցանք շրջուն դարմանատուներէն, վե-
րադառնալու համար մեր առաքելութեանց: Պարեռագմին սկիզբները
սկսած էին կառուցանել Սէն Լուի հիւանդանոցը Հայէպի մէջ: Չորս փար-
ուան ընթացքին, բոլոր ազգերը այնպիսիէն անցած էին մեծ վնասներ
պարձանելով փեղոյնս, աննանայելի դարչած էր արքիկա, յարակազիծը
ամբողջ փոխուած էր: Մենք մեկնած էինք փակախն ամէն քան չիճացած,
քայց հիմա ամէն ինչ քանդուած էր:

Մեր Ընդհանուր Մեծաուրուիկին սիրի մեկնէր առաջին նատով, հետը

փասնելով կարևոր առարկաները, կազմակերպելու համար Հալեպ չքած գործերը, յարկապես իր հիւանդանոցը ուր հարկը կար անչերու որոնք գիտնալին արդիական մեթոդները, շրտ փարուսան փայտեղազմէն փորչառու դարչաւ: Գարմանաբունէ մը որուն մէջ էի, առջի օրուան աշխատանքի մը համար, սրիպեց զիս որ վար իջնան եւ իրեն հետ մեկնիմ Պէրոս: Մինչ այդ կը սպասէիք որ Հալեպ հասնինք քանդուած վակոններու մէջ քաղաքայ առեղով: Երեք մայրապիտաներ էինք եւ մեզի հետ ալ Գարփիմալ Թափիտունին, որ այն ժամանակ պարզ եպիսկոպոս էր:

Բոլոր դժուարութիւններով հանդերձ, հասանք մեր սիրելի Հալեպը, Մայր Փշափրի հետ, որ երկար փարիներ քրոնաբոր կեանք ունեցած էր: Անէն անկին մեր գուրը կը շարժէր: Ուրքի վրայ պար մը չկար, ամէն փայր եւ երկար խլուած էր, ամէն քան ակերակ էր, երկու գիշերօթիկ վարժարանները ամբողջովին պարպուած, յարկապես քաղաքինը որ կը գրկուէր շուկայի մէջ: Ըսած հիւանդանոցս գրեթէ քանդուած էր եւ Անգլիացիները հոն ներսն էին փակաին եւ երկրորդ յարկը իրեն ախոռ կը գործածէին: Խեղճ Մեծատրուինի չկրցաւ արցունքները զայի: Բայց առանց վիտարելու աղաչեց որ իրեն ևս յանչնեն իր հիւանդանոցը որպէսզի իր գործը վերակսի: Այս ժամանակն էր որ զիս պատասխանաբար կարգեց այս իր սիրած գործին, Ֆրանսայի օգնութեամբ:

Սկսեց բոլոր նորոգութեանց միանգամայն, որովհետեւ նեղի մնացի էինք. Կիլիկիան գրաւուած էր եւ մեզի կը դրկէին բոլոր վիտարու եւ խեղճ մարակակարգիները որոնց անդամները ստոած էին մեծ ցուրտէն, քազմարի օրեր չիւն փեղացած ըլլալով: 120 գործատրներ կ'աշխատէին կարգի դնելու համար գործողութեան սրահ մը եւ քանի մը սենեակ ուր կարենային պատկի: Կարգաւ կ'ընդունէինք զանոնք եւ երբ Մալունիկի կամ ուրիշ փեղի մը դարմանաբունը փակուէր, անկողիները մեզի կը դրկէին կամ բոլոր գործիքները, խոհանոցի առարկաները կամ վիտարակայները: Չիւնը կ'իջնէր մեր վրայ, որովհետեւ ամէն փեղ բաց էր, եւ մենք կ'օգնէինք գործատրներուն ներկելու կամ ուրիշ աշխատանքի մէջ: Այս կերպով էր որ, ասնդոփի մը վրայ կ'սած, ընդունեցանք Չորափար Կուրօս, որ յուզուեցաւ մեր նուիրումութեան համար եւ յաջորդ առաւօր մեզի լաւ օժանդակութիւն մը դրկեց:

Ֆրանսացիներուն միջեւ Հալեպ հասնիլը կրցանք նորոգել ամէնէն անկրածեշոր եւ ընդունիլ շրտայի մարմնուած հիւանդները՝ թէ քաղաքացի թէ զինուորական: Այն ժամանակ է որ իմացայ Նախախնամութեան ծրագիրները իմ անչիս վրայ, որպէսզի ամբողջովին նուիրուիմ մարդկանց ծառայութեան, յարկապես իմ հայ մարտիրոս ժողովուրդիս, որոնք առանց վիտարելու գաղթական կը հասնէին իրենց ցնցոփներով՝ անօրեան, անօգնական, որովհետեւ այնքան բշտատրին կար որ անկարելի էր ինամիլ բոլորը: Խեղճ գաղթականները կ'աշխատէին ցերեկի իրենց հացը ձարելու համար, ապա գիշերները կը քարչքացնէին քիթիները

կամ զինկերը որպէսզի անոնց ներքի հովանի գրնեն: Տեսնելով բոլոր այս ցաւայի բշտատրիւնները, կարելի՞ էր անկարթեր մնալ: Կրնամ բւել Բարին Աստուծոյ առջեւ, որ չիմ ներժած մէկու մը խնդրած ծառայութիւնը: Բարին Աստուծոյ անու օգնած է ինծի ոյժ մը տալով՝ բոլոր այն քաններն համար որ կը խնդրէի իրենց համար, եւ կը սրանայի հարիր առ հարիր: Այդ մարդիկը իրարու միջեւ կը խօսէին թէ թո՛վս զան եւ յանչնարարութիւններ ընեն: Բոլորն ալ խնամք եւ դեղ կը խնդրէին: Ես ալ միջոցները ունէի զիրենց ամոքելու, եւ չրիտար զիրենց հիւանդանոց ընդունելու եւ իրենցմով գրադելու իրենց անպարհանան շրջանին, զօրացուցիչ դեղերով: Բոլոր այս քաները Բարին Աստուծոյ հրամանով կարարեցի՝ որ ոյժ կու տար ինծի նման խեղճ արարածի մը՝ փառասպեալ հոգիները սիրտիելու համար: Ուրդի շնորհակալութիւնս պէտք է յայրնան դէպի Երկինք, անոր՝ որ իր պաշտօնեաներուն քաղաքայ Տէրն է եւ զանոնք իր ծառայութեան կը կանչէ: Չօրութիւն եւ յաջողութիւն իրեն կը վայելին: Անէնքնիս միասին շնորհակալութեան ներգործութիւններ պէտք է կարարենք:

Ապերախար սիրի ըլլայի, եթէ չիստէի այս յիշատակներու փողերուն մէջ Տոքոր Գաբրիէլ Երվախէչի մասին, որ գիտար թիշչն էր եւ համբաւարով վիրարոյժ: Չայն նանչնալու պարիսր ունեցայ իր մէջ ողջունելով իրական բարեգութ, եւ մարդասէր սիրտ մը, փառասպող խեղճ մարդկութեան հանդէպ այս անբարի գաղթականներուն մէջ որոնք ամէն կողմէ կը հասնէին: Ունէ մէկը եր չէ որկած առանց զայն ինամելու: Երկիւնները երբ խորիրոյակցութեանց կը նստէինք ժամը 9էն 10, օրուան աշխատանքները քննելու համար, ինծի կ'ըսէր: «Բոլոր իմ, եր որկէ հարուարները, անոնք դրամ ունին պանդոկը վճարելու, քայց թո՛վս թեր այս խեղճ բշտար գաղթականները որոնք ոչ մէկ միջոց ունին սարելու»: Կը փախարթեր մէկ ժամ առաջ սիրտիլ այս խեղճ աղքատները որոնք իր մէջ կը գրկէին մարմնական եւ քարոյական իրական հոգաբարարութիւն մը իրենց ծանր նեղութեանց մէջ, եւ իրենց երախարագեր աղօթքները երկինք կը հասնէին, զինք զօրացնող բոլոր շնորհները կանչելու համար:

Զասններք փարի աշխարեցայ հետը, օգնելով իրեն վիտարութեան ընթացքին: Անբողջ օրը միասին էինք առանց հանգիստ մը առնելու: Հալեպէն մեկնումէս յետոյ ան հիւանդ ինկաւ՝ յարիազանց աշխատանքի հետեւանքով, որովհետեւ կ'ուզէր խեղճ մարդոց օգնել որոնք միջոցները չունէին: Ան մտաւ եւ Հալեպցիները սագին դառնապես: Զանի անգամ իր արիւնը փոսաւ երբ կը գար գործողութեան ժամանակ որ խեղճ հիւանդ սիրի չիմամար, եւ այս՝ առանց կրօնքի եւ ցեղի խարութեան: Բոլոր այս յարկութիւններով ան շահած է երկնային արժանիքները մեր իրական հայրենիքին մէջ որ երկինքն է: Վարահ եմ ան գրաւ հոն իր բոլոր վարչարարութիւնները իր անչնուիրութեան համար՝ փառասպեալ մարդկութեան հանդէպ:

Իմ կողմէս, եթէ կրցայ սրանալ օգնութիւն իմ գաղթականներու

համար, իր շնորհիւ է: Իր մէկ խօսքը կամ մէկ հեռաձայնը բաւական էին ստանալու ուզածը բարեգործական կոմիտէներու մօտ: Որովհետեւ հարկ է օգնել հիւանդներուն որոնք հիւանդանոցէն կը մեկնէին եւ օժանդակութիւն մը ցոյց տալ որպէսզի պարշաճօրէն ապրէին իրենց կեանքը: Առանց սրբանդութեան մտիկ կ'ընէր ինձի՝ խնդրանքներս գոհացնելու համար: Աստուած թող օրհնէ զինք, իր կինը եւ իր սերունդը եւ շնորհք տայ որ նմանինք իրեն: Մեր պարտքն է միշտ երախտապարտ սիրտ մը ունենալ իրեն հանդէպ:

Թրգմ. ՎԵՐՈՆԻԲ ԿԱՐԵՒՈՐԵԱՆ

Նուազի լը Կրան, Մարտ 1999

ՈՐՊԷՍ ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպէս, լոյս կը տեսնէ ողբացեալ Էլի Նազարեանին գիրքը դժբախտաբար յետ մահու, մեր մեկնատեանս:

Որքա՞ն զբաղ եղաւ Լոս Անճելըս-Հալէպ հեռախօսագիծը ամիսներով երբ մենք այս այնքապցի գրողին հետ երկարօրէն կը խօսակցէինք Այնթապահայերու Պատմութեան շորրորդ հատրի մը պատրաստութեան մասին, միշտ համակարծիք ըլլալով իրարու:

Խօսելով մեր պատրաստած Այնթապահայերու Պատմութեան Յանդուածին մասին, Էլի Նազարեանը արդէն յօդուած մը ստորագրած էր Պէյրութի «Չարթօնք» օրաթերթի 14 Հոկտ. 1997ի թիւին մէջ ըսելով. «Մեր պրպտումներուն ընթացքին, գտած ենք 200է անլի մոռցուած եւ յիշուելու արժանի հայրենակիցներ»:

Խօսքը Պրն. Երուանդ Պապայեանի խմբագրած Գ. հատրին մասին է:

Էլի Նազարեանը նոյն յօդուածին մէջ կը շարունակէ գրել. «Բոլոր տուեալները ցոյց կու տան թէ արդարացի է Յարութիւն Միմոնեանին պահանջը այնքապահայ հայոց պատմութեան 4րդ հատրի մը հրատարակութեան, որուն բովանդակութեան համար կան արժանատր բաւարար միւթեր, ի փառս այնքապահայ նոր ու ապագայ սերունդներուն, սերտօրէն կ'ապուելու իրենց արձատներուն»:

Մենք ես բազմիցս բերանացի ու մամուլով արտայայտուած ենք յիշեալ Գ. հատրի բացթողումներուն մասին ի մասնատրի յօդուած մը ստորագրելով Պէյրութի «Նախիրի» երկշաբաթաթերթի 11 Յուլիս 1998ի թիւին մէջ:

Արդարեւ, Յուշապատումը կը գրուի աղբիւրներու դիմելով: Այս մասին մենք անդրադարձած ենք նոյնպէս մամուլով ու բերանացի եւ յիշատակած հետեւեալ աղբիւրները, որոնց ուշադիր օգտագործումը կրնար կարեւոր մեծ նպաստ մը բերել այնքապահայերու մասին պատրաստուած Գ. հա-

տորին մեջ.–

1. Փռոֆ. Գեորգ Սարաֆեանի «Պատմութիւն Այնթապի Հայոց», Ա. եւ Բ. հատոր:

2.– «Այնթապի Հերոսամարտի երեք սինները»

ա) Թաւրթեան քահանայի «Տառապանքի Օրագիր» յուշագրութիւնը՝ գործ Թորոս Թորանեանի,

բ) Ա. Գալեմբեարեան, գործ՝ Վահէ Կիլիւսերեանի

գ) Ատուր Լեւոնեան, յուշամատեն, գործ՝ Սարգիս Լալեանի:

3. Էլի Նազարեանի՝ «Պատմագիրք Նազարեան Գեորգաստանի»:

4. «Այնթապականք Մահարձան» 2 հատոր, գործ՝ Գ. Պողարեանի:

5. «Յեղասպան Թորքը», վկայութիւններ, գործ՝ Գրիգոր Պողարեանի:

6. «Յուշամատեն» Բարզէն Կաթողիկոս Կիլիւսերեանի:

(«Հայ Այնթապ» թիւ 32), գրողներ՝ Գրիգոր Պողարեան, Վահէ Կիլիւսերեան, Բարզէն Քենյ, Մագսուտեան, Բիւզանդ Եղիայեան, 1968:

7. Ա. Կեսարի «Այնթապի Գոյամարտը»:

8. Եղիա Տոլպագեանի «Այնթապն ու Այնթապահայը»:

9. «Գեորգ Պագըրճեան» գործ՝ Թորոս Թորանեանի:

10. «Օրագիր» գործ՝ Աւետիս Ճելպեանի:

11. «Սարգիս Պալապանեան» Յառաջաբան՝ Թորոս Թորանեանի:

12. «Հայ Այնթապ», «Նոր Այնթապ» պարբերաբերքի թիւերը:

13. «Այնթապի ինքնապաշտպանութիւնը» Աղայեանի:

14. «Այնթապի ՀՅԴԻ Պատմութիւնը» գործ՝ Գեորգ Պարսունեանի:

Հանգուցեալ Էլի Նազարեանը ոգեւորում էր այս ցանկով եւ կ'ուզէր օգտագործել այս բոլորը Այնթապի Հայոց Պատմութեան 4րդ հատոր մը պատրաստելու գործին մեջ, եթէ այս ուղղութեանը դիմում մը կատարուէր իրեն:

Մեր հեռախօսային զրոյցներու ընթացքին, որոնք երբեմն կը տեւէին մէկ ժամ, մենք բուցինք Գ. հատորի հետեւեալ մտացումներուն մասին.

1. Յարութիւն Միւնեան – սրտաբան, Նիւ Ճըրզիէն.

2. Արքիւր Արութեան – Լոս Անճելլէսէն, «Արարատ» հանգստեան տունի տնօրէն.

3. Մարի Ապանեան – օփերայի երգչուհի.

4. Ատիս (Աւետիս) Հարմանտեան – բուրբերէն երգը մոռցնել տուող երգիչ.

5. Ճօրճ Միսիրեան – մարզական թղթակից.

6. Կ. Բարսեղեան – արծակագիր.

7. Միւզի Պահատրեան – Լալեանի բոնիկը.

8. Միսաք Բարսեղեան

9. Յարութիւն Պազարպաշեան

10. Լեւոն Վարդան – բանաստեղծ, պատմաբան.

11. Փռոֆ. Գեորգ Խրլորեան – իմաստասէր.

12. Ջարեհ Մելքոնեան – բանաստեղծ, թատերագիր.

13. Սարգիս Եսփունճեան – գրող, բազմամեայ ուսուցիչ.

14. Սարգիս Պէքերեան

15. Սահակ Նալպանտեան

16. Հայկազ Բարսեղեան

17. Լուսեր Մասմանճեան – նուիրեալ ՀՄԸՄական.

18. Կարպիս Աղճեան

19. Գեորգ Թօփճեան – Լաքաքիայէն.

20. Յովհաննէս Գասարճեան – ճարտարարուեստական, Պէյրութն.

21. Գեորգ Գանտահարեան – երաժիշտ.

22. Շահնուր Ֆատըզճեան – գորգի վաճառական.

23. Արթուր Ֆատըզճեան – գորգի վաճառական.

24. Վարդան Արք. Տեմիրճեան – բանասէր.

25. Տիրայր Եպիսկոպոս Փանոսեան

26. Նաւասարդ Վրդ. Մաղոյեան

27. Վահան Քենյ, Պալզեորճեան

28. Գեորգ Արքիմեան – աղամանդագործ, Պելճիքա.

29. Երուանդ Արքիմեան – աղամանդագործ, Պելճիքա.

30. Շահէ Պարսունեան – երեսփոխան.

31. Յակոբ Տեմիրճեան – նախարար – Լիբանան.

32. Արամ Միլլահեան – արդիւնաբերող, Պէյրութ.

33. Յարութիւն Արլանեան

34. Լուսեր Սիմճեան – գիտարար, ԱՄՆ.

35. Արա Թօփճեան – երկարամեայ տնօրէն Պէյրութի ՀԲԸՄի Երկրորդ Վրժ.ի.

36. Այնթապահայ Կաթողիկէ քոյրեր – քոյր Ֆիլոմէն եւ այլք.

37. Նորայր Արք. Պողարեան – որ պատրաստեց Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին 4000 ձեռագիրներու ցուցակը 11 հատորով եւ որուն ձեռքը եկաւ համբուրել Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահը:

38. Սարգիս Մաթոսեան

39. Կարապետ Պչարճեան

40. Ներսէս Պարսունեան – արարագէտ.

41. Պարզեա Պարսունեան – լրագրող.

42. Անի Խարանեան

43. Ջոհրապ Գարրիլեան

44. Նազարեք Աթթարեան – Ուրուկուայէն.

45. Գրիգոր Պուրճեան – տպարանատէր, այժմ Գանատա.

46. Վահէ Կիլիւսերեան եւ

47. Բարզէն Կիլիւսերեան – Բ. Կիլիւսերեան Վեհափառին մեծ եղբոր

զուակնները որոնք փրկեցին Վեհափառին ձեռագիրները, թուրքը կաշտոնով: Վահե Կիլիսեյեան ՀԲԸՄի կտակեց 463.000 տոլար:

48. Հերմինե Մահսերեճեան – ուսուցչուհի.
49. Անտիս Անաղղեան
50. Ալիծ Աղապաշեան
51. Նազարեք Հացիկեան – տպագրական գործերու վարպետ.
52. Անժև Հարսեան–Պահուք.
53. Ծորճ Ուզունեան – Կլենտլյ.
54. Արմեն Տէր Պետրոսեան – Հալէպի Կրթասիրաց Վրժի տնօրէն.
55. Ռազմիկ Վրդ. Պողոսեան – Ս. Յակոբայ վանքէն.
56. Անի Պալեան
57. Գօցօ Պալեան
58. Յակոբ Աւագեան – գորգագործ.
59. Վերոին Գարազեան – ուսուցչապետ ԱՄՆի մէջ.
60. Շաքէ Աւագեան – փրոֆեսոր Ամերիկեան համալսարաններու.
61. Աքթար Արքիմիհն դուստրը – հերոսուհի.
62. Գրիգոր Սիմոնեան – ժամացոյցի վաճառական.
63. Սիմոն Սիմոնեան – գրագէտ, բանասէր, հրատարակիչ, ուսուցիչ, գրարարագէտ, խմբագիր.
64. Յարութիւն Սիմոնեան եւ բազմաթիւ ուրիշներ....

Մենք, Սիմոնեան եղբայրներս հօր կողմէ սասունցի ենք, երեսնալ Ընճաճ ենք Այնթապի մէջ, մեր մայրը՝ Մենուշ, այնթապցի էր, երեսնալ մեր նախնական ուսումը ստացած ենք Հալէպ, Այնթապու Կրթասիրաց վարժարանին մէջ:

Սիմոն Սիմոնեան եղբայրս, ընթացաւարտ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանքէն, մեծցած է շունչին տակ Այնթապցի Կիլիսեյեան կաթողիկոսին եւ Շահէ Գասպարեան Արք.ին, այս վերջինն ալ այնթապցի:

Ինչպէ՞ս մեզ դուրս կը բողոն Այնթապի հայոց պատմագիրքի երրորդ հատորէն, երբ հոն ներկայ են ուրիշներ, մեզի նման միայն ծնողներու մէկին այնթապցի ըլլալովը:

Ըսած եղանք արդէն, որ Գրիգոր Պողարեանը իր աշակերտ՝ Սիմոն Սիմոնեանը այնթապցի կը նկատուի ու Պողարեանը գիտէր, որ Սասունցի հայրս՝ Օվէն, մասնակիցը եղած է Այնթապի ինքնապաշտպանութեան ինչպէս իր համաքաղաքացիներէն շատեր, Այնթապ ապրող սերաստիացիներու կողքին:

Էլի Նազարեանը նոյնպէս ոչ միայն կ'ընդունէր այլ կը պնդէր իր դասընկերոջ՝ Սիմոն Սիմոնեանի այնթապցի կոչուիլը ու միաժամանակ չէր ուրանար անոր սասունցիութիւնը, որ կու գար արեան ճամբով:

Այնթապահայոց Պատմութեան Գ. հատորէն Սիմոն Սիմոնեանին բացակայութիւնը, էլի Նազարեանը կը համարէր աններելի՝ որպէս յայտնի

մատարականի:

Ահա թէ ինչ գրած է Սիմոն Սիմոնեանի մասին Դ-կտ. Տ. Չաւեն Քնկյ. Արզումանեանը իր Ազգապատում Գ. հատոր, Բ. գիրքի 292րդ էջին վրայ, խօսելով Գարեգին Ա. Յովսէփեանց Կիլիկիոյ Աթոռակալին մասին.–

«Հեղինակին անմիջական գիտական աշխատակիցը եղած է Անթիլիասի դպրեվանքի առաջին շրջանաւարտներէն ու հետագային մատենագրութեան ուսուցիչ Սիմոն Սիմոնեան, որ 1946 Յուլիսին, Գարեգին Կաթողիկոսէն հրաւիրուեցաւ այդ պաշտօնին, ուղղակի հսկելու եւ լրացնելու մատենագիտական պրպտումները հատորի պատրաստութեան շրջանին: Սիմոնեանի վկայութեամբ «Վեհափառ Հայրապետը իր հաւաքածոյին մէջ չէր առնէր որեւէ Յիշատակարան առանց նպատակի, առանց ընտրութեան եւ յատկապէս առանց գրչագրական, մանրանկարչական ու պատմագրական արժէք նկատելու» (Անդ ԺԹ): Մոյն ակնարկէն կը յայտնուի արդէն Գարեգին Ա. Կաթողիկոսի մասնագիտական մօտեցումը յիշատակարաններու նկատմամբ: Սիմոնեանի առաջին գործը եղած է հաւաքել հայերէն ձեռագիրներու ցարդ տպագրուած բոլոր յիշատակարանները որոնցմէ Գարեգին Ա. Կաթողիկոս չէր կրցած օգտուիլ 1934 բուսականէն առաջ: Գիտական աշխատակից Սիմոնեանի այս շատ կենսական աշխատանքին ետք «Յիշատակարանը Չեռագրաց»ը ճոխացաւ նոր յիշատակարաններով»....:

Ահա բազմահմուտ Սիմոն Սիմոնեանը դուրս մնացած է Եր. Պապայեանի պատրաստած Այնթապահայերու պատմութեան Գ. հատորէն, որուն համար արդար ընդվզում ունեցաւ Էլի Նազարեանը:

Մեր բարեկամ, հմուտ այնթապահայ էս Սիմոն Սիմոնեանի դասընկեր էլի Նազարեանը ոչ ես է:

Թող իր այս գիրքը շարունակէ ապրեցնել Էլի Նազարեան երբեմնի խնրագիրն ու բազմաշխատ յօդուածագիրը հայ մամուլին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՄՆԵԱՆ

Էնսիճօ, 1 Դեկտ. 1999

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էլի Յարութին Նագարեան	5
Էլի Նագարեանի այս գիրքին հրատարակիչը Յարութին Սիմոնեան — Թ. Թորանեան	9
Մեկնասին խօսքը— Յ. Սիմոնեան	12
<i>ՆԱՀԱՆՋԻ ՇԵՓՈՐԱՀԱՐԸ՝ ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ</i>	
Նահանջի Շեփորահարը՝ Շահան Շահնուր (1903—1974) Կենսագրական Ակնարկ՝ մահուան քսանամեակին առիթով	17
<i>ԳԻՐԲՈՐՈՒ ՀԵՏ</i>	
Դաւիթ Գասպարեան «Զարեմցեան Ասոյքներ»	49
Շնչել, ապրիլ Կովիտասով	53
Դրական մտր ծաղկեփունջ մը՝ Թորոս Թորանեանէն	58
Պալապան Խոնայի կեանքին յիսուն տարիները	65
Վահան Թէֆեանի «Նամակներ»	71
«Հայ Գիրք»ը գանձարան՝ հայ ազգային դպրութեան	74
Յուշամատեան Հալէպի Կրթասիրաց մշակութային միութեան և Կրթասիրաց վարժարանի	77
Անդեանականէն ժպտող հայը՝ Լեւոն Շիրեան	84
«Բոնագաղթի հայ կարուստներու երթողիները 1915ին Սուրիոյ տարածքին»	88
Այնթապահայ Ոգին	93
Յաւելուած՝ Այնթապի Հայոց Պատմութեան	97
<i>ԴԷՄՔՆԸ</i>	
Մոռցուած մեծ պատմաբան մը՝ Փրոֆ. Գարրիէլ Միքայէլեան	105
Երգահան Փրոֆ. Աւետիս Նագարեան	111
Երգահան Յակոբ Ս. Մանուկեան	118
Կենսագրի գրիկուս Դոկտ. Հրայր Յովնանեան	121
Փիլիսոփայութեան Դոկտոր Տրդատ Մուրատեան	124
Արարական աշխարհի առաջին ջութակը՝ Նենմի Սիւքարի	131
Սիմոն Սիմոնեան (ծննդեան 84ամեակ) և այնթապի Գոյր Ֆիլոմէն	136
Ամբողջական քարտեարը՝ Նուպար Լ. Նագարեան	143

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍՈՐԱԿԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԻ ԷՋԵՐ

Հրաշագործ միութիւնը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը	151
Մեծ Եղեռնի նահատակներուն իսկական թիւը	161
Գրիգոր Զօհրապ և Վարդգէս Հալէպի մէջ	164
Աշխարհի ամէնէն ամօթալի դաշնագրերը	170
Մէվլան Զատէ Ռիֆաաթի գիրքին մասին	175
Հայաստանի երկրաշարժը քնակա՞ն էր թէ՞ արուեստական	178
Ուրուագիծ սուրիահայ պաշտօնէութեան պատմութեան	182
<i>ՅԱՆԵԼՈՒԱԾ</i>	
Նամակներ	193
Ինքնակենսագրական գիծեր Բոյր Ֆիլոմէնի	207
Որպէս վերջարան	215
Բովանդակութիւն	220

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՄՈՆԵԱՆԻ ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ
ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳԻՐՔԵՐՈՒ ՑՈՒՑԱԿ

1. Միքայել Կիրճեան «Ազգայինճի»
2. Լեւոն Չորմիսեան, «Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան», Բ. հատոր, Պէյրութ, 1974¹⁾
3. Լեւոն Չորմիսեան, «Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան», Գ. հատոր, Պէյրութ, 1975¹⁾
4. Խոսրով Թիւֆինճեան, «Անմահներուն հետ» (Վասպուրական մեր աշխարհին մէջ), Պէյրութ, 1974 (մասնակի ներդրում)
5. Անտոնինա Մահարի, «Իմ ողիսականը», Անթիլիաս, 1994
6. «Երուանդ Օտեանի Յիշատակին» յօդուածներ, յուշեր, նամակներ, Երեւան, «Արեգ», 1994
7. Գեղամ Սեւան, «Սփիւռքահայ զրականութեան ուրուագծեր» (1945–1985), Բ. հատոր, Երեւան, ՀՀ ԳԱԱ հրատ. 1997
8. Սարիբեկ Մանուկեան, «Երուանդ Օտեան, կեանքը, հրապարակախօսութիւնը, գեղարուեստական վաստակը», Երեւան, ՀՀ ԳԱԱ հրատ. 1997
9. Աբգար Ափինճեան, «Կարմիր լիալուսին» / Վարդան Գրիգորեանի պատմավէպը, Երեւան, 1997
10. Դաւիթ Գասպարեան, «Չարեցեան ասոյթներ» / ուսումնասիրութիւն, Պէյրութ, 1997
11. «Յովհաննէս Թումանեան ուսումնասիրութիւններ, եւ հրապարակումներ», Տրդ հատոր, Երեւան, ՀՀ ԳԱԱ հրատ. 1998
12. Գեղամ Սեւան, «Գառնիկ Աղդարեան» / ուսումնասիրութիւն, Երեւան, ՀՀ ԳԱԱ հրատ. 1998
13. Յովհաննէս Թումանեան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 8, Երեւան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1999
14. Երուանդ Օտեան, «Հայ տիասպորան» / վէպ (առաջին տպագրութիւն) Երեւան, Ե. Չարեցի անուան ԳԱԹ, 1999
15. Եղուարդ Ջրբաշեան, «Պուշկինը եւ հայ բանաստեղծները» / ուսումնասիրութիւն, Երեւան, ՀՀ ԳԱԱ հրատ. 1999

16. Ալսել Բակունց, «Ժառանգութիւն»
17. «Թալին» / հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն
18. «Սասնայ Շոշեր» / պատումներ, 4րդ հատոր
19. «Թումանեանի Ընտանիքի Նամակագրութիւնը»
20. Մանկութիւն – Թումանեան
21. Նամականի – Երուանդ Օտեան
22. Վերնատուն – Երուանդ Օտեան
23. Սասունցի Դաւիթ – Ազատ Եղիազարեան
24. Յովհաննէս Թումանեան – Երկերի Լիակատար ժողովածու հատոր 10– ՀՀ ԳԱԱ 1999
25. Գեղարդ, Զ. հատոր, Ռոպեր ճեպճեան
26. Լոռի – Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, թիւ 20
27. Մարտիկ Աղա – Միքայել Կիրճեան
28. Կոմիտաս – Նամականի
29. Միքայել Կիրճեան, Ինտրա, Արփիար Արփիարեան – Նամականի
30. Էլի Յ. Նազարեան, «Հայ Գիրի ճանապարհին», Պէյրութ, 1999

ԱՅԼ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Դպրոց՝ Ոսկեթաս գիւղ, Թալինի շրջան.
- Մշակոյթի տուն դպրոց, Աշնակ գիւղ, Թալին.
- Դսեղ գիւղի հին եկեղեցիի վերանորոգում Թումանեանի ծննդեան գիւղը.
- Խնկօ Ապր – մանկական գրադարանի տանիքներու նորոգում.
- Համալսարանի մէջ իր անունովը դասարան.
- Հօրը՝ Օվէ Սիմոնեանի անուան սրահ, Սասունցիներու Տան մէջ, Պէյրութ:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

- Երեւանի Վահան Թեքեանի անուան վարժարանին.
- Երեւանի Մուշեղ Իշխան անուան դպրոցին.
- Երեւանի զինուորական հիւանդանոցին:

Պատրաստեց՝ Յ.Ա.

(¹⁾ Լիւթական լայն օժանդակութիւն: (Խ.)

Ստանալու համար դիմել

Artine Simonian
3722 Alonzo Ave.
Encino, CA 91316
USA

Համակարգչային շարուածք եւ տպագրութիւն
«ՍԻՓԱՆ» Հրատարակչատուն,
Փոսթարկը 90401, Պէյրութ- Լիբանան

PRINTED IN LEBANON